ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
GAVAR STATE UNIVERSITY

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT OF THE 2021-2022 ACADEMIC YEAR AND SELF-ASSESSMENT REPORT

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
GAVAR STATE UNIVERSITY

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT OF THE 2021-2022 ACADEMIC YEAR AND SELF-ASSESSMENT REPORT

ԳԱՎԱՌ – 2022
GAVAR – 2022

Գավառի պետական համալսարանի
2021-2022 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն և ռազմավարական ծրագրի իրականացման ինքնավերլուծության զեկույց

Հաշվետվությունը բովանդակում է տեղեկություններ Գավառի պետական համալսարանի 2021-2022 ուսումնական տարվա կրթական, գիտահետազոտական, դաստիարակչական գործունեության վերաբերյալ, միաժամանակ այն բուհի ռազմավարական ծրագրի կատարման ինքնավերլուծության զեկույց է, որտեղ ներկայացված է համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացը, և նախանշված են բուհի 2022-2023 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

The report comprises information on the activities of Gavar State University during 2021-2022 academic year including the educational, scientific – research and educative directions, at the same time representing the self-assessment report on the implementation of University's Strategic Program touching upon the implementation process of University's Anti-Corruption Strategic Program and outlining the major development dimensions of 2022-2023 academic year.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ. 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Գավառի պետական համալսարանի պատմության մեջ 2021-2022 ուսումնական տարին նշանավորվեց բուհի ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) վերահավատարմագրման իրողությամբ: Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից՝ ազգային և միջազգային փորձագետների խմբի զեկույցի հիման վրա համալսարանը կրկին հավատարմագրվեց չորս տարի ժամկետով՝ հավաստելով համապատասխանությունը որակի չափանիշներին կրթական, գիտահետազոտական, վարչական, ֆինանսատնտեսական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների ապահովման, ուսանողների հետ աշխատանքի, արտաքին կապերի, հանրային պատասխանատվության և այլ ուղղություններով:

Համալսարանը հաշվետու ուսումնական տարվա առաջին կիսամյակին ուսումնական գործընթացը կազմակերպեց զուգակցված՝ առկա-առցանց ռեժիմով, իսկ երկրորդ կիսամյակին դասընթացները հիմնականում անցկացվեցին բուհում՝ առկա ձևաչափով: Հավատարիմ մնալով «Կրթությունը՝ զարգացման ճանապարհ» կարգախոսին՝ փոխհամաձայնեցված աշխատեցին համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները: Սահմանված կարգով ԳՊՀ գործունեության տարեկան հաշվետվությունը, ներառյալ՝ ֆինանսական հաշվետվությունը ներկայացվեց և հաստատվեց համալսարանի հոգաբարձուների խորհրդի կողմից:

Ինչպես նախորդ ուսումնական տարում, հաշվետու ժամանակահատվածում ևս միջոցներ ձեռնարկվեցին առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում կրթության որակի ապահովման, բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական գործընթացի ծրագրային, բովանդակային, մեթոդաբանական, փաստաթղթային, տեխնիկական, կազմակերպական պատշաճ սպասարկման ուղղություններով: Համալսարանը՝ իր առաքելությանը հավատարիմ, շարունակեց հանրային պատասխանատվության ծրագրերի իրականացումը, Գեղարքունիքի մարզի դպրոցների ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացների և աշակերտների մասնագիտական կողմնորոշման դասերի կազմակերպումը, գործընկերային նոր կապերի հաստատումը:

Մասնակցային սկզբունքով մշակվեց ԳՊՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի նախագիծը, որը նախատեսում է համալսարանի գործունեության գերակա ուղղությունները՝ հինգ համալիր ոլորտներում.

1. կրթական, դաստիարակչական,
2. գիտահետազոտական, նորարարական,
3. կառավարչական, ֆինանսատնտեսական, ռեսուրսային ապահովման,
4. հանրային պատասխանատվության, արտաքին կապերի և միջազգայնացման,
5. հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման:

Ստորև ներկայացնենք բուհի տարեկան գործունեության հաշվետվությունը և ինքնավերլուծության զեկույցը՝ ըստ վերոնշյալ առաջնային ուղղությունների.

1. Կրթական, դաստիարակչական աշխատանքները կազմում են Համալսարանի գործունեության առանցքը:

Որակյալ ուսուցում և ուսումնառություն ապահովելու նպատակով վերանայվել և արդիականացվել են ուսումնական պլանները՝ աշխատաշուկայի կարիքներին ու պահանջներին, գիտության զարգացման ժամանակակից միտումներին համապատասխան, հստակեցվել են մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքները, արդիականացվել են ծրագրերի բովանդակությունը, կատարելագործվել կրթական տեխնոլոգիաներն ու մեթոդները:

2021-2022 ուսումնական տարում համալսարան են ընդունվել 300 ուսանող, որից 138-ը առկա ուսուցման ֆակուլտետներ, 132-ը՝ հեռակա ուսուցման ֆակուլտետ, իսկ 30 ուսանող ընդունվել է շարունակական կրթության կարգով՝ որպես քոլեջների բարձր առաջադիմությամբ շրջանավարտներ կրթությունը շարունակելով ԳՊՀ տարբեր ֆակուլտետների երկրորդ կուրսից:

ԳՊՀ դասախոսների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են նաև Գեղարքունիքի մարզի դպրոցների ուսուցիչներ: Համալսարանի աշխատակիցները մասնակցել են մասնագիտական կարողությունների զարգացման հանրապետական և միջազգային տարբեր ծրագրերի, ձեռք բերել նոր հմտություններ:

Համալսարանի որակի ապահովման բաժինը էլեկտրոնային հարցումներ է իրականացրել ուսանողների շրջանում՝ կրթությունից նրանց բավարարվածության աստիճանը պարզելու նպատակով: Արդյունքները վերլուծվել են և ուսանողների առաջարկությունների հետ միասին ներկայացվել ԳՊՀ գիտական խորհրդին: Քննարկումների արդյունքում ձեռնարկվել են միջոցներ՝ կրթական գործընթացը բարելավելու նպատակով: Պարբերաբար կազմակերպվել են ուսանողների հայրենասիրական, բարոյական, գեղագիտական դաստիարակությանն ուղղված միջոցառումներ, ներկայացվել ԳՊՀ շրջանավարտների հաջողության պատմություններ, իրականացվել են հայրենաճանաչողական ծրագրեր:

ԳՊՀ երեք ուսանող հաղթող է ճանաչվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կազմակերպած «Լավագույն ուսանող» մրցույթում: Համալսարանի քսան ուսանողներ՝ դասախոս Արմեն Սահակյանի ղեկավարությամբ, 2022 թվականի ամռանը մեկնեցին Չեչնիայի Հանրապետություն և Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանում մասնակցեցին «Ամառային համալսարան» ծրագրին:

Հաշվետու ուսումնական տարում տարբեր ֆակուլտետների ուսանողներ ԳՊՀ իրականացրած միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակում հաջողությամբ սովորեցին եվրոպական գործընկեր բուհերում: Կրթական, դաստիարակչական գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով բուհի ղեկավարությունը համագործակցում է ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության հետ, աջակցում սովորողների տարբեր նախաձեռնությունների իրականացմանը:

2. ԳՊՀ ռազմավարական ծրագրում նախատեսված երկրորդ գերակա ոլորտը գիտահետազոտական, նորարարական գործունեությունն է:

Այս ուղղությամբ ավելացել են ԳՊՀ բյուջեում նախատեսված ֆինանսական միջոցները, խրախուսվել է դասախոսների և ուսանողների գիտահետազոտական գործունեությունը,

կազմակերպվել են ամենամյա գիտաժողովներ, կատարելագործվել են «Վիրտուալ համալսարան» համակարգի բաղադրիչները, զուգակցվել կրթության կազմակերպման ավանդական և նորարարական մեթոդները: Վերջին հինգ տարում ԳՊՀ դասախոսները հեղինակել են 49 մենագրություն, բազմաթիվ հոդվածներ, այդ թվում՝ 50-ից ավելի հոդվածներ տպագրել են արտասահմանյան գիտական պարբերականներում, մասնակցել բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովների, գրանցել 31 գյուտ, ստացել արտոնագրեր և հեղինակային իրավունքի վկայագրեր:

2021 թվականին անցկացվեց ԳՊՀ 24-րդ հանրապետական գիտաժողովը, որի արդյունքում 117 հեղինակի և համահեղինակի ներկայացրած 100-ից ավելի զեկուցումները հրատարակվեցին ԳՊՀ գիտական հոդվածների 10-րդ և 11-րդ ժողովածուներում: 2022 թվականին կազմակերպվեց ԳՊՀ 25-րդ գիտաժողովը՝ նվիրված բուհի հիմնադիր ռեկտոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Գավառի պատվավոր քաղաքացի Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 95-ամյակին: Գիտաժողովին մասնակցեցին ինչպես կայացած գիտնականներ, այնպես էլ երիտասարդ հետազոտողներ ՀՀ և արտերկրի տարբեր բուհերից և Գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտներից, այլ հաստատություններից: Հոբելյանական գիտաժողովի արդյունքում լույս է տեսել ԳՊՀ գիտական հոդվածների 12-րդ ժողովածուն, իսկ 13 և 14-րդ ժողովածուները պատրաստվում են տպագրության: ԳՊՀ գիտական պարբերականը ընդգրկված է գիտական աշխատանքների արդյունքների հրապարակման համար ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ճանաչված և ընդունելի գիտական պարբերականների շարքում: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուները տեղադրվում են նաև համալսարանի համացանցային կայքում (www.gsu.am)՝ «Գիտություն» հատվածամասում, և ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի առանձին կայքում (www. Publications.gsu.am):

2021-2022 ուսումնական տարում ԳՊՀ ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել է հանրապետական գիտաժողով, որին մասնակցել են ՀՀ տարբեր բուհերի ուսանողներ: Իսկ նախորդ տարվա գիտաժողովին ներկայացված լավագույն զեկուցումները հրատարակվել են ԳՊՀ ուսանողական գիտական պարբերականում: Բուհի ուսանողներն ակտիվորեն մասնակցել են Երևանի պետական համալսարանում, Վանաձորի պետական համալսարանում, Շիրակի պետական համալսարանում, Արցախի պետական համալսարանում, Արցախի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանում, Շուշիի տեխնոլոգիական համալսարանում և այլ բուհերում կայացած հանրապետական և միջազգային գիտաժողովներին՝ առկա և առցանց ձևաչափերով:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնում ուսումնասիրվում է պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմա՝ նվիրված «Սասունցի Դավիթ» էպոսին, որը խորությամբ հետազոտվում է եվրոպական էպոսագիտության համատեքստում: Գիտական խմբի ղեկավարը ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանն է: Գիտահետազոտական գործունեության ոլորտում կարևոր ենք համարում համալսարանի համագործակցային կապերի ընդլայնումը արտերկրի և հանրապետության առաջատար գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների, ձեռնարկությունների, գործարար կառույցների հետ, բուհի աստիճանական ինտեգրումը Եվրոպական

հետազոտական տարածքին (EURAXESS), դասախոսների և ուսանողների գիտական, հետազոտական գործունեության սկզբունքների համապատասխանեցումը Հետազոտողների եվրոպական խարտիայի դրույթներին:

3. ԳՊՀ ռազմավարական ծրագրում գերակա են նաև կառավարչական, ֆինանսատնտեսական, ռեսուրսային ապահովման ոլորտները:

Նշված ուղղություններով կարևորվում են համալսարանի կառավարման համակարգի բարելավումը, նորագույն տեխնոլոգիաների միջոցով վարչարարության արդյունավետության բարձրացումը:

2020-2022 թվականները ցույց տվեցին, որ համալսարանն ի զորու է արտակարգ իրավիճակներում ապահովել անխափան գործունեություն, ըստ անհրաժեշտության կիրառել ճգնաժամային կառավարման ճկուն գործիքներ: Այդուհանդերձ, առաջնային խնդիրներ ենք համարում համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացումը, ֆինանսական կայունության պահպանումը, զարգացման ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և տնտեսական ռեսուրսների ապահովումը: Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում պահպանվել է պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի կայունությունը, իրականացվել են պատշաճ գործավարություն և անխափան փաստաթղթաշրջանառություն, օպերատիվ ընթացք են ստացել բոլոր հարցումներն ու գրությունները: Համալսարանի կառավարումը շարունակվել է օրինականության, ակադեմիական ազնվության և սոցիալական արդարության սկզբունքներով՝ ապահովելով հստակություն, արդյունավետություն և կանխատեսելիություն:

2021-2022 ուսումնական տարում համալսարանի մասնաշենքերում կատարվել են ընթացիկ նորոգման և բարեկարգման աշխատանքներ, հիմնանորոգվել են ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի տանիքի վնասված հատվածը, մարզադահլիճի տանիքը: Բուհում պահպանվել են տեխնիկական անվտանգության կանոնները, սանիտարական, հակահամաճարակային նորմերի պահանջները:

Կան անելիքներ ներառական, կայուն և անվտանգ կրթական միջավայր ապահովելու ուղղությամբ: Ծրագրերի իրականացման ճանապարհին լուրջ խնդիրներ են հարուցում բազմաթիվ գործոններ՝ ուսման վարձերի տարաժամկետ վճարումները, ուսանողների ընտանիքների ոչ բարվոք սոցիալական վիճակը, ֆինանսական պարտավորությունները դժվարությամբ կատարելը, դիմորդների սակավությունը, մարզից շարունակվող արտագաղթը, աշխատատեղերի պակասը, միջհամայնքային կանոնավոր գործող տրանսպորտի բացակայությունը, արտաքին մարտահրավերները: Համալսարանի համար չլուծված խնդիրներ են մնում հանրակացարանի հիմնանորոգման, նկուղային հարկերում ապաստարանների ստեղծման, գրադարանների և ընթերցասրահի արդիականացման, մարզադահլիճների նորոգման ու կահավորման, ժամանակակից ճաշարանի գործարկման, բացօդյա մարզահրապարակի կառուցման, փոքր տպարանի հիմնման հարցերը:

4. Համալսարանի գործունեության առաջնային ոլորտներից են հանրային պատասխանատվության, արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությունները:

Համալսարանը շարունակել է սոցիալական տարաբնույթ ծրագրերի իրականացումը, վերապատրաստման անվճար դասընթացների կազմակերպումը մասնագետների լայն շրջանակի համար, ուսման վարձի զեղչեր է կիրառել Արցախյան քառասունչորսօրյա պատերազմին մասնակցած, մարտական հերթապահություն իրականացրած, սոցիալապես

անապահով, ինչպես նաև անչափահաս երեխաներ ունեցող ուսանողների նկատմամբ: Բուհի ուսանողներին նյութապես աջակցել են Հայ Օգնության Ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամը, Հայ կրթական հիմնարկությունը, «ԱՄՔՈՐ» բարեգործական միությունը, այլ հաստատություններ:

Միջոցներ են ձեռնարկվել համալսարանի արտաքին կապերի ակտիվացման և համագործակցության շրջանակի ընդլայնման ուղղությամբ, աշխատանքները շարունակվել են Գործատուների հանրապետական միության, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի, Ակադեմիական փոխճանաչման եւ շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի, Գեղարքունիքի մարզի դպրոցների, մշակութային, երիտասարդական կառույցների, ՀՀ պետական ու ոչ պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ:

Բուհն անդամակցում է երկու տասնյակից ավել միջազգային ծրագրերի, որոնց շրջանակներում իրականացնում է կրթական գործի կազմակերպման առաջավոր փորձի ուսումնասիրություն, մասնագիտական կրթական ծրագրերի և ուսումնական պլանների հենանիշային վերլուծություն և բարելավում:

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանը համագործակցության պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր է կնքել մի շարք արտասահմանյան բուհերի հետ, վերակնքվել են ժամկետը լրացած պայմանագրերը: Հանրությանը համալսարանի մասին օպերատիվ տեղեկատվություն է տրամադրել ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժինը՝ լուրերը տարածելով բուհի համացանցային կայքի, ինչպես նաև սոցիալական կայքերի միջոցով: Գործում են նաև ԳՊՀ ուսանողական խորհրդի, միջազգային համագործակցության ծրագրերի ենթակայքերը, ԳՊՀ համացանցային կայքի «Youtube» տեսահարթակը և «Facebook» (Դիմագիրք), «Instagram» սոցիալական կայքերը, որտեղ ուսուցողական նյութերն անվճար ներբեռնվում են և ներկայացվում հանրությանը:

Համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը նախագծել և գործարկել է ԳՊՀ պաշտոնական կայքի նոր տարբերակը: Օրակարգում է «Վիրտուալ համալսարան» բազմաբաղադրիչ համակարգի ներդնումը, որը կներառի ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ թվային գործիքներ:

Նշված ոլորտում բուհի խնդիրներն են մարզի ազգաբնակչության տարբեր շերտերի կրթական կարիքների բացահայտումն ու հնարավորության սահմաններում դրանց բավարարմանն ուղղված միջոցների ձեռնարկումը, ներառական կրթական միջավայրի ստեղծումը, բուհի նկատմամբ հանրային վստահության ապահովումը, համալսարանի բարի համբավի ամրապնդումը:

5. ԳՊՀ գործունեության գերակա ուղղություններից է հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացումը:

Նպատակը՝ ԳՊՀ-ում ներդրված հակակոռուպցիոն կառուցակարգերի հետևողական կիրառումն է: Այդ նպատակին համապատասխան՝ նախորդ տարիների պես առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները. ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի հիման վրա բուհի գործունեության բոլոր ոլորտներում բացառվել է կոռուպցիայի ցանկացած դրսևորում, պահպանվել է ակադեմիական ազնիվ միջավայրը՝ որպես որակյալ կրթության և

արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ և պարտադիր պայման, կիրառվել են ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթները և ԳՊՀ էթիկայի կանոնները, համալսարանի ներքին շահառուների և արտաքին շահակիցների հետ հարաբերություններում պահպանվել են բարեվարքության սկզբունքները:

Բուհի որակի ապահովման բաժինը հարցումներ է անցկացրել ուսանողների շրջանում՝ ուղղված բուհում կոռուպցիոն վտանգների բացահայտմանը և կանխմանը: Հարցումների արդյունքում ուսանողները նշել են, որ ԳՊՀ-ում կոռուպցիոն դրսևորումների չեն հանդիպել: Բուհի ֆինանսատնտեսական գործունեությունը օրենքով սահմանված կարգով ենթարկվել է ամենամյա աուդիտի: Պատշաճ հսկողություն է իրականացվել ուսանողների տեղափոխման և վերականգնման գործընթացների, ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ քննությունների, անվճար և վճարովի ուսուցման համակարգերում սովորողների փոխատեղումների, ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարների մասնակի փոխհատուցումների, սովորողների և դասախոսների ակադեմիական շարժունության ծրագրերի և այլ գործընթացների նկատմամբ:

2021-2022 ուսումնական տարին համալսարանը եզրափակեց՝ կյանք ճանապարհելով շրջանավարտների 25-րդ սերնդին, իսկ 2022 թվականի սեպտեմբերի մեկին Գավառի պետական համալսարանի կամարների ներքո 30-րդ անգամ հնչեց առաջին զանգը՝ ազդարարելով հոբելյանական ուսումնական տարվա մեկնարկը «Կրթությունը՝ մրցունակության գրավական» կարգախոսով:

Ռուզաննա Հակոբյան՝
Գավառի պետական համալսարանի ռեկտոր,
Իրավաբանական գիտությունների դոկտոր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇՆՈՐՀՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1. 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
011301.00.6 ***Ընդհանուր մանկավարժություն***		
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության բակալավր
011301.00.7 ***Ընդհանուր մանկավարժություն***		
011301.01.7	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության մագիստրոս
011401.00.6 ***Մասնագիտական մանկավարժություն***		
011401.01.6	Կենսաբանություն	Մանկավարժության բակալավր
011401.03.6	Աշխարհագրություն	Մանկավարժության բակալավր
011401.18.6	Պատմություն	Մանկավարժության բակալավր
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.00.7 ***Մասնագիտական մանկավարժություն***		
011401.01.7	Կենսաբանություն	Մանկավարժության մագիստրոս
011401.03.7	Աշխարհագրություն	Մանկավարժության մագիստրոս
011401.18.7	Պատմություն	Մանկավարժության մագիստրոս
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
041101.00.6 ***Հաշվապահական հաշվառում և հարկում***		
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր

041101.00.7 *Հաշվապահական հաշվառում և հարկում*		
041101.01.7	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	Տնտեսագիտության մագիստրոս
041201.00.6 *Ֆինանսներ*		
041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
041201.00.7 *Ֆինանսներ*		
041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	Տնտեսագիտության մագիստրոս
031101.00.6 *Տնտեսագիտություն*		
031101.01.6	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության բակալավր
031101.00.7 *Տնտեսագիտություն*		
031101.01.7	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության մագիստրոս
042101.00.6 *Իրավագիտություն*		
042101.01.6	Իրավագիտություն	Իրավագիտության բակալավր
042101.00.7 *Իրավագիտություն*		
042101.01.7	Իրավագիտություն	Իրավագիտության մագիստրոս
053101.00.6 *Քիմիա*		
053101.02.6	Դեղագործական քիմիա	Քիմիայի բակալավր
054201.00.6 *Աշխարհագրություն*		
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Աշխարհագրության բակալավր
061103.00.6 *Համակարգչային ճարտարագիտություն*		
061103.01.6	Համակարգչային ճարտարագիտություն	Ինֆորմատիկայի բակալավր
061103.00.7 *Համակարգչային ճարտարագիտություն*		
061103.01.7	Համակարգչային ճարտարագիտություն	Ինֆորմատիկայի մագիստրոս
101801.00.6 *Սերվիս*		
101801.01.6	Սերվիս	Սերվիսի բակալավր
052201.00.6 *Բնապահպանություն և բնօգտագործում*		
052201.01.6	Բնապահպանություն և բնօգտագործում	Շրջակա միջավայրի բակալավր

1.2. 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ընդունելության քննություններ				ընդունվածների քանակը
	մրցութային քննություններ			ոչ մրցու-թային քնն.	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1.Բանասիրական ֆակուլտետ					
Հայոց լեզու և գրականություն	Հլգ (բ)	Հլգ (գ)		ՀՊ * կամ Օտլ*	7
Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ (բ)	Ռլ (գ)		Հլգ*	-
Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ (բ)	Անգլ (գ)		Հլգ*	7
2. Բնագիտական ֆակուլտետ					
Կենսաբանություն	Կ (գ)	Ք (գ) ** կամ Ֆ (գ) **		Հլգ*	2
Սերվիս	Ա (գ) կամ ՀՊ (գ)	Օտլ (գ) **		Հլգ*	1
Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա (գ)	Մ (գ)**		Հլգ*	1
Համակարգչային ճարտարագիտություն	Մ (գ)	Ֆ (գ)**		Հլգ*	1
Դեղագործական քիմիա	Ք (գ)	Կ (գ) ** կամ Ֆ (գ) **		Հլգ*	2
3.Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ					
Պատմություն	ՀՊ (գ)	ԸՊ ** (գ) կամ Օտլ ** (գ)		Հլգ*	1
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ (գ)	Մ (գ) ** կամ Օտլ(գ) **			6
Իրավագիտություն	ՀՊ (գ)	Հլգ (գ) կամ Օտլ (գ)		Օտլ* կամ Հլգ*	10
4. Տնտեսագիտական ֆակուլտետ					
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ) **		Օտլ*	5
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ) **		Օտլ*	6
Տնտեսագիտություն	Մ (գ)	Հլգ (գ) **		Օտլ*	3
Ընդամենը					52

5. Հեռակա ուսուցման ֆակուլտետ					
Հայոց լեզու և գրականություն	Հլգ (բ)	Հլգ (գ)		ՀՊ * կամ Օտլ *	-
Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ (բ)	Ռլ (գ)		Հլգ (գ)*	**7**
Աշխարհագրություն	Ա (գ)	Մ (գ) **		Հլգ*	-
Պատմություն	ՀՊ (գ)	ԸՊ ** (գ) կամ Օտլ ** (գ)		Հլգ *	5
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ (գ)	Մ (գ) ** կամ Օտլ(գ) **			18
Իրավագիտություն	ՀՊ (գ)	Հլգ (գ) կամ Օտլ (գ)		Օտլ* կամ Հլգ*	40
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ) **		Օտլ *	28
Կենսաբանություն	Կ (գ)	Ք (գ) ** կամ Ֆ (գ) **		Հլգ*	-
Համակարգչային ճարտարագիտություն	Մ (գ)	Ֆ (գ)**		Հլգ*	11
Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա (գ)	Մ (գ)**		Հլգ*	8
Սերվիս	Ա (գ) կամ ՀՊ (գ)	Օտլ (գ) **		Հլգ*	6
Դեղագործական քիմիա	Ք (գ)	Կ (գ) ** կամ Ֆ (գ) **		Հլգ*	9
Բնապահպանություն և բնօգտագործում	Կ (գ)	Ֆ (գ)** կամ Ք (գ)**		Հլգ*	-
Ընդամենը					132

1.3. 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Անվճար տեղեր	Վճարովի տեղեր	Ընդունվածների թվակազմը
	Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ		
1. Բանասիրական ֆակուլտետ			
Հայոց լեզու և գրականություն	1	14	3
Ռուսաց լեզու և գրականություն	-	15	5
Անգլերեն լեզու և գրականություն	1	24	3
2. Բնագիտական ֆակուլտետ			
Կենսաբանություն	-	12	4
Համակարգչային ճարտարագիտություն	2	13	6
3. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ			
Իրավագիտություն	-	20	18
Պատմություն	2	13	6
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2	13	15
4. Տնտեսագիտական ֆակուլտետ			
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	3	12	6
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	2	13	4
Տնտեսագիտություն	1	14	6
Ընդամենը	14	163	76

2. «ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1	**Ղազարյան Էդուարդ**	*«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
2	**Մարգարյան Հասմիկ**	*Գավառի պետական համալսարանի հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս, «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար*
3	**Սարգսյան Կարեն**	*ՀՀ Գեղարքունիքի մարզպետ*
4	**Մովսիսյան Արթուր**	*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահի տեղակալ*
5	**Մուխսյան Կարեն**	*ՀՀ վարչապետի աշխատակազմի տարածքային զարգացման և շրջակա միջավայրի հարցերի վարչության պետ*
6	**Անդրիկյան Արման**	*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական*
7	**Հակոբյան Արսեն**	*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության ուսանողների աջակցության բաժնի պետ*
8	**Շուքուրյան Յուրի**	*ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի տեղակալ*
9	**Գևորգյան Էմիլ**	*ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
10	**Ղազարյան Հայկ**	*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
11	**Սարգսյան Բագրատ**	*Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն*

12	**Հակոբյան Հրանուշ**	*Գավառի պետական համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
13	**Կատվալյան Վիկտոր**	*Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ*
14	**Հովհաննիսյան Անդրանիկ**	*Գավառի պետական համալսարանի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ*
15	**Պողոսյան Աշխունջ**	*Գավառի պետական համալսարանի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ*
16	**Բունիաթյան Սյուզաննա**	*Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանող*
17	**Հովհաննիսյան Արշակ**	*Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանող*
18	**Միրիբյան Արփի**	*Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող, ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ*
19	**Պարոնիկյան Անահիտ**	*Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող*
20	**Վարդանյան Անահիտ**	*Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող*

3. ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1	ԳՊՀ գիտական խորհրդի նախագահ՝ **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի**	*ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*
2	ԳՊՀ գիտական խորհրդի քարտուղար՝ **Ասոյան Թաթուլ Արտիկի**	*Բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*
3	ԳՊՀ գիտական խորհրդի անդամներ՝ **Կուտուզյան Նելլի Ալբերտի**	*ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*
4	**Ավագյան Մարտին Պատվականի**	*Բնագիտական ֆակուլտետի դեկան, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր*
5	**Ղաջոյան Համլետ Գրիշայի**	*Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլ. գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*
6	**Ամիրխանյան Սամվել Գրիգորի**	*Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*
7	**Սուքիասյան Սերգեյ Սպարտակի**	*Տնտեսագիտության դոկտոր*
8	**Առաքելյան Արա Հրաչիկի**	*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
9	**Հակոբյան Արմեն Աշմատի**	*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*
10	**Թունյան Վալերի Գեորգիի**	*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
11	**Հերգնյան Մարիամ Նորիկի**	*Տնտեսագիտական ֆակուլտետի փոխդեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
12	**Ղուլոյան Հակոբ Մելսիկի**	*Հաշվապահական հաշվառում ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
13	**Զաքոյան Հրաչյա Սամվելի**	*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*
14	**Հակոբյան Մամիկոն Զալիբեկի**	*Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*
15	**Միրիբյան Գայանե Աշոտի**	*Օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտ. թեկնածու*
16	**Քուրքչյան Լուսիկ Ներսեսի**	*Մանկավարժական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*
17	**Խուրշուդյան Արմեն Կորյունի**	*Տեխնիկական գիտությունների թեկնածու,*

		դոցենտ
18	**Մուխսիխաչոյան Արուսյակ Մուշեղի**	*Մանկավարժական գիտությունների թեկնածու*
19	**Խաչատրյան Գայանե Արտիկի**	*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*
20	**Ղռեջյան Լուսինե Խաչատուրի**	*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*
21	**Ներսիսյան Վարսիկ Արմենի**	*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*
22	**Խաչիկյան Թերմինե Գագիկի**	*ԳՊՀ Ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու*
23	**Ավետիսյան Կարինե Սամվելի**	*Քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ*
24	**Ավետիսյան Վարազդատ Կորյունի**	*Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու*
25	**Մուրադյան Գուրգեն Գևորգի**	*ԳՊՀ գլխավոր հաշվապահ*
26	**Սաֆարյան Խաչատուր Ժորայի**	*ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչ*
27	**Սիրունյան Լյովա Գուրգենի**	*ԳՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ*
28	**Սարգսյան Ալլա Էդիկի**	*Տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժնի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի*
29	**Բալագոզյան Արմինե Հովիկի**	*Բնագիտական ֆակուլտետի Համակարգչային ճարտարագիտություն բաժնի մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի*
30	**Դեղոյան Մանե Խորենի**	*Բանասիրական ֆակուլտետի Անգլերեն լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի*
31	**Մարգարյան Ջուլիետա Գեղամի**	*Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Պատմություն բաժնի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի*

4. ԳՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐՆԵՐ

Հ/Հ	*Անուն, ազգանուն*	*Երկիր*	*Դիպլոմի բնութագիրը*	*Հանձման ժամկետը*	**Դիպլոմի համարը**
1.	**Իվան Իվանչև**	Բուլղարիա	Հասարակական ակտիվ գործունեության համար	19.05.2000	01
2.	**Ռիթա Պալյան**	ԱՄՆ	Հայրենասիրական-մարդասիրական արդյունավետ գործունեության համար	25.05.2004	02
3.	**Ջոն Էվանս**	ԱՄՆ	Հասարակական ակտիվ գործունեության համար	15.11.2004	03
4.	**Ռոբերտ Ենգիբարյան**	Ռուսաստան	Գիտության ասպարեզում ձեռք բերած նվաճումների և բարեսիրական գործունեության համար	29.04.2006	04
5.	**Արշակ Պողոսյան**	Գերմանիա	Կիրառական ֆիզիկայի բնագավառում ունեցած ներդրումների, ինչպես նաև հայ-գերմանական գիտական համագործակցության ծրագրերի իրականացման համար	18.06.2008	05
6.	**Ռալֆ Յիրիկյան**	ՀՀ	Կրթության և գիտության գործում ներդրած մեծ վաստակի համար	30.05.2012	06
7.	**Ժիրայր Նիշանյան**	ԱՄՆ	Գիտական վաստակի, հայ երիտասարդների կրթության գործում մեծ ավանդի համար	03.10.2015	07

5. ԳՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

Հ/հ	Անուն, հայրանուն, ազգանուն	Երկիր	Դիպլոմի բնութագիրը	Հանձման ժամկետը	Դիպլոմի համարը
1.	**Ժիրայր Նիշանյան**	ԱՄՆ	Հայրենասիրական, բարեգործական արդյունավետ գործունեության համար	08.09.2007	01
2.	**Վահան Ափրոյան**	ՌԴ	Ուսանողներին նյութական և բարոյական աջակցության համար	30.06.2008	02
3.	**Բրունո Դյութուա**	Ֆրանսիա	Բարեգործական և մարդասիրական գործունեության համար	14.12.2011	03
4.	**Ռալֆ Յիրիկյան**	ՀՀ	Հայրենասիրական, մարդասիրական, գործունեության համար	21.06.2012	04
5.	**Ֆրանսիս Ժելիբտեր**	Ֆրանսիա	Բարեգործական և մարդասիրական գործունեության համար	03.05.2013	05

6. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ԺԻՐԱՅՐ ՆԻՇԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Ասլանյան Աննա Արմենի	Բանասիրական հայոց լեզու և գրականություն	1-ին
2.	Սմբաթյան Արուսյակ Սմբաթի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	1-ին
3.	Իսպիրյան Անժելա Սամվելի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	1-ին
4.	Ներսիսյան Վիկտրյա Արթուրի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	1-ին
5.	Հովհաննիսյան Վեներա Արտավազդի	Տնտեսագիտական, ֆինանսներ	1-ին
6.	Մարտիրոսյան Վարդան Էդիկի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն	1-ին
7.	Հակոբյան Գայանե Արծրունու	Տնտեսագիտական, ֆինանսներ	1-ին
8.	Մակարյան Անի Սարգսի	Տնտեսագիտական, ֆինանսներ	1-ին
9.	Խաչատրյան Արևիկ Վիգենի	Բնագիտական, կենսաբանություն	1-ին
10.	Մելքոնյան Հրանուշ Հովիկի	Հումանիտար մասնագիտությունների, տարրական մանկավարժություն և մեթոդիկա	1-ին

11.	Ասատրյան Վարդ Ռոբերտի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն	1-ին
12.	Դաշտոյան Լալա Լևոնի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	1-ին
13.	Վարդանյան Ալլա Մարզպետունու	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	2-րդ
14.	Հովեյան Հասմիկ Արտակի	Հումանիտար մասնագիտությունների, տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2-րդ
15.	Գասպարյան Սյուզաննա Արտակի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	2-րդ
16.	Պողոսյան Սյուզաննա Գոռի	Բանասիրական անգլերեն լեզու և գրականություն	2-րդ
17.	Ենգիբարյան Թագուհի Բենիամինի	Բանասիրական անգլերեն լեզու և գրականություն	2-րդ
18.	Ջուղեցյան Հասմիկ Վահրամի	Բնագիտական, կենսաբանություն	2-րդ
19.	Բադիկյան Լիլիա Պավելի	Տնտեսագիտական, ֆինանսներ	2-րդ
20.	Բուդաղյան Արմենուի Արմենի	Տնտեսագիտական, ֆինանսներ	2-րդ
21.	Մալաքյան Էդիտա Էդուարդի	Տնտեսագիտական, ֆինանսներ	2-րդ
22.	Հոդաբաշյան Մարիամ Միսակի	Հումանիտար մասնագիտությունների, տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2-րդ
23.	Սարգսյան Մելինե Արմանի	Բանասիրական անգլերեն լեզու և գրականություն	2-րդ
24.	Մուրադյան Գուրգեն Սամվելի	Տնտեսագիտական, ֆինանսներ	2-րդ
25.	Սաղեյան Արևիկ Արմենի	Հումանիտար մասնագիտությունների, տարրական մանկավարժություն և մեթոդիկա	3-րդ
26.	Ավետիսյան Անիկ Խաչատուրի	Հումանիտար մասնագիտությունների, տարրական մանկավարժություն և մեթոդիկա	3-րդ
27.	Գևորգյան Թեհմինա Լեռնիկի	Հումանիտար մասնագիտությունների, տարրական մանկավարժություն և մեթոդիկա	3-րդ
28.	Հարությունյան Գոհար Հարությունի	Բանասիրական անգլերեն լեզու և գրականություն	3-րդ
29.	Աֆրիկյան Անահիտ Աշոտի	Բանասիրական անգլերեն լեզու և գրականություն	3-րդ
30.	Գուրոյան Ալինա Լևոնի	Բանասիրական անգլերեն լեզու և գրականություն	3-րդ
31.	Պետրոսյան Մելանյա Դավթի	Բնագիտական, սերվիս	3-րդ
32.	Բնյան Ժաննա Սարգսի	Բնագիտական, սերվիս	3-րդ
33.	Ղարիբյան Անի Ռուբիկի	Բնագիտական, դեղագործական	3-րդ

		քիմիա	
34.	Չատիկյան Լամարա Ռոբերտի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	3-րդ
35.	Հովհաննիսյան Ռիմա Էդգարի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում	3-րդ
36.	Պողոսյան Լիլիթ Հակոբի	Տնտեսագիտական, տնտեսագիտություն	3-րդ
37.	Աղաջանյան Անուշ Վարդանի	Տնտեսագիտական, ֆինանսներ	3-րդ
38.	Ստեփանյան Մերի Թելմանի	Բանասիրական անգլերեն լեզու և գրականություն	4-րդ
39.	Հովհաննիսյան Անի Կամոյի	Բանասիրական անգլերեն լեզու և գրականություն	4-րդ
40.	Ավետիսյան Լիլիթ Սևակի	Բանասիրական անգլերեն լեզու և գրականություն	4-րդ
41.	Գափոյան Արևիկ Անդրանիկի	Բանասիրական անգլերեն լեզու և գրականություն	4-րդ
42.	Խեքոյան Մարիամ Սամվելի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն	4-րդ
43.	Քոլոզյան Մարիետա Արարատի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն	4-րդ
44.	Խզմալյան Ժենյա Թաթոսի	Տնտեսագիտական, ֆինանսներ	4-րդ
45.	Ավետիսյան Կարինե Արմանի	Տնտեսագիտական, ֆինանսներ	4-րդ
46.	Այվազյան Անուշ Միսակի	Տնտեսագիտական, ֆինանսներ	4-րդ
47.	Մովսիսյան Գրետա Սերգեյի	Տնտեսագիտական, ֆինանսներ	4-րդ

«ԳՈՒԼԱՄԵՐՅԱՆ ԿՐԹԱՎՃԱՐ»

Հ/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Ներսիկյան Թագուհի Արմենի	Հումանիտար մասնագիտությունների, տարրական մանկավարժություն և մեթոդիկա	1-ին
2.	Հովհաննիսյան Սալբինա Սարգիսի	Հումանիտար մասնագիտությունների, տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2-րդ

«ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ»

Հ/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Միրիբյան Նունե Արամայիսի	Հումանիտար մասնագիտությունների, տարրական մանկավարժություն և մեթոդիկա, մագիստրատուրա	2-րդ
2.	Սարգսյան Մարատ Ավետիքի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն	2-րդ
3.	Ապկարյան Լուիզա Արտակի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն	4-րդ

4.	Մարդոյան Շուշան Արայիկի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն, մագիստրատուրա	2-րդ
5.	Բաղդասարյան Վոլոդյա Հակոբի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն,	1-ին
6.	Հարությունյան Դավիթ Գարիկի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն, մագիստրատուրա	2-րդ
7.	Կարապետյան Ինեսսա Դմիտրիի	Տնտեսագիտական, ֆինանսներ,	4-րդ
8.	Գասպարյան Ժենյա Կարենի	Բնագիտական, դեղագործական քիմիա	4-րդ
9.	Արևշատյան Աննա Կարենի	Տնտեսագիտական, հաշվապահական հաշվառում, մագիստրատուրա	2-րդ

«ԱՄՔՈՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հ/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Գևորգյան Վահե Գագիկի	Հեռակա ուսուցման, հաշվապահական հաշվառում	4-րդ
2.	Ենգիբարյան Թագուհի Բենիամինի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	2-րդ
3.	Վարդանյան Սյուզաննա Դերենիկի	Հեռակա ուսուցման, իրավագիտություն	2-րդ
4.	Կյուրեղյան Անի Հրայրի	Հեռակա ուսուցման, հաշվապահական հաշվառում և հարկում	4-րդ
5.	Բաղոյան Արփինե Միհրի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն, մագիստրատուրա	2-րդ
6.	Դաղոյան Լիլիթ Խաչիկի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն, մագիստրատուրա	2-րդ
7.	Զոհրաբյան Զարուհի Հարությունի	Տնտեսագիտական, տնտեսագիտություն, մագիստրատուրա	2-րդ
8.	Շահինյան Անահիտ Կամոյի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն, մագիստրատուրա	2-րդ
9.	Պողոսյան Մարինե Խաչիկի	Բանասիրական, ռուսաց լեզու և գրականություն, մագիստրատուրա	2-րդ
10.	Սաղաթելյան Անուշ Գևորգի	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն, մագիստրատուրա	2-րդ
11.	Պետրոսյան Անգելինա Հովհաննեսի	Տնտեսագիտական, ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	2-րդ
12.	Մուրադյան Նոնա Վահագի	Տնտեսագիտական, տնտեսագիտություն	2-րդ
13.	Կարապետյան Թամարա Մանվելի	Հումանիտար մասնագիտությունների, տարրական մանկավարժություն և մեթոդիկա, մագիստրատուրա	2-րդ

«ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՀՀ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Նիկողոսյան Միեր Անդրանիկի	Հեռակա ուսուցման, իրավագիտություն	3-րդ

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ֆակուլտետ, բաժին	Կուրս
1.	Փարիսաքոյան Արաքսյա Հովհաննեսի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն	1-ին
2.	Հակոբյան Գայանե Արծրունու	Տնտեսագիտական, ֆինանսներ	1-ին
3.	Պիպոյան Գոհար Խաչիկի	Հումանիտար մասնագիտությունների, իրավագիտություն	4-րդ
4.	Հայրապետյան Վարդինե Հակոբի	Բանասիրական, հայոց լեզու և գրականություն	3-րդ
5.	Չատիկյան Ռուստամ Մկրտչի	Հեռակա ուսուցման, համակարգչային ճարտարագիտություն	1-ին
6.	Ժամհարյան Ալֆրեդ Աբրահամի	Հեռակա ուսուցման, հաշվապահական հաշվառում և հարկում	2-րդ
7.	Միքայելյան Թամարա Միքայելի	Հեռակա ուսուցման, իրավագիտություն	3-րդ
8.	Հովեյան Արևշատ Վանիկի	Բնագիտական, համակարգչային ճարտարագիտություն	4-րդ
9.	Աղաջանյան Անուշ Վարդանի	Տնտեսագիտական, ֆինանսներ	3-րդ
10.	Վարդանյան Ալլա Մարզպետունու	Բանասիրական, անգլերեն լեզու և գրականություն	2-րդ
11.	Մանուկյան Խաչիկ Երեմի	Հեռակա ուսուցման, հաշվապահական հաշվառում և հարկում	1-ին
12.	Սարգսյան Հովհաննես Հայկի	Հեռակա ուսուցման, իրավագիտություն	1-ին
13.	Եզդոզլյան Ռոման Դավթի	Հեռակա ուսուցման, աշխարհագրություն	5-րդ
14.	Հակոբյան Ալինա Տիգրանի	Հեռակա ուսուցման, տարրական մանկավարժություն և մեթոդիկա	5-րդ
15.	Խզմալյան Սաթենիկ Ստեփանի	Հեռակա ուսուցման, տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2-րդ
16.	Հավտոյան Արտակ Արմենի	Հեռակա ուսուցման, համակարգչային ճարտարագիտություն	5-րդ
17.	Հակոբյան Սիլվա Հրահատի	Հումանիտար մասնագիտությունների, պատմություն, մագիստրատուրա	1-ին

ՏԱՐԲԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.	«ՀԱԼԵՊ» հայրենակցական, բարեսիրական ՀԿ	Հակոբյան Եվա Արայիկի	Հեռակա ուսուցման, տնտեսագիտություն	2-րդ
2.	ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Սեյրանյան Արմինե Վահագնի	Տնտեսագիտական, տնտեսագիտություն	3-րդ
3.	Դիակոնիկա ԲՀ	Գասպարյան Իրինա Լուդվիկի	Հումանիտար մասնագիտությունների, պատմություն, մագիստրատուրա	2-րդ

7. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ (ՆԵՐԱՌՅԱԼ ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐԸ)՝ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ

Ֆակուլտետ, ամբիոններ	Պրոֆե-սորներ	Դոցենտ-ներ	Ասիս-տենտներ	Դասա-խոսներ	Ընդամենը
Բանասիրական					
Հայոց լեզվի և գրականության	2	5	4	2	13
Օտար լեզվի և գրականության	1	5	5	6	17
Բնագիտական					
Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի,	2	4	-	9	15
Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	1	5	-	8	14
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ					
Իրավագիտության և	1	2	3	8	14
Հասարակական գիտությունների ամբիոններ	2	7	1	8	18
Տնտեսագիտական					
Կառավարման և ֆինանսների	5	4	1	10	20
Հաշվապահական հաշվառման	4	1	1	5	11
Ընդամենը	***18***	***33***	***15***	***56***	***122***

8. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ

8.1. Բակալավրիատ

Ֆակուլտետ, մասնագիտություն	Ուսանողների թիվը				Ընդա-մենը
	I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	
Բանասիրական					
Հայոց լեզու և գրականություն	7	8	5	-	*20*
Ռուսաց լեզու և գրականություն	-	-	-	-	-
Անգլերեն լեզու և գրականություն	7	10	8	8	*33*
Ընդամենը ֆակուլտետում	*14*	*18*	*13*	*8*	*53*
Բնագիտական					
Կենսաբանություն	2	-	-	-	*2*
Սերվիս	1	6	4	-	*11*
Համակարգչային ճարտարագիտություն	8	9	3	6	*26*
Դեղագործական քիմիա	2	4	2	-	*8*
Քարտեզագրություն և կադաստրային գործ	1	-	-	-	*1*
Ընդամենը՝ ֆակուլտետում	*14*	*19*	*9*	*6*	*48*
Հումանիտար մասնագիտությունների					
Իրավագիտություն	4	5	4	4	*17*
Պատմություն	1	-	-	-	*1*
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	6	7	4	-	*17*
Ընդամենը՝ ֆակուլտետում	*11*	*12*	*8*	*4*	*35*
Տնտեսագիտական					
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	5	14	8	8	*35*
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	4	3	6	-	*13*
Տնտեսագիտություն	3	6	4	4	*17*
Ընդամենը՝ ֆակուլտետում	*12*	*23*	*18*	*12*	*65*
ԸՆԴԱՄԵՆԸ	***51***	***72***	***48***	***30***	***201***

8.2. Մագիստրատուրա

Ֆակուլտետ, մասնագիտություն	Ուսանողների թիվը		Ընդամենը
	I կուրս	II կուրս	
Բանասիրական			
Հայոց լեզու և գրականություն	4	3	7
Ռուսաց լեզու և գրականություն	2	2	4
Անգլերեն լեզու և գրականություն	3	4	7
Ընդամենը ֆակուլտետում	9	9	18
Բնագիտական			
Համակարգչային ճարտարագիտություն	6	6	*12*
Կենսաբանություն	2	-	*2*
Ընդամենը՝ ֆակուլտետում	8	6	*14*
Հումանիտար մասնագիտությունների			
Իրավագիտություն	16	16	*32*
Պատմություն	6	3	*9*
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	14	11	*25*
Ընդամենը ֆակուլտետում	*36*	*30*	*66*
Տնտեսագիտական			
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	6	6	*12*
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	5	4	*9*
Տնտեսագիտություն	6	3	*9*
Ընդամենը ֆակուլտետում	*17*	*13*	*30*
ԸՆԴԱՄԵՆԸ	***70***	***58***	***128***

8.3. Հեռակա ուսուցման ֆակուլտետ

Ֆակուլտետ, մասնագիտություն	ՈՒսանողների թիվը բակալավր					Ընդա-մենը
	I կուրս	II կուրս	III կուրս	IV կուրս	V կուրս	
Հայոց լեզու և գրականություն	-	4	-	-	-	4
Ռուսաց լեզու և գրականություն	7	-	-	-	-	7
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	18	17	15	19	20	89
Պատմություն	5	7	3	4	5	24
Սերվիս	6	-	5	5	-	16
Իրավագիտություն	40	39	16	30	33	158
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	30	36	23	19	17	125
Համակարգչային ճարտարագիտություն	14	19	4	6	13	56
Քարտեզագրություն և կադաստրային գործ	11	3	5	-	6	25
Դեղագործական քիմիա	8	-	-	-	5	13
Կենսաբանություն	-	-	5	-	-	5
Բնապահպանություն և բնօգտագործում	-	6	-	-	-	6
Ընդամենը	139	131	76	83	99	528

9. Շ Ր Ջ Ա Ն Ա Վ Ա Ր Տ Ն Ե Ր

9.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

Ֆակուլտետ, մասնագիտություն	2021թ.			2022թ.		
	բակալավր (գերազան-ցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարի-ների	Ընդա-մենը	բակալավր (գերազան-ցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարի-ների	Ընդա-մենը
Բանասիրական						
Հայոց լեզու և գրականություն	7 (5)	-	7 (5)	-		-
Ռուսաց լեզու և գրականություն	-	-	-	-	-	-
Անգլերեն լեզու և գրականություն	9 (5)	-	9 (5)	8 (6)	-	8 (6)
Բնագիտական						
Բնապահպանություն և բնօգտագործում	-	-	-	-	-	
Դեղագործական քիմիա	4 (4)	-	4 (4)	-	-	-
Սերվիս	-	-	-	-	-	-
Կենսաբանություն	5 (4)	-	5 (4)	-	-	-
Համակարգչային ճարտարագիտություն	4 (1)	-	4 (1)	6 (3)	-	6 (3)
Հումանիտար մասնագիտություններ						
Իրավագիտություն	9 (3)	-	9 (3)	4 (2)	-	4 (2)
Պատմություն	7 (5)	-	7 (5)	-	-	-
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	5 (5)	1	6 (5)	-	-	-
Տնտեսագիտական						
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	12 (5)	-	12 (5)	8 (6)	-	8 (6)
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	4 (3)	-	4 (3)	-	-	-
Տնտեսագիտություն	11 (4)	-	11 (4)	4 (2)	-	4 (2)
Ընդամենը	*77 (44)*	*1*	*78 (44)*	*30 (19)*		*30 (19)*

9.2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

Ֆակուլտետ, մասնագիտություն	2021թ.			2022թ.		
	մագիստրատուրա (գերազանցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարիների	Ընդամենը	մագիստրատուրա (գերազանցության դիպլոմով)	այդ թվում՝ նախորդ տարիների	Ընդամենը
Բանասիրական						
Հայոց լեզու և գրականություն	4 (4)	-	4 (4)	3 (3)	-	3 (3)
Ռուսաց լեզու և գրականություն	-	-	-	2 (1)	-	2 (1)
Անգլերեն լեզու և գրականություն	3 (3)	-	3 (3)	4 (2)	-	4 (2)
Բնագիտական						
Համակարգչային ճարտարագիտություն	4 (0)	-	4 (0)	6(4)	-	6(4)
Հումանիտար մասնագիտություններ						
Իրավագիտություն	15 (2)	-	15 (2)	14 (5)	-	14 (5)
Պատմություն	8 (6)	-	8 (6)	3 (2)	-	3 (2)
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	15 (9)	-	15 (9)	11 (7)	-	11 (7)
Տնտեսագիտական						
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	3 (3)	-	3 (3)	6 (4)	-	6 (4)
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	2 (1)	-	2 (1)	4 (4)	-	4 (4)
Տնտեսագիտություն	4 (2)	-	4 (2)	3 (2)	-	3 (2)
Ընդամենը	*58 (30)*	-	*58 (30)*	*56 (34)*	-	*56 (34)*

9.3. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Մասնագիտություն	2021թ.						2022թ.					
	դիպլոմավոր մասնագետ (դասընթաց-դասախոսություն)	վերսկսող ուսանող առանց տարիների	Ընդամենը	վիրտուալ (դասընթաց-դասախոսություն)	վերսկսող ուսանող առանց տարիների	Ընդամենը	դիպլոմավոր մասնագետ (դասընթաց-դասախոսություն)	վերսկսող ուսանող առանց տարիների	Ընդամենը	վիրտուալ (դասընթաց-դասախոսություն)	վերսկսող ուսանող առանց տարիների	Ընդամենը
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				14	-	14	-	-	-	20 (1)	-	20
Պատմություն				5 (1)	-	5				5	-	5
Դեղագործական քիմիա				9 (3)	-	9	-	-	-	5	-	5
Իրավագիտություն				44 (2)	-	44				29	1	29
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի				12	-	12				18 (3)	-	18
Համակարգչային ճարտարագիտություն				19 (1)	-	19				13	-	13
Քարտեզագրություն և կադաստրային գործ				-	-	-				6 (1)	-	6
Ընդամենը	-	-	-	103 (7)	-	103	-	-	-	96 (5)	-	96

10. ՊՐԱԿՏԻԿԱ

Հ/հ	Ֆակուլտետ, Ամբիոններ	Կուրս	Պրակտիկայի բնույթը	Տևողությունը ակադեմիական շաբաթներով	Անցկացման վայրը
Բանասիրական					
1.	Հայոց լեզու և գրականություն	III Մագ. II	մանկավարժական գիտամանկավարժական գիտահետազոտական	6 4 4	Գեղարքունիքի մարզի դպրոցներ ԳՊՀ,Վարդենիսի պետական քոլեջ ԳՊՀ
2.	Անգլերեն լեզու և գրականություն	III IV Մագ. II	մանկավարժական մանկավարժական գիտամանկավարժական գիտահետազոտական	6 6 4 4	Գեղարքունիքի մարզի դպրոցներ ԳՊՀ ԳՊՀ
3.	Ռուսաց լեզու և գրականություն	Մագ. II	գիտամանկավարժական գիտահետազոտական	4 4	ԳՊՀ ԳՊՀ
Բնագիտական					
1.	Համակարգչային ճարտարագիտություն	III IV Մագ. II	արտադրական նախաավարտական գիտամանկավարժական, գիտահետազոտական	2 2 4 4	«Luseen Technologies» ԳՊՀ ԳՊՀ ԳՊՀ
2.	Դեղագործական քիմիա	II III	ուսումնական, արտադրական	2 2	ԳՊՀ մերձակայք, ԳՊՀ բնագիտության լաբորատորիա, Գավառի տարածաշրջանի դեղատներ
3.	Սերվիս	I II III	ուսումնական, ուսումնական, արտադրական	4 4 4	Վայոց Ձորի մարզ, Գավառի երկրագիտական թանգարան, Նորատուսի խաչքարեր, Գավառագետի մոտ գտնվող «Թթու ջուր» կոչվող տարածք, «Պարկ Ռեզորթ Աղվերան» հյուրանոցային համալիր
4.	Քարտեզագրություն և կադաստրային գործ	I	ուսումնական	4	Գավառի մերձակայք
Հումանիտար մասնագիտություններ					
1.	Իրավագիտություն	IV	նախաավարտական	8	ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ Դատական դեպարտամենտ, ՀՀ Արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի և

					Տավուշի մարզային բաժին, «Գայանե Հոլդինգս» ՍՊԸ փաստաբանական գրասենյակ
2.	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	II III	մանկավարժական մանկավարժական	2 6	ՀՀ հանրակրթական դպրոցներ ՀՀ հանրակրթական դպրոցներ
Տնտեսագիտական					
1.	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	III IV	ուսումնական արտադրական	4 12	ՀՀ ԿԱ տարածքային հարկային տեսչություն, բանկային համակարգ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, մարզպետարաններ, համայնքապետարաններ
2.	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	III	ուսումնական	4	Հաշվապահական հաշվառման գրասենյակներ, մարզպետարաններ, համայնքապետարաններ, ՀՀ ԿԱ տարածքային հարկային տեսչություն, տարբեր ոլորտների առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, բանկային համակարգ, աուդիտորական կազմակերպություններ
3.	Տնտեսագիտություն	III IV	ուսումնական արտադրական	4 12	Տարբեր ոլորտների առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, առևտրաարդյունաբերական պալատ, ՀՀ ԿԱ տարածքային հարկային տեսչություն, բանկային համակարգ
Հեռակա ուսուցման					
1.	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	V	մանկավարժական	8	ՀՀ հանրակրթական դպրոցներ
2.	Համակարգչային ճարտարագիտություն	V	նախաավարտական	8	«Լուսին մոբայլ» ՍՊԸ, «ՇԱՀ» ՍՊԸ, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ, ՀՀ հանրակրթական դպրոցներ, «ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ, «ԷԿՕ 1» կազմակերպություն
3.	Դեղագործական քիմիա	V	նախաավարտական	8	ՀՀ դեղատներ
4.	Իրավագիտություն	V	նախաավարտական	8	ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ ՔԿ Գեղարքունիքի մարզային քննչական վարչություն, Սևանի քննչական բաժին ՀՀ գլխավոր դատախազություն, Սյունիքի մարզի դատախազություն, ԲԴԽ աշխատակազմի դատական դեպարտամենտ, ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին

					ատյանի դատարան ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն, ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժին, ՀՀ ՊՆ զորամասեր, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Գավառի ԳԳՄ, Երևանի քաղաքապետարան, Գավառի համայնքապետարան, Սևանի համայնքապետարան, Վրաստանի Նինոծմինդայի շրջանի գյուղ Փոգայի գյուղապետարան ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովազարդ գյուղի համայնքապետարան, ՀՀ փաստաբանական գրասենյակներ, ՀՀ ՔԿԱԳ Գավառի տարածքային բաժին, ՀՀ Արմավիրի մարզի տարածքային նոտարական գրասենյակ, «Կեյս-Կո» ՍՊԸ /ՌԴ, Մոսկվա/
5.	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	V	արտադրական	8	ՀՀ հանրակրթական դպրոցներ, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, «ՇԱՀ» ՍՊԸ, Մարտունու համայնքապետարան, Սևանի համայնքապետարան, Սևանի բազմագործառութային պետական քոլեջ, «Գավառի ՀՀԳ» ՍՊԸ, «Սևանի ՀՀԳ» ՍՊԸ, «Մարտունու ՀՀԳ» ՍՊԸ, «Մարտունու ԲԿ» ՓԲԸ, «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ, «Իտալիկա Էյ Էմ» ՍՊԸ, «Սևան ֆոտո» տպագրատուն, «Մայիս Մկրտչյան» ԱՁ
6.	Պատմություն	V	ուսումնամանկավարժական	8	ՀՀ հանրակրթական դպրոցներ
7.	Քարտեզագրություն և կադաստրային գործ	V	նախաավարտական	8	ՀՀ անշարժ գույքի կադաստրի Վարդենիսի, Սևանի սպասարկման գրասենյակներ, Սևանի համայնքապետարան, Մարտունու համայնքապետարան, «Դավիթ Առաքելյան Արամի» ԱՁ

11. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆակուլտետ, ամբիոններ	Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուց. թեզիսներ
Բանասիրական						
Հայոց լեզվի և գրականության	2	1	-	-	25	2
Օտար լեզվի և գրականության	-	-	-	-	14	-
Բնագիտական						
Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի	-	-	1	3	23	-
Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների	-	-	-	-	10	-
Հումանիտար մասնագիտությունների						
Իրավագիտության	-	-	-	-	17	-
Հասարակական գիտությունների	-	2	4	-	28	-
Տնտեսագիտության						
Կառավարման և ֆինանսների	-	1	-	-	14	-
Հաշվապահական հաշվառման	-	-	2	-	4	-
Ընդամենը	***2***	***4***	***7***	***3***	***135***	***-***

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաստատության անվանումը		Համագործակցության ոլորտը	2017-2018 ուստարի	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
Ի. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ							
1	Ակունքի միջնակարգ դպրոց	Համագործակցություն կրթության ոլորտում	V	V	V	V	V
2	Գավառի ավագ դպրոց		V	V	V	V	V
3	Գավառի Ս. Քոչարյանցի անվան N 1 հիմնական դպրոց		V	V	V	V	V
4	Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N 8 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
5	Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
6	Գանձակ գյուղի N 1 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
7	Գանձակ գյուղի N 2 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
8	Երանոս գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
9	Լճաշենի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
10	Նորատուս գյուղի Ա. Սողոմոնյանի անվան N 2 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
11	Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան N 1 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
12	Սարուխան գյուղի Հ. Խաչատրյանի անվան N 3 միջնակարգ դպրոց		V	V	V	V	V

13	Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց		V	V	V	V	V
14	Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց		V	V	V	V	V
15	Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց		-	-	V	V	V
16	Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց		-	-	-	-	V
17	Նորատուս գյուղի թիվ 3 միջնակարգ դպրոց		-	-	-	-	V
18	Գավառ քաղաքի թիվ 5 հիմնական դպրոց		-	-	-	-	V
19	Գավառ քաղաքի Գեորգի Մնացականյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոց		-	-	-	-	V
20	Լանջաղբյուրի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց		-	-	-	-	V
21	Կարմիրգյուղ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց		-	-	-	-	V
22	Կարմիրգյուղ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց		-	-	-	-	V
23	Ծովազարդ գյուղի միջնակարգ դպրոց		-	-	-	-	V
24	Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոց		-	-	-	-	V
25	Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց		-	-	-	-	V

26	Սարուխանի Մ. Խոստեղյանի անվ. թիվ 2 միջնակարգ դպրոց		-	-	-	-	∨
27	Գավառ քաղաքի թիվ 5 հիմնական դպրոց		-	-	-	-	∨
28	Գավառ քաղաքի Ավ. Իսահակյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց		-	-	-	-	∨
29	Լճափի միջնակարգ դպրոց		-	-	-	-	∨
30	Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց		-	-	-	-	∨
31	Ծաղկաշեն գյուղի միջնակարգ դպրոց		-	-	-	-	∨
32	Սևանի համայնքապետարան		-	-	-	-	∨
33	Գավառի համայնքապետարան		-	-	-	-	∨
34	Մարտունու համայնքապետարան		-	-	-	-	∨
35	Ճամբարակի համայնքապետարան		-	-	-	-	∨
36	«Լուսին Թեքնոլոջիս» ընկերություն		-	∨	∨	∨	∨
37	«Այ Էյ Բի» Բիզնեսի միջազգային ակադեմիա		-	∨	∨	∨	∨
38	«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպություն		-	∨	∨	∨	∨

39	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան		-	∨	∨	∨	∨
40	Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան		∨	∨	∨	∨	∨
41	Վրաստանի Թելավիի պետական համալսարան		∨	∨	∨	∨	∨
42	Վիտեբսկի տեխնոլոգիական պետական համալսարան		∨	∨	∨	∨	∨
43	Մոսկվայի պետական տարածաշրջանային հումանիտար ինստիտուտ		∨	∨	∨	∨	∨
44	Մոսկվայի տարածաշրջանի բարձրագույն կրթության պետական ուսումնական հաստատություն՝ «Պետական սոցիալ-հումանիտար համալսարան»		-	∨	∨	∨	∨
- 2019 - 2021թթ. - Տոլյատիի պետական համալսարան, Հումանիտար-մանկավարժական ինստիտուտ, Հոգեբանության մագիստրոսի աստիճան, ՌԴ:

Հակոբյան Արսեն

- 2022 թվականի հուլիսի 31 - օգոստոսի 27, Borderland Faoundation, Horizon 2020, Սեյնի, Լեհաստան:
- 2022 թվականի ապրիլի 4 - 8, ԵՄ «Էրազմուս +», դասախոսություններ, Մեսսինայի համալսարան, Իտալիա:

Խաչատրյան Հայկ

- 2022 թվականի հուլիսի 25 - ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի աջակցությամբ կազմակերպված աշխատաժողով՝ նվիրված միջազգային համագործակցության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կարողությունների ամրապնդմանը և զարգացմանը, Երևան, Հայաստան:
- 2022 թվականի սեպտեմբերի 6 - Եվրոպայի խորհրդի «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակում աշխատաժողով, Երևան, Հայաստան:
- 2022 թվականի սեպտեմբերի 9 - 10 - ԵՄ ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ԵԱՀԿ-ի աջակցությամբ կազմակերպված աշխատաժողով՝ նվիրված նոր Քրեական դատավարության և Քրեակատարողական օրենսգրքերի շրջանակներում ՄԻՊ աշխատակազմի մշտադիտարկման կարողությունների զարգացմանը, Աղվերան, Հայաստան:
- 2022 թվականի հոկտեմբերի 11 - Արտահերթ հրապարակային զեկույց նվիրված Գեղարքունիքի և Տավուշի մարզեր 2022թ. հուլիս-օգոստոս ամիսներին փաստահավաք այցերի վերաբերյալ, Երևան, Հայաստան:

Մկրտչյան Լալա

- 2021 թվականի հոկտեմբերի 17-20-ը - «Աղետների ռիսկի կառավարում և համայնքային դիմակայության բարձրացում համայնքային մակարդակում» եռօրյա վերապատրաստման դասընթաց:
- 2022 թվականի. մայիսի 3-ից հունիսի 3-ը - Եվրոպական Միության «Էրազմուս+ Erasmus for young entrepreneurs» շարժունության ծրագրի շրջանակներում Travila ընկերությունում վերապատրաստում, որպես զբոսաշրջային ոլորտի մասնագետ, Իսպանիայի Թագավորության Պալմա դե Մայորկա քաղաքում:
- 2022 թվականի մարտից հունիս ամիսը - «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից կազմակերպված «Քաղաքացիական կրթություն ուսուցանողների համար» թեմայով վերապատրաստման դասընթաց /առցանց/:

Խաչիկյան Թերմինե, Հովհաննիսյան Մարինե, Թոռչյան Լիլիթ

- 2021 թվականի հոկտեմբերի 11-12-ը - Եվրոպական Միության «ERASMUS+ABIONET. Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի առցանց ամփոփիչ աշխատաժողով և փակման հանդիսավոր միջոցառում, Հայաստան, Գավառ:

Մխիթարյան Ազնիվ

- 2021 թվականի սեպտեմբերի 15-ին - «Роль патентной системы в решении проблем общественного здравоохранения» /առցանց վեբինար/, Մոլդովայի Քիշնև քաղաք:

Հովհաննիսյան Մարինե

- 2022 թվականի հուլիսի 1-ին «EU4SEVAN» ծրագրի շրջանակներում «Ջանքերի միավորում հանուն Սևանա լճի էկոհամակարգի պահպանման և կայուն զարգացման» խորագրով միջազգային համաժողով, Հայաստան, Երևան:

Թադևոսյան Արտաշես, Հովհաննիսյան Մարինե

2022 թվականի հուլիսի 10-15-ը Եվրոպական Միության «ERASMUS+MENVIPRO. Հայաստանում և Վրաստանում շրջակա միջավայրի մասին կրթական ծրագրերի արդիականացում» ծրագրի ամառային դպրոց, Վրաստանի Թբիլիսի քաղաքում:

Ամիրխանյան Սամվել, Ղուլոյան Հակոբ

- 2022 թվականի մայիսի 25 – Երևան, ՀՀ գործատուների հանրապետական միության և Համաշխարհային պարենի ծրագրի կազմակերպած «Պարենի անվտանգության համակարգը Հայաստանում» թեմայով գիտական կոնֆերանսին մասնակցություն:

Ղուլոյան Հակոբ

- 2021 թվականի սեպտեմբեր – ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից Ներքին աուդիտ և Ներքին վերահսկողության, Հանրային ֆինանսների կառավարման, Գնումների գործընթացի կազմակերպում, Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և Հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերի վերաբերյալ իրականացված վերապատրաստումներ:

Նալչաջյան Վահրամ

- 2022 թվականի մայիսի 10-18, Երևան – «Դասավանդման ժամանակակից մեթոդները բարձրագույն ուսումնական հաստատություններում» թեմայով վերապատրաստում:

Մարգարյան Հասմիկ

- 2021 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր – ՀԲԸՄ /հայկական բարեգործական ընդհանուր միություն/ «Brand design», «Fashions trends», «Communication» ծրագրի շրջանակներում իրականացվող առցանց վերապատրաստումներ:

Հովեյան Աստղիկ

- 2022 թվականի հուլիս – սեպտեմբեր – ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից երաշխավորված «Curriculum GlobALE» չափորոշչի վրա հիմնված «Մեծահասակների ուսումնառության և կրթության հիմունքներ. դասավանդման մեթոդաբանություն» 12- շաբաթյա դասընթացի մասնակցություն:
- 2022 թվականի փետրվար 2-15 - ICMPD-ի և ՀԲԸՄ-ի կողմից համատեղ իրականացված «Traing of trainers on coaching skilis» թեմայով առցանց վերապատրաստում:
- 2020 թվականի նոյեմբերի 16 - 2021թ. հոկտեմբերի 29 Վագենինգենի զարգացման նորարարության կենտրոնի (WCDI) կողմից իրականացվող «Local Economic Development» միջազգային դասընթացին մասնակցություն:

Բագոյան Սոնա

- 2021 թվականի դեկտեմբերի 7-10 - Марафон «Как найти деньги для инвестирования»՝ իրականացված «Ալֆա» բանկի կողմից:

- 2022 թվականի հունվարի 21 – Интенсив «Как получать деньги от государства»՝ իրականացված «Ալֆա» բանկի կողմից:
- 2022 թվականի մարտի 17-18 Онлайн тренинг «Усрешный инвестор»՝ կազմակերպված «Ալֆա» բանկի կողմից:
- 2022 թվականի հուլիսի 07 Мастер-класс «Инвестиции это просто»՝ կազմակերպված «InvestFuture» կազմակերպության կողմից:

Սահակյան Արմեն

- 2021 թվականի դեկտեմբերի 16-22 - Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի իրականացրած «ESG - трансформация, Базовый курс» թեմայով դասընթացին մասնակցություն:

Ղռեջյան Լուսինե

- 2022 թվականի ապրիլի 26-28, «Սյունիք. Մշակույթը և բնությունը» խորագրով հանրապետական գիտաժողով, թեմա՝ «Բնության տարրերը Սյունիքի կարճասույթ բանաձևային կառույցներում»:
- 2022 թվականի սեպտեմբերի 23-24, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» խորագրով 11-րդ միջազգային գիտաժողով, թեմա՝ «Շիրակի ասույթաբանական բանահյուսությունը»:

Ներսիսյան Վարսիկ

- 2022 թվականի հունիսի 17, ԳԱԱ ԼԻ «Ջահուկյանական ընթերցումներ» հանրապետական գիտաժողով, թեմա՝ «Աճանցման հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություններում»:

Իսկանդարյան Նաիրա

- 2022 թվականի հունվարի 13-16., Մոսկվա. Международная конференция к 130-летию со дня рождения Дж. Р. Р. Толкина, ИМЛИ РАН, НИУ ВШЭ, тема «Создание языка как мироощущение в произведениях Дж. Толкина»:
- 2022 թվականի ապրիլի 24-26, ՀՀԳԱԱ Վ. Կիրակոսյանի հիշատակին նվիրված գիտաժողով, թեմա՝ «Միֆ-արխաիկ էպոս-հերոսական էպոս»:

Սարգսյան Ռուզաննա

- 2021 թվականի հոկտեմբերի 29-30, V Международная научно-практическая конференция “Русский язык на перекрёстке эпох”, Российско-Армянский (Славянский) Университет, РА.:
- 2021 թվականի նոյեմբերի 11-12, IV Московский международный культурно-образовательный Форум РКИ – 2021 "РКИ в поликультурном пространстве: традиционные и цифровые технологии" (центр русского языка МГУ) :
- 2021 թվականի նոյեմբերի 18, Мероприятия проекта “Русское культурное пространство сквозь призму языка”:
- 2021 թվականի նոյեմբերի 19, Международный форум, “Русский язык как инструмент профессиональной мобильности: традиции и инновации”:
- 2021 թվականի նոյեմբերի 24-25, Международная научно-практическая конференция «Русское слово в международном образовательном пространстве: история и современность» (Пятигорский государственный университет, Варминско-

Мазурский университет, (Польша), Университет г. Пулы им. Юрая Добрилы (Хорватия) /заочное участие:

- 2021 թվականի դեկտեմբերի 6-10, Международный научный Конгресс "Русский язык в глобальном научном и образовательном пространстве":
- 2021 թվականի դեկտեմբերի 8-9, Курс повышения квалификации по программе ДПО "Современные методики преподавания русского языка" (16 ч., ООО "Институт социальных технологий, г. Краснодар, РФ) /заочное участие:
- 2021 թվականի դեկտեմբերի 10-11, Международный педагогический форум "Русский язык без границ: образовательные модели продвижения русской культуры за рубежом", Казахстан - Россия 2021թ. /Национальный исследовательский Нижегородский государственный университет (ННГУ) им. Лобачевского, университет "Туран", КазНПУ им. Абая./заочное участие:
- 2021 թվականի դեկտեմբերի 10, Международный форум "Преподавание русского языка в мультипространстве стран Содружества: специфика, перспективы, задачи" (Бишкек, Кыргызская республика) /заочное участие:
- 2021 թվականի նոյեմբերի 25, Международный научно-практический форум "Русский язык и глобальные вызовы XXI века на Евразийском пространстве":
- 2022 թվականի մարտի 15, Сибирский государственный университет путей сообщения, г. Новосибирск, РФ: V Международная научно-практическая конференция "Восток-Запад: теоретические и прикладные аспекты преподавания европейских и восточных языков /заочное участие:
- 2022 թվականի մարտ-ապրիլ, «Լեզուների դասավանդման մեթոդաբանություն» մասնագիտական վերապատրաստման դասընթաց //ՀՊՏՀ շարունակական կրթության բաժին:
- 2022 թվականի մայիսի 27, Международная научно-практическая конференция по РКИ-2022 «Мир русского языка и культуры в пространстве информационных технологий» (Учебный центр русского языка МГУ):
- 2022 թվականի հունիսի 20-24, Erasmus+ staff mobility, University of Valladolid (Spain), Department of English studies:

Մելքոնյան Աննա

- 2022 թվականի փետրվարի 28- մարտի 4, Երևանում գործող «Մոսկվայի տուն» մշակութագործարարական կենտրոնի կողմից կազմակերպված մասնագիտական վերապատրաստում, թեմա՝ «Интегративный потенциал современной лингвистики: личность, концепты, дискурс»:

Մկրտչյան Սիրանուշ, Միրիբյան Նունե

- 2022թ մայիսի 9-13, Պորտուգալիայի Հանրապետության Բրագանսայի պոլիտեխնիկական համալսարան, ԵՄ «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակներում վերապատրաստում:

Տիգրանյան Սաթենիկ

- 2021 թվականի հոկտեմբեր, "British Council" /Pass Centre/-ի կողմից կազմակերպված առցանց վերապատրաստում TKT Module 1, թեմա՝ "Language and background to language learning and testing":

- 2021 թվականի նոյեմբեր, “British Council” /Pass Centre/-ի կողմից կազմակերպված առցանց վերապատրաստում TKT Module 2, թեմա՝ “Lesson planning and use of resources for language teaching”:
- 2021 թվականի նոյեմբեր, “British Council” /Pass Centre/-ի կողմից կազմակերպված առցանց վերապատրաստում, TKT Module 3, թեմա՝ “Managing the teaching and learning process”:
- 2022 թվականի հունվար-մարտ, “British Council”-ի կողմից կազմակերպված առցանց վերապատրաստում, թեմա՝ “Future English teacher Development”:
- 2022 թվականի հուլիսի 5- օգոստոսի 30, TESOL Professional Training Program, University of Maryland, Baltimore County/ UMBC/, առցանց վերապատրաստում:

Հայության Սաթենիկ

- 2021 թվականի հոկտեմբերի 14-15, «Հույսի Կամուրջ» ՀԿ, «Կրթության կազմակերպման գործընթացի ներառականությունը» թեմայով առցանց աշխատաժողով:
- 2021 թվականի նոյեմբերի 18, «Խաղերը քննադատական մտածողությունը խթանելու միջոց. ինչ է անհրաժեշտ թվայնացմանը պատրաստվելու համար» թեմայով առցանց վեբինար:

ԳՊՀ դասախոսները մասնակցել են Գավառի պետական համալսարանի կողմից կազմակերպված հետևյալ առցանց վերապատրաստման դասընթացներին.

- 2022 թվականի ապրիլի 8–29, թեման՝ «Գրականության և բանահյուսության հիմնահարցեր» - 9 դասախոս:
- 2022 թվականի ապրիլի մայիսի 2, թեման՝ «Նախագիծ. նախագծի իրականացման քայլերը»-3 դասախոս:
- 2022 թվականի մայիսի 11 – 25, թեման՝ «Հայոց լեզվի հիմնախնդիրներ»- 9 դասախոս:
- 2022 թվականի մարտի 9 – մայիս 11, թեման՝«Ուսուցման և դաստիարակության գործընթացի արդյունավետության հոգեբանական հիմքերը» - 8 դասախոս:
- 2022 թվականի փետրվարի 18 – մարտի 25, թեման՝ «Ուսուցման գործընթացում կիրառվող ժամանակակից էլեկտրոնային հարթակներ» - 5 դասախոս:
- 2022թ. փետրվարի 18 - մարտի 25, թեման՝ «Համակարգչային հմտությունների բարելավմանը միտված վերապատրաստման դասընթաց» 2 դասախոս
- 2022թ. ապրիլի 1-9, թեման՝ «Տվյալագիտություն և խորացված ուսուցում» 1 դասախոս

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2021-2022 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանն առաջնորդվել է «Կրթությունը՝ զարգացման ճանապարհ» կարգախոսով

2021-2022 ուսումնական տարին Գավառի պետական համալսարանի համար հատկանշական էր ենթակառուցվածքային վերահավատարմագրմամբ, ինչի արդյունքում բուհում իրականցվող կրթական, վարչարարական, լուսավորչական, հանրային պատասխանատվության, ֆինանսատնտեսական, կրթության միջազգայնացման և այլ ուղղություններով 2017-2022թ.թ. ժամանակահատվածում կատարված համապատասխան աշխատանքները գնահատվել են բավարար: ԳՊՀ իրականացրած միջազգային ծրագրերի գծով նույնպես տրվել են միջազգային բավարար գնահատականներ:

Ուսանողական համակազմի համալրման ցուցանիշները՝ ըստ կրթական աստիճանների և ուսուցման եղանակների

1. <u>Առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելություն</u>
   1) 2021-2022 ուստարում համալսարանի առկա ուսուցման բակալավրիատի 13 կրթական ծրագրերի գծով ընդունվեց 52 դիմորդ:
   2) Հեռակա ուսուցման ֆակուլտետ ընդունվեց 132-ը (ընդամենը՝ բակալավրիատի 184 ուսանող):
2. <u>Մագիստրատուրայի ընդունելություն</u>

2021-2022 ուստարում մագիստրատուրա ընդունվեց բակալավրիատի 76 շրջանավարտ:

3. <u>Միջին մասնագիտական կրթություն ունեցող բարձր առաջադիմությամբ շարունակական կրթության կարգով ընդունելություն</u>

2021-2022 ուսումնական տարում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո համալսարանում շարունակական կրթություն ստացողների քանակը եղել է 30-ը:

4. <u>Երկրորդ մասնագիտության կարգով ընդունելություն՝</u> 10 ուսանող:
5. <u>Տեղափոխություններ</u>

ԳՊՀ-ից այլ բուհ ուսանող չի տեղափոխվել, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բուհերից հաշվետու ուստարում սահմանված կարգով Գավառի պետական համալսարան է տեղափոխվել 6 ուսանող:

6. <u>Վերականգնումներ</u>

Ուսանողական իրավունքները վերականգնել են 78 ուսանողներ:

ԳՊՀ ուսանողական համակազմի համալրման ցուցանիշները հաշվետու և նախորդ ուստարիներին



Ուսանողների առաջին կիսամյակի ակադեմիական առաջադիմության ցուցանիշներն՝ ըստ ֆակուլտետների, հաշվետու և նախորդ ուստարիներին

2021-2022 **ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներն առկա ուսուցման համակարգում.**

հաշվետու ուստարում՝ առաջին կիսամյակում, առկա ուսուցման բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողների ակադեմիական առաջադիմությունը կազմել է 80,4% (նախորդ ուստարում՝ 79,3%), նկատվել է 1,1% աճ:



Ուսանողների առաջադիմության ցուցանիշների համեմատումը նախորդ երկու և հաշվետու ուստարիների առաջին կիսամյակներում



2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներն առկա ուսուցման համակարգում՝ նախորդ և հաշվետու ուստարվա երկրորդ կիսամյակներում

Հաշվետու ուստարվա երկրորդ կիսամյակում առկա ուսուցման բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողների ակադեմիական առաջադիմությունը կազմել է 88,6% (նախորդ ուստարում ևս 88,6%):



Ուսանողների առաջադիմության ցուցանիշների համեմատումը նախորդ երկու և հաշվետու ուստարիների երկրորդ կիսամյակներում



Ուսանողների ամփոփիչ առաջադիմությանցուցանիշների համեմատումը նախորդ երկու և հաշվետու ուստարիների հետ



2021-2022 ուստարում առկա ուսուցման բակալավրիատում սովորում էր 196 ուսանող, մագիստրատուրայում՝ 121, հեռակա ուսուցման համակարգում՝ 520, ընդամենը՝ 837, ուսանող, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ուսանողների թիվը 799 էր:



2021-2022 ուստարվա շրջանավարտների թվաքանակի վերաբերյալ տվյալներ

Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվել է ԿԳՄՍՆ համապատասխան կարգի դրույթների պահպանմամբ, որի արդյունքներով 2021-2022 ուստարում ԳՊՀ-ն ավարտեց առկա ուսուցման ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսանողների 100%-ը: Համալսարանի առկա ուսուցման բակալավրիատի 30, հեռակա ուսուցման բակալավրիատի 96 և մագիստրատուրայի ավարտական կուրսերի 56 ուսանողի, ինչպես նաև նախորդ տարիներին բուհը չավարտած 1 նախկին ուսանողի շնորհվեց դիպլոմի համաեվրոպական նմուշի երկլեզու՝ հայերեն և անգլերեն հավելված:

Գավառի պետական համալսարանի 2021-2022 ուսումնական տարվա ուսանողների փոխատեղման արդյունքների վերաբերյալ տվյալներ

Հաշվետու ուստարվա ցուցանիշներով՝ փոխատեղման մրցույթի արդյունքում արձանագրվեց առկա ուսուցման բակալավրիատի 38 ուսանողի և մագիստրատուրայի 4 ուսանողի կարգավիճակի փոփոխություն: Փոխատեղումը հիմք հանդիսացավ բուհի և ուսանողի միջև կնքած պայմանագրերի լուծման և համապատասխան կարգավիճակի պայմանագրերի կնքման համար: ԳՊՀ ուսանողների տարեկան ակադեմիական առաջադիմության արդյունքների հաշվառմամբ ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ անվճար և վճարովի տեղերի փոխատեղման ընթացակարգի համաձայն՝ ՀՀ կառավարության որոշմամբ համալսարանին հատկացված բակալավրիատի և մագիստրատուրայի անվճար տեղերի փոխատեղման գործընթացն իրականացվեց ռեկտորի հրամանով հաստատված ֆակուլտետային և համալսարանական հանձնաժողովների անցկացրած մրցույթի միջոցով:

Բուհի սոցիալական պատասխանատվությունը շարունակաբար համարվելով կարևորագույն գործընթացներից մեկը՝ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում սովորող ուսանողներին ֆինանսական աջակցության նպատակով իրականացվել են պլանավորված աշխատանքներ, որի արդյունքում ուսանողները ուսման վարձի փոխհատուցում են ստացել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Արցախի Հանրապետության պետական բյուջեից, ԳՊՀ միջոցներից, գործընկեր կազմակերպություններից, ԳՊՀ բարերարներից և տարբեր հիմնադրամներից, մասնավորապես, «ԱՄՔՈՐ» բարեգործական կազմակերպությունից, Հայ կրթական հիմնարկությունից, Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամից, «Վիվասել-ՄՏՍ»-ից, Գավառի քաղաքապետարանից, «Հալեպ հայրենակցական բարեսիրական» հասարակական կազմակերպությունից, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամից: ՀՀ պետական բյուջեից հաշվետու ուստարում ֆինանսական աջակցություն են ստացել 291 ուսանող, որոնցից 128-ը հեռակա ուսուցման ֆակուլտետի, 110-ը՝ առկա բակալավրիատի, իսկ 53-ը մագիստրատուրայի ուսանողներ են:

ԳՊՀ միջոցների հաշվին զեղչեր են ստացել 129 ուսանողներ, որոնցից 6-ի ուսման վարձերն ամբողջովին փոխհատուցվել են: Այլ կազմակերպություններից ֆինանսական

աջակցություն ստացողների թիվը կազմել է 92 ուսանող /14-ը հեռակա ուսուցման, իսկ 78-ը առկա ուսուցման ուսանողներ են/, ընդհանուր առմամաբ ԳՊՀ-ում սովորող ուսանողների 45,7%-ը ստացել է ֆինանսական աջակցություն ուսման վարձի լրիվ կամ մասնակի չափով. առկա ուսուցմամբ սովորողների՝ 76%-ը, հեռակա ուսուցմամբ սովորողների 27,3% -ը:

2021-2022 ուսումնական տարում ԳՊՀ դասախոսական կազմը՝ ըստ գիտական աստիճանների

ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի գծով հաշվետու ուստարում լրամշակվեցին պրեֆեսորադասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական, մանկավարժական պահանջները: Դրանց համապատասխան գիտամանկավաժական կադրերը պետք է ունենան դասավանդվող առարկային համապատասխան մասնագիտական բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետի որակավորում) և իրականացնեն գիտական կամ գիտամեթոդական գործունեություն: Դասախոսը պետք է ունենա ինքնադրսևորվելու, ուսումնական գործընթացում հնարավոր խնդրահարույց իրավիճակները հարթելու, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և վարվեցողության նորմեր ձևավորելու, ուսումնառողների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները օբյեկտիվ գնահատելու կարողություններ, դրսևորի մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կարողանա դրանք կիրառել, իմանա բարձրագույն կրթության ոլորտին վերաբերող ՀՀ գործող օրենսդրական փաստաթղթերը և կարողանա դրանք ներկայացնել, մեկնաբանել, վերլուծել, զարգացնել ուսանողների ստեղծագործական, վերլուծական, քննադատական մտածողության ունակությունները, համադրել մանկավարժական տարբեր մեթոդներն ու հնարները, կազմակերպել անհատական և խմբային աշխատանքներ, ձևակերպել դասավանդման նպատակներն ու խնդիրները, կազմել և մշակել դասընթացի ծրագիր և այլն: Կարևորվել են նաև դասախոսական կազմի կազմակերպչական որակները, շեշտադրվել են նրանց՝ ուսուցման գործընթացում ճիշտ ձևերի ու մեթոդների ընտրության, սուբյեկտների միջև փոխգործակցային և համագործակցային հարաբերությունների ձևավորման, վերահսկողության, գնահատման գործընթացների մոդելավորման, բարենպաստ ուսումնական միջավայր ձևավորելու և ծրագրերը արդյունավետորեն իրականացնելու, Ժամանակի ճիշտ և արդյունավետ օգտագործման կարողությունները: Պարտադիր պահանջներ են ձևավորվել նաև հաղորդակցական հմտությունների՝ օտար լեզուներով գրավոր և բանավոր հաղորդակցվելու, ինչպես նաև մանկավարժահոգեբանական հաղորդակցման բարձր մշակույթի դրսևորման հմտությունների, համակարգչային ծրագրերի իմացության, մասնավորապես հիմնական համակարգչային ծրագրերով MS Office (Access, Excel, Power Point, Word) աշխատելու, PPT ներկայացումներ իրականացնելու, տվյալների հետ աշխատելով գիտական հետազոտություններ իրականացնելու հմտություններին տիրապետելու վերաբերյալ: Դասախոսների մասնագիտական որակները նկարագրվել են՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրի առանձնահատկությունների:

2021-2022 ուսումնական տարում բուհի պրոֆեսորադասախոսական կազմում ուսումնական գործընթացում, գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված են եղել համապատասխան պահանջներին բավարարող թվով 126 դասախոսներ, որոնց 12%-ը

նաև գործատուներ են: Դասախոսների թվի 53.1%-ը ունի գիտական աստիճան և կոչում: Համալսարանում բավարարված են բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ, պրոֆեսորադասախոսական կազմին առաջադրվող պահանջները:



2021-2022 ուսումնական տարում իրականացված աշխատանքներն ու արձանագրված արդյունքները՝ ըստ ռազմավարական ուղղությունների

Ι. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նպատակը՝

1. Շարունակել աշխատանքները՝ բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի, դրանցում ամրագրված իրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների արդիականացման ուղղությամբ, դրանք համապատասխանեցնել գործատուների պահանջներին:

Իրականացված աշխատանքները՝

Արդիականացվել են առարկայական ծրագրերը՝ դրանցում վերանայվել և լրամշակվել են դասընթացների կրթական վերջնարդյունքները, դրանց հասնելու համար կիրառվող ուսուցման, ուսումնառության և գնահատման փոխկապակցված մեթոդները, քարտեզագրվել են ՄԿԾ-ների և նորացված առարկայական ծրագրերի վերջնարդյունքները, իրականացնելով համեմատական վերլուծություններ, ուսումնասիրելով աշխատաշուկայի պահանջները՝ վերանայվել են ՄԿԾ-ների ուսումնական պլանները:

Արդյունքը՝

Բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր ՄԿԾ-ների և դրանցում դասավանդվող բոլոր դասընթացների ծրագրերի, ուսպլանների նորացում /learn.gsu.am էլեկտրոնային ուսուցման հարթակում առկա բակալավրաիտի՝ 563 և մագիստրատուրայի 258 դասընթացների ուսումնական փաթեթներ/:

Նպատակը՝

2. Մշակել կառուցակարգեր, որոնք միտված կլինեն պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված գործատու-դասախոսների և պրակտիկ-դասախոսների փորձի տարածմանը,

կազմակերպել նրանց մասնագիտական խորհրդատվությունների շարք երիտասարդ, սկսնակ դասախոսների համար:

Իրականացված աշխատանքները՝

Ընդլայնվել է դասալսումների գործընթացը, յուրաքանչյուր ամիս վերլուծվել են դասալսումների արդյունքները, ներկայացվել շահագրգիռ ստորաբաժանումների քննարկմանը:

Արդյունքը՝

Դասալսումների արդյունքներն օգտագործվել են ուսումնական պլանների, դասախոսների կողմից կիրառվող մեթոդների բարելավման, առարկայական ծրագրերի արդիականացման, ինչպես նաև ընդհանուր որակի ապահովման կառուցակարգերի բարելավման գործընթացներում:

Նպատակը՝

3. Հնգամյա կտրվածքով գնահատել ԳՊՀ 2017-2022թթ. ռազմավարական ծրագրում /ՌԾ/ ամրագրված նպատակների իրականացման մակարդակը և պլանավորել հաջորդ՝ 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի ուղղությունները, նպատակներն ու խնդիրները, մշակել դրանց իրականացման գործողությունների պլանը, սահմանել արդյունավետության ցուցիչները:

Իրականացված աշխատանքները՝

Ուսումնասիրվել է շահակիցների սպասումները, տարբեր ուղղություններով ակնկալիքները ԳՊՀ-ից որպես կրթական, գիտահետազոտական հաստատությունից, ստեղծվել է աշխատանքային խումբ, գնահատվել է համալսարանի 2017-2022թթ ռազմավարական ծրագրի կատարողականը, մշտադիտարկման պլանների արդյունքները, ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացվել են քննարկումներ, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունների, առաջիկա պլանների ճշգրտման ուղղությամբ միջոցառումներ են ձեռնարկվել:

Արդյունքը՝

Ներքին և արտաքին շահակիցների կարիքների հաշվառմամբ, սպասելիքներին համապատասխան, ազգային կրթական քաղաքականության համաձայն՝ մշակված, արդյունավետության ցուցիչներով նկարագրված, շահակիցների ակնկալիքներին համապատասխանող տեսլականով, տարանջատված գերակա ուղղություններով հնգամյա ռազմավարական ծրագրի նախագիծ, ԳՊՀ ռազմավարական պլանավորման գործընթացին մասնակցությունից շահակիցների բավարարվածության աստիճանի աճ:

Նպատակը՝

4. Ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտման նպատակով մշակել և գործարկել նոր կառուցակարգեր, որոնք տարբերակված կլինեն՝ ըստ համապատասխան ուղղությամբ կարիքի բացահայտմանը և բավարարմանը:

Իրականացված աշխատանքները՝

Ընթացքի մեջ են 2023-2027թթ. ԳՊՀ ռազմավարական ծրագրի ուղղություններին, նպատակներին ու խնդիրներին, ամրագրված արդյունավետության ցուցիչներին համապատասխան գործիքների մշակումը:

Արդյունքը՝

Շահակիցների կարիքների բացահայտման առավել արդյունավետ կառուցակարգեր, դրանց արդյունքներից շահակիցների բավարարվածության աստիճանի աճ:

II. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նպատակը՝

1.Շարունակել ապահովել արդյունավետ աշխատանքներ համալսարանի գիտական քաղաքականության իրականացման ուղղությամբ՝ սահմանված ընթացակարգերի դրույթների պահպանմամբ:

Իրականացված աշխատանքները՝

Մշակվել են ԳՊՀ ամբիոնների հետազոտական գործունեության երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, գործողությունների պլաններ, մշակվել են գիտահետազոտական գործունեության մշտադիտարկման պլաններ, կատարվել են խորքային ուսումնասիրություններ և վերլուծություններ: Կազմակերպվել է ԳՊՀ ամենամյա 25-րդ գիտաժողովը, որտեղ զեկուցումներով հանդես է եկել 66 հեղինակ, տպագրվել է պատրաստվել 12-րդ պրակը՝ 39 հոդվածներով, ընթացքի մեջ են 13-րդ և 14-րդ պրակների նյութերի խմբագրման աշխատանքները՝ տպագրման ներկայացնելու նպատակով: Համագործակցելով Հայաստանի ազգային գրադարանի հետ՝ ապահովվել է «CrossRef» միջազգային մատենագիտական տեղեկատու համակարգին միացման և պարբերականի հոդվածներին օբյեկտի թվային նույնականացման համարանիշի (DOI) տրամադրման գործընթացը, ինչպես նաև պարբերականի բոլոր հոդվածների համար հատկացվել են համընդհանուր տասնորդական դասակարգիչներ /ՀՏԴ, УДК/, ցուցիչներ:

Արդյունքը՝

Համալսարանի գիտահետազոտական պլանավորված գործունեություն, դրա արդյունավետության գնահատման վերլուծություններ, հրապարակված հաշվետվություններ, պետական բյուջեից ֆինանսավորվող թեմատիկ գիտական թեմայի իրականացում Հայոց լեզվի և գրականության ամբիոնի կողմից: Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ընդունելի պարբերականների ցանկում ներառված գիտական հոդվածների ժողովածու, որը գրանցված է պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման համակարգում:

Նպատակը՝

2. Ինտեգրել գիտահետազոտական և ուսումնական գործընթացները, մշակել և գործարկել ուսանող-դասախոս համատեղ գիտահետազոտական գործունեությունը խրախուսող նոր կառուցակարգեր, դասախոսների տարեկան գործունեության գնահատման կառուցակարգում կարևորել գիտահետազոտական գործունեությունը:

Իրականացված աշխատանքները՝

Համալրվել են համալսարանի էլեկտրոնային գրադարանի պաշարները, ուսանողների համար անհրաժեշտ պայմաններ են ստեղծվել՝ գիտական-տեղեկատվական նյութերի ձեռքբերման, հետազոտական հմտությունների զարգացման նպատակով, իրականացվել են հետազոտական գործընթացներից շահակիցների բավարարվածության գնահատման հետևողական աշխատանքներ, կատարվել վերլուծություններ, ընթացքի մեջ է դրանց արդյունքների հաշվառմամբ դասախոսների տարեկան գործունեության գնահատման գործիքակազմի վերանայման աշխատանքները:

Արդյունքը՝

ԳՊՀ դասախոսների գիտական հետազոտությունների, հեղինակած հոդվածների, մենագրությունների, դասագրքերի, ԳՊՀ դասախոսների՝ միջազգային գիտաժողովների մասնակցության, կազմակերպած միջոցառումների մշտադիտարկման արդյունքների վերլուծություններ վերջին հինգ տարիների համար /49 մենագրություն, 27 միջազգային գիտաժողովներ, 50-ից ավելի արտասահմանյան գրախոսվող ամսագրերում տպագրություններ, 31 գյուտերի, արտոնագրերի, հեղինակային իրավունքի վկայագրեր, այլ/, վերլուծվել է բուհի ընդհանուր բյուջեում հետազոտության համար հատկացված միջոցները՝ արտահայտված տոկոսներով /2018թ. մոտավորապես 1,6%, 2021թ.՝ 3,5%/, գրադարանում համալրվել են թվով 378 գրքեր՝ այդ թվում 45 –ը էլեկտրոնային:

Նպատակը՝

3. Ապահովել մասնակցություն միջազգային նոր հետազոտական դրամաշնորհային ծրագրերին:

Իրականացված աշխատանքները՝

Շարունակվել են միջազգային դրամաշնորհային տարբեր նախագծերի պայմանների ուսումնասիրման աշխատանքները,ԳՊՀ աշխատակիցները անդամակցել են տարբեր գործընկերների հետ հայտերի նախապատրաստման աշխատանքներին, ընդլայնվել է գործընկերային հարաբերությունների շրջանակը:

Արդյունքը՝

ԵՄ «Էրազմուս+ Կարողությունների զարգացում բաղադրիչով» նոր ծրագիր «Բուհական կրթության փոխակերպում՝ հանուն կանաչ և կայուն ապագայի (T-GREEN)», որի համակարգողն է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը: Կոնսորցիումի ծրագրային երկրների համալսարաններն են Հռոմի Սապիենզիայի համալսարանը (Իտալիա), Պորտուգալիայի կաթոլիկ համալսարանը (Պորտուգալիա), Լունդի համալսարանը (Շվեդիա) և Կրակովի Յագելոնյան համալսարանը (Լեհաստան), ՀՀ հաստատություններն են՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը, Գավառի պետական համալսարանը, Երևանի պետական համալսարանը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, Գորիսի պետական համալսարանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, Եվրասիա միջազգային համալսարանը: Ծրագրի նպատակն է բարեփոխել մագիստրոսական կրթությունը՝ անցում կատարելով ավանդականից դեպի ապագայի կրթական «կանաչ» ծրագրերի, համագործակցային ցանցի ստեղծումը և «կանաչ» կրթության համար ազգային ու ինստիտուցիոնալ գործիքակազմի ստեղծումը: Ծրագրի առանցքում կրթության ոլորտում որոշումներ կայացնողների և քաղաքականություն մշակողների, մանկավարժների, հետազոտողների և ուսանողների կարողությունների զարգացումն է:

III. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակը՝

1. Շարունակել բուհի կրթական միջավայրի արդիականացման, համալսարանի գործունեությունը կարգավորող ներբուհական փաստաթղթերի և բարձրագույն կրթության

ոլորտը կարգավորող ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գերատեսչական և այլ ակտերի համապատասխանության ապահովումը:

Իրականացված աշխատանքները՝

Շարունակվել են համալսարանի տարբեր կանոնակարգերի դրույթների իրականացման արդյունավետության գնահատման, շեղումների հայտնաբերման աշխատանքները, մշակվել են արդիականությունը կորցրած կամ օրենսդրական, գերատեսչական ակտերի հետ անհամաձայնություն պարունակող կանոնակարգերի նոր նախագծերի մշակման, շահակիցների կարծիքների հաշվառման աշխատանքները, գիտական խորհրդի կողմից հաստատվել են բարելավված կամ նոր մշակված կանոնակարգերը:

Արդյունքը՝

Բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքներին, ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գերատեսչական և այլ ակտերին համապատասխանող կանոնակարգային հենք:

Համալսարանի պաշտոնական կայքում գործող «Նախագծեր»/ հղումը՝ Նախագծեր — Gsu.am/ ենթաբաժնում ներքին և արտաքին շահակիցների համար բաց հասանելիությամբ տեղադրվել են ներբուհական իրավական ակտերի նախագծեր, որոնց վերաբերյալ շահառուները ներկայացրել են իրենց առաջարկություններն ու դիտողությունները:

Վերանայվել և լրամշակվել եհետևյալ ներբուհական ակտերը.

1. Գավառի պետական համալսարանի և ԳՊՀ արհեստակցական կազմակերպության միջև կնքված կոլեկտիվ պայմանագիր
2. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքը
3. Գավառի պետական համալսարանի ուսումնական ստորաբաժանումները (ֆակուլտետները)
4. Գավառի պետական համալսարանի ռեկտորի ընտրության կանոնակարգ
5. Գավառի պետական համալսարանի հանրակացարանի կանոնակարգ
6. Գավառի պետական համալսարանում հեռավար (առցանց) կրթության կազմակերպման կարգ
7. Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածուի բնագրերի ձևավորման և ներկայացման կարգ (փոփոխություններով)
8. Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և վարձն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու կանոնակարգ (փոփոխություններով)
9. Գավառի պետական համալսարանի սկսնակ դասախոսների և աշխատակիցների մենթորության կազմակերպման կարգ:
10. Մշակվել և հաստատվել է «Գավառի պետական համալսարանում կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կանոնակարգ» նոր կանոնակարգը:
11. Սահմանված կարգով գրանցվել են «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության փոփոխությունները:

Նախորդ ուստարում մշակվել էր 5 կանոնակարգ:

Նպատակը՝

2. Շարունակել շահառուների շրջանում նրանց անհրաժեշտ էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների կարիքների ուսումնասիրությունը, դրանց բավարարման ծրագրերի մշակումն ու իրականացումը:

Իրականացված աշխատանքները՝

Մշակվել են հարցաթերթեր դասախոսների և ուսանողների շրջանում կրթական միջավայրից բավարարվածության գնահատման և կարիքների վերհանման համար:

Իրականացվել են հարցումներ, ամփոփվել արդյունքները, ներկայացվել ռեկտորատի, ապա նաև գիտխորհրդի քննարկմանը նոր էլեկտրոնային ռեսուրսներով ՄԿԾ-ների իրականացման գործընթացն ապահովելու համար, ինչպես նաև բացահայտվել են կարիքները, տարեկան գնումների պլանավորման գործընթացում հաշվառվել են շահակիցների կարիքները, կազմակերպվել է գնումների գործընթաց:

Արդյունքը՝

Տեխնիկապես վերազինված և վերանորոգված սխեմատեխնիկայի լաբորատորիա, բնագիտության լաբորատորիա, նկարչության ստուդիա, նորաբաց մանկավարժա-հոգեբանական կենտրոն, ԳՊՀ պատմության թանգարան, լինգաֆոնային կաբինետ, որը վերածվել է լինգաֆոնային մուլտիմեդիական համակարգչային լսարանի՝ այն ծառայեցնելով որպես օտար լեզուների կենտրոն, ԵՄ Էրասմուզ «SMART» ծրագրի շրջանակներում վերազինված, ԳՊՀ միջոցներով կահավորված «SMART» կենտրոն:

Ուսանողների շրջանում էլեկտրոնային ուսուցման համակարգից բավարարվածության աստիճանը կազմել է 74%:

Նպատակը՝

3. Շարունակել թվայնացնել ԳՊՀ գրադարանի գրքային ֆոնդը, մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական ռեսուրսները:

Իրականացված աշխատանքները՝

Ուսումնասիրվել են շահակիցների կարիքները՝ պահանջված գրքաֆոնդի ցանկի ճշգրտման նպատակով, ընտրվել է թվայնացման ենթակա գրքաֆոնդը, իրականացվել է գրքաֆոնդի թվայնացման գործընթացը, ուսումնասիրվել է շահակիցների բավարարվածության մակարդակը:

Արդյունքը՝

ԳՊՀ-ում առկա նյութատեխնիկական բազան կրթական գործընթացի կազմակերպման համար բավարար են համարել հարցվածների 95%-ը:

Նպատակը՝

4. Իրականացնել ԳՊՀ համացանցային կայքի կատարելագործման աշխատանքներ, կայքը շարունակաբար համալրել անգլերեն և ռուսերեն նյութերով, կատարել կայքի ձևավորման /դիզայնի/ և գործառութային փոփոխության մշակումներ, ապահովել ծրագրային միջավայրի թարմացում:

Իրականացված աշխատանքները՝

Նախագծվել են համալսարանի պաշտոնական կայքի համալրման նոր լուծումներ, պարբերաբար համալրվել են կայքի նյութերը, իրականացվել են անհրաժեշտ նյութերի թարգմանություններ՝ անգլերեն և ռուսերեն, արդի պահանջներին համապատասխան ապահովվել են կայքի թարմացումները, պատրաստվել է նոր ձևավորմամբ ԳՊՀ կայքը:

Արդյունքը՝

ԳՊՀ կայքի դիտումների և այցելուների քանակի աճ, արժանահավատ տվյալներով շարունակաբար համալրվող պաշտոնական կայք:

Նպատակը՝

5. Արդիականացնել էլեկտրոնային կառավարման, էլեկտրոնային ծառայությունների համակարգերը, թվային տիրույթները՝ ոլորտում առկա մարտահրավերները հաղթահարելու, խնդիրները օպերատիվ լուծելու կարողությունների զարգացման նպատակով:

Իրականացված աշխատանքները՝

Ուսումնասիրվել են շահակիցների կարծիքները էլեկտրոնային կառավարման համակարգերի արդյունավետության վերաբերյալ, հնարավորինս համալրվել է «Temis» համակարգում համալսարանի վերաբերյալ տվյալները, ԱՔԲ-ում շարունակվել են համալրվել ԳՊՀ ուսանողներին վերաբերող ակադեմիական տվյալների բազաներ, սակայն միասնական կառավարման համակարգի անցման աշխատանքները դեռևս ավարտված չեն:

Արդյունքը՝

Միասնական տեղեկատվական էլեկտրոնային շտեմարաններ, գործարկված էլեկտրոնային համակարգ:

IV. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նպատակը՝

1. Շարունակել իրականացնել ուսանողների լեզվական գրագիտության ապահովման, օտար լեզուներով հաղորդակցման, այլալեզու գիտական, տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հնարավորության ընձեռման նպատակով օտար լեզուների ուսուցումը, բարձրացնել դրա արդյունավետությունը:

Իրականացված աշխատանքները՝

Օտար լեզուների ամբիոնի կողմից կիրառվել են օտար լեզուների ուսուցման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ:

Իրականացվել են համալսարանի ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության ծրագրեր, խրախուսվել են միջազգային ծրագրերին նրանց մասնակցությունը:

Արդյունքը՝

Շարժունության ծրագրերին մասնակցած 8 ուսանող և 8 դասախոս:

Նպատակը՝

2. Առավել արդյունավետ համագործակցել ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, ուսանողական ծրագրային թիմի հետ, ապահովել համալսարանի կառավարման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացներում նրանց ակտիվ դերակատարությունը:

Իրականացված աշխատանքները՝

Ուսանողներին մոտիվացնելու նպատակով կազմակերպվել են կրթական, գիտական, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական դաստիարակության և այլ բնույթի միջոցառումներ, ինտելեկտուալ մրցույթներ, գիտելիքի արժևորմանը միտված այլ ծրագրեր, իրականացվել են աշխատանքներ ակտիվացնելու ուսանողների դերը բուհում որակի ապահովման գործընթացներում, ակադեմիապես ցածր ցուցանիշներ ունեցող ուսանողներին տրամադրվել են է խորհրդատվություն ակադեմիական աջակցություն, քայլեր են արվել ուսանողական ինքնակառավարման մարմինների և ՈԱԲ-ի հետ համատեղ մշակելու ուսանողների ակադեմիական, սոցիալական կարիքների վերհանման նոր կառուցակարգեր:

Արդյունքը՝

ՈՒԳԸ ակտիվ գործունեություն, շահագրգիռ մասնակցություն համալսարանի կառավարման, որոշումների ընդունման գործընթացներին, կազմակերպված միջոցառումների/ բազմաթիվ ուսուցողական, գիտական միջոցառումներ/ և դրանց մասնակցողների թվի և գործընթացից նրանց բավարարվածության աստիճանի աճ: «Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթի ներբուհական փուլի արդյունքներով 8 ուսանողի թեկնածություն ներկայացվել է ԿԳՄՍՆ, որտեղ և հաղթող է ճանաչվել ԳՊՀ 3 ուսանող:

Նպատակը՝

3. Ստեղծել ուսանողական թիրախային խմբեր՝ ուսումնասիրելու ԳՊՀ ուսանողների ակնկալիքներն ու սպասումները կրթական և գիտական ուղղություններով ԳՊՀ գործունեությունից ապագա հինգ տարիների տեսլականով՝ համալսարանի նոր ռազմավարական ծրագրում նրանց առաջարկությունները ներառելու նպատակով:

Իրականացված աշխատանքները՝

Իրականացվել են աշխատանքներ ուսանողներին ուսումնական, հետազոտական գործընթացների վերաբերյալ խորհրդատվությունների մատուցման, դրանց ճիշտ ուղղորդման, տրամադրվել է ԳՊՀ ընթացիկ ռազմավարական ծրագրի մշտադիտարկման պլանները, տրամադրվել են արդյունավետության ցուցիչների հասանելիության վերլուծություններ, մշակվել ռազմավարական պլանավորման վերաբերյալ հարցաթերթիկներ, իրականացվել հարցախույզեր:

Արդյունքը՝

Համալսարանի նոր ռազմավարական ծրագիր 2023-2027թվականների համար, որը համապատասխանում է ուսանողների սպասելիքներին և շահերին:

V. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Նպատակը՝

1. Շարունակել իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականություն, պահպանել որակյալ դասախոսական կազմի և վարչական աշխատակազմի կայունությունը:

Իրականացված աշխատանքները՝

Մշտադիտարկվել է ԳՊՀ աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու տույժի կիրառման քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ թվով 12 իրավական ակտեր, որոնք կարգավորում են նշված հարաբերությունները, ինչպես նաև թվով 19 կարգեր և կանոնակարգեր, որոնք վերաբերում են ԳՊՀ ստորաբաժանումների գործունեությանը:

Ուսումնասիրվել են թիրախային խմբերի մասնագիտական կարիքները, պլանավորվել և իրականացնվել են վերապատրաստման ծրագրեր, բարձրացվել է դասախոսական, ուսումնաօժանդակ անձնակազմի վերապատրաստման ծրագրերի արդյունավետությունը, ուսումնասիրվել են վերապատրաստման ծրագրերի որակն ու օգտակարությունը, վերլուծվել և հրապարակվել են արդյունքները:

Արդյունքը՝

Անձնակազմի կառավարման բաժնի գործունեության անհրաժեշտ իրավական և կազմակերպական հենք, վերապատրաստված անձնակազմի թվաքանակի աճ, բավարարվածության աճ: Համալսարանում վարչարարությունից անձնակազմի բավարարվածությունը կազմում է 100%:

Նպատակը՝

2. Առավել արդյունավետ և հասցեական դարձնել մասնագիտական աջակցության ծրագրերը, հստակ ուղղորդել, կիրառել կատարողական արդյունքների ստուգման և գնահատման կառուցակարգեր, պլանավորել աշխատակիցների ծառայողական առաջխաղացման ծրագրեր, արդյունավետ կիրառել դասալսումների կառուցակարգը, փոխհատուցման և պարգևատրման համակարգերը:

Իրականացված աշխատանքները՝

Շարունակվել է գործարկվել անձնակազմի ծառայողական արդյունավետության մշտադիտարկման կառուցակարգեր, ներկայացվել են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, կիրառվել խրախուսման միջոցներ՝ շահակիցների կարծիքների և առաջարկությունների հաշվառմամբ:

Արդյունքը՝

Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ գործող համակարգ, խրախուսված 184 անձ:

Նպատակը՝

3.Մշակել և ներդնել բոլոր տարակարգերի աշխատակիցների կողմից գործառույթների իրականացման արդյունավետության գնահատման՝ կատարողականի արդյունավետության ցուցիչներ (KPI), հաշվետվողականության էլեկտրոնային վարման ձևաչափեր:

Իրականացված աշխատանքները՝

Հետևողականորեն կիրառվել են անձնակազմի կառավարման քաղաքականության դրույթներին համապատասխան ընթացակարգերը, մշակվել և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվել «Գավառի պետական համալսարանի ակադեմիական խորհրդատուների գործունեության կարգ»-ը, որում հստակեցվել են անձնակազմին

ցուցաբերվող աջակցման ծրագրերը, սակայն հաշվետվողականության էլեկտրոնային վարման ձևաչափեր դեռևս մշակված չեն:

Արդյունքը՝

Իրավական ակտերով հստակ կարգավորված հարաբերություններ և ԳՊՀ անձնակազմի կառավարման գործընթացներ, արդյունավետ աշխատանքի համար պարգևատրվել են 19 անձ, իսկ ամենամյա պարգևատրումներ ստացել են 165 աշխատակիցներ: Գործընթացից անձնակազմի բավարարվածության աստիճանը կազմում է 73,3 %: ՈԱԱԿ-ը՝ իրականացնելով խորքային ուսումնասիրություններ չորս տարվա կտրվածքով, ԳՊՀ վարչարարությունն ու կառավարումը գնահատել է բավարար:

VI. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Նպատակը՝

1. Իրականացնել 2022-2027 թթ. հնգամյա ֆինանսական պլանավորում:

Իրականացված աշխատանքները՝

Մշակվել և հրապարակվել են տարեկան ֆինանսական վերլուծություններ՝ հիմնավորելով համալսարանի ֆինանսական գործունեության արդյունավետությունը, կատարվել է ֆինանսական տարեկան պլանավորում, ներդվել են ֆինանսական ռեսուրսների բաշխման և ծախսերի արդյունավետության գնահատման ու վերլուծության կառուցակարգեր՝ ըստ ռազմավարական ուղղությունների և առաջնահերթությունների, իրականացվել են գործընթացների թափանցիկ գնահատում, ինչպես նաև խորքային վերլուծություններ, որոնք թույլ կտան իրականացնելու ֆինանսական պլանավորում առաջիկա տարիների համար:

Արդյունքը՝

Համալսարանի հնգամյա նոր՝ 2023-2027 ռազմավարական ծրագրի իրականացման պլանին համապատասխան կիրականացվի ֆինանսական ռեսուրսների պլանավորում:

Նպատակը՝

2. Շարունակել ապահովել բուհի ֆինանսական կայունության ծրագրերը՝ ֆինանսական հոսքերի հնարավորինս ճշգրիտ պլանավորման, հավաքագրման և եկամուտների արդյունավետ օգտագործման միջոցով, որակի ապահովման «ՊԻԳԲ» շրջափուլին համապատասխան:

Իրականացված աշխատանքները՝

Շարունակվել են իրականացվել ֆինանսական վերլուծություններ՝ հիմնավորելով համալսարանի ֆինանսական գործունեության արդյունավետությունը, ներդրվել և գործարկվել է ֆինանսական ռեսուրսների բաշխման և ծախսերի արդյունավետության վերլուծության ու գնահատման կառուցակարգեր՝ ըստ ռազմավարական ուղղությունների և առաջնահերթությունների, իրականացվել են ներդրված կառուցակարգերի և ավարտված գործընթացների խորքային վերլուծություն և գնահատում:

Արդյունքը՝

Ֆինանսական ռիսկերի կառավարման և համալսարանի ֆինանսական կայունության ապահովման համակարգի բարելավում:

Նպատակը՝

3. Շարունակել համալսարանի առկա նյութատեխնիկական բազայի պահպանման և ընդլայնման, լաբորատոր բազայի, ուսումնական տարածքի, տեխնիկական հնարավորությունների վերազինման, համալսարանի գույքի նպատակային և խելամիտ տնօրինման, խնայողաբար օգտագործման ծրագրերը:

Իրականացված աշխատանքները՝

Շարունակվել է ամենամյա գույքագրման գործընթացը, շահակիցների շրջանում ուսումնասիրվել են ուսումնամեթոդական, հետազոտական ռեսուրսների պահանջները, պլանավորվել և իրականացվել է գնումների կանոնավոր գործընթաց:

Արդյունքը՝

Ուսումնական, հետազոտական անհրաժեշտ ռեսուրսներով ապահովված ՄԿԾ-ներ, համալսարանի համալրված նյութատեխնիկական բազա: Ֆինանսական հատկացումներ են եղել ՈԱԱԿ-ի կողմից բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման իրականացման համար՝ կնքված պայմանագրին համապատասխան:

Նպատակը՝

4. Շարունակել աշխատակիցների հաշվետվությունների հիման վրա իրականացնել գնահատումներ, կիրառել խրախուսման կառուցակարգեր, ԳՊՀ տարեկան բյուջեում ավելացնել աշխատակիցների խրախուսմանը տրամադրվող հատկացումները հետևյալ ուղղություններով՝

1. գիտահետազոտական ծրագրերի իրականացման,
2. բուհ-դպրոց համագործակցային նախաձեռնությունների համար:

Իրականացված աշխատանքները՝

Ներդրվել է դասախոսական անձնակազմի, համալսարանի աշխատակիցների գործառույթների իրականացման վերաբերյալ կիսամյակային և տարեկան գործունեության հաշվետվողականության համակարգ՝ աշխատակիցների հաշվետվությունների հիման վրա իրականացվել են գնահատումներ, կիրառվել խրախուսման գործիքներ:

Արդյունք՝

Մշակված և գործարկված համակարգ, կիրառված գործիքակազմից անձնակազմի բավարարվածության աստիճանը կազմել է 81%:

ՈԱԱԿ-ի կողմից չորս տարվա կտրվածքով խորքային ուսումնասիրությունների արդյունքում բուհի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները գնահատվել են բավարար:

VII. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նպատակը՝

1. Համալսարանի արտաքին կապերի ընդլայում և միջազգայնացմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացում:

Իրականացված աշխատանքները՝

Շարունակվել են համալսարանի արտաքին կապերի ընդլայնմանը և միջազգայնացմանն ուղղված գործընթացները, համակարգված աշխատանքներ են կատարվել համալսարանի արտաքին կապերի ընդլայնման, միջազգայնացմանն ուղղված աշխատանքների արդյունավետության մշտադիտարկման ուղղությամբ:

Արդյունքը՝

Վերանայված են համալսարանի և գործակից հաստատությունների հետ կնքված պայմանագրերի ժամկետները, վերակնքված են ժամկետները լրացած պայմանագրերը թվով 51 /նախորդ ուստարում՝ 113/ ՀՀ պետական, ոչ պետական ուսումնական հաստատությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, գիտահետազոտական կենտրոնների, ուսանողների պրակտիկաների բազաներ հանդիսացող ինստիտուտների և տնտեսության տարբեր ոլորտների ձեռնարկությունների, կազմակերպությունների հետ: ԳՊՀ աշխատակազմի շրջանում անցկացված հարցումների արդյունքում հարցվողների 60%-ը «գերազանց» է գնահատել Արտաքին կապերի և լրատվության բաժնի աշխատանքը, 40%-ը՝ «լավ»: «Բավարար» և «անբավարար» պատասխաններ չեն գրանցվել:

Նպատակը՝

2.Շարունակել այլ բուհերի հետ իրականացնել համագործակցային ծրագրեր՝ կրթական, գիտական, հետազոտական ուղղություններով, օգտվել առաջատար գիտական կազմակերպությունների հետազոտական լաբորատորիաներից, ուսումնամեթոդական, նյութատեխնիկական ռեսուրսներից:

Իրականացված աշխատանքները՝

Պլանավորվել և իրականացվել են բազմազանեցված համագործակցային ծրագրեր, ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համատեղ գիտական ղեկավարման փորձը կիրառվել է բակալավրատում և մագիստրատուրայում՝ ներգրավելով գործընկեր գիտակրթական հաստատությունների բարձրակարգ մասնագետների, գիտական ղեկավարի սեմինարներին պլանավորվել էր հրավիրել գործընկեր կազմակերպությունների առաջատար գիտաշխատողների՝ նրանց ղեկավարությամբ ԳՊՀ ուսանողների գիտական հոդվածների հրատարակման, հետազոտական ծրագրերի իրականացման նպատակով, սակայն համաճարակային իրավիճակի և դրության պատճառով լիովին չեն իրականացվել:

Նպատակը՝

3. Մշակել և ներդնել համալսարանում ուսուցանվող մասնագիտությունների գծով հնարավոր դիմորդների մասնագիտական կողմնորոշման նոր կառուցակարգեր՝ շարունակաբար գնահատելով դրանց արդյունավետությունը:

Իրականացված աշխատանքները՝

Շարունակվել են աշխատանքները «Համալսարան-դպրոցներ» համագործակցության շրջանակներում, ընդլայնվել է գործընկեր դպրոցների ցանկը, ակտիվացել են գործընկերային հարաբերությունները, ուսումնասիրվել են հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների կրթական կարիքները, անցկացվել առցանց և անցանց միջոցառումներ, աշակերտների կրթական կարիքների հաշվառմամբ մշակվել են մասնագիտական կողմնորոշման ծրագրեր՝ թեմատիկ դասընթացներ, խորհրդատվություններ, ուսումնասիրվել են դպրոցների ուսուցիչների ակադեմիական, մեթոդական, մանկավարժական, հոգեբանական թեմաներով աջակցության կարիքները, դրանց հաշվառմամբ կազմակերպվել են լրացուցիչ կրթական ծրագրեր, ուսումնասիրվել է շահակիցների բավարարվածության աստիճանը, հրապարակվել վերլուծությունները:

Արդյունքը՝

Մարզի դպրոցների հետ կնքված կամ վերակնքված համագործակցության թվով 18 պայմանագրեր և 20 հուշագրեր: Առցանց և անցանց իրականացված տարաբնույթ

միջոցառումներ՝ ուղղված հանրակրթական դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը, բազմաթիվ աշակերտների մասնակցությամբ, իրականացված լրացուցիչ կրթական ծրագրեր, շնորհված հավաստագրեր:

ՈԱԱԿ-ի կողմից չորս տարվա կտրվածքով խորքային ուսումնասիրությունների արդյունքում բուհի արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ իրականացված աշխատանքները գնահատվել են բավարար:

VIII. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակը՝

1. Կատարել շարունակական աշխատանքներ համալսարանում շահակիցներին տրամադրվող աջակցության ծրագրերի արդյունավետության գնահատման ուղղությամբ, ներկայացնել տարեկան վերլուծություններ և հաշվի առնել դրանց արդյունքները:

Իրականացված աշխատանքները՝

Շարունակաբար համալրվել են աշխատակիցների և սովորողների անձնական գործերի էլեկտրոնային բազան՝ նրանց սոցիալական կարգավիճակի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությամբ, ելնելով հիմնավորող հիմնավորող փաստաթղթերից, , շարունակվել են աշխատանքները համալսարանում շահակիցներին տրամադրվող աջակցության ծրագրերի արդյունավետության գնահատման ուղղությամբ, ներկայացվել են տարեկան վերլուծություններ և հաշվի առնվել դրանց արդյունքները:

Արդյունքը՝

Ուսանողների և աշխատակիցների շրջանում իրականացվել են աջակցության ծրագրեր, ապահովված է գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Համալսարանում ուսանողների շրջանում սոցիալական աջակցություն ստացողների թվի աճ է գրանցվել:

Նպատակը՝

2. Շարունակել զարգացնել ներառական կրթական միջավայրը, ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար համալսարանում կրթության մատչելիությունը, ԳՊՀ ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորությունները, իրականացնել սանհանգույցների հարմարեցման աշխատանքներ:

Իրականացված աշխատանքները՝

Համալսարանում առկա է ներառական ուսումնամեթոդական միջավայր՝ էլեկտրոնային ուսումնական ռեսուրսներ, գնահատման էլեկտրոնային համակարգեր, սակայն օբյեկտիվ պատճառներով սանհանգույցների հարմարեցման աշխատանքները հետաձգվել են:

Արդյունքը՝

Հաշմանդամություն ունեցող անձանց համար բավարար կրթական միջավայր:

IX. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակը՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզում իրականացնել հակակոռուպցիոն կրթական ծրագրեր, կյանքի կոչել մարզի ազգաբնակչության իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը միտված նախաձեռնություններ:

Իրականացված աշխատանքները՝

Մշակվել և իրականացվել են ծրագրեր, որոնց ընթացքում արտաքին շահակիցներին մասնակից դարձնելով՝ ուղղակիորեն և անուղակիորեն նրանք հաղորդակից են դարձել ԳՊՀ ակադեմիական ազնիվ միջավայրին, գործընթացների թափանցիկությանն ու գործող իրավական ակտերի դրույթների անվերապահորեն իրագործմանը, սոցիալական ցանցերի, ԳՊՀ պաշտոնական կայքի, մարզային հեռուստաընկերության միջոցով հեռարձակվել են քննարկումներ, բանավեճեր:

Արդյունքը՝

Համալսարանում կոռուպցիոն երևույթների առկայության, կամ դրանց հետ գոնե մեկ անգամ շփման դեպքերի վերաբերյալ ուսանողական անանուն հարցումներում արձանագրված է 0% արդյունք, ինչի մասին ուսանողները, նրանց ծնողները, ազգաբնակչության լայն շրջանակ փաստում են նաև թիրախային խմբերում տեղի ունեցող քննարկումների, շփումների ժամանակ:

Նպատակը՝

2. Ակտիվացնել համալսարանում անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի աշխատանքը, բարձրացնել արդյունավետությունը, իրականացնել գնահատումներ, վերլուծություններ, հրապարակել արդյունքները:

Իրականացված աշխատանքները՝

Պլանավորված էր մշակելու և ներդնելու անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի տարեկան գործունեության հաշվետվության համակարգ, սակայն հաշվետու ուստարում չի իրականացել՝ անազնվության դեպքեր չգրանցվելու պատճառով, ընթացիկ ուստարում ներառված է գործողությունների պլանում:

Արդյունքը՝

Գնահատվել է ակադեմիական միջավայրից շահակիցների բավարարվածությունը, հրապարակվել են արդյունքները: Տարբեր կառույցների կողմից անանուն հարցումների արդյունքում ներքին և արտաքին շահակիցների կողմից բուհը շարունակաբար գնահատվում է որպես ակադեմիական ազնիվ միջավայրում աշխատող, կոռուպցիայից զերծ կառույց:

2022-2023 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գործունեության զարգացման ռազմավարական ուղղությունները

2022-2023 *ուսումնական տարում Գավառի պետական համալսարանը որդեգրել է «Կրթությունը՝ մրցունակության գրավական» կարգախոսը*

Ի. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Շարունակել աշխատանքները արդիականացնելու բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերը, բովանդակային առումով

վերլուծության ենթարկել բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագրերը, համադրել կրթական վերջնարդյունքները և հստակ տարբերակել դրանք: Վերանայել մասնագիտական կրթական ծրագրերի առանձին կառուցամասերի (Ա, Բ,Գ) վերջնարդյունքները, ամրապնդել կապը ինչպես միմյանց, այնպես էլ ՀՀ ՈԱԾ-ի, ՈՈԾ-ների բնութագրիչների միջև:

2. Մշակել և ներդնել ուսուցման բոլոր ձևերով իրականացվող ՄԿԾ-ների դասընթացներին, ուսումնական այլ մոդուլներին կրեդիտների հատկացման և դրանց հաշվարկման նոր մեթոդաբանություն, ուսումնական գործընթացում հետևողականորեն կիրառել կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչները, բարձրացնել դրանց արդյունավետությունը: Ներդնել ուսանողների ուսումնական բեռնվածության պլանավորման և մշտադիտարկման մեխանիզմներ:

3. Բազմազանեցնել դասընթացների ընթացքում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ Ա, Բ, Գ կոմպետենցիաների համար դարձնելով հստակ տարբերակված: Դասավանդման, ուսումնառության նախընտրելի մեթոդները սահմանելիս՝ հաշվի առնել վերջնարդյունքների առանձին տեսակների առանձնահատկությունները:

4. Հնգամյա կտրվածքով գնահատել ԳՊՀ 2017-2022թթ. ռազմավարական ծրագրում ամրագրված նպատակների իրականացման մակարդակը և պլանավորել հաջորդ՝ 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի ուղղությունները, նպատակներն ու խնդիրները, մշակել դրանց իրականացման գործողությունների պլանը, սահմանել կատարողականի արդյունավետության ցուցիչները:

5. Վերանայել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսություններին ներկայացվող պահանջները, ընդհանուր վերջնարդյունքների ստուգմանը միտված բաղադրիչները:

6. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումները պայմանավորել ՄԿԾ-ների դասավանդման համար առաջնահերթ կարիքներով՝ կարևորելով նաև արտաքին մասնագիտական վերապատրաստումները, ինչպես նաև միջազգայնացումը:

II. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

7. Շարունակել ապահովել արդյունավետ աշխատանքներ համալսարանի գիտական գործունեության կառավարման հստակ քաղաքականության իրականացման ուղղությամբ՝ սահմանված ընթացակարգերի դրույթների պահպանմամբ:

8. Ապահովել գիտահետազոտական գործունեության պլանավորման և իրականացման համակարգված մոտեցում՝ հստակեցնելով հետազոտությունների աջակցության և ֆոնդհայթայթման գործընթացները, մշակել և գործարկել գիտահետազոտական աշխատանքների գործողությունների պլաններ, որոնց արդյունքներով մշակել զարգացման հայեցակարգային ծրագրեր:

9. Զարգացնել դասախոսական կազմի, ինչպես նաև ուսանողների՝ օտար լեզվի տիրապետման, հետազոտական մեթոդներին տիրապետման կարողությունները:
10. «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի գծով ասպիրանտուրայում կրթական գործունեություն իրականացնելու թույլտվության համար նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթային հիմքերը՝ դիմելու ԿԳՄՍՆ, ապահովելով ասպիրանտական կրթության համար անհրաժեշտ ակադեմիական, հետազոտական, մեթոդական, նյութատեխնիկական արդիական միջավայր:
11. Ապահովել միջազգային հետազոտական դրամաշնորհային նոր ծրագրերի մասնակցություն:

III. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

12.Շարունակել համալսարանի գործունեությունը կարգավորող ներբուհական փաստաթղթերի և բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գերատեսչական և այլ ակտերի համապատասխանության ապահովումը:
13.Ընդլայնել և թարմացնել համալսարանի գրքապաշարը՝ բաժանորդագրվելով թվային գրադարանների, ուսանողներին խրախուսել՝ կատարելու հետազոտություններ ժամանակակից աղբյուրների օգնությամբ: :
14.Օգտվել գործընկեր բուհերի և գիտական հաստատությունների գրադարանների պաշարներից և էլեկտրոնային ռեսուրսներից, անդամակցել արտերկրի գիտական գրադարաններին և օգտվել նրանց ծառայություններից
15.Բարելավել համալսարանում առկա էլեկտրոնային հարթակները, ստեղծել կապեր առկա համակարգերի միջև՝ ձևավորելով միասնական հարթակ
16. Ուսումնասիրել և համադրել ներքին և արտաքին շահակիցների կարիքներն ու ապագա տեսլականը ԳՊՀ գործունեության տարբեր ուղղություններով՝ բուհի հնգամյա ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների իրականացման նպատակով:

IV. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

17.Բարելավել ուսանողների հավաքագրման կառուցակարգերը, բարձրացնել իրականացվող միջոցառումների արդյունավետությունը, իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի գծով պարբերաբար կազմակերպել «Ամառային դպրոցներ» մարզի հանրակրթական դպրոցների ավագ դպրոցների աշակերտների համար:
18. Ակտիվացնել աշխատանքները սովորողների շրջանում ուսանողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման ուղղությամբ, պարբերաբար ծանոթացնել ուսանողներին իրենց առնչվող համապատասխան նորմատիվ ակտերին:
19. Ակտիվացնել ուսանողական կառույցների՝ Ուսանողական խորհրդի, Ուսանողական գիտական ընկերության աշխատանքները, ուսանողներին տարբեր ձևերով իրազեկել ՈՒԽ, ՈՒԳԸ գործունեության մասին, կիրառել այդ մարմիններին ուսանողների մասնակցության խրախուսման տարբեր կառուցակարգեր, պարբերաբար անցկացնել ֆակուլտետային

խորհրդի և ֆակուլտետային ՈՒԽ-ի, ՈՒԳԸ-ի համատեղ նիստեր, բարձրացնել նրանց դերը ուսանողների շրջանում:

20. Ստեղծել ուսանողական թիրախային խմբեր՝ ուսումնասիրելու ԳՊՀ ուսանողների ակնկալիքներն ու սպասումները կրթական և գիտական ուղղություններով ԳՊՀ գործունեությունից ապագա հինգ տարիների կտրվածքով՝ համալսարանի նոր ռազմավարական ծրագրում նրանց առաջարկությունները ներառելու նպատակով:

V. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

21. Բարձրացնել հոգաբարձուների խորհրդի ներուժի օգտագործման արդյունավետությունը՝ ուժեղացնելով խորհրդի անդամների ներգրավվածությունը ԳՊՀ զարգացման գործընթացներում: Պարբերաբար ուսումնասիրել ԳՊՀ կառավարման գործընթացից շահակիցների բավարարվածությունը, արդյունքները ներկայացնել խորհրդի անդամներին:

22. Համալսարանի կառավարման տարբեր մակարդակներում որոշումների նախագծերի քննարկման գործընթացում ակտիվացնել շահակիցների դերը, որոշումների կայացման և կատարման վրա նրանց ազդեցությունը:

23. Մշակել և ներդնել բոլոր հաստիքների աշխատանքների իրականացման արդյունավետության գնահատման, հաշվետվողականության էլեկտրոնային վարման ձևաչափեր:

24. Ներդնել կառավարման համակարգի, դրա առանձին օղակների և հատկացվող ռեսուրսների արդյունավետության գնահատման մեխանիզմներ և հետևողականորեն արձագանքել գնահատման արդյունքներին:

25. Մշակել ընդհանուր մոտեցում ու մեխանիզմ՝ գործողությունների պլաններում արտացոլված որակական և քանակական ցուցիչների ճշգրտությունն ապահովելու նպատակով: Մշտադիտարկել գնահատման ցուցիչների չափելիության աստիճանը:

VI. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

26. Իրականացնել 2023-2027 թթ. հնգամյա ֆինանսական պլանավորում:

27. Մշակել ԳՊՀ ֆինանսական գործունեության ռազմավարական նպատակներ և խնդիրներ, դրանց լուծման երկարաժամկետ գործողությունների պլաններ:

28. Բազմազանեցնել աշխատակիցների նյութական աջակցման ծրագրերը, կիրառել խրախուսման առավել արդյունավետ համակարգ

29. Շարունակել ապահովել բուհի ֆինանսական կայունության ծրագրերը՝ ֆինանսական հոսքերի ճշգրիտ պլանավորման և եկամուտների արդյունավետ օգտագործման միջոցով: Շարունակել համալսարանի առկա նյութատեխնիկական բազայի պահպանման և ընդլայնման, լաբորատոր բազայի, ուսումնական տարածքի, տեխնիկական հնարավորությունների վերազինման, համալսարանի գույքի նպատակային և խելամիտ տնօրինման, խնայողաբար օգտագործման ծրագրերը:

30. Շարունակել աշխատակիցների տարեկան հաշվետվությունների հիման վրա իրականացնել գնահատումներ, կիրառել խրախուսման կառուցակարգեր, ԳՊՀ տարեկան

բյուջեում ավելացնել աշխատակիցների խրախուսմանը տրամադրվող հատկացումները, հատկապես գիտահետազոտական ծրագրերի իրականացման, ինչպես նաև բուհ-դպրոց համագործակցային նախաձեռնությունների համար: Մշտադիտարկել խրախուսման մեխանիզմների արդյունավետությունը, դրանց արդյունքների հաշվառմամբ մշակել և կիրառել դասախոսական կազմի վարկանիշավորման համակարգ՝ տարբերակված աշխատավարձերի տրամադրմամբ

VII.ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

31.Իրականացնել հանրության հետ կապերի արդյունավետության գնահատումներ և կատարել վերլուծություններ, դրանց արդյունքների հաշվառմամբ բարելավել հանրության հետ հետադարձ կապի կառուցակարգերը:

32. Շարունակել այլ բուհերի հետ իրականացնել համագործակցային ծրագրեր՝ կրթական, գիտական, հետազոտական ուղղություններով, օգտվել առաջատար կազմակերպությունների հետազոտական լաբորատորիաներից, ուսումնամեթոդական, նյութատեխնիկական ռեսուրսներից:

33. Համալսարանի համացանցային կայքում ապահովել եռալեզու տեղեկատվություն՝ բուհի վերաբերյալ անհրաժեշտ իրազեկում ապահովելու և հանրային վստահությունը բարձրացնելու նպատակով:

34. Ընդլայնել համագործակցությունը արտասահմանյան գործընկեր բուհերի հետ տարբեր ուղղություններով, այդ թվում՝ համատեղ և կրկնակի աստիճանաշնորհմամբ կրթական ծրագրերի իրականացման ոլորտում:

35. Շարունակել ներդնել համալսարանում ուսուցանվող մասնագիտությունների գծով հնարավոր դիմորդների մասնագիտական կողմնորոշման նոր կառուցակարգեր՝ շարունակաբար գնահատելով դրանց արդյունավետությունը:

36. Հստակեցնել և ըստ անհրաժեշտության վերանայել ԳՊՀ միջազգայնացման ռազմավարությունը՝ սահմանելով հստակ նպատակներ, գործողությունների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլաններ:

VIII. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

37. Շարունակաբար բարձրացնել համալսարանի սոցիալական պատասխանատվության աստիճանը, բազմազանեցնել որակի ապահովման գործընթացներում տեղեկությունների հավաքագրման գործիքները և վերլուծել գործիքակազմի արդյունավետությունը՝ ընտրելով շահակիցների յուրաքանչյուր խմբի հետ աշխատելու առավել արդյունավետ մոտեցումներ:

38. Շարունակել զարգացնել ներառական կրթական միջավայրը, ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթության մատչելիությունը, ԳՊՀ ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորությունները, իրականացնել սանհանգույցների հարմարեցման աշխատանքներ:

39. Թվայնացնել համալսարանի աշխատակիցների և սովորողների անձնական գործերը՝ նրանց սոցիալական կարգավիճակի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերով, շարունակել աշխատանքները համալսարանում շահակիցներին տրամադրվող աջակցման

ծրագրերի արդյունավետության գնահատման ուղղությամբ, ներկայացնել տարեկան վերլուծություններ և հաշվի առնել դրանց արդյունքները:

IX. ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

40. Շարունակել ուսանողական ինքնակառավարման մարմինների, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի միջոցով մշակել և իրականացնել դպրոցականների, մանկատան սաների, հանրության այլ թիրախային խմբերի իրավագիտակցության բարձրացման ծրագրեր:

41. Ակտիվացնել բուհում անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի աշխատանքի արդյունավետությունը, արձանագրել և քննել անազնվության դեպքերը, ներդնել հաշվետվողականության կառուցակարգ, իրականացնել դրանց գնահատումներ, վերլուծություններ, ապահովել արդյունքների մասին շահակիցներին իրազեկումը:

42.Շարունակել որակի ապահովման գործիքների և կառուցակարգերի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ դրանցում պարտադիր ներառել կոռուպցիոն ռիսկերի բացահայտման բաղադրիչներ:

43.Ապահովել բուհի գործունեության բոլոր ոլորտների գործունեության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը:

Նելլի Կուտուզյան՝
ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ և 2023 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի տարեկան բյուջեի նախագիծը կազմվում է՝ հիմք ընդունելով ԳՊՀ հնգամյա ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման՝ տվյալ տարվա գործողությունների ծրագիրը: 2022 թվականի բյուջեն և 2023 թվականի բյուջեի նախահաշիվը պլանավորելիս՝ հաշվի են առնվել ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանը միտված համապատասխան ուսումնական տարիների գործողությունների ծրագրերը: Բյուջեում համապատասխան հոդվածների համամասնությունը պլանավորելիս՝ հաշվի են առնվում տվյալ ուղղություններով նախատեսված գործողությունների արդյունավետության գնահատման ակնկալվող ցուցիչները:

Այսպիսով, ըստ ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի ուղղությունների՝ ԳՊՀ 2023 թվականի բյուջեի տոկոսային բաշխումը կատարվել է հետևյալ կերպ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ***<u>Ուսումնական գործընթացի կազմակերպման ոլորտում.</u>***

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/, 2023թ-ի բյուջեում հատկացված տոկոսը՝ 71.3, նախորդ տարվա 73.18-ի փոխարեն, որի մեծ մասը բաժին է հասնում ուսումնական գործընթացի կազմակերպմանը և որն իր մեջ ներառում է նաև այլ ոլորտների համար նախատեսված միջոցները:

2. ***<u>Գիտահետազոտական գործունեության ոլորտում.</u>***

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսեր, 2023թ-ի բյուջեում հատկացված տոկոսը՝ 2.49, նախորդ տարվա 2.45-ի փոխարեն: Այս գործունեության համար աշխատանքի վարձատրությանը, անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերմանը, պայմանների ստեղծմանը և այլ անհրաժեշտ ծախսերին ուղղվող միջոցները ներառված են բյուջեի համապատասխան հոդվածներում: Ուստի, գիտահետազոտական ուղղությամբ կատարվող ընդհանուր ծախսերն ավելին են: 2023թ.-ի աճը պայմանավորված է նաև ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտահետազոտական ծրագրերի համար նախատեսված գումարներով:

3. ***<u>Կրթական միջավայրի արդիականացման ոլորտում.</u>***

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ կապիտալ ակտիվների ձեռք բերում, ելքեր կապիտալ նորոգումների գծով, 2023թ-ի բյուջեում հատկացված տոկոսը՝ 4.88, նախորդ տարվա 5.11 տոկոսի փոխարեն, այս հոդվածում ներառված են դրամաշնորհային

ծրագրերի շրջանակում համապատասխան համակարգող կազմակերպությունների կողմից գնվող և տրամադրվող հիմնական միջոցները:

4. Ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսեր, գրադարանային ծախսեր, գիտաժողովների և այլ միջոցառումների ծախսեր, տպագրական ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, դրամաշնորհների ծախսեր, վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների, բյուջեում հատկացված տոկոսը՝ 6.16, նախորդ տարվան 5.2-ի փոխարեն:

5. Վարչարարության և մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, փոստային և կապի վճարներ, դրամաշնորհների ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 1.51, նախորդ տարվա 1.42-ի փոխարեն:

6. Ֆինանսական գործունեության և ներքուհական տնտեսության կազմակերպման ոլորտներում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ կոմունալ վճարներ, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, տրանսպորտային միջոցների ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, դրամաշնորհների ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 6.56, նախորդ տարվա 6.88-ի փոխարեն:

7. Արտաքին կապերի և համագործակցության ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ փոստային և կապի վճարներ, այլ ծառայությունների և ներկայացուցչական ու գործուղման ծախսեր, մարքեթինգի և գովազի ծախսեր, դրամաշնորհների ընթացիկ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 2.19, նախորդ տարվա 3.38-ի փոխարեն:

8. Համալսարանի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված ուղղությամբ աշխատանքի վարձատրությանն ուղղվող լրացուցիչ ծախսեր՝ պարգևատրումներ, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 4.75, նախորդ տարվա 1.41%-ի փոխարեն՝ պայմանավորված ՀՀ-ում արտակարգ և ռազմական դրությամբ:

9. Համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի իրականացման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված գործունեության հետ կապված տպագրման ծախսեր, հակակոռուպցիոն իրազեկմանը և ակադեմիական ազնիվ միջավայրի ձևավորմանն ուղղված այլ ծախսեր, ինչպես նախորդ տարի այնպելս էլ 2023թ-ի բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.25 %:

Ստորև ներկայացվում է 2022 թվականի բյուջեի կատարողականի և 2023 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի վերլուծությունը.

Գավառի պետական համալսարանի 2022 թվականի և 2023 թվականի բյուջեները կազմվել են՝ մուտքերի և ելքերի համամասնությունը պահպանելու սկզբունքով, որպեսզի ելքերը չգերազանցեն մուտքերին: Այս սկզբունքը պահպանվել է 2022 թվականի ծախսերը կատարելիս՝ պակասուրդ չառաջացնելու նպատակով: Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս անհրաժեշտ է ընդգծել այն փաստը, որ 2022թ-ի ընթացքում ցավոք իրենց շարունակվող հետևանքներն են ունեցել 2020թ.-ին ՀՀ-ում ծագած խնդիրները՝ ուղղակիորեն ազդելով համալսարանի և՛ եկամուտների ձևավորման, և՛ ծախսերի կատարման վրա: Անհրաժեշտ է ընդգծել նաև ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից 2022թ. օգոստոս ամսին հեռակա ընդունելության կանոնների փոփոխությունները, քանի որ ընդունելության պայմաններն առանց դիմորդներին մեկ տարի առաջ տեղեկացնելու՝ փոփոխելը բուհ ընդունվողների մոտ օբեկտիվ բարդություններ առաջացրեց, որի պատճառով և՛ դիմորդների, և՛ ընդունվողների քանակը կտրուկ նվազեց, ինչն էլ իր ազդեցությունը ունեցավ բուհի եկամուտների՝ ինչպես 2022 թվականի, այնպես էլ 2023 թվականի եկամուտների ծավալների, հետևաբար նաև ծախսերի ձևավորման վրա:

Այսպիսով, 2022 թվականին պլանավորված մուտքերի 67.9%-ը բաժին է ընկնում վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտներին, սակայն այս հոդվածի կատարողականը ընդհանուր մուտքերի մեջ կազմել է 59%, այսինքն՝ հոդվածի կատարողականը պլանավորվածից մոտ 9%-ով պակաս է, ինչը պայմանավորված է ինչպես ընդունելության կանոնների փոփոխությունով, այնպես էլ ուսանողներին տրամադրված զեղչերի աճով, ինչպես նաև ՀՀ Կառավարության կողմից ուսանողներին տրամադրվող փոխատուցումների աճով: Իրենց միջոցներով ուսման վարձ չվճարած կամ թերի վճարած սովորողների խմբում մեծ մաս են կազմում այն ուսանողները, որոնք Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից են կամ մասնակցի երեխա են, կամ կին են, ինչպես նաև ՀՀ միասնական սոցիալական ծառայության համակարգում ընդգրկված ընտանիքի անդամ-ուսանողներ են, որոնց մոտ առկա էր ՀՀ Կառավարության համապատասխան ծրագրերի շրջանակներում ուսման վարձերի փոխհատուցման սպասում, ինչը չիրականացավ ՀՀ Կառավարության կողմից ուսման վարձերի փոխհատուցման համար ուսանողների միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ հետ կապված նոր պահանջների սահմանման հետևանքով: Նշված հանգամանքն իր ազդեցությունն է թողել 2022 թվականի համար նախատեսված ծախսերի կատարողականի վրա, ինչպես նաև իր ազդեցությունն է ունենալու 2023 թվականի ընթացքում ուսման վարձերի հավաքագրման գործընթացի վրա: 2023 թվականի բյուջեով վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտները կազմելու են բյուջեի ընդհանուր մուտքերի 73%-ը, 2022 թվականի փաստացի կատարողականից այս մեծությունը ավել է նախատեսվել, քանի որ հնարավոր չէ նախապես կանխատեսել, թե 2023 թվականի պետական բյուջեի միջոցներից որքան ուսման վարձ կփոխհատուցվի անապահով, սահմանամերձ ընտանիքի և Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից ուսանողների համար, հետևաբար՝ ենթադրվում է, որ այդ գումարները վճարվելու են ուսանողների կողմից: Թեև պլանավորվում է, այդուամենայնիվ առկա են բազմաթիվ անորոշություններ՝ պայմանավորված 2023-2024 ուստարվա

ընդունելության արդյունքներով, ՀՀ-ում և, հատկապես, Գեղարքունիքի մարզում առկա անվտանգության հետ կապված խնդիրներով, հետպատերազմյան սոցիալ-տնտեսական և հոգեբանական անբարենպաստ իրավիճակով, ուստի հնարավոր չէ արժանահավատորեն կանխատեսել և գնահատել այդ մեծությունը:

Մուտքերի հաջորդ, համեմատաբար մեծ տեսակարար մասը բաժին է ընկնում ՀՀ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորմանը, որը, ըստ 2022 թվականի պլանավորման, նախատեսվել է 18.4%, սակայն ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցները գերազանցել են պլանավորված մեծությունը, քանի որ պետության կողմից տարբեր ծրագրերով ուսանողների ուսման վարձերի ֆինանսավորումն աճել է և կազմել 31.9%:

Պլանավորված մուտքերի հաջորդ խումբը՝ 11%-ից մի փոքր ավելի, կազմում են ոչ գործառնական մուտքերը, որոնք իրենց մեջ ներառում են դրամաշնորհներից և բարեգործական նվիրաբերություններից մուտքերը, բանկերում ներդրված գումարներից եկամուտները և վարձակալական եկամուտները: Ոչ գործառնական եկամուտներից մուտքերը կազմել են 6.5%, քանի որ որոշ դրամաշնորհային պայմանագրերի հերթական ֆինանսավորումը տեղափոխվել է 2023 թվական, ինչպես նաև ավանդներից ստացված եկամուտներն են նվազել:

Պլանավորված մուտքերում հաջորդ ոչ էական խումբը՝ 2.6 %-ով, կազմում են գործառնական այլ եկամուտները, որոնք ներառում են մագիստրատուրայի ընդունելությունից մուտքերը, այլ ծառայություններից և վաճառակետից մուտքերը: Այս հոդվածի կատարողականը կազմել է գրեթե 2.6%, իսկ 2023թ.-ի համար այս հոդվածը պլանավորվել է ընդհանուր մուտքերի 2.4%-ի չափով:

Գավառի պետական համալսարանի ելքերի ամենամեծ բաժինը՝ գրեթե 78%-ը, աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերն են, որոնք իրենց մեջ ներառում են և՛ գիտահետազոտական գործունեությունը, և՛ ֆինանսական գործունեության ու ներբուհական տնտեսության կազմակերպումը, և՛ մարդկային ռեսուրսների կառավարումը, և՛ վարչարարության, ինչպես նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտի ծախսերը: Այս հոդվածի՝ բյուջեի մեջ ունեցած մեծ տեսակարար կշիռը դեռևս չի նշանակում, թե համալսարանը չի ապահովում կամ չի կարող ապահովել զարգացում, քանի որ այս հոդվածում ներառվում են նաև շարունակական զարգացում ապահովող այնպիսի ծախսեր, ինչպիսիք են հրավիրյալ դասախոս-մասնագետների կամ վերապատրաստող դասախոսների վարձատրությունը, որոնք էլ հենց ապահովել և ընթացս ապահովելու են շարունակական մասնագիտական զարգացում համալսարանի ուսանողների, այլ շահառուների համար: Հոդվածով 2023թ-ի համար նախատեսվել է ընդհանուր ծախսերի գրեթե 75.5 %-ը:

Վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/ հոդվածը ներառված է ընդհանուր ծախսերի մեջ և ընդգրկում է համալսարանի կողմից վճարվող շահութահարկը, ավելացված արժեքի հարկը, ուսանողական համակազմի 10%-ից ավելիին տրամադրված զեղչերի եկամտային հարկը և այլ հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ: Այս հոդվածի գծով 2022 թվականի համար պլանավորումը կազմել է շուրջ 0.75 %, որը կատարվել է 0.32%: Թերակատարումը պայմանավորված է 2022 թ. դեկտեմբեր ամսվա հարկերի հաջորդ ամիս վճարելով:

Կոմունալ վճարները կազմում են պլանավորված բյուջեի գրեթե 4 %-ը, որն իր մեջ ներառում է և՛ հետազոտական գործունեության համար անհրաժեշտ կոմունալ ծախսերը, և

բոլոր այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ են կոմունալ ծախսեր: Հոդվածում գնաճի հետևանքով առկա է գերակատարում 8%-ով և 2022թ.-ի համար նախատեսվել է բյուջեի մոտ 5.14 %-ը ծախսել կոմունալ ծախսերի համար:

Փոստային և կապի վճարները պլանավորվել են 0.36 %-ի չափով: Հոդվածի կատարողականը ընդհանուր ծախսերի մեջ կազմել է 0.37%՝ պայմանավորված Հայաստանի փոստի կողմից տարվա ընթացքում 2 անգամ նամականիշների արժեքների բարձրացմամբ, ուստի 2023թ.-ի համար պլանավորվել է ընդհանուր ծախսերի 0.38%-ը տրամադրել այս հոդվածին:

Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.01 %-ը: Այս բաժինն իր մեջ ներառում է բոլոր ոլորտների համար անհրաժեշտ նյութերը (հետազոտական աշխատանքների, մարդկային ռեսուրսների կառավարման և վարչարարության, արտաքին կապերի և համագործակցության ընդլայնման և ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսերը): Այս հոդվածի կատարողականն ընդհանուր ծախսերի մեջ կազմել է 0.78 % և 2023 թվականի բյուջեում այս հոդվածը պլանավորվել է մոտ 1.14 %:

Ծախսերի հաջորդ բաժինը տրանսպորտային միջոցների ծախսերն են, որոնք կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.16 %,-ը, որը նախատեսված է համալսարանի 2 մեքենաների համար, որոնք սպասարկում են ռեկտորին և համալսարանի այլ աշխատակիցներին, և 1 ավտոբուսի համար, որը սպասարկում է համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին: Այսինքն՝ այս հոդվածն իր մեջ ներառում է համալսարանի գործունեության բազմաթիվ ոլորտների ծախսեր. և՛ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտը, և՛ ուսումնական-գիտահետազոտական գործունեության ոլորտները, և՛ արտաքին կապերի-համագործակցության ընդլայնման ոլորտը: Հոդվածով ունենք տնտեսում, որի արդյունքում կատարողական ընդհանուր բյուջեում կազմել է 0.74%, սակայն 2023թ-ի բյուջեով նախատեսվել է 1.18%-ը՝ պայմանավորված տրանսպորտային միջոցների սպասարկման համար անհրաժեշտ վառելիքի և այլ պահեստամասերի թանկացումով:

Ծախսերի հաջորդ բաժինը Ծառայությունների ձեռքբերման ծախսերն են: Այս բաժնի համար պլանավորվել էր բյուջեի 0.59%-ը, որն իր մեջ ներառում է բազմաթիվ ծառայությունների ձեռքբերում, ներառյալ տպագրության, մարքեթինգի և գովազդի համար պահանջվող ծախսերը: Նշված հոդվածի կատարողականը կազմել է 2022 թվականի բյուջեի 0.49%-ը, ինչպես և նախորդ տարի և 2023 թվականի համար նախատեսվել է բյուջեի 0.58%-ը: Հոդվածը ներառում է նաև չնախատեսված իրավիճակների համար միջոցների պլանավորում:

Ծախսերի հաջորդ բաժինը գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ ելքերն են, որոնք 2022 թվականի համար պլանավորվել էր 2.45 %, կատարողականը կազմել է ընդհանուր ծախսերի 2.26%-ը, իսկ 2022թ.-ի համար նախատեսվել է բյուջեի 2.49%-ը ծախսել այս ուղղությամբ: Հոդվածը ներառում է գիտահետազոտական աշխատանքների և նյութերի համար անհրաժեշտ ծախսերը, սակայն այս գործունեության համար անհրաժեշտ վարձատրության, կոմունալ, կապի և այլ անհրաժեշտ ծախսերը ներառված են բյուջեի համապատասխան հոդվածներում: Այսինքն՝ գիտահետազոտական գործունեության համար ծախսերն ավելին են:

Ծախսերի հաջորդ բաժինը թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար անհրաժեշտ ելքերն են, որոնք կազմել են բյուջեի շատ փոքր մասը՝ 0.05%-ը, քանի որ օգտագործվում են էլեկտրոնային լրատվամիջոցներ:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմել են կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսերը: Այս հոդվածով պլանավորվել է ծախսերի 1.30%-ը, կատարողականը կազմել է 1.22%-ը: 2023 թվականի բյուջեում այս հոդվածը պլանավորվել է 0.1%-ի չափով, նախորդ տարվա համեմատ այս հոդվածում կատարվել է էական նվազեցում, քանի որ 2022 թվականի ընթացքում բուհն անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրում և դրա հետ կապված ծախսերը 2023 թվականի ընթացքում այլևս չեն լինելու:

Ծախսերի հաջորդ բաժինը ներկայացուցչական և գործուղման ծախսերն են: Այս հոդվածով ծախսերը կազմել են բյուջեի ընդամենը 0.1 %-ը, կատարողականը կազմել է 0.1%: Նշված հոդվածը նախատեսված է ԳՊՀ-ում հյուրերի և պատվիրակությունների ընդունելությունների կազմակերպման համար, որի նպատակը արտաքին կապերի, համագործակցության ծրագրերի ավելացումն է և բարերարների շրջանակի ընդլայնումը: Հաջորդ տարվա համար նախատեսվել է ծախսերի 0.1 %-ը:

Ծախսերի հաջորդ բաժինը ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսերն են: Հոդվածը նախատեսված է ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվող միջոցառումների ֆինանսավորման և վերջիններիս ընթացիկ գործունեության ապահովման ծախսերը հոգալու համար: Նախատեսվել էր բյուջեի գրեթե 0.16 %-ը, կատարողականը կազմել է 0.07 %, իսկ 2022թ-ի համար նախատեսվել է 0.17 %-ը ընդհանուր ծախսերում, թերակատարումը կրկին պայմանավորված է առցանց եղանակով գործունեություն ծավալելու փաստի հետ, ինչպես նաև այս հոդվածով ծախսերի որոշ մասը ֆինանսավորվել են արտաքին աղբյուրներից: Նշենք, որ ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից գիտահետազոտական գործունեության համար կատարված ծախսերը ներառվել են գիտահետազոտական գործունեության հոդվածում:

Ծախսերի հաջորդ բաժինը ‹‹Այլ ծախսեր›› հոդվածն է, որն իր մեջ ներառում է բազմաբնույթ ծախսեր, ինչպիսիք են հիմնադրամների հետ համագործակցության և բարեգործության համար անհրաժեշտ ծախսերը, աշխատաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման համար պահանջվող ծախսերը, դրամաշնորհների գծով կատարվող ծախսերը: Հոդվածը կազմել է 2022 թվականի պլանավորված ծախսերի 6.57%-ը: Հոդվածի կատարողականը կազմել է ծախսերի 1.75%-ը: Այս հոդվածում թերակատարումը պայմանավորված է որոշ դրամաշնորհների ընթացիկ ծախսերի հաջորդ տարի տեղափոխմամբ՝ հատկապես գործուղման ծախսերի: 2023 թվականի բյուջեում նախատեսվել է գրեթե 3.39%-ի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ծախսերն են, որոնք պլանավորվել են ծախսերի 0.1%-ի չափով: Հոդվածի կատարողականը կազմել է գրեթե 0.01%, ինչպես նաև 2023 թվականի բյուջեում նախատեսվել է դարձյալ գրեթե 0.1 %-ի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը ուսանողներին վճարվող կրթաթոշակի գումարներն են: Այս հոդվածը պլանավորվել է ծախսերի 2.11 %-ի չափով: Նշված հոդվածով իրականացվում է անվճար սովորող ուսանողների և ԳՊՀ բարերարների կողմից ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների պլանավորում և վճարում: 2022 թվականին հոդվածի կատարողականը

կազմել է 1.89%-ի, նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԳՊՀ բարերար Ժիրայր Նիշանյանի անվան կրթաթոշակները 2022 թվականի սեպտեմբեր ամսվանից ՀՕՖ-ի կողմից փոխանցվում են անմիջապես ուսանողներին, ինչպես նաև յուրաքանչյուր տարի նշված կրթաթոշակառու ուսանողներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ դեկտեմբեր ամսվա ընթացքում տրամադրվել է օգնություն՝ կրկին մոտ 7 ամսվա կրթաթոշակի չափով, որը նույնպես ուղղակիորեն փոխանցվել է ուսանողների բանկային հաշվեհամարներին: 2023 թվականին նախատեսվել է բյուջեի 4.3%-ը, քանի որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված ‹‹Լավագույն ուսանող-2022›› մրցույթում ԳՊՀ-ն առաջին տեղը զբաղեցրած ուսանողների թվով հաղթող է ճանաչվել, և նախարարությունը Գավառի պետական համալսարանին ընտրել է որպես ՀՀ բոլոր բուհերի լավագույն ուսանողներին անվանական կրթաթոշակներ շնորհելու գործընթացի կազմակերպիչ՝ պայմանագիր կնքելով և սահմանված կարգով ԳՊՀ-ին փոխանցելով 12.000.000 ՀՀ դրամ:

Ծախսերի հաջորդ բաժինը՝ ‹‹Կապիտալ ակտիվների ձեռքբերում›› հոդվածն է, որով ծախսերը պլանավորվել էր 2022 թվականի ծախսերի 5.11-%-ը, իսկ կատարողականը կազմել է 5.2%-ը: Հոդվածը գերակատարվել է դրամաշնորհային ծրագրերով նախորդ տարվանից այս տարի տեղափոխված և կատարված գնումների պատճառով: Այս հոդվածով ծախսումները 2023 թվականի բյուջեում նախատեսվել է մոտ 4.11%:

Ծախսերի հաջորդ բաժինը ‹‹Ելքեր կապիտալ նորոգումների գծով›› բաժինն է: Այս հոդվածով 2022 թվականի ընթացքում պլանավորվել է բյուջեի 0.73%-ը, 2022թ.-ի ընթացքում կապիտալ վերանորոգվել է համալսարանի գլխավոր մասնաշենքի տանիքի ևս մի հատվածը, վերանորոգվել են որոշ լսարաններ, հանրակացարանի ջրահեռացման համակարգը, բնագիտական մասնաշենքի ջրամատակարարման համակարգը, վերացվել է գլխավոր մասնաշենքը մյուս մասնաշենքերին կապող ջեռուցման համակարգում առաջացած վթարը, որոնց արդյունքում ծախսը կազմել է 0.8%-ը, իսկ 2023 թվականի համար պլանավորվել է բյուջեի 0.77%-ը: Անհրաժեշտ է նշել, որ 2022 թվականի ընթացքում համալսարանում արտաքին /կոսմետիկ/ վերանորոգման են ենթարկվել մի շարք լսարաններ, որոնց համար կատարված ծախսերը չեն ներառվել այս հոդվածում, քանի որ իրականացվել են համալսարանի աշխատակիցների ուժերով, որոնց համալսարանը պարգևատրել է որպես խրախուսանք կատարած լրացուցիչ աշխատանքի համար:

2022 թվականի ընթացքում ԳՊՀ գրադարանային ֆոնդի համալրման համար նախատեսվել էր բյուջեի ընդհանուր ծախսերի 0.12 %-ը, ընդհանուր ծախսերի 0.13%-ի չափով տեղի է ունեցել գրադարանային ֆոնդի համալրումը, որում իրենց կարևոր դերն ունեն տարբեր անձանցից արդեն ավանդույթ դարձած նվիրատվությունները գրքերի տեսքով: Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ ինչպես և նախորդ տարի, այս տարի ևս իրականացվել է էլեկտրոնային գրադարանի համալրում: 2023 թվականի համար այս հոդվածը պլանավորվել է բյուջեի ընդհանուր ծախսերի 0.13%-ի չափով:

Գուրգեն Մուրադյան՝
ԳՊՀ գլխավոր հաշվապահ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ասոյան Թաթուլ Արտիկի*,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դեկանի տեղակալ՝ *Սարգսյան Ռուզաննա Մարատի*

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	**Մասնագիտությունը**	**Որակավորումը**
	011401.00.6 Մասնագիտական *մանկավարժություն*	
011401.19.6	*Հայոց լեզու և գրականություն*	Մանկավարժության բակալավր
011401.20.6	*Ռուսաց լեզու և գրականություն*	Մանկավարժության բակալավր
011401.21.6	*Անգլերեն լեզու և գրականություն*	Մանկավարժության բակալավր
	011401.00.7 Մասնագիտական *մանկավարժություն*	
011401.19.7	*Հայոց լեզու և գրականություն*	Մանկավարժության մագիստրոս
011401.20.7	*Ռուսաց լեզու և գրականություն*	Մանկավարժության մագիստրոս
011401.21.7	*Անգլերեն լեզու և գրականություն*	Մանկավարժության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 70
Շրջանավարտների թիվը՝ 17

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում 2021-2022 ուստարում ուսումնական գործընթացն իրականացվել է ֆակուլտետի զարգացման հայեցակարգի համաձայն: Ըստ այդմ կազմված գործողությունների տարեկան պլանում ներառվել էին ԳՊՀ հնգամյա զարգացման հայեցակարգով նախատեսված գերակա ուղղությունները, որոնք նախանշում են կրթադաստիարակչական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, բարեվարքային և հակակոռուպցիոն արդյունավետ գործընթացներ: Նախորդ ուստարվա համեմատ հաշվետու ժամանակաշրջանում համավարակի վտանգը նվազել էր, սակայն բարդություններից խուսափելու նպատակով ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար կիրառվեցին նոր ու ճկուն մոտեցումներ՝ զուգակցելով ուսուցման առցանց և առկա ձևաչափերը, հընթացս հաշվի առնելով նաև ուսանողների ու առանձին դասախոսների հետ կապված խնդիրները: Երկրորդ կիսամյակում իրավիճակն արդեն բավականին կայունացել էր: Ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացումը պայմանավորված էր նաև նախորդ ուսումնական տարիներին (2019-2020, 2020-2021) մշակված կառուցակարգերով, ընդունված կանոնակարգերով, անձնակազմի և ուսանողության՝ տեղեկատվական և հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու կարողությունների զարգացմամբ, ինչպես նաև կոնկրետ իրավիճակներում ի հայտ եկած խնդիրներին արագ արձագանքմամբ, ռեկտորատ-ֆակուլտետներ-ամբիոններ-կառուցվածքային այլ ստորաբաժանումներ համագործակցությամբ:

Ուսուցման գործընթացի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ զարգացման հայեցակարգով նախատեսված միջոցառումները հիմնականում կատարվել են:

1.Ուսումնական գործունեություն.

Ուսուցման արդյունավետությունը և կրթության որակը կապված է ուսումնական գործունեության համակարգված կազմակերպման, ռեսուրսների, նյութատեխնիկական հնարավորությունների լիարժեք օգտագործման հետ: Մշտական ուշադրության կենտրոնում են եղել բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերը՝ դրանց իրականացման արդյունավետությունը պայմանավորելով վերջնարդյունքների շարու-նակական լրամշակմամբ, որոնք արտացոլվել են առարկայական քարտեզագրման մեջ: Իրականացվել է ուսումնական պլանների վերանայում՝ հաշվի առնելով ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից ուսանողների, գործատուների և այլ արտաքին շահառուների շրջանում կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները՝ ըստ անհրաժեշտության կատարելով դասընթացների, ժամաքանակների փոփոխություններ, կիսամյակային տեղաշարժեր:

Հայոց լեզվի և գրականության բաժնի ուսումնական պլանում երկու դասընթացների միավորմամբ մտցվել է մեկ դասընթաց՝ «Գրական ուղղությունները 17-20-րդ դարերի արտասահմանյան գրականության մեջ», իսկ ռուսաց լեզվի և գրականության բաժնի ուսպլանում վերանվանվել է մեկ դասընթաց՝ «Ռուսական սիմվոլիզմ»-ը դարձել է «Ռուսական սիմվոլիստական արձակ»:

Աշխատանքները առարկայական ծրագրերի վրա եղել են անընդհատական՝ ուշադրության կենտրոնում պահելով վերջնարդյունքների հասանելիությունը, ժամանակին թարմացնելով առարկայական ծրագրերում ներառված թեմաները, հաշվի առնելով մանկավարժահոգեբանական, մեթոդական, մասնագիտական առարկաների հերթականությունները:

Ֆակուլտետում իրականացվել են դասալսումներ թե՛ առանձին, թե՛ որակի ապահովման բաժնի (ՈԱԲ) հետ համագործակցելով: Ըստ ՈԱԲ-ի վերլուծությունների՝ ուսուցման գործընթացը կազմակերպվում և անցկացվում է պատշաճ մակարդակով, դասախոսները օգտագործում են բոլոր հնարավոր տեխնիկական միջոցները՝ համակարգչային լսարաններ, լինգաֆոնային կաբինետ, դասերը մեծ մասամբ անցկացվում են շնորհանդեսներով՝ ըստ անհրաժեշտության զուգակցելով ավանդական և նորագույն մանկավարժական տեխնոլոգիաները:

Հիմք ընդունելով ԳՊՀ որակի ապահովման բաժնի հարցախույզները, դրանց հիման վրա արված առաջարկությունները ուսանողների կրթական կարիքների բացահայտման, ուսանողների՝ կրթական միջավայրից բավարարվածության, դասավանդողների և դասավանդման, արտաքին շահառուների կարծիքների մասին անցկացված հարցումների, դասալսումների վերաբերյալ՝ իրականացվել են միջոցառումներ՝ միտված ուսուցման արդյունավետության բարձրացմանը, և դա դրականորեն է ազդել սովորողների առաջադիմության արդյունքների վրա:

Մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների թեմաներ ընտրելիս հաշվի են առնվել նախորդ ամփոփիչ ատեստավորման ընթացքում արված առաջարկությունները, պահպանվել են տեսական և մեթոդական ուղղվածությամբ թեմաների համամասնությունը, արդիականությունը և գործնական ուղղվածությունը: Պարբերաբար մշտադիտարկվել են առարկայական ծրագրերի կատարման ընթացքը, բացառվել դասերի բացթողումները: Ապահովվել է առցանց /հեռավար/ և անցանց /առկա/ ուսուցման անխափան ընթացքը՝ ուղեցույց ունենալով ԿԳՄՍ նախարարության և ԳՊՀ գիտխորհրդի որոշումները բակալավրիատի և մագիստրատուրայի դասերի կազմակերպման մասին:

1.1.Ընդունելությունը և ուսանողների շարժը

Ուսանողների թիվը բանասիրական ֆակուլտետում 70 է: Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետն ավարտել է 17, ընդունվել 25 ուսանող: Վերականգնվել է 3 ուսանող, հեռացվել 3 ուսանող, հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 1 ուսանող, ազատվել 1 ուսանող:

1.2.Առաջադիմությունը

Առաջին և երկրորդ կիսամյակների համեմատությունը ցույց է տալիս, որ երկրորդ կիսամյակում առաջադիմությունը ավելի բարձր է, քան առաջին կիսամյակում: Բակալավրիատում 100% առաջադիմություն 1-ին կիսամյակում ունեցել են հայոց լեզվի և գրականության ու անգլերեն լեզվի և գրականության բաժինների առաջին և երկրորդ, մագիստրատուրայի հայոց լեզվի և գրականության ու ռուսաց լեզվի և գրականության բաժինների երկրորդ, անգլերեն լեզվի և գրականության բաժնի առաջին կուրսերը: ՀԼԳ 2-րդ կուրսը ցույց է տվել 75% արդյունք, ՀԼԳ 3-րդ կուրսը՝ 60%, ԱԼ 3-րդը՝ 83,5%, ԱԼ 4-րդը՝ 87,5%, ՄՌԼ 1-ինը՝ 66,67%, ՄՀԼԳ 1-ինը՝ 66,67%, ՄԱԼ 2-րդը՝ 75%: Այսպիսով, ըստ բակալավրիատի՝

առաջադիմությունը կազմել է 88,46% (52 ուսանող), ըստ մագիստրատուրայի՝ 83,33% (18 ուսանող), ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 87,14% (70 ուսանող):

Երկրորդ կիսամյակում, բացի բակալավրիատի անգլերեն լեզվի և գրականության բաժնի 2-րդ (90%) ու հայոց լեզվի և գրականության բաժնի 3-րդ (80%) կուրսերի, մնացած կուրսերը ապահովել են 100% արդյունք: Բակալավրիատում առաջադիմությունը կազմել է 95,35% (43 ուսանող), մագիստրատուրայում՝ 100%(9 ուսանող), ֆակուլտետում՝ 96,15%(53):

1.3.Ամփոփիչ ատեստավորում

2021-2022 ուստարում ամփոփիչ ատեստավորումն անցկացվեց առկա ձևաչափով: Ատեստավորմանը մասնակցել է 9 ուսանող՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ՝ 3 ուսանող, «Անգլերեն լեզու և գրականություն»՝ 4 ուսանող, «Ռուսաց լեզու և գրականություն»՝ 2 ուսանող: Գերազանց գնահատական են ստացել նշված 9 ուսանողներից 8-ը: Միավորները եղել են A- - A+ տիրույթում:

Հանձնաժողովների նախագահներն ու անդամները դրական են արտահայտվել և բարձր գնահատականներ են տրվել ատեստավորման կազմակերպման ընթացքի, ուսանողների ցուցաբերած գիտելիքների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների և նրանց կատարման վերաբերյալ: Բարձր է գնահատվել նաև դասախոսական անձնակազմի կատարած աշխատանքը: Առաջարկություններ են արվել գործնականի դասաժամերն ավելացնելու, նոր դասընթացներ ներառելու, ուսանողների ինքնուրույն աշխատանքը խթանելու մասին:

2.Գիտահետազոտական գործունեություն

Բանասիրական ֆակուլտետում մեծ ուշադրություն է դարձվում նաև գիտահետազոտական աշխատանքներին: Այս ուղղությամբ տարվող աշխատանքները որոշակի արդյունքներ են տվել: Մասնավորապես մշտապես հետևել ենք ամբիոններում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների ընթացքին, խրախուսվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ ծավալելու ակտիվ գիտահետազոտական գործունեություն, մասնակցելու հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, բանավեճերի, քննարկումների, հրատարակելու գիտական, գիտահետազոտական, ուսումնամեթոդական աշխատանքներ: Հստակեցվել են ամբիոնների գիտահետազոտական ուղղությունները, հրապարակվել են 1 մենագրություն, 2 դասագիրք, 39 հոդված, 2 զեկուցման թեզիս, 1 թարգմանական երկ (Կաֆկա):

Հայոց լեզվի և գրականության ամբիոնում իրականացվում է ՀՀ գիտական կոմիտեի կողմից ֆինանսավորվող ««Սասունցի Դավիթ» էպոսը և եվրոպական էպիկական ավանդույթը» թեման (թեմայի ղեկավար՝ Վ.Գրիգորյան, Ա.Առաքելյան, Ն.Իսկանդարյան, Ա.Քոսյան): Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Լուսինե Ղռեջյանը 2021թ-ից ընդգրկված է Գիտության պետական կոմիտեի դրամաշնորհային ծրագրով «Շիրակի բանահյուսական մշակույթը» հետազոտական թեմայի կատարմանը:

Ուշադրության կենտրոնում է եղել ուսանողական գիտական ընկերության աշխատանքը, ուսանողների շրջանում խթանվում է հետաքրքրությունը գիտահետազոտական աշխատանքներ կատարելու նկատմամբ, ուսանողները մասնակցել են ԳՊՀ-ում անցկացված մեթոդական սեմինարների՝ նվիրված հոդվածներ գրելու և գիտահետազոտական աշխատանքներ կատարելու սկզբունքներին:

Աշխատանքներ են տարվել դասախոս-ուսանող համագործակցությամբ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ուղղությամբ, ապահովվել է ուսանողների մասնակցությունը ԳՊՀ, հանրապետական և միջազգային ուսանողական գիտաժողովների՝ օգտագործելով ինչպես անմիջական, այնպես էլ առցանց մասնակցության հնարավորությունները, հրապարակվել են ինչպես հեղինակային, այնպես էլ համահեղինակությամբ հոդվածներ (Սուսաննա Բաղդասարյան, Ֆենյա Հակոբյան, Զառա Պետրոսյան, Ստելլա Շահինյան, Քրիստինե Բատիկյան, Աննա Մովսեսյան և այլ ուսանողներ): Իրականացվել են մասնագիտական վերապատրաստումներ, դասընթացներ՝ նվիրված հայոց լեզվի արդի հիմնահարցերին (պատասխանատուներ՝ Վ. Կատվալյան, Թ. Ասոյան), գրականության և բանահյուսության հիմնախնդիրներին (պատասխանատուներ՝ Վ. Գրիգորյան, Ա. Առաքելյան), որոնք վարել են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի, հնագիտության և ազգագրության ինստիտուտների գիտաշխատողները, Մ. Հերացու անվան հայկական պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի և ԳՊՀ դասախոսները: Օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ս. Հայթյանը վերապատրաստման դասընթաց է իրականացրել նախագծային ուսուցման վերաբերյալ: Անցկացվել են ուսումնամեթոդական սեմինարներ (Ս. Հայթյան, Ն. Իսկանդարյան), բաց դասեր (Լ. Ղռեջյան, Ա. Առաքելյան, Թ. Ասոյան, Ս. Հայթյան), գրքերի քննարկումներ (Լ. Թոռչյան, Ա. Բագոյան) միջոցառումներ (Ռ. Սարգսյան, Ն. Նալբանդյան) օգտագործելով առցանց հարթակները և ներգրավելով բարձր դասարանների աշակերտների, ուսուցիչների:

3.Կրթական միջավայրի արդիականացում

Որակյալ ուսուցումը պահանջում է կրթական միջավայրի անընդհատական բարելավում նյութատեխնիկական բազայի ամրապնդման, արդիական տեխնոլոգիաների ներդրման, ուսումնամեթոդական նյութերի համալրման և հարստացման ուղղությամբ: ԳՊՀ-ում իրականացվել են այնպիսի աշխատանքներ (լսարանների, կաբինետների, աշխատասենյակների վերանորոգումներ, նոր տեխնիկայի ձեռքբերում և այլն), որոնք ուղղակիորեն դրական ազդեցություն են ունեցել ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը ֆակուլտետներում: Կարևորվել է ԳՊՀ «Learn.gsu» էլեկտրոնային հարթակում առարկայական ծրագրերին համապատասխան ուսումնական նյութերի առկայության, բաց կամ թերի տիրույթների համալրման, վերանայման հարցերը, պարբերաբար իրականացվել են մշտադիտարկումներ բուհի որակի ապահովման բաժնի հետ համատեղ: Հստակեցվել են առարկայական ծրագրերի թեմատիկ պլաններում դասախոսություն-սեմինար-գործնական բաղադրիչների դասաժամերի տարբերակումները: Առցանց եղանակով դասերն արդյունավետ անցկացնելու նպատակով, ուսումնառության ընթացքում համագործակցելով ԳՊՀ տեղեկատվական բաժնի բաժնի հետ, խորացվել են ուսանողների գիտելիքները տեղեկատվական տեխնոլոգիաների, առցանց դասերի անցկացման ձևաչափերի վերաբերյալ: Օգտագործվել են ուսանողների հետ հեռավար շփումների հնարավորությունները ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր կատարելիս՝ օգտվելով համացանցի ընձեռած հնարավորություններից: Ուսանողների հետ շփումների, անցկացված հարցումների վերլուծությունների միջոցով պարզվել է կրթական միջավայրից ուսանողների բավարարվածության աստիճանը՝ այն ծառայեցնելով կրթական միջավայրի արդիականացմանը:

4.Ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի կրթական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նախ և առաջ ուսանողների՝ որպես հիմնական շահառուների հետ տարվող աշխատանքների նպատակասլացությամբ: Այսպես, տարվա ընթացքում անհրաժեշտաբար ուսանողները, մասնավորապես առաջին կուսեցիները ծանոթացել են ներհամալսարանական իրավական փաստաթղթերին՝ կանոնակարգերին, ընթացակարգերին, ուսանողի իրավունքներին ու պարտականություններին, ներքին կարգապահական կանոններին, կրեդիտային համակարգով ուսուցման առանձնահատկություններին: Հաճախադեպ են դարձնել հանդիպումները ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի հետ, կարևորվել է ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի աշխատանքները ավելի ակտիվ և բազմակողմանի դարձնելը, ինքնուրույնության մակարդակի բարձրացմանը նպաստելը:

Գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հակում ունեցող ուսանողները մասնակցել են ուսանողական համալսարանական և հանրապետական գիտաժողովների, միջազգային շարժունության ծրագրերի, գիտամեթոդական ուղղվածություն ունեցող սեմինարների, քննարկումների: Գրադարանի հետ համատեղ կազմակերպվել են գրքերի քննարկումներ: Հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթում մրցանակային տեղ է գրավել անգլերեն լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Մանե Դեղոյանը, ռուսաց լեզվին նվիրված միջազգային օլիմպիադայում հաղթել են մագիստրատուրայի ռուսաց լեզվի և գրականության բաժնի ուսանողուհիներ Սաթենիկ Մելքոնյանը և Մարինե Պողոսյանը: Մագիստրատուրայի հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողուհիներ Ֆենյա Հակոբյանը և Սուսաննա Բաղդասարյանը, բակալավրիատի անգլերեն լեզվի և գրականության բաժնի ուսանողուհիներ Զառա Պետրոսյանը և Ստելլա Շահինյանը զեկուցումներով հանդես են եկել Մայրենի լեզվի օրվան նվիրված միջազգային գիտաժողովում, որը կազմակերպվել էր ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի հետ համատեղ:

Անցկացվել են հարցումներ՝ ուսումնական գործընթացի արդյունավետության, դրանից ուսանողների բավարարվածության, ուսանողների կրթական կարիքների բացահայտման, միջավայրի բարելավման նպատակով, կատարվել են վերլուծություններ: Արդյունքները հաշվի են առնվել նոր ուսումնական տարվա հայեցակարգը մշակելիս:

Ֆակուլտետային միջոցառումների ծրագիրը կազմվել է՝ համագործակցելով ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ, նպաստելով նրանց համակողմանի զարգացմանը, գեղագիտական դաստիարակությանը, ազգային արժեքային համակարգի գնահատմանը:

5.Վարչարարություն և աշխատակազմի կայունության ապահովում

Հաշվետու ժամանակաշրջանում պարբերաբար անցկացվել են ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստեր, կատարվել է աշխատանքի հստակ բաժանում աշխատակիցների միջև: Ուշադրություն է դարձվել ֆակուլտետի աշխատակիցների աշխատանքային կարգապահությանը՝ բարձրացնելու պատասխանատվությունը իրենց վերապահված գործառույթների իրականացման նկատմամբ: Շարունակական աշխատանքներ են տարվում ամրապնդելու դեկանատ-դասախոս-ուսանող համագործակցային կապերը, անմիջապես քննարկելու և լուծում տալու ռեկտորատի, ֆակուլտետի աշխատակիցների և ուսանողների

կողմից բարձրացված հարցերին, հետևելու ամբիոնների, ամբիոնների վարիչների, լաբորանտների, ուսումնական խորհրդատուների գործունեությանը, գնահատելու այդ գործունեության արդյունավետությունը, սերտացնելու ամբիոնների և ուսանողների համագործակցությունը թե՛ ուսումնական գործընթացում, թե՛ գիտահետազոտական աշխատանքներում, թե՛ միջոցառումներ կազմակերպելու աշխատանքներում, ապահովելու ֆակուլտետի աշխատակազմի կայունությունը:

6. Արտաքին կապեր և համագործակցություն

Գավառի պետական համալսարանի միջազգային կապերի ընդլայնումն ու ամրապնդումը հնարավորություններ է ստեղծում ֆակուլտետների դասախոսների և ուսանողների համար մասնակցելու միջազգային շարժունության ծրագրերի: Բանասիրական ֆակուլտետի 4 դասախոսները՝ Գայանե Միրիբյանը, Ռուզաննա Սարգսյանը, Սիրանույշ Մկրտչյանը, Լիլիթ Թոռչյանը, և 3 ուսանողները՝ Զառա Պետրոսյանը, Սոնա Հովեյանը և Ալլա Վարդանյանը, օգտվել են այդ հնարավորությունից:

Առցանց եղանակով և անմիջական շփումների միջոցով նպատակաուղղված աշխատանքներ են տարվել արտաքին շահառուների, գործատուների հետ, կազմակերպվել են հանդիպումներ, անցկացվել հարցումներ և կատարվել են վերլուծություններ: Բանասիրական ֆակուլտետը սերտորեն համագործակցել է ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ, ամսական պարբերականությամբ համատեղ կազմակերպել առցանց 8 հանդիպում, որոնց մասնակցել են ուսանողներ, ուսուցիչներ, բարձր դասարանների աշակերտներ: Նշանակալից էր 2022թ. փետրվարի 21-ին համատեղ կազմակերպված միջազգային գիտաժողովը՝ նվիրված Մայրենի լեզվի օրվան: Շարունակվել է համագործակցությունը Գեղարքունիքի մարզի կրթական հաստատությունների հետ: Այցելություններ են կատարվել Ճամբարակ, Վարդենիս, Սևան քաղաքների հանրակրթական դպրոցներ:

Ֆակուլտետը համագործակցել է Գավառի պետական համալսարանի կառուցվածքային մյուս ստորաբաժանումների հետ՝ համակողմանի գործունեությունը ապահովելու և աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

7.Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ակադեմիական ազնվության հայեցակարգի, բարեվարքության կանոնների իրականացում

Ֆակուլտետում ստեղծված է կայուն հակակոռուպցիոն միջավայր: Պարբերաբար հանրայնացվել են հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ակադեմիական ազնվության հայեցակարգի, բարեվարքության կանոնների դրույթները: Քննական գործընթացները, միջանձնային հարաբերությունները, դասախոս-ուսանող համագործակցությունը իրականացվել են թափանցիկ, աշխատանքային և ուսանողական անձնակազմերի մեջ ստեղծված է փոխադարձ հարգանքի մթնոլորտ:

8.Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացում

Համալսարանի կարևորագույն խնդիրներից են հասարակությանը որակյալ կրթական ծառայություններ մատուցելը, Գեղարքունիքի մարզի ազգաբնակչության շրջանում համալսարանի նկատմամբ վստահության ամրապնդումը, մարդկանց կրթական կարիքների բացահայտումը և բավարարումը: Բանասիրական ֆակուլտետում ուսումնասիրվել են մարզի տարածաշրջանում ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից անցկացված հարցումներն ու վերլուծությունները կրթության, մասնագիտական կողմնորոշման, մասնագիտությունների

պահանջարկի վերաբերյալ: Միաժամանակ անմիջական և առցանց հանդիպումների ընթացքում ներկայացվել են բանասիրական ֆակուլտետի բաժինները, տեղեկություններ են տրվել իրականացվող ՄԿԾ-ների մասին: Մանկավարժական պրակտիկաների ընթացքում անմիջական կապեր են ստեղծվում դպրոցների հետ, որոնց կարծիքները հավաքվում և գնահատվում են:

Սոցիալապես անապահով ուսանողներին հնարավորություն է տրվել դիմելու հիմնադրամներին և ըստ ԳՊՀ կանոնակարգերի՝ ստանալ ուսման վարձերի զեղչեր: Այսպես, ուսանողների՝ զեղչերից և հիմնադրամներից օգտվելու հետևյալ պատկերն է առկա. Նիշանյան հիմնադրամ՝ 18, Փարոս՝ 13, Ամքոր՝ 2, ԳՊՀ կիրառած զեղչեր՝ 7:

Աշխատանքներ են կատարվել ուսանողների, աշխատակիցների իրավունքները պաշտպանելու համար, ապահովելու պայմաններ ուսանողական, աշխատանքային պարտականությունները կատարելու համար, ապահովել համագործակցային և գործընկերային հարաբերություններ ԳՊՀ ստորաբաժանումների, արտաքին շահառուների և գործատուների հետ:

Եզրակացություն

Ֆակուլտետում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքների ամփոփումն ու դրանց վերլուծությունը ցույց են տալիս, որ 2021-2022 ուստարվա զարգացման հայեցակարգով նախատեսված աշխատանքները կատարվել են, սակայն կան նաև որոշ թերացումներ, որոնք ներառվելու են 2022-2023 ուստարվա զարգացման հայեցակարգում: Մասնավորապես՝

1.հստակ տարբերակում մտցնել բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագրերում վերջնարդյունքների միջև,

2.ապահովել ուսումնառության և մասնագիտական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանությունը,

3.ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի գրախոսականներում մեծ տեղ հատկացնել ուսանողի ինքնուրույն աշխատելու, տվյալները մշակելու, եզրակացություններ անելու, գործնական առաջարկությունների վերաբերյալ բաղադրիչներին,

4.հետևողական լինել դասախոսներին բարձր գործակից ունեցող պարբերականների, դրանցում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները իրազեկելու գործընթացում,

5.աջակցել երիտասարդ դասախոսներին և խրախուսել՝ զբաղվելու գիտահետազոտական աշխատանքներով,

6.իրականացնել դասախոսական կազմի վերապատրաստումներ՝ ներգրավելով լավագույն մասնագետների,

7.գործուն միջոցներ ձեռք առնել՝ ակտիվացնելու ֆակուլտետի ուսանողական կառույցների աշխատանքը:

ԳՊՀ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2022-2023 ուստարվա զարգացման հայեցակարգը կազմվել է ըստ ԳՊՀ զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի՝ ապահովելով զարգացման շարունակականությունը, և բանասիրական ֆակուլտետի զարգացման հնգամյա

հայեցակարգի (2018-2023թթ.), հաշվի են առնվել 2021-2022 ուստարվա առանձնահատկությունները՝ պայմանավորված հետհամավարակային և հետպատերազմական իրավիճակով: Չեն փոխվում համալսարանական գործունեության ռազմավարական ուղղությունները, սակայն ենթադրում են ուսումնական գործընթացի նորովի վերակառուցում, ուսուցման իրականացման առկա ձևաչափ, այլ ուղիների, միջոցների, եղանակների և նոր տեխնոլոգիաների ներդրում և կիրառում:

1. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

1.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նպատակը՝ Ուսումնական գործընթացի բարելավում և զարգացում, մասնագիտական կրթական ծրագրերի արդիականացում գիտության նվաճումներին, տնտեսության առաջընթացին, աշխատաշուկայի պահանջներին համահունչ:

Խնդիրները՝

1. Մասնագիտական կրթական ծրագրերի լրամշակում՝ աշխատաշուկայում առկա մասնագիտությունների ուսումնասիրության, վերջնարդյունքների թարմացմամբ և համալրմամբ:

2. Տեսության և պրակտիկայի միասնության ապահովում, մանկավարժական առաջավոր փորձի, ուսուցման մեթոդական հիմքի ամրապնդում և տեխնոլոգիաների շարունակական ներդրում:

3. Կրթության որակի ապահովման մեխանիզմների կիրառման հնարավորությունների ընդլայնում՝ որպես կայուն գիտելիքների ապահովման միջոց:

Գործողությունները՝

1. Իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերի լրամշակում վերջնարդյունքների թարմացման ճանապարհով՝ հաշվի առնելով առարկայական ծրագրերում կատարվող փոփոխությունները, համապատասխանեցնելով գիտության նվաճումներին: Կատարված փոփոխությունները ներառել առարկայական վերջնարդյունքների քարտեզագրման մեջ:

2. Վերանայել ուսումնական պլանները՝ ըստ անհրաժեշտության կատարելով փոփոխություններ առարկայացանկում, ժամաքանակներում՝ հաշվի առնելով ստացված առաջարկությունները:

3. Առարկայական ծրագրերում շարունակել պահպանել դասախոսություն-սեմինար-գործնական աշխատանք համամասնությունը՝ այդպես ապահովելով գիտելիք-կարողություն-հմտություն համալիր վերջնարդյունքը, տեսական գիտելիքների՝ մանկավարժական պրակտիկայում իրացնելու գործընթացը:

4. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը պայմանավորել ինչպես արդիականությամբ, այնպես էլ ատեստավորող հանձնաժողովների առաջարկություններով և ուսանողների հետաքրքրություններով:

5. Ուսուցման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաճախադեպ դարձնել դասալսումները, բաց դասերը, քննարկումները, մեթոդական զեկուցումները, որոնց արդյունքները վերլուծել՝ ՈԱԲ-ի հետ համագործակցությամբ:

6. Հստակ տարբերակում մտցնել բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագրերում վերջնարդյունքների առումով:

7. Ապահովել ուսումնառության և մասնագիտական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանությունը:

8. Իրականացնել դասախոսական կազմի վերապատրաստումներ՝ ներգրավելով բարձրակարգ մասնագետների:

9. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի գրախոսականներում մեծ տեղ հատկացնել ուսանողի ինքնուրույն աշխատելու, տվյալները մշակելու, եզրակացություններ անելու, գործնական առաջարկությունների վերաբերյալ բաղադրիչներին:

1.2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նպատակը՝ Հարուստ գիտելիքներով, բարոյահոգեբանական բարձր հատկանիշներով, ազգային արժեհամակարգով օժտված, հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող ուսանողների կրթում և դաստիարակում:

Խնդիրները՝

1. Ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքների ակտիվացում, կրթական-դաստիարակչական ծրագրերի նպատակաուղղված իրականացում:

2. Դեկանատ-ամբիոն-դասախոս-ուսանող համագործակցային կապերի շարունակական ամրապնդում:

Գործողությունները՝

1. Հետևել ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքին, ըստ անհրաժեշտության ուղղորդել նրանց՝ իրենց գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

2. Նպաստել ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության և նախաձեռնողականության մակարդակի բարձրացմանը:

3. Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ՝ նրանց հետաքրքրող հարցերի պարզաբանման նպատակով:

4. Խրախուսել ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու և տարբեր հարթակներում ներկայացնելու ջանքերը:

5. Հետևողական լինել դասախոսներին և ուսանողներին՝ բարձր գործակից ունեցող պարբերականների, դրանցում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները իրազեկելու գործընթացում:

6. Ապահովել ֆակուլտետի ուսանողական կառույցների հաշվետվությունների գործընթացի արդյունավետությունը:

1.3. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակը՝ Որակյալ և անխափան ուսումնակրթական միջավայրի և գործընթացի ապահովում՝ կրթական նոր տեխնոլոգիաների և ռեսուրսների ներգրավմամբ:

Խնդիրները՝

1. Խորը մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և հմտություններով զինված մասնագետների պատրաստման գործընթացի ապահովում:

2. Ուսումնական գործընթացում ՏՏ և ՏՀՏ կիրառման հնարարավորությունների ընդլայնում, համակարգչային տեխնոլոգիաների օգտագործման կարողությունների և հմտությունների զարգացում, հեռավար ուսուցման ձևաչափի՝ ըստ անհրաժեշտության կիրառման ընդլայնում:

3. Կրթական միջավայրի արդիականացման նպատակով արտաքին ու ներքին շահառուների կարծիքների, առաջարկությունների վերլուծություն, կապի ապահովում կրթական այլ հաստատությունների հետ:

Գործողությունները՝

1. Ապահովել «Learn.gsu» էլեկտրոնային հարթակում առարկայական ծրագրերի էլեկտրոնային նյութերի առկայությունը, դասախոսությունների ընթացքում ապահովել տեսական և գործնական աշխատանքի համամասնությունը որոշակի մեթոդական հիմքով:

2. Համագործակցելով ՏՏ բաժնի հետ՝ խորացնել ուսանողների գիտելիքները տեղեկատվական տեխնոլոգիաների, առցանց դասերի անցկացման ձևաչափերի, համակարգչային և ՏՀՏ միջոցների օգտագործման վերաբերյալ:

3. Համագործակցելով որակի ապահովման բաժնի հետ՝ պարզել կրթական միջավայրից ուսանողների բավարարվածության աստիճանը և անել հետևություններ, ձեռնարկել համապատասխան միջոցներ:

4. Օգտագործել միջազգային շարժունության ծրագրերով արտերկրում ուսանած ուսանողների փորձը:

5. Գործուն միջոցներ ձեռք առնել ակտիվացնելու ֆակուլտետի ուսանողական կառույցների աշխատանքը:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Նպատակը՝ Գիտահետազոտական աշխատանքների համակարգում ամբիոններում, համատեղ թեմաների մշակման և իրականացման գործընթացի ապահովում, հրապարակումներ բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում:

Խնդիրները՝

1. Ամբիոնների գերակա գիտական ուղղությունների որոշարկում՝ հաշվի առնելով ժամանակակից գիտությունների զարգացման ուղղվածությունը:

2. Ամբիոններում գրախոսություններ և կարծիքներ ներկայացնելու գործընթացի համակարգում և վերահսկողություն: Ամբիոններում տպագրության երաշխավորվող գիտամեթոդական աշխատանքների քննարկման կայուն ընթացակարգի պահպանում:

3. Գիտահետազոտական աշխատանքների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող ուսանողների համար համապատասխան հնարավորությունների ստեղծում:

Գործողությունները՝

1. Կազմակերպել քննարկումներ՝ նվիրված լեզվի և գրականության արդի հիմնախնդիրներին:

2. Խրախուսել ամբիոնների դասախոսների մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովների:

3. Խրախուսել գիտահետազոտական աշխատանքների տպագրությունը բարձր վարկանիշ ունեցող միջազգային շտեմարաններում:

4. Ուսանողների շրջանում նպաստել գիտահետազոտական աշխատանքների նկատմամբ հետաքրքրությունների աճին, ուշադրության կենտրոնում պահել ֆակուլտետի ՈւԳ ընկերության աշխատանքները:

3. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏ

3.1. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Նպատակը՝ Մարդկային ռեսուրսների պահպանում, աշխատանքային պայմանների ապահովում՝ ԳՊՀ իրավական նորմերին ու բարեվարքության կանոններին համապատասխան, վարչարարության իրացում ըստ պաշտոնների աշխատանքային նկարագրերի:

Խնդիրները՝

1. Վարչարարության իրականացում՝ արդարության, օբյեկտիվության, հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքներով:

2. Վարչարարության իրականացում՝ աշխատակազմի անդամների միջև առողջ փոխհարաբերությունների ապահովման նպատակով:

Գործողությունները՝

1. Ապահովել աշխատակազմի համախմբվածությունը ֆակուլտետում իրականացվող աշխատանքների ընթացքում:

2. Հաշվի առնել աշխատակիցների անհատական որակները, դրանք ծառայեցնել ի նպաստ ֆակուլտետի:

3. Կատարելագործել դասախոս-ուսանող փոխհարաբերությունները ԳՊՀ ազնվության հայեցակարգի դրույթներին և բարեվարքության կանոններին համապատասխան:

4. Հետևել ամբիոնների, ամբիոնների վարիչների, լաբորանտների, ուսումնական խորհրդատուների գործունեությանը, գնահատել այդ գործունեության արդունավետությունը:

5. Արձագանքել ռեկտորատի, աշխատակիցների և ուսանողների կողմից բարձրացված հարցերին՝ տալով կամ առաջարկելով համապատասխան լուծումներ:

3.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Նպատակը՝ Ֆակուլտետում ուսումնական գործընթացի կազմակերպման համար եղած հնարավորությունների լիարժեք օգտագործում:

Խնդիրները՝

1. Մանկավարժական և գիտահետազոտական գործունեության համար աշխատանքային բարենպաստ պայմանների համար:

Գործողությունները՝

1. Պահպանել և արդյունավետ տնօրինել ֆակուլտետում առկա նյութատեխնիկական միջոցները /լսարաններ, գույք, համակարգիչներ, լինգաֆոնային լսարան/:

2. Բարոյական և նյութական խրախուսման ներկայացնել ֆակուլտետի բարեխիղճ աշխատակիցներին:

3. Կիրառել ուսման վարձավճարների հավաքագրման և զեղչերի ճկուն մեխանիզմներ՝ համաձայն ԳՊՀ կանոնակարգերի:

3.3. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակը՝ Ֆակուլտետի աշխատակազմի պատասխանատվության բարձրացում իր գործունեության նկատմամբ:

Խնդիրները՝

1. Հասարակական դրական վերաբերմունքի և վստահության ապահովում ֆակուլտետի գործունեության նկատմամբ:

Գործողությունները՝

1. Հասարակությանը տրամադրել հավաստի տեղեկություններ մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ:

2. Աջակցել սոցիալապես անապահով ուսանողներին դիմելու հիմնադրամներին և ըստ ԳՊՀ կանոնակարգերի՝ ձևակերպել ուսման վարձերի զեղչեր:

3. Պաշտպանել ուսանողների, աշխատակիցների իրավունքները, ստեղծել պայմաններ՝ աշխատանքային պարտականությունները կատարելու համար, ապահովել համագործակցային և գործընկերային հարաբերություններ ԳՊՀ ստորաբաժանումների, արտաքին շահառուների և գործատուների հետ:

4.ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈՒՂՈՐՏ

Նպատակը՝ Ֆակուլտետի ուսանողների և դասախոսներ մասնակցության ընդլայնումը միջազգային շարժունության ծրագրերին, համագործակցային կապերի հաստատում և ամրապնդում:

Խնդիրները՝

1. Ծրագրերի վերաբերյալ իրազեկման կառուցակարգերի արդյունավետության ապահովում:

2. Համագործակցային կապերի ընդլայնում և ամրապնդում:

Գործողությունները՝

1. Խրախուսել ուսանողներին՝ մասնակցելու միջազգային շարժունության ծրագրերին՝ ապահովելով նրանց համապատասխան խորհրդատվությամբ:

2. Ամրապնդել համագործակցությունը մարզի և հանրապետության կրթական, մշակութային և գիտական հաստատությունների հետ, կնքել նոր համաձայնագրեր:

5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՈՐՏ

Նպատակը՝ Ֆակուլտետում հակառուպցիոն միջավայրի շարունակական պահպանում, գործընթացների թափանցիկության ապահովում:

Խնդիրները՝

1. Ազնվության հայեցակարգի դրույթների և բարեվարքության կանոնների՝ գործնականում կիրառելու շարունակականության ապահովում:

Գործողությունները՝

1. Ապահովել ֆակուլտետում ընթացող գործընթացների հրապարակայնությունը և թափանցիկությունը:

2. Քննությունների, ստուգարքների, ամփոփիչ ատեստավորումների ընթացքում բացառել անազնվության դեպքերը:

3. Մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ընթացքում բացառել գրագողության դեպքերը:

4. Ուսանող-դասախոս հարաբերությունները կառուցել ԳՊՀ բարեվարքության կանոններին համապատասխան:

Թաթուլ Ասոյան՝
Բանասիրական ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՔՆՆԱՀՐԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	7	-	1	100,00
2-րդ	8	-	1	75,00
3-րդ	5	-	2	60,00
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	7	-	-	100,00
2-րդ	9	-	5	100,00
3-րդ	8	-	6	87,50
4-րդ	8	-	4	87,50
Ընդամենը	**52**	**-**	**19**	**88,46**
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին կուրս	3	-	1	66,67
Հայոց լեզու և գրականություն 2-րդ կուրս	3	-	1	100,00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին կուրս	3	-	1	100,00
Անգլերեն լեզու և գրականություն 2-րդ կուրս	4	-	1	75, 00
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին կուրս	3	-	-	66, 67
Ռուսաց լեզու և գրականություն 2-րդ կուրս	2	-	1	100,00
Ընդամենը	**18**	**-**	**5**	**83. 33**

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատականստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն 1-ին 2-րդ 3-րդ	 7 6 5	 - - -	 4 1 -	 100.00 100. 00 80. 00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին 2-րդ 3-րդ	 7 10 8	 - - -	 3 3 5	 100. 00 90. 00 100. 00
Ընդամենը	**43**	**-**	**16**	**95.35**
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին կուրս	4	-	1	100. 00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին կուրս	3	-	1	100. 00
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին կուրս	2	-	1	100. 00
Ընդամենը	**9**	**-**	**3**	**100.00**

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

2021/2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	*Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ*	*Գյուտերի հայտ, արտոնագիր*	Հոդված /Ժողովածու	Զեկուցումների թեզիս	Թարգմանություն
2	**1**	**-**	**-**	**39**	**2**	**1**

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի*
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ասոյան Թաթուլ Արտիկի** - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Կատվալյան Վիկտոր Լիպարիտի** - բանասիրական գիտ. դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Առաքելյան Արա Հրաչիկի** - բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. **Ներսիսյան Վարսիկ Արմենի** - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
5. **Ղռեջյան Լուսինե Խաչատուրի** - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
6. **Ղարիբյան Ալինա Ամբիկի** – ասիստենտ
7. **Խանդանյան Սիրանուշ Կառլենի** – ասիստենտ
8. **Սարգսյան Ռուզաննա Մարատի** - ասիստենտ
9. **Կարապետյան Գայանե Լևիկի** - ասիստենտ
10. **Բագոյան Ալլա Սահակի** - դասախոս
11. **Ղազարյան Օլգա Ալբերտի** – դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂ

1. **Իսկանդարյան Նաիրա Մանվելի** - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց լեզվի պատմության հիմնահարցեր
2. Արևելահայերենի և արևմտահայերենի հիմնախնդիրներ
3. Բայազետի բարբառի և նրա խոսվածքների ուսումնասիրություն
4. ՀՀ Գեղարքունիքի մարզում բանահավաքչություն, բանահյուսական առանձին ժանրերի ուսումնասիրություն
5. Հայ ժողովրդական դյուցազնավեպի ուսումնասիրություն, կանանց կերպարների վերլուծություն
6. Հայ գրականության պատմության հիմնահարցեր
7. Արդի հայ և արտասահմանյան գրականության զարգացման միտումների ուսումնասիրություն

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված /ժողովածու	Զեկուցումների թեզիս	Թարգմանություն
2	**1**	**-**	**-**	**25**	**2**	**1**

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Գրիգորյան Վ. Ռ.,** 19-րդ դարի հայ գրականության քրեստոմատիա, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին» հրատարակչություն, 2021, 570 էջ:
2. **Գրիգորյան Վ. Ռ., Իսկանդարյան Ն. Մ., Առաքելյան Ա.Հ., Քոսյան Ա.Ա.,** Ներողամտության թեման «Սասնա ծռեր» էպոսում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, Երևան, 2022, էջ 302-316:
3. **Գրիգորյան Վ. Ռ.,** Համաճարակը հասարակական հոգեբանությունը երկատող միջոց // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 13. հանձնված է տպագրության:
4. **Գրիգորյան Վ. Ռ., Առաքելյան Ա. Հ., Իսկանդարյան Ն. Մ., Քոսյան Ա.,** Էպիկական մեղք // Էջմիածին, 2021, ԺԱ, էջ 86-104:
5. **Crigoryan V. R., Arakelyan A. R., Iskandaryan N. M., Kosyan A. A.**, Interpretation of Fate and Guilt in Armenian and European Epics // WISDOM, 2022, 2(22) pp.268-275.
6. **Ասոյան Թ. Ա.,** Վ.Լ.Կատվալյան. Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 2, Կոտայքի մարզ (գրախոսություն):
7. **Ասոյան Թ. Ա.,** «Մշակ» թերթի անդրադարձը Վենետիկի Մխիթարյաններին («Մշակ» թերթի հրատարակման 150-ամյակի առթիվ) // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 13. հանձնված է տպագրության:
8. **Ասոյան Թ. Ա.,** Արդի հայերենի ուսումնասիրություն, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2020, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 91-143:
9. **Առաքելյան Ա. Հ., Գրիգորյան Վ. Ռ., Իսկանդարյան Ն. Մ., Քոսյան Ա. Ա.,** Կելտական էպոսի պատմադիցաբանական հիմքերը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, Երևան, 2022, էջ 317-330:
10. **Առաքելյան Ա. Հ., Գրիգորյան Վ. Ռ.,** «Սասնա ծռերի» և «Նիբելունգների երգի» համեմատական բնութագիրը // Բանբեր Երևանի համալսարանի, 2022, 1, էջ 15-24:
11. **Առաքելյան Ա. Հ.,** Դոկտոր Յոհան Ֆաուստի կերպարանափոխությունները. Ֆաուստից մինչև ֆաուստականություն // Բանբեր Երևանի համալսարանի, 2021, թիվ 2, էջ 40-53:
12. **Առաքելյան Ա. Հ.,** Համեմատական գրականագիտության հիմունքներ // Մենագրություն, ԵՊՀ հրատարակչություն, 2022թ., 500 էջ:
13. **Առաքելյան Ա. Հ.,** Ֆր. Կաֆկա, Երկեր, 4-րդ հատոր, «Անտարես», 2022 թ. Օրագրեր // Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Առաքելյանի:
14. **Կատվալյան Վ. Լ.,** Բայազետի բարբառի բառարան, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, 370 էջ:

15.**Կատվալյան Վ. Լ.,** Հայ բարբառների ուսումնասիրություն, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2020, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 91-143:

16. **Կատվալյան Վ. Լ.,** Ալիշանի դերը հայ միջնադարեան բանաստեղծութեան բարբառային շերտի ուսումնասիրության մեջ, «Բազմավէպ», թիւ 1-2, Վենետիկ-Ս. Ղազար, 2021, էջ 274-280:

17.**Կատվալյան Վ. Լ.**, Գ.Սրվանձտյանցը և բարբառային հայերենը, «Լեզու և խոսք», 1(1), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021, էջ 43-54:

18. **Կատվալյան Վ. Լ., Հարությունյան Վ. Լ.,** Տնտեսագիտական տերմինաբանության զարգացման միտումների մասին, «Տնտեսագիտական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում (սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում – հատոր 2), Ե., ՀՀ ԳԱԱ ՏԻ հրատ., 2021, էջ 22-35:

19. **Կատվալյան Վ. Լ.,** Բարբառային բառապաշարի՝ տղամարդկանց և կանանց բնութագրող շերտերի շուրջ (Ըստ Բայազետի բարբառի ընձեռած նյութի) // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 13, հանձնված է տպագրության:

20. **Ղռեջյան Լ. Խ., «**Ժողովրդական ասոյթաբանութեան դրսեւորումները Յովհաննէս Թումանեանի գրական ժառանգության մեջ», Հայկազեան հայագիտական հանդէս, 42/1, Բեյրութ, էջ 477-488:

21.**Ղռեջյան Լ. Խ.** «Անեծքը հայկական ժողովրդական երգերում (հայրեններ, անտունիներ, խաղիկներ)», ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, գիտական աշխատություններ, N 1(25), Գյումրի 2022, էջ 16-30:

22. **Ղռեջյան Լ. Խ.** «Ժողովրդական խոսքի բանաձևային կառույցները Գարեգին Սրվանձտյանցի բանահյուսական ժողովածուներում» // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 13, հանձնված է տպագրության:

23. **Ղռեջյան Լ. Խ.,** «Բանագետ Ռոզա Գրիգորյանի վարդենիսյան հավաքածուն» Սոթք. Հողի մշակութային հիշողությունը // Գիտական հոդվածների ժողովածու, ՀԱԻ հրատ., Երևան, էջ 183-192:

24. **Ղռեջյան Լ. Խ., Դալալյան Տ.**, Ռոզա Գրիգորյան. կյանքը և գործը // Լրաբեր հասարակական գիտությունների (հանձնված է տպագրության):

25. **Ղռեջյան Լ. Խ.,** 2022 Սյունիք. Մշակույթը և բնությունը «Բնության տարրերը Սյունիքի կարճասույթ բանաձևային կառույցներում» // Գիտաժողովի թեզիս, Երևան, էջ 72-74:

26. **Ղռեջյան Լ. Խ.,** 2022 «Շիրակի ասույթաբանական բանահյուսությունը» // Գիտաժողովի թեզիս, ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան - Գյումրի, էջ 180-184:

27. **Ներսիսյան Վ. Ա.,** Բայի եղանակաժամանակային ձևերի գործածությունը Հովի. Օձնեցու երկերում, Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութեր (էլ. հրապ.), ՀՀ ԳԱԱ ԼԻ, ISBN 978-9939-9277-2-5, Ե., 2021, էջ 122-135:

28. **Ներսիսյան Վ. Ա.,** Աձանցման հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություններում, հանձնված է տպագրության ԳԱԱ ԼԻ «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական պարբերականում:

29. **Ներսիսյան Վ. Ա.,** Ն. Հովհաննիսյանի «Նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանների քննություն» մենագրության գրախոսություն, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., Ե., 2022 թ., 263 էջ:

30. **Իսկանդարյան Ն. Մ.**, «Создание языка как мироощущение в произведениях Дж. Толкина» // Международная конференция к 130-летию со дня рождения Дж. Р.Р. Толкина, ИМЛИ РАН, НИУ ВШЭ, Москва, 13-16.01.2022.

31. **Իսկանդարյան Ն.Մ.,** «Միֆ-արխաիկ էպոս-հերոսական էպոս», ՀՀԳԱԱ Վ. Կիրակոսյանի հիշատակին նվիրված գիտաժողով, 24-26.04. 2022թ., /գտնվում է տպագրության փուլում/:

32. **Իսկանդարյան Ն. Մ., Գրիգորյան Վ. Ռ., Առաքելյան Ա. Հ., Քոսյան Ա. Ա.,** Քառսուն-Ճուղ Ծամ Դեղձունի կերպարի դիցաբանական ակունքների և համաշխարհային առասպելաբանության մեջ նրա զուգորդների շուրջ // Вестник РАУ, 2021, 3, стр. 132-143:

33. **Իսկանդարյան Ն. Մ., Գրիգորյան Վ. Ռ., Առաքելյան Ա. Հ., Քոսյան Ա. Ա.,** «Արխաիկ հերոսի տիպաբանական նկարագիրը», ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 13, հանձնված է տպագրության:

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գայանե Աշոտի Միրիբյան*
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Մուխսիխաչոյան Արուսյակ Մուշեղի**- մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. **Մարգարյան Արամ Հայկի** - ԳՊՀ պրոֆեսոր
3. **Հայթյան Սաթենիկ Հայրապետի** - ասիստենտ
4. **Մուրադյան Սիրանուշ Հովհաննեսի** – ասիստենտ
5. **Բալագոզյան Անիկ Կարապետի** - ասիստենտ
6. **Մելքոնյան Աննա Վրեժի** – դասախոս
7. **Թոռչյան Լիլիթ Գրիգորի** – դասախոս
8. **Մկրտչյան Սիրանույշ Սարգսի**- դասախոս
9. **Նալբանդյան Նարինե Նորայրի** – դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Մուրադյան Գայանե Հարությունի**- բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. **Սարգսյան Ռուզաննա Ռուբենի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Սարգսյան Գայանե Ռուբենի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
4. **Հովհաննիսյան Ալլա Բորիսի** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Տիգրանյան Սաթենիկ Սաշայի** - ասիստենտ
6. **Եղիազարյան Անդրանիկ Ռաֆիկի** - ասիստենտ
7. **Սիմոնյան Սոնա Կոստանտի** - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Օտար լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի արդի հիմնահարցեր
2. Օտար լեզուների ուսուցման նորագույն տեխնոլոգիաներ
3. Ռուս և հայ ազգային մշակույթի, բանահյուսության և գրականության համեմատական ուսումնասիրություն

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	14	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Միրիբյան Գ. Ա.,** Фундаментальные академические ценности как предпосылка высокой результативности процесса обучения в высшей школе // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, ISSN 1829-4480, էջ 413-424:

2. **Մուրադյան Գ. Հ.,** A Warfare Metaphor and its Functional Aims in an Actual Armed Conflict – The Forty-Four Day War // Academic Journal of Modern Philology, Vol. 15 (22), Poland: Uniwersytet Wroclawski, 2022, Print ISSN 2299–7164; e-ISSN 2353–3218, pp. 225-234.

3. **Մուրադյան Գ. Հ., Հարությունյան Կ.,** English Interjections in the Context of Emotional Literacy // European University Collection of Academic Articles, 12 (02), Yerevan: EUA, 2021, Print ISBN 978-99941-2-609-5, pp. 245-253.

4. **Մուրադյան Գ. Հ.,** Communicating Morality to Audiences: Symbolic Interaction in Films (with reference to G. Martin's *A Game of Thrones*) // Armenian Folia Anglistika, Vol. 17, Issue 2(24), International Journal of English Studies,Yerevan: YSU, 2021, Print ISSN 1829-2429, e-ISSN 2579 3039, pp.92-99.

5. **Մուխսիխաչոյան Ա. Մ., Պողոսյան Մ. Խ.,** К вопросу о способах перевода русских соматических фразеологизмов на армянский язык // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, ISSN 1829-4480, էջ 400-412 :

6. **Սարգսյան Ռ. Ռ.,** ИКТ-компетенция преподавателя вуза и создание электронного курса в СДО Moodle (на примере электронного курса русского языка для студентов АГЭУ) // Сборник материалов Международного научного конгресса "Русский язык в глобальном научном и образовательном пространстве". Часть 2. (6-10 декабря 2021 г.). Гос. Институт русского языка имени А.С. Пушкина (Москва, РФ), ISBN 978-5-98269-269-6 (Часть II), стр. 143-145:

7. **Սարգսյան Ռ. Ռ.,** СДО MOODLE как средство реализации концепции смешанного обучения (на примере обучения русскому языку в экономическом вузе) // "Русское слово в международном образовательном пространстве: история и современность". Материалы Международной научно-практической конференции. – Пятигорск (24-25 ноября 2021 г). ПГУ (Пятигорск, РФ), ISBN 978-5-4220-1272-5, стр. 420-425:

8. **Սարգսյան Ռ. Ռ.,** СДО MOODLE как идеальная среда для обучения студентов поколения Z (на примере электронного курса русского языка, разработанного для студентов АГЭУ) // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի – 1, 2022, էջ 177-195:

9. **Սարգսյան Ռ. Ռ.,** Разработка курса русского языка для экономистов в СДО MOODLE с опорой на Теорию поколений // Русский язык на перекрестке эпох: традиции и инновации в русистике: V Международная научно-практическая конференция (29-30 октября 2021г.) Сборник научных статей. Ер., РАУ, 2021, հանձնված է տպագրության:

10. **Սարգսյան Ռ. Ռ.,** Использование принципов педагогического дизайна и модели ADDIE при разработке курса русского языка в СДО MOODLE // Восток – Запад: теоретические и прикладные аспекты преподавания европейских и восточных языков: материалы IV Междунар. науч.-практ. конф.(Новосибирск, 15 марта 2022 г.). – Новосибирск: Изд-во СГУПСа, 2022, ISBN 978-5-00148-206-2, стр. 338-345:

11. **Սարգսյան Ռ. Ռ.,Մկրտչյան Ա. Ե.,** Цифровизация обучения: создание электронного курса русского языка для специальных целей (Русский язык для экономистов) на платформе MOODLE // Материалы Международной научно-практической конференции «Русский язык – гарант диалога культур, научного сотрудничества, межнационального и межличностного общения в XXI веке»,հանձնված է տպագրության:

12.**Սարգսյան Ռ. Ռ., Մկրտչյան Ա. Ե.,** Лингвометодические основы создания пособия по русскому языку для студентов экономического вуза // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, ISSN 1829-4480, էջ 425-435 :

13.**Սարգսյան Ռ. Ռ., Խաչատրյան Մ. Մ.,** Language learning strategies: Research on the choice of LLS and its relations to different variables // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, ISSN 1829-4480, էջ 436-460 :

14.**Torchyan Lilit, Manukyan Arusyak**

Methods of Analyzing Satire in the English Literature (on the Examples of "Adventures of Tom Sawyer and Huckleberry Finn" by Mark Twain and "Animal Farm" by George Orwell) // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 13, հանձնված է տպագրության:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ավագյան Մարտին Պատվականի,*
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ *Խանդանյան Սիրանուշ Կառլենի*

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	011401.00.6 Մասնագիտական *մանկավարժություն*	
011401.01.6	*Կենսաբանություն*	Մանկավարժության բակալավր
011401.03.6	*Աշխարհագրություն*	Մանկավարժության բակալավր
	011401.00.7 Մասնագիտական *մանկավարժություն*	
011401.01.7	*Կենսաբանություն*	Մանկավարժության մագիստրոս
011401.03.7	*Աշխարհագրություն*	Մանկավարժության մագիստրոս
	052201.00.6 *Բնապահպանություն և բնօգտագործում*	
052201.01.6	*Բնապահպանություն և բնօգտագործում*	Շրջակա միջավայրի բակալավր
	052201.00.7 *Բնապահպանություն և բնօգտագործում*	
052201.01.7	*Բնապահպանություն և բնօգտագործում*	Շրջակա միջավայրի մագիստրոս
	053101.00.6 Քիմիա	
053101.02.6	Դեղագործական քիմիա	Քիմիայի բակալավր
	054201.00.6 *Աշխարհագրություն*	
054201.02.6	*Քարտեզագրություն և կադաստրային գործ*	Աշխարհագրության բակալավր
	061103.00.6 *Համակարգչային ճարտարագիտություն*	
061103.01.6	*Համակարգչային ճարտարագիտություն*	Ինֆորմատիկայի բակալավր
	061103.00.7 *Համակարգչային ճարտարագիտություն*	
061103.01.7	*Համակարգչային ճարտարագիտություն*	Ինֆորմատիկայի մագիստրոս
	101801.00.6 *Սերվիս*	
101801.01.6	*Սերվիս*	Սերվիսի բակալավր

Ուսանողների թիվը՝ 62
Շրջանավարտների թիվը՝ 12

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Հիմք ընդունելով ԳՊՀ 2017-2022 թթ. ռազմավարական ծրագրի հիմնադրույթները, ինչպես նաև բնագիտական ֆակուլտետի 2021-2022 ուսումնական տարվա գործողությունների պլանը՝ բնագիտական ֆակուլտետը որոշակի աշխատանքներ է իրականացրել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ: Կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովման նպատակով կիրառվել են տարբերակված դասավանդման և ուսումնառության մեթոդներ, գիտելիքների՝ առկա և հեռավար եղանակներով ստուգումներ ու գնահատումներ:

Պարբերաբար հրավիրվել են ֆակուլտետի խորհրդի նիստեր, քննարկվել ուսումնական գործընթացին առնչվող բազմաթիվ հարցեր, որոնք վերաբերել են կրթական ծրագրերի արդիականացմանը, նոր մասնագիտական առարկաներով համալրմանը, կամընտրական դասընթացների վերանայմանը, եղած լաբորատոր բազայի՝ էլեկտրատեխնիկայի, բնագիտության ու համակարգչային լսարանների հնարավորությունների լիարժեք օգտագործմանը:

Դպրոցականներին մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցելու, ֆակուլտետի մասնագիտություններին ծանոթացնելու, դիմորդներ ներգրավելու նպատակով աշխատանքներ են կատարվել մարզի դպրոցների հետ: Ֆակուլտետ են այցելել շուրջ 200 դպրոցականներ Գավառի, Գանձակի, Ծովազարդի, Հայրավանքի, Գեղարքունիքի, Երանոսի դպրոցներից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության կողմից կազմված աշակերտական խումբ:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից իրականացված հարցումների արդյունքները քննարկվել և վերլուծվել են ֆակուլտետի խորհրդում, ուսանողների բարձրացրած խնդիրների հետ կապված ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ առաջադրված խնդիրները լուծելու ուղղությամբ:

Բնագիտական ֆակուլտետում պարբերաբար իրականացվել են հարցումներ՝ ուսանողների սոցիալական կարիքները վերհանելու և գնահատելու նպատակով: Դրանց արդյունքում բացահայտվել են սոցիալապես անապահով ուսանողների կարիքները, քայլեր են ձեռնարկվել աջակցության ուղիներ գտնելու, բարեգործական հիմադրամների ծրագրերում ներառելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում բնագիտական ֆակուլտետի զարգացման հայեցակարգով նախատեսված դրույթները հիմնականում իրագործվել են, ինչը հստակ արտացոլված է ֆակուլտետի մշտադիտարկման պլանում՝ համապատասխան գնահատման ցուցիչներով:

Ֆակուլտետի աշխատակազմն ակտիվ մասնակցություն է ունեցել ինքնավերլուծության գործընթացին, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, չօգտագործված հնարավորությունները՝ զարգացում ապահովելու նպատակով:

Ֆակուլտետում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դասախոսների հետ համատեղ իրականացվում է պետբյուջեից թեմատիկ ֆինանսավորվող գիտական թեմա՝ «ՀՀ

տարածքում հողակադաստրային վերագնահատման մեթոդաբանության մշակում և հողային ռենտայի հաշվարկում» վերտառությամբ:

I. Ընդունելությունը, ուսանողական համակազմը.

2021-2022 ուսումնական տարում բնագիտական ֆակուլտետ են ընդունվել բակալավրիատի 7 և մագիստրատուրայի 8 ուսանողներ՝ Համակարգչային ճարտարագիտություն, Սերվիս, Կենսաբանություն, Դեղագործական քիմիա, Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտություններով: Ֆակուլտետի 1-ին կուրսում սովորել են 15 ուսանողներ :





Նախորդ տարում բնագիտական ֆակուլտետ ընդունվել էին բակալավրիատի 19 ուսանողներ: Հաշվետու ժամանակահատվածում բնագիտական ֆակուլտետում իրենց ուսանողական իրավունքները վերականգնել են 7 ուսանողներ, Գավառի Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջից ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում ուսում շարունակել է 2 ուսանող, տարկետում տրամադրվել է 2 ուսանողի:

Հաշվետու ժամանակահատվածում դասերից անհարգելի բացակայելու և ակադեմիական ու ֆինանսական պարտքեր ունենալու պատճառով հեռացվել է մագիստրատուրայի 4 ուսանող:

2021-2022 ուսումնական տարում ֆակուլտետն ունեցել է 62 ուսանող:

II. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը, ակադեմիական առաջադիմությունը.

2020-2021 ուսումնական տարվա հետ համեմատած՝ 2021-2022 ուսումնական տարում արձանագրվել է առաջադիմության բարձրացում՝ բակալավրիատում /83.9%-ից բարձրացել է 93.5%/, իսկ մագիստրատուրայում՝ /63.2%-ից բարձրացել է 77.1%/:

Ուսումնական տարվա 1-ին կիսամյակում բակալավրիատում բացարձակ առաջադիմությունը կազմել է 89,6%, իսկ հաշվետու կիսամյակում՝ 97,5%:

Մագիստրատուրայում 1-ին կիսամյակում առաջադիմությունը կազմել է 66,7%, 2-րդ կիսամյակում՝ 87,5%:



Հաշվետու ժամանակահատվածում անհարգելի բացակայությունների համար գրավոր նկատողություն են ստացել բակալավրիատի 2 ուսանող, մագիստրատուրայի 5 ուսանող և խիստ նկատողություն:

Պարբերաբար իրականացվել են դասալսումներ, արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում, առաջարկվել են դասավանդման արդյունավետ ձևեր և տեխնոլոգիաներ՝ ուսուցման որակի բարձրացման նպատակով:

Բնագիտական ֆակուլտետի մի խումբ ուսանողներ, ովքեր ցուցաբերել են ուսման բարձր առաջադիմություն, հաշվետու ժամանակահատվածում օգտվել են բարերարների և կրթական հիմնադրամների ֆինանսական օժանդակությունից, ինչպես նաև՝ համալսարանի կողմից կիրառված զեղչերից.

ՀՕՖ-ի Ժիրայր Նիշանյան հիմնադրամից՝ 8 ուսանող,

Հայ կրթական հիմնարկությունից՝ 5 ուսանող,

Գավառի քաղաքապետարանից՝ 1 ուսանող:

III. Կրթական ծրագրերի բարեփոխումները և զարգացումները.

Մասնագիտական ամբիոնների կողմից իրականացվել են բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի վերանայում և արդիականացում, դրանց բովանդակային և կառուցվածքային բարեփոխում և բազմազանեցում, ՄԿԾ-ների իրականացման ընթացքում ամբիոնների կողմից արդյունքների մշտադիտարկում և շարունակական բարելավում:

IV. Հստակեցվել են ֆակուլտետի ամբիոնների գերակա գիտական ուղղությունները.

Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնում՝

1. Հողային ռեսուրսների մելիորատիվ վիճակի բարելավման հիմնախնդիրներ,
2. ՀՀ Գեղարքունիքի մարզում տուրիզմի զարգացման հնարավորություններն ու հեռանկարները,
3. Ջրակենսաբանական հետազոտություններ, ֆիտոպլանկտոնի քանակական և որակական ցուցանիշների հետազոտություն,
4. Բարդ օրգանական նյութերի սինթեզը և կիրառումը դեղաբանության մեջ:

Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում՝

1. Արհեստական բանականության համակարգեր և նեյրոնային ցանցեր,
2. Ծրագրային ապահովման մշակում,
3. WEB-տեխնոլոգիաներ,
4. Էլեկտրոնային ուսուցում,առցանց կրթական տեխնոլոգիաներ,
5. Համակարգչային թեստավորում, գիտելիքների ստուգում և գնահատում:

Ամբիոնների գիտական ուղղությունները որոշվում են՝ հաշվի առնելով ամբիոնների գիտական ներուժը, դասախոսների գիտական հետաքրքրությունների շրջանակները:

Բնագիտական ֆակուլտետում գործող ամբիոններում կատարվել են դասաժամերի փոփոխություններ, կիսամյակից կիսամյակ տեղափոխություններ՝ համաձայն ուսումնական պլանների: Այդ փոփոխություններն արձանագրվել են ամբիոնների համապատասխան նիստերում:

Բնագիտական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողներն ակտիվ մասնակցություն են ունեցել կազմակերպված գիտաժողովներին: Հաշվետու ուստարում ներկայացվել են 10 հոդվածներ, որոնցից 7-ը կենսաբանական և էկոլոգիական գիտությունների, 3-ը՝ տեխնիկական գիտությունների գծով:

Հաշվետու ժամանակահատվածում Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ու ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնների ներքոհիշյալ դասախոսները մասնակցել են առցանց և անցանց վերապատրաստումների, աշխատաժողովների և մասնագիտական քննարկումների.

V. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2021-2022 ուսումնական տարում բնագիտական ֆակուլտետում ամփոփիչ ատեստավորմանն ընդհանուր առմամբ թույլատրվել են մասնակցելու 12 ուսանողների, որոնցից 6-ը բակալավրի կրթական աստիճանով, 6-ը՝ մագիստրոսական կրթական աստիճանով: Այսպիսով.

- Համակարգչային ճարտարագիտություն բաժնի բակալավրիատի 6 շրջանավարտներից գերազանց գնահատականով ավարտել է 3-ը, լավ՝ 1-ը, բավարար՝ 2-ը: Գերազանցության դիպլոմի է արժանացել 3 շրջանավարտ:
- Համակարգչային ճարտարագիտություն բաժնի 6 մագիստրոսներից գերազանց գնահատականով ավարտել է 4-ը, լավ՝ 1-ը, բավարար՝ 1-ը: Գերազանցության դիպլոմի է արժանացել 4 շրջանավարտ:

Ամփոփիչ ատեստվորման հանձնաժողովի նախագահը ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի կողմից ներկայացված աշխատանքների վերաբերյալ կատարել է հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները.

Բակալավրիատ

Դիտարկումներ.

1. Բակալավրիատի աշխատանքները հիմնականում միջին մակարդակի են: Ընդհանուր տպավորությունը դրական է, բոլոր ուսանողները տիրապետում են բակալավրի որակավորման համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների:

Առաջարկություններ.

1. Ապահովել արդիական և կիրառական նշանակության թեմաների ընտրությունը:
2. Կատարել շեշտադրում շնորհանդեսների պատրաստման և ներկայացման կարողությունների զարգացման վրա:

Մագիստրատուրա

Դիտարկումներ.

1. Ամփոփիչ ատեստավորմանը մագիստրոսների մեծ մասը կարողացան ներկայացնել բավականին բարձր մակարդակի թեզեր:
2. Թեմաները շատ արդիական էին:

Առաջարկություններ.

1. Թեզերի շրջանակներում մշակված տեխնոլոգիական համակարգերի ֆունկցիոնալությունը, ինչպես նաև կիրառական նշանակությունն առավել ընդլայնելու

համար ցանկալի է բաց աղբյուրով (Open Source) նախագծերի, ծրագրավորման տեխնոլոգիաների կիրառում:

VI. Համագործակցային կապերը և դրանց ակտիվացումը

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը ակտիվ է եղել արտաքին համագործակցության առումով: Ամրապնդվել է համագործակցությունը «Luseen Technologies» ընկերության՝ որպես գործատու կազմակերպության հետ: Համագործակցության հուշագիր է ստորագրվել «Գավառի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի հետ, և դեղագործական քիմիա բաժնի ուսումնական պրակտիկաները անցկացվել են այնտեղ:

Հաշվետու ուսումնական տարում արձանագրել ենք հերթական հաղթանակը «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում: Բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Կարեն Մաստոյանը զբաղեցրել է 1-ին տեղը:

Ակտիվորեն իրականացվել են համագործակցության ծրագրեր գործընկեր կազմակերպությունների հետ, իհարկե, համավարակային իրավիճակով պայմանավորված սահմանափակումների հաշվառմամբ:

VII. Միջոցառումներ

- 2021թ. դեկտեմբերի 2-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտու-թյունների ամբիոնի կողմից կազմակերպված հերթական առցանց հանդիպումը, որը նվիրված էր բարձր տեխնոլոգիական ոլորտի կրթությանը և աշխատաշուկային առնչվող հիմնահարցերին: Հանդիպմանը հրավիրված էին միջազգային հայտնի ընկերություններում (Google, Bloomberg, Apple) աշխատող մեր հայրենակիցներ Ռուբեն Ադամյանը, Պարույր Խնկոյանը և Արմեն Խաչատրյանը: Հանդիպմանը մասնակցում էին Գավառի պետական համալսարանի դասախոսներ, ուսանողներ, ինչպես նաև հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտներ:
- 2021թ. դեկտեմբերի 8-ին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ Ռուզան Սիմոնյանն անցկացրեց «Բջջաբանության հիմունքներ» թեմայով առցանց բաց դաս, որին մասնակցում էին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, դասախոսներ, ուսանողներ, Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ, Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոցների աշակերտներ և ուսուցիչներ: Ռուզան Սիմոնյանը ներկայացրեց բուսական և կենդանական բջիջների կառուցվածքային առանձնահատկությունները, բաղադրամասերը, անդրադարձավ նրանց ուսումնասիրության մեթոդներին:
- 2021թ. դեկտեմբերի 8-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների՝ «Բարև՛, մենք ենք» խորագիրը կրող միջոցառումը, որին ներկա էին համալսարանի դասախոսներ և ուսանողներ: Միջոցառման ընթացքում ուսանողները ներկայացրին հայ մեծանուն բանաստեղծներ

Պարույր Սևակի, Հովհաննես Շիրազի, Եղիշե Չարենցի կյանքն ու գրական գործունեությունը՝ հատկապես անդրադառնալով հայրենասիրական թեմայով գրված ստեղծագործություններին, ասմունքեցին մի շարք բանաստեղծություններ, ինչպես նաև հանդես եկան պարային կատարումներով:

- 2021թ. դեկտեմբերի 9-ին Գավառի պետական համալսարանում կայացավ «Թվարկության դիրքային և ոչ դիրքային համակարգեր» թեմայով առցանց բաց դաս:Բաց դասը վարեց բուհի ուսումնագիտական գծով պրոռեկտոր ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր Նելլի Կուտուզյանը: Բաց դասին ներկա էին Նորատուսի թիվ 2 միջնակարգ, Կարմիրգյուղի թիվ 1, թիվ 2 միջնակարգ, Սարուխանի միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտներ և ուսուցիչներ, ուսանողներ ու դասախոսներ:
- 2021թ. դեկտեմբերի 10-ին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի դասախոս, աշխարհագրական գիտություն-ների պրոֆեսոր Արամայիս Ավագյանի նախաձեռնությամբ կայացավ գիտական նստաշրջան, որին մասնակցում էին նույն ֆակուլտետի Սերվիս բաժնի տարբեր կուրսերի ուսանողներ: Ներկա էին նաև Գավառի թիվ 5 հիմնական դպրոցի, Գավառի ավագ դպրոցի աշակերտներ և ուսուցիչներ:
- 2021թ. դեկտեմբերի 12-ին ԳՊՀ բնագիտության լաբորատորիան հյուրընկալեց Գանձակի թիվ 1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներին՝ քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի Լիանա Գաբրիելյանի ուղեկցությամբ: Այցելության նպատակը ԳՊՀ լաբորատորիայում կենսաբանություն, քիմիա առարկաներից գործնական աշխատանքների կազմակերպումն էր: Լաբորատորիայի վարիչ Թերմինե Խաչիկյանի օգնությամբ աշակերտները մասնակցեցին ուսումնական տարբեր փորձերի.բուսական հյուսվածքից ԴՆԹ-ի անջատում, բանջարեղենի ու մրգերի որոշ տեսակներում նիտրատների խտության որոշում, քիմիական հրաբուխ, ծուխ առանց կրակի, քիմիական վիրաբուժություն, ինդիկատորի կիրառում և այլն:
- 2021թ. դեկտեմբերի 21-ին Գավառի պետական համալսարանում կայացավ առցանց սեմինար-քննարկում՝ «Մաթեմատիկայի կիրառությունը արհեստական բանականության մեջ» թեմայով: Սեմինարին մասնակցեցին Գավառի թիվ 8, Նորատուսի թիվ 1, Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցների աշակերտները, ԳՊՀ ուսանողներ և դասախոսներ: ԳՊՀ Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու Վարազդատ Ավետիսյանը ներկայացրեց զեկուցում՝ «Մաթեմատիկայի կիրառությունը արհեստական բանականության մեջ» թեմայով:
- 2022 թ. մարտի 27-ին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ սեմինար-քննարկում «Նորագույն IOT տեխնոլոգիաների հնարավորությունները» թեմայով: Սեմինար-քննարկումը կազմակերպվել էր ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի ակադեմիական խորհրդատու Հերմինե Սաֆարյանի և Համակարգչային ճարտարագիտություն բաժնի ուսանողների նախաձեռնությամբ:
- 2022թ. ապրիլի 8-ին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ «Աշխարհը տուրիստի աչքերով» խորագրով ինտելեկտուալ խաղ-մրցույթ: Մրցույթը կազմակերպվել էր կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի ակադեմիական խորհրդատու Մարինե Հովհաննիսյանի և սերվիս բաժնի երկրորդ կուրսի ուսանողների նախաձեռնությամբ:

- 2022թ. մայիսի 26-ին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ միջոցառում «Մայիսյան եռատոն» խորագրով: Միջոցառումը կազմակերպվել էր ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտություններիբ ամբիոնի ակադեմիական խորհրդատու Հերմինե Սաֆարյանի և Համակարգչային ճարտարագիտություն, Սերվիս, Դեղագործական քիմիա բաժինների ուսանողների նախաձեռնությամբ:

Մարտին Ավագյան՝
ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան,
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջա-նին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Կենսաբանություն				
1-ին	2	-	-	100,0
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	8	3	1	62,5
2-րդ	9	-	3	100,0
3-րդ	3	-	-	100,0
4-րդ	4	-	2	66,7
Դեղագործական քիմիա				
1-ին	2	-	-	100,0
2-րդ	4	-	-	100,0
3-րդ	2	-		100,0
Սերվիս				
1-ին	1	-	-	100,0
2-րդ	6	-	3	100,0
3-րդ	4	-	2	100,0
Քարտեզագրություն և կադաստրային գործ			5	
1-ին	1	-	-	100,0
Ընդամենը	**46**	**3**	**16**	**89,6**
Մագիստրատուրա				
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	4	-	3	66,7
2-րդ	4	-	3	57,1
Կենսաբանություն				
1-ին	2	-	1	100,0
Ընդամենը	**10**	**-**	**7**	**66,7**

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Կենսաբանություն				
1-ին	2	-	-	100,0
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	7	-	1	87,5
2-րդ	8	-	3	100,0
3-րդ	3	-	1	100,0
Դեղագործական քիմիա				
1-ին				
2-րդ	2	-	1	100,0
3-րդ	4	-	3	100,0
Սերվիս	2	-	1	100,0
1-ին				
2-րդ	1	-	-	100,0
3-րդ	6	-	3	100,0
Քարտեզագրություն և կադաստրային գործ	4	-	4	100,0
1-ին				
	1	-	-	100,0
Ընդամենը	**38**	**-**	**17**	**97.6**
Մագիստրատուրա				
Համակարգչային ճարտարագիտություն				
1-ին	5	-	2	83,3
Կենսաբանություն				
1-ին	2	-	2	100,0
Ընդամենը	**7**	**-**	**4**	**87,5**

2021/2022 ՈՒՍ.ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցում-ների թեզիս
-	-	1	3	33	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԱՄԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ավագյան Մարտին Պատվականի** – գյուղ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Առաքելյան Լյուդմիլա Նիկոլայի** - կենս. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Սարգսյան Վահան Արշավանի** – ԳՊՀ դոցենտ
4. **Հասասյան Գագիկ Գուրգենի** – դասախոս
5. **Մկրտչյան Լալա Արշալույսի** - դասախոս
6. **Հովհաննիսյան Մարինե Հրահատի** - ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Ավագյան Արամայիս Ռուստամի** – աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. **Թադևոսյան Արտաշես Վահանի** – տեխ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
3. **Մխիթարյան Ազնիվ Կառլենի** – տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Սիմոնյան Ռուզան Մաքսիմի** – կենս. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
5. **Ավետիսյան Կարինե Սամվելի** – քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. **Մուրադյան Էդիկ Կամսարի** – տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. **Խաչիկյան Թերմինե Գագիկի** - կենս. գիտ. թեկնածու
8. **Խուդավերդյան Նանե Արմենի** – տեխ. գիտ. թեկնածու
9. **Գալոյան Ռուսլան Պապինի** – դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Հողային ռեսուրսների մելիորատիվ վիճակի բարելավման հիմնախնդիրներ
2. ՀՀ Գեղարքունիքի մարզում տուրիզմի զարգացման հնարավորությունները և հեռանկարները
3. Ջրակենսաբանական հետազոտությունների, ֆիտոպլանկտոնի քանակական և որակական ցուցանիշների հետազոտություն
4. Բարդ օրգանական նյութերի սինթեզը և կիրառումը դեղաբանության մեջ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Ձեկուցումների թեզիսներ
-	-	1	3	23	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Simonyan R. M., Simonyan G. M., Alexanyan A. S., Babayan M. A., Alexanyan S. S., Simonyan M. A.** Superoxide-producing thermostable complex from plant foods: isolation, purification and properties // Biological Journal of Armenia, 2022, LXXIV, 2, էջ 46-52:
2. **Sukiasyan L., Simonyan R., Babakhanyan B., Avetisyan R., Chavushyan V., Sulashvili N.** Plasma Endothelin as a Target of Therapeutic Effects of the Diabephyt Antidiabetic Medicinal Herbal Collection // Caucasus Journal of Health Sciences and Public Health, V.5, Suppl.9, P.58, May, 2022, Students National and International All Free Online Conferences 2021, Health and Well-being of the society, Present Challenges and Vision for the Future.
3. **Симонян Р. М., Алексанян А. С., Фесчян С. М., Симонян Г. М., Бабаян М. А., Оксузян Г. Р., Алексанян С. С., Симонян М. А.** NADPH-содержащий белковый компонент из желтка яиц курицы и механизм стимулирования этим компонентом активности изоформ NADPH оксидазы иммунных клеток in vitro // Ученые записки, Ширакский гос. ун-т, 2022, LXXIV, выпуск А, էջ 46-52:
4. **Simonyan R. M., Simonyan K. V., Simonyan G. M., Marmaryan G. Y., Isoyan A. S., Darbinyan L.V., Simonyan M. A.** Thermostable superoxide-producing complex between NADPH-containing lipoprotein (NCL) and Fe (III) from boiled cow milk: activation of immune cells NADPH oxidase by NCL ***in vitro*** // Kachar 2022, P.161-172 DOI: 10.54503/2579-2903-2022.2-161:
5. **Simonyan R. M., Simonyan G. M., Babayan M. A., Simonyan K. V., Isoyan A. S., Darbinyan L. V., Simonyan M. A.** Thermo-induced Irreversible Changes of the Properties of Rats NADPH Oxidase Медицинская наука Армении, т. LXII No 3 2022, p. 76-80. DOI:10.54503/0514-7484-2022-62.3-76
6. **Simonyan R. M., Simonyan G. M.** Production of gas phase superoxide radicals by thermostable complexes from raisin and grape seeds // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, էջ 136-144:
7. **Simonyan R., Simonyan K., Darbinyan L., Madoyan R., Simonyan G., Sargsyan H., Simonyan M.** Isolation, purification, and properties of a superoxide-producing thermostable associate from *Bifidobacterium bifidum, Lactobacillus acidophilus* and *Lactobacillus rhamnosus* // Revista Brasileira de Farmacognosia (հանձնված է տպագրության):
8. **Avetisyan K. S., Galstyan L. Kh.** Reactions of 5,5-Substituted N-[4-Methyl-3-phenylfuran-2(5H)- ylidene]-N′-phenylthiocarbamides with Acrylic Acid Derivatives // Russian Journal of General Chemistry, 2022, Vol.92, N 3, էջ 355-358:
9. **Паронян З. Х., Хачатрян Р. С., Степанян А. А., Григорян Л. С., Аракелян Л. Н.** Изминение уровня глюкозы и некоторых показателей свертывания крови у крыс с

экспериментальным аллоксановым диабетом под действием нового аминокислотного комплекса // Мед. Наука Армении, 2021, т. 61, N 3, էջ 64-72:

10. **Պարոնյան Զ. Խ., Առաքելյան Լ. Ն., Ստեփանյան Հ. Ա., Գրիգորյան Լ. Ս.** Նոր ամինաթթվային կոմպլեքսի ազդեցությունը հեմոստազի վրա փորձարարական շաքարային դիբետով առնետների մոտ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, էջ 108-116:

11. **Паронян З. Х., Аракелян Л. Н., Григорян Л. С., Хачатрян Р. С., Степанян А. А.** Влияние аминокислотного комплекса на фибринолитический потенциал крови у здоровых и с экспериментальным диабетом крыс // Мед. Наука Армении, 2022, т. 62, N 4:

12. **Симонян Л. А., Оганнисян М. Г.** Молекулярные механизмы нарушений тканевого метаболизма при коразол-индуцированных эпилептиформных припадках // Актуальные проблемы медико-биологических наук и спорта: сборник материалов Международной научно-практической конференции, 13-14 апреля 2022 г. , Коломна, էջ 15-21:

13. **Սիմոնյան Ա. Ա., Սիմոնյան Լ. Ա., Հովհաննիսյան Մ. Հ.** Կենսաքիմիան ժառանգական հիվանդությունների առաջացումը բացահայտելու շեմին // «Գիտության աշխարհում», N 2, 2021, էջ 56-61:

14. **Սիմոնյան Ա. Ա., Սիմոնյան Լ. Ա., Հովհաննիսյան Մ. Հ.** Շրջակա միջավայրի աղտոտման ներգործությունը մարդու ժառանգականության վրա // «Գիտության աշխարհում», N 1, 2022, էջ 56-63:

15. **Խաչիկյան Թ. Գ., Ստեփանյան Լ. Գ., Մամյան Ա. Ս., Համբարյան Լ. Ռ.** Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերի գետաբերանային հատվածների էկոլոգիական մոնիթորինգ և ջրի որակի գնահատում (2018թ.) // Հայաստանի կենսաբանական հանդես 1(74), 2022:

16. **Симонян Л. А., Симонян А. А., Оганнисян М. Г. Анализ интеграции интеллектуального развития и двигательной активности детей в дошкольном образовательном учреждении** // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, էջ 126-135:

17. **Тадевосян А. Мартиросян Р.** Отходы рыбьего производства как сырье для получения жира // ՀԱՊՀ Բանբեր «Քիմիական և բնապահպանական տեխնոլոգիաներ» 2022 №1, էջ 60-65:

18. **Тадевосян А. Багдасарян Т. Восканян П.** Оценка влияния хвостохранилищ на окружающую среду и разработка методов минилизации экологической нагрузки // XX Уральская горно-промышленная декада XXV|| международная научно-техническая конференция, Екатеринбург, 2022:

19. **Թադևոսյան Ա., Բաղդասարյան Տ., Ոսկանյան Պ.** Ջրամբարների մաքրման եղանակ // Արտոնագիր 724Y2022:

20. **Թադևոսյան Ա., Մարտիրոսյան Ռ.** Գետի ջրերի մաքրման համակարգ // Արտոնագիր 750Y2022:

21. **Թադևոսյան Ա., Մարտիրոսյան Ռ., Աղաբաբյան Կ.** Ձկան յուղի ստացման եղանակ // Արտոնագիր AM20220088Y դրական որոշում, 2022:

22. **Թադևոսյան Ա., Քոչարյան Հ.** Պարենամթերքի արտադրության տեխնոլոգիաներ, մաս 3 // Ուսումնական ձեռնարկ, ՀԱՊՀ, 2022, 150էջ:

23. **Asatryan V., Stepanyan L., Hovsepyan A., Khachikyan T., Mamyan A., Hambaryan L.** The dynamics of phytoplankton seasonal development and its horizontal distribution in Lake Sevan

(Armenia) // 2022, Environmental Monitoring and Assessment, 2022 DOI:10.1007/s10661-022-10446-5

24. **Ավագյան Մ. Պ., Էֆենդյան Պ. Ս.** Հայաստանի Հանրապետության հողագոյացման ֆիզիկաաշխարհագրական պայմանների գնահատումը և հողակադաստրային շրջանացումը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, էջ 85-95:

25. **Մարկոսյան Ա., Ավագյան Մ., Ստեփանյան Ա., Մովսիսյան Հ.** Դաշտապաշտպան անտառաշերտերի արդյունավետությունը Հայաստանի Հանրապետության լեռնատափաստանային գոտու էրոզացված ագրոլանդշաֆտներում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, էջ 96-107:

26. **Ավագյան Ա., Քեյյան Ս.** Զբոսաշրջային ինդուստրիայի կառավարման հիմնախնդիրները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, էջ 117-125:

27. **Մկրտչյան Լ. Ա.** «Սարվոր տուրիզմ»-ը որպես զբոսաշրջային նոր ուղղություն // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, էջ 166-175:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ավետիսյան Վարազդատ Կորյունի,
տեխնիկական գիտությունների թեկնածու

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Շեկյան Արտյոմ Լավրենտիի -** ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Հակոբյան Մամիկոն Զալիբեկի**- տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Խուրշուդյան Արմեն Կորյունի** – տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Հովհաննիսյան Անդրանիկ Պարույրի**- տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
5. **Սաֆարյան Հերմինե Խաչատուրի** - ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Կուտուզյան Նելլի Ալբերտի-** ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Դարբինյան Ալբերտ Սարգսի** - դասախոս, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Հովհաննիսյան Մարգար Արտավազդի –** դասախոս
4. **Բաղդոյան Շուշան Գևորգի** – դասախոս
5. **Միրիբյան Արթուր Աշոտի** – դասախոս
6. **Գզրարյան Հարություն Վաղարշակի** - դասախոս
7. **Գասպարյան Շահեն Հրաչիկի** - դասախոս
8. **Թումանյան Անդրանիկ Սերգեյի** – դասախոս
9. **Բալյան Արմենակ Վյաչեսլավի** - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Արհեստական բանականության համակարգեր և նեյրոնային ցանցեր,
2. Ծրագրային ապահովման մշակում,
3. WEB-տեխնոլոգիաներ,
4. Էլեկտրոնային ուսուցում,առցանց կրթական տեխնոլոգիաներ,
5. Համակարգչային թեստավորում, գիտելիքների ստուգում և գնահատում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	10	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Կուտուզյան Ն., Շեկյան Լ.** Առաձգական հիմքի վրա հեծանների՝ կողային և երկայնական ուժերով ճկման խնդիրներ մասին: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12 2022
2. **Խուրշուդյան Ա., Մարդոյան Շ.** ART նեյրոնային ցանցի կիրառման հնարավորությունը սպառողների անհատականացման համակարգի կառուցման համար: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12 2022
3. **Միրիբյան Ա., Բաղոյան Վ.** HDD և SSD հիշող սարքերի հիմնական առանձնահատկությունների ուսումնասիրությունը և նշանակությունը ՏՀՏ ոլորտում: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 12 2022
4. **Հակոբյան Մ.,** Схема управления нагрузкой с переменным током ՀԱՊՀ
Բանբեր. Էլեկտրատեխնիկա, Էներգետիկա Գիտական հոդվածների ժողովածու, N 1 2022
5. **Ղազարյան Ա., Թումանյան Ա.,** Արհեստական բանականության մարտահրավերներն ու խնդիրները ֆինանսական շուկայում: ՇՊՀ գիտական հոդվածների ժողովածու N1-2022 Ա Պռակ
6. **Ղազարյան Ա. , Սարգսյան Վ., Հարությունյան Գ., Ստեփանյան Գ., Այվազյան Մ.** Արհեստական բանականության կիրառական լուծումները ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքներում: «Ամբերդ» մատենաշար 47, 2022թ.
7. **Ղազարյան Ա. Յ.** , Նորարարական վարկային տեխնոլոգիաների ներդրման արդյունավետության հաշվարկը «ԱյԴի Բանկ» ՓԲԸ օրինակով: ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀ գիտավերլուծական հանդես հատոր XII, № 6, ՀՏԴ 336.5 (479.25 2021)
8. **Ղազարյան Ա. Յ. ,** Վարկային սքորինգի և անձի նույնականացման հավելվածների նախագծումը մեքենայական ուսուցմամբ: Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր:ՊՐԱԿ № 2, 2021
9. **Ղազարյան Ա. Յ.** , Հաճախորդների վարկունակության կանխատեսման ալգորիթմը մեքենայական ուսուցման մեթոդների հիման վրա: Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու ISSN 1829-4480 N11, 2021թ.
10. **Ղազարյան Ա. Յ. , Խաչիկյան Ս. , Սարգսյան Ա.** Evaluation of investment activities of vayots dzor and syunik marzes of the ra using machine learning methods: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսա-րան, Բանբեր. Երևան 2022թ. N6:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ղաջոյան Համլետ Գրիշայի,*
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ *Գևորգյան Գոհար Վալոդի*

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

011301.00.6 *Ընդհանուր մանկավարժություն*

011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության բակալավր

011301.00.7 *Ընդհանուր մանկավարժություն*

011301.01.7	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության մագիստրոս

011401.00.6 *Մասնագիտական մանկավարժություն*

011401.18.6	Պատմություն	Մանկավարժության բակալավր

011401.00.7 *Մասնագիտական մանկավարժություն*

011401.18.7	Պատմություն	Մանկավարժության մագիստրոս

042101.00.6 *Իրավագիտություն*

042101.01.6	Իրավագիտություն	Իրավագիտության բակալավր

042101.00.7 *Իրավագիտություն*

042101.01.7	Իրավագիտություն	Իրավագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 101
Շրջանավարտների թիվը՝ 32

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2021-2022 ուսումնական տարում ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում (ՀՄՖ) բակալավրիատի դասերը կազմակերպվեցին զուգակցված՝ առկա և առցանց, իսկ մագիստրատուրայում՝ առցանց եղանակով:

1. Ընդունելությունը և ուսանողական համակազմը

Հաշվետու ժամանակահատվածում հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը (ՀՄՖ) կրթական ծրագրեր է իրականացրել բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում՝ հետևյալ մասնագիտություններով. իրավագիտություն, պատմություն, տարրական մանկավարժություն և մեթոդիկա:

2021-2022 ուսումնական տարում ընդունելության քննությունների արդյունքներով իրավագիտության բաժնի 1-ին կուրս ընդունվել են 9 ուսանող (նախորդ տարում՝ 3), պատմության բաժին՝ 1 (նախորդում՝ 2), տարրական մանկավարժության և մեթոդիկա բաժին՝ 6 (նախորդում՝ 8): Դպրոցներում ուսումնասիրություններ կատարելու արդյունքում հանգել ենք այն հետևության, որ դիմորդների քանակի նվազումը մեծամասամբ պայմանավորված է ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտների թվի նվազմամբ, բարձրագույն կրթության նկատմամբ ոչ այնքան մեծ ձգտումով, ինչպես նաև ընդունելության քննություններից անբավարար գնահատական ստանալու, ինչպես նաև մայրաքաղաքում սովորելու ցանկության հետ:

Մագիստրոսական խմբերը հաշվետու ժամանակաշրջանում համալրվեցին հետևյալ կերպ.Իրավագիտության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրս ընդունվել են 18 ուսանող (նախորդը՝ 13), տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժին՝ 15 ուսանող (նախորդը՝ 10), պատմության բաժին՝ 6 ուսանող (նախորդը՝ 4):

2. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը և ակադեմիական առաջադիմությունը

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվեց ուսանողների հետևյալ շարժը. համալսարանի այլ ֆակուլտետներից հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ են տեղափոխվել 2 ուսանող (նախորդ տարում՝ 4): Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետից տեղափոխվել են այլ ֆակուլտետներ 1 ուսանող (նախորդում՝ 2), ներֆակուլտետային տեղափոխություն՝ 1 (նախորդում՝ 1): Զինվորական ծառայությունից վերադարձել է 1 ուսանող (նախորդը՝ 2), ուսանողական իրավունքները վերականգնել են 4-ը: Տարբեր պատճառներով հեռացվել են 8-ը (նախորդը՝ 4), անհարգելի բացակայությունների պատճառով նկատողություն են ստացել 7-ը (նախորդը՝ 24):

Ֆակուլտետի զարգացման հայեցակարգով նախատեսված է ուսումնական տարվա ցուցանիշներով բակալավրիատում և մագիստրատուրայում ուսման առաջադիմությունը պահպանել 70%-ից բարձր: Գրանցված ցուցանիշները հետևյալն են. բակալավրիատում ուսման առաջադիմությունը 1-ին կիսամյակում կազմել է 97,% (նախորդը՝ 91,4%), մագիստրատուրայում՝ 74% (նախորդը՝ 76%), ֆակուլտետում՝ 82% (նախորդը՝ 82%), 2-րդ կիսամյակում կազմել է 97% (նախորդը՝ 92,3%), մագիստրատուրայում՝ 76,5 % (նախորդը՝ 73%), ֆակուլտետում՝ 86% (նախորդը՝ 82,3%): Նախորդ ուսումնական տարվա համեմատ՝ 2-րդ կիսամյակում բակալավրիատում ուսման առաջադիմությունը աճել է 4,7%-ով, իսկ մագիստրատուրայում՝ 3%-ով և արդյունքում՝ ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը նախորդ տարվա համեմատ աճել է 3,7%-ով: 100 % առաջադիմություն գրանցվել է 7 կուրսում (նախորդ տարի՝ 4-ում):

Ուսանողների սոցիալական վիճակի ուսումնասիրությունը և ֆինանսական կարգապահության հարցերը մշտապես գտնվել են դեկանատի ուշադրության կենտրոնում: Անհատական աշխատանք տանելով յուրաքանչյուր ուսանողի հետ, իրազեկել ենք արտահամալսարանական միջոցներից կրթաթոշակների տրամադրման ծրագրերի մասին, ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական, փաստաթղթային և տեխնիկական աջակցություն: Արդյունքում՝ Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամից օգտվել են 6 ուսանող, Հայ կրթական հիմնարկությունից՝ 2, «ԱՄՔՈՐ»-ից՝ 2, Գուլամերյան՝ 2, Գավառի քաղաքապետարանից՝ 2, «Դիակոնիկա» ԲԿ՝ 1, «Փարոս» համակարգի շահառուներ՝ 9, սահմանամերձ համայնքի բնակիչ ուսանող՝ 3, Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից՝ 9, Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից՝ 1: Համալսարանի կողմից տրվել է ուսման վարձի զեղչ 27 ուսանողի:

Հաշվետու ժամանակաշրջանում պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխատուցմամբ (անվճար) տեղերում սովորել են ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա և պատմություն բաժինների բակալավրիատի 6 ուսանող, մագիստրատուրայի՝ 7 ուսանող: Անվճար տեղերում սովորող ուսանողների փոխատեղման արդյունքներն ամփոփելուց և հրապարակելուց հետո չի արձանագրվել բողոքարկման դեպք:

Ֆակուլտետի բարձր առաջադիմություն ունեցող, հանրապետական և համալսարանական ուսանողական գիտաժողովներում զեկուցումներով հանդես եկած, տպագրված աշխատանքներ ու հավաստագրեր ունեցող, ինչպես նաև հասարակական ակտիվ աշխատանքներ կատարող 3 ուսանող մասնացեցին «Լավագույն ուսանող» մրցույթին, որից 1-ը՝ Վահե Գոզեյանը, արժանացավ Հայաստանի Հանրապետության «Լավագույն ուսանող» մրցանակին:

Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվեց առկա ձևաչափով: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցեցին բակալավրիատի 4, մագիստրատուրայի 28 ուսանող: Արդյունքում՝ ամփոփիչ ատեստավորման առաջադիմությունը կազմեց 100%: Գերազանցության դիպլոմի արժանացան բակալավրիատի 2, մագիստրատուրայի 14 ուսանող: Վերլուծվել են հանձնաժողովների նախագահների առաջարկությունները և դիտարկումները, որոնք հաշվի են առնվել 2022-2023 ուստարվա գործընթացը կազմակերպելիս:

3. Վիճակագրական տվյալներ ծրագրի ավարտից հետո շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ

Դեկանատը բոլոր 3 մասնագիտությունների շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկություններ է հավաքագրում տարբեր ճանապարհներով: Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկություններ ենք ստանում Հայաստանի Հանրապետության և Գեղարքունիքի մարզի իրավապահ մարմիններից, հանրակրթական դպրոցներից, մրցույթներին մասնակցող մեր շրջանավարտներից, ում տալիս ենք բնութագիր-երաշխավորագրեր: Շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ անցկացվում են հարցումներ գործատուների շրջանում, որոնց արդյունքները վերլուծվում են՝ ուժեղ և թույլ կողմերը վեր հանելու, եզրահանգումներ անելու, գործողությունների պլաններում դրանք ներառելու և լուծում տալու նկատառումներով:

4. Կրթական ծրագրերի զարգացումն ու փոփոխությունները

Մասնագիտական ամբիոնները պարբերաբար վերանայում և փոփոխություններ են կատարում ֆակուլտետի իրավագիտություն, պատմություն, տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլաններում: Ուսումնական պլանները համեմատվել են հանրապետության առաջատար բուհերի նույնատիպ կրթական ծրագրերի հետ: Միաժամանակ փոփոխություններ ու լրացումներ են կատարվել իրավագիտության ամբիոնի 64, հասարակական գիտությունների ամբիոնի 81 դասընթացների ծրագրերում:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի ամբիոնների և ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի հետ համատեղ կազմվեց դասալսումների ժամանակացույց, իրականացվեցին համատեղ դասալսումներ: Դասալսումների արդյունքները վերլուծվեցին ակադեմիական քաղաքականության բաժնի կողմից և քննարկվեցին ամբիոններում:

5. Ծրագրի ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացները

Ֆակուլտետի ռազմավարական նպատակներից է դասախոսական կազմի կայունության ապահովումը: Ֆակուլտետի 2 ամբիոններում ընդգրկված են գիտությունների 4 դոկտոր, 11 թեկնածու, երիտասարդ ասիստենտներ, տվյալ ոլորտի աշխատանքային փորձ, հմտություն ունեցող, առաջատար պրակտիկ մասնագետներ:

2022թ. հուլիսի 2-ին կայացած գիտաժողովին ակտիվորեն մասնակցեցին մասնագիտական 2 ամբիոններում ընդգրկված դասախոսները: Տարբեր բաժանմունքներում զեկուցումներով հանդես եկան 22 դասախոս, իսկ ուսանող-դասախոս համահեղինակությամբ՝ 4 ուսանող:

Հաշվետու ժամանակաշրջանում հանրապետության տարբեր բուհերում կազմակերպված հանրապետական և միջազգային ուսանողական գիտաժողովներին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև ուսանողները: Այսպես. Արցախի պետական համալսարանի կազմակերպած գիտաժողովին մասնակցեցին 6 ուսանող, Շուշիի տեխնոլոգիական համալսարանում՝ 2 ուսանող, Երևանի պետական համալսարանում՝ 3 ուսանող, Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ 2, Գավառի պետական

համալսարանի գիտաժողովին՝ 13 ուսանող: Արդյունքում ակտիվ ուսանողները մասնակցեցին «Լավագույն ուսանող» մրցույթի, նրանց շնորհվեցին հավաստագրեր, հոդվածները տպագրվեցին:

6. Ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի բոլոր լսարանները ապահովվել են անհրաժեշտ միջոցներով՝ որակյալ ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

Ֆակուլտետը համագործակցել է տարածաշրջանի կրթամշակութային հիմնարկությունների և հանրակրթական դպրոցների հետ: Բարձր դասարանների աշակերտների և բուհ ընդունվել ցանկացող ապագա դիմորդների համար կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշմանը նվիրված խորհրդատվություններ, հանդիպումներ, որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ կազմակերպվել են այցելություններ մարզի դպրոցներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՄՖ-ում հիմնադրվեց հոգեբանամանկավարժական կենտրոն, որն ապահովվեց անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով: Կենտրոնի ստեղծման նպատակը մանկավարժական և հոգեբանական գիտելիքների տարածումն է, մասնագիտական հմտությունների ձևավորումը, սովորողների կողմից ինքնուրույն դիդակտիկ պարագաների ստեղծումը, դրանց կիրառումը երեխաների հետ տարվող աշխատանքների ընթացքում: Այն ծառայում է նաև մարզում հատուկ մանկավարժների և հոգեբանների վերապատրաստումների, խորհրդատվության իրականացման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հոգեբանամանկավարժական ծառայությունների մատուցման համար:

Անհրաժեշտ նյութերով համալրվել է նաև կրիմինալիստիկայի լաբորատորիան:

2021-2022 ուստարում իրականացվել են էլեկտրոնային ուսուցման Learn.gsu.am համակարգի շարունակական բարելավման աշխատանքներ, թարմացվել է ուսումնական նյութերի բովանդակությունը:

Հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետի ակադեմիական խորհրդատուների կողմից կազմակերպվել են գեղարվեստական միջոցառումներ, մասնագիտական քննարկումներ, բաց դասեր: Կազմվել է խորհրդատվությունների անցկացման ժամանակացույց և ակադեմիական խորհրդատուների կողմից իրականացվել են խորհրդատվություններ ինչպես ժամանակացույցին համապատասխան, այնպես էլ՝ ուսանողների կարիքներից ելնելով:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում իրականացվեց ինքնավերլուծություն, կատարվեցին համալիր աշխատանքներ՝ ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի ուղղությամբ:

Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Արմինե Դավթյանը անցկացրեց վերապատրաստման դասընթացներ՝ «Ուսուցման և դաստիարակության արդյունավետության հոգեբանական հիմքերը» թեմայով, որին մասնակցեցին ֆակուլտետի վարչական աշխատակիցները, դասախոսները և ուսանողները, ինչպես նաև տարածաշրջանի դպրոցների ուսուցիչները, սոցիալական աշխատողները:

Ֆակուլտետը իր գործունեությունը իրականացրել է ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, բուհի էթիկայի կանոնների և ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթներին համապատասխան:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

I. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում և արդիականացում, վերջնարդյունքների սահմանում՝ ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների հաշվառմամբ, կրթական գործընթացի կազմակերպում՝ նորարարական մոտեցումների կիրառմամբ, աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրություն և արդյունքների հաշվառում,
2. իրավագիտություն, պատմություն, տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ-ների բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի վերանայում և բարելավում, ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից կրթության բովանդակության, դասավանդման մեթոդների արդիականացում,
3. ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման կառուցակարգերի արդյունավետության բարձրացում,
4. ըստ անհրաժեշտության ֆակուլտետում առցանց և զուգակցված ձևաչափերով ուսումնական գործընթացի կազմակերպում,
5. ուսանողներին խոր մասնագիտական գիտելիքների հաղորդում, համապատասխան ոլորտների տեսական և գործնական իմացության ապահովում, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, շարունակական կրթության մշակույթի ձևավորում,
6. ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության գործունեության ակտիվացում,
7. միջազգային ծրագրերին ուսանողների մասնակցության խրախուսում:

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Ֆակուլտետի ամբիոնների գիտահետազոտական գործունեության ուղղությունների հստակեցում և համապատասխանեցում ժամանակի մարտահրավերներին,
2. գիտահետազոտական աշխատանքների հրապարակում բարձր գործակից ունեցող պարբերականներում, որոնք ներառված են Web of Science, Scopus, Crossref, РИНЦ և այլ համակարգերում,
3. գիտահետազոտական և ուսումնական գործընթացների ինտեգրում, ուսանող - դասախոս համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացում,
4. դասախոսների գիտահետազոտական գործունեության բարոյական և նյութական խրախուսում:

III. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Ֆակուլտետի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների հաշվետվողականության ապահովում՝ ըստ աշխատանքային նկարագրերի,
2. պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմերի անդամների կարողությունների շարունակական զարգացում,
3. միջազգային և հանրապետական գիտաժողովներին գիտամանկավարժական կազմի անդամների մասնակցության խրախուսում,
4. ֆակուլտետի ուսանողների անձնական գործերի էլեկտրոնային բազայի շարունակական համալրում,
5. դասախոսների բարոյական և նյութական խրախուսման կառուցակարգերի կիրառում:

IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

1. Ֆակուլտետի ուսանողների սոցիալական վիճակի ուսումնասիրություն, աջակցության ծրագրերի իրականացում,
2. ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ անձնակազմերի անդամների և ուսանողների միջազգային ակադեմիական շարժունության խթանում,
3. համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի կրթական ծրագրերի հենանիշային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում և առաջավոր փորձի կիրառում (բենչմարքինգի իրականացում),
4. հանրությանը համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի կրթական ծառայությունների ներկայացում և լիարժեք տեղեկատվության տրամադրում,
5. համագործակցություն հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ, մասնագիտական կողմնորոշման նպատակով աշակերտներին խորհրդատվության տրամադրում:

V. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի հիման վրա ֆակուլտետում ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանում,
2. ակադեմիական անազնվության դեպքերի կանխում,
3. ԳՊՀ էթիկայի կանոնների և բարոյական նորմերի ու արժեքների արմատավորում ուսանողների շրջանում:

Համլետ Ղաջոյան՝
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետի դեկան,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանց ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	2	-	2	66,6
2-րդ	5	-	2	100
3-րդ	4	-	3	100
4-րդ	4	-	2	100
Պատմություն				
1-ին	1	-	1	100
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				
1-ին	6	-	-	100
2-րդ	7	-	2	100
3-րդ	4	-	4	100
Ընդամենը	**33**	**-**	**16**	**97,1**
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	11	-	2	68,8
2-րդ	11	-	3	68,8
Պատմություն				
1-ին	4	-	4	66,7
2-րդ	2	-	1	66,7
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				
1-ին	13	-	2	92,9
2-րդ	8	-	2	72,5
Ընդամենը	**49**	**-**	**14**	**74,2**

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	4	-	-	100
2-րդ	5	-	1	100
3-րդ	2	-	2	66,7
Պատմություն				
1-ին	1	-	1	100
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				
1-ին	6	-	2	100
2-րդ	7	-	1	100
3-րդ	4	-	2	100
Ընդամենը	**29**	**-**	**9**	**96,7**
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	9	-	2	56,3
Պատմություն	5	-	5	83,3
Տարր. մանկավարժ. և մեթոդիկա	12	-	2	100
Ընդամենը	**26**		**9**	**76,5**

2021/2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	*Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ*	*Գյուտերի հայտ, արտոնագիր*	*Հոդված*	Զեկուցումների թեզիս
-	**2**	**4**	**-**	**45**	**-**

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Թունյան Վալերի Գեորգիի** - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. **Պողոսյան Աշխունջ Ամիրխանի** - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. **Հակոբյան Արսեն Աշոտի** - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
4. **Ղաջոյան Համլետ Գրիշայի** - փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
5. **Օհանյան Հայկ Հեքիմի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
6. **Պապիկյան Կարինե Միշայի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
7. **Քուրքչյան Լուսիկ Ներսեսի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
8. **Հայրապետյան Քանաքարա Խաչիկի** – ասիստենտ,
9. **Գարեյան Մելանյա Վարդանի** - դասախոս,
10. **Խաչիկյան Հայկ Խաչիկի** – դասախոս,
11. **Դավթյան Արմինե Վահրամի** – դասախոս
12. **Խաչատրյան Վիկտորյա Դավթի** – լաբորանտ:

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Այվազյան Էդվարդ Իշխանի** – մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. **Զոհրաբյան Էդուարդ Լենդրուշի** – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. **Բարսեղյան Պարգև Աշոտի** - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
4. **Պետրոսյան Քնարիկ Ռազմիկի** – պատմական գիտությունների թեկնածու,
5. **Զարգարյան Արփինե Հրանտի** - դասախոս,
6. **Կոտոլկյան Թամարա Հակոբի** - դասախոս,
7. **Սաֆարյան Ալիտա Սոսի** – դասախոս:

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը 21-րդ դարում,
2. Ներառական կրթության մանկավարժական, սոցիալ-մանկավարժական, հոգեբանական հիմնախնդիրները,
3. Մանկավարժների մասնագիտական-մանկավարժական իրազեկությունները (կոմպետենտությունները),
4. Հայ գրողների և պատմիչների փիլիսոփայական հայացքների վերլուծություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	*Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ*	*Գյուտերի հայտ, արտոնագիր*	*Հոդված*	Զեկուցումների թեզիս
-	2	4	-	28	

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Тунян В. Г.** Отношения Российской и Османской империй в конце XVIII в. – 1806 г., Соперничество и конфронтация, Երևան, Պատմություն և քաղաքականություն, 2021, N 5 (16), էջ 3-14:
2. **Тунян В. Г.** Подходы к признанию Геноцида армян в конце XX - нач. XXI вв, Երևան, Պատմություն և քաղաքականություն, 2022, N 1 (18), էջ 3-10:
3. **Тунян В. Г.** Заявления Государственной Думы РФ относительно Геноцид армян. Конец XX в. - начало XXI в.- В кн.: Армения-Россия: дружба, сотрудничество и взаимная помощь, Երևան, 2022, էջ 53 -57:
4. **Тунян В. Г.** Подход Х. А. Вермишева к российско-армянским отношениям, Избранные страницы российско-армянского стратегического союза, Երևան, 2022, էջ 53 -58:
5. **Тунян В. Г.** Дебаты о признании Геноцида армян в начале XXI в. Армяне Юга России. IV международная научная конференция, 28-29 сентября 2021 г. Ростов-на-Дону, 2021, էջ 368-376.
6. **Тунян В. Г.** Культурное возрождение армян в XIX – нач. XX в., Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2022, N 13:
7. **Тунян В. Г.** Искажение истории Армянского вопроса и Геноцида армян в турецкой историографии конец XX в. – начало XXI, Ереван, Чартарагет, 2022, 144 էջ:
8. **Тунян В. Г.** Значимость Истории, 2022 г., с. 6: //generalnews.am/hy/article/1343022fc4003e2cf16f0368302d86e8?fbclid=IwAR2pRP7arEXEoDm3BckQ7cLNEJNEyK1sqCLXrsD3lzM6oqibOBbgVtgJ2H0:
9. **Тунян В. Г.** Концептуальные подходы, 2022, с.6.//https://generalnews.am/hy/article/fde4d8d309bdee7fef699baa19c68165?fbclid=IwAR1nrMeC2dq222hT9BIkv3ZIepdtizD7WZmb1HGdVwErYZNqz07YOeGdU:
10. **Тунян В. Г.** Мифотворческие традиции, 2022г, с.6.//https://generalnews.am/hy/article/e36cf5426895e81a26a2355ae4855b9d?fbclid=IwAR2Sfg6uN2w5LH4a5fH4wWESIdqqsYmcgFyoltZ36L3cShvCaRP6dRfUc7o:
11. **Բարսեղյան Պ. Ա.** Արցախի Հանրապետության կրոնական կյանքը կարգավորող օրենսդրությունը, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, Է, Երևան, 2022, էջ 75-88:
12. **Բարսեղյան Պ. Ա.** Բուդդայականության հիմնական ուղղությունների ուսումնասիրության առանձնահատուկ կողմերը, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2022, N 13:
13. **Պետրոսյան Ք. Ռ.** Ռամկավար Ազատական կուսակցութեան կազմաւորումն ու գործունէութիւնը 1915-1951 թթ.: Ըստ ՌԱԿ Գահիրէի Վարչութեան նիստերու ատենագրութիւններուն: Փաստաթուղթերու ժողովածու /Կազմողներ՝ Ք.Պետրոսեան, Վ.Գրիգորեան: Գլխաւոր խմբագիր՝ Գ. Արշակեան, Եր., Հայաստանի ազգային արխիւ, հրատ., 2022. 456 էջ +24 էջ ներդիր:
14. **Այվազյան Է. Ի.** Բնագիտամաթեմատիկական և հումանիտար գիտություններում դասակարգման տրամաբանական գործողության կիրառության որոշ

առանձնահատկություններ, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2022, N 13:

15.**Айвазян Э. И.** О воздержании от возможных логических ошибок в процессе доказательство или опровержения, Украина, г. Кроповницкий, Научный вестник летной Академии, Зборник научных трудов, Педогогические науки, Летная академия НАУ, 2021, ISSN 2522-1477, էջ 111-118:

16. **Ղաջոյան Հ. Գ.** Բերկրանք՝ տառապանքի ճանապարհով (նվիրվում է Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 95-ամյակին), Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2022, N 12, էջ 30-42:

17.**Ղաջոյան Հ. Գ.** Մարդու, հասարակության և բնության փոխհարաբերությունը Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունում, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2022, N 13:

18. **Պողոսյան Ա. Ա.** Շուշիի գորգերի թանգարանի հավաքածուն որպես հայոց գորգագործական մշակույթի ուսումնասիրության բացառիկ սկզբնաղբյուր, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2022, N 12, էջ 193-213:

19. **Պողոսյան Ա. Ա.** О судьбе коллекции музея арцахских ковров г. Шуши, ԿԳՄՍՆ կայք, 2022:

20. **Պողոսյան Ա. Ա.** Սոթքի և հարակից տարածքների գորգագործական մշակույթը, Սոթք.Հողի մշակութային հիշողությունը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, SBN 978-9939-886-34-3, Եր., 2022, էջ 108-132:

21.**Պողոսյան Ա. Ա.** Armenian carpets, Archaeological Heritage of Armenia, Histo-rical-Cultural Heritage series, 2022 /հանձնվել է տպագրության/:

22. **Պողոսյան Ա. Ա.** Գորգը հայ Առաքելական եկեղեցու արարողակարգերում, «Էջմիածին» կրոնագիտատական-հայագիտական հանդես, 2022 /հանձնվել է տպագրության/:

23. **Քուրքչյան Լ., Հովհաննիսյան Ե.** Մանկավարժական բուհի ուսանողների քննական սթրեսի հաղթահարման «Քոփինգ» ռազմավարությունների հետազոտություն, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2022, N 13:

24. **Խաչիկյան Հ. Խ.** Շախմատիստների գործունեության խնդիրները կարիերայի ավարտից հետո և շախմատային մտածողության արդյունավետությունը այլ ոլորտներում, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2022, N 12, էջ 502-511:

25. **Դավթյան Ա. Վ.** Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների մայրերին հոգեբանական աջակցության կազմակերպման վերաբերյալ, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2022, N 12, էջ 472-487:

26. **Папикян К. М., Манукян Г. Б., Симонян С. В.** Наблюдения об интегрированном обучении, Современные проблемы науки, общества и образования, сборник статей III Международной научно-практической конференции состоявшейся 23 мая 2022 года, г. Пенза, Российская Федерация:

27. **Պապիկյան Կ. Մ.** Նախագծային ուսուցումը տարրական դպրոցում, Երևանի Հայբուսակ համալսարանի գիտական և գիտամեթոդական հանդես, Հասարակական գիտություններ, 2/3/, Երևան, 2022, էջ 62-69:

28. **Պապիկյան Կ., Մաթևոսյան Հ., Ղարիբյան Հ., Հովհաննիսյան Ս., Հովակիմյան Տ.** Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հենակետային հիմնական դպրոցի

գործունեության հայեցակարգային հարցեր, Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ, գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածու, ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ, Երևան, 2022, N 2 (21), էջ 225-235:

29. **Պապիկյան Կ. Մ.**, **Հակոբյան Լ.** Հեռավար ուսուցումն իբրև նորարարական կրթության հրամայական, Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ, գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածու, ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ, Երևան, 2021, N 2 (21), էջ 73-80:

30. **Պապիկյան Կ. Մ.** Ճգնաժամ հաղթահարողներ (ուսուցչի ձեռնարկ 2-րդ դասարանի համար), ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ, Երևան, 2022 /հանձնվել է տպագրության/:

31.**Պապիկյան Կ. Մ.** Ճգնաժամ հաղթահարողներ (ուսուցչի ձեռնարկ 3-րդ դասարանի համար), ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ, Երևան, 2022 /հանձնվել է տպագրության/:

32. **Պապիկյան Կ. Մ.** Ճգնաժամ հաղթահարողներ (ուսուցչի ձեռնարկ 4-րդ դասարանի համար), ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ, Երևան, 2022 /հանձնվել է տպագրության/:

33. **Պապիկյան Կ. Մ.** Ճգնաժամ հաղթահարողներ (ուսուցչի ձեռնարկ 5-րդ դասարանի համար), ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ, Երևան, 2022 /հանձնվել է տպագրության/:

34. **Hayrapetyan K.** The Efforts of Archbishop Khoren Muradbekyan Aimed at the Normalization of Church-State Relations in 1924–1930, Բանբեր հայագիտության, 2021թ. , N 3 (27), էջ 54-68:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
2. **Խաչատրյան Սամվել Արտաշեսի** - իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
3. **Հովհաննիսյան Օլգա Արտյոմի** - ԳՊՀ դոցենտ,
4. **Ամիրյան Անի Սամվելի** – լաբորանտ, դասախոս:

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Հակոբյան Հրանուշ Հրանտի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. **Հարությունյան Մնացական Հայկի** - իրավաբանական գիտությունների թեկնածու,
3. **Խաչատրյան Հայկ Աշոտի** - իրավաբանական գիտությունների թեկնածու,
4. **Վարդանյան Գեղեցիկ Մարատի** - ասիստենտ,
5. **Լազարյան Վարդան Գերասիմի** - դասախոս,
6. **Վարդանյան Մարզպետունի Գոռի** - դասախոս,
7. **Մուրադյան Պապին Օնիկի-** դասախոս,
8. **Ղաջոյան Վարդան Համլետի** – դասախոս,
9. **Գրիգորյան Տարոն Վրեժի** - ասիստենտ,
10. **Բախտիկյան Լուսինե Վանիկի** - ասիստենտ:

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Պետության և իրավունքի տեսություն և պատմություն,*
2. *ՀՀ սահմանադրական, քաղաքացիաիրավական ինստիտուտներ,*
3. *Հայաստան-Սփյուռք գործակցություն:*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	*Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ*	*Գյուտերի հայտ, արտոնագիր*	*Հոդված*	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	17	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Հակոբյան Հ.Հ.** Հայրապետական բեղմնավոր գահակալություն // Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական 25-ամյա գահակալություն (1995-2020), Արժևորում և վկայություններ, Անթիլիաս, 2021, էջ 513-521:
2. **Հակոբյան Հ.Հ.** Հովհաննես Աղպաշեան. Մեծանուն հայը, Բանբեր հայագիտության, Հայագիտական միջազգային հանդես, Երևան, 2021, N 3 (27), էջ 248-254:
3. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.** Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության մի քանի հարցեր, «Հանրային կառավարում», ՀՀ ՊԿԱ գիտական պարբերական, N 1, 2022, էջ 129-140:
4. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.** Эволюция формы правления Республики Армения, «Государство и право», Научный журнал Российской академии наук, РФ (Журнал включен Высшей аттестационной комиссией (ВАК) при Министерстве образования и науки РФ в перечень ведущих рецензируемых научных журналов и изданий, в Российский индекс научного цитирования (РИНЦ) и зарегистрирован в научной электронной библиотеке eLIBRARY.RU;- в базу Russian Science Citation Index (RSCI) на платформе Web of Science), Статья одобрена к публикации, Код статьи S102694520020671-9-1, հոդվածն ընդունված է տպագրության), 2022.
5. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.** Հայաստանի Հանրապետության քաղաքացու ընտրվելու իրավունքի իրացման հիմնահարցերը, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022, էջ 512-530:
6. **Hranush Hakobyan, Ruzanna Hakobyan** Subjects of the legislative initiative in the Republic of Armenia, Parliamentary Affairs (Մեծ Բրիտանիայում հրատարակվող գիտական պարբերական, որն ընդգրկված է ցիտման բարձր գործակից ունեցող Web of Science համակարգում, հոդվածն ընդունված է տպագրության), Parliamentary Affairs, 2022, Oxford University Press, Submitted for publication.
7. **Հակոբյան Ռ. Խ.** Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի սահմանադրական ամրագրման շուրջ// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 10, 2021, 448-461:
8. **Հակոբյան Հ.Հ., Գյարգրցյան-Սողոյան Ս. Գ.** Պետության գլխի սահմանադրական լիազորություններն ըստ ՀՀ գործող Սահմանադրության// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2021, N 11, էջ 437-456:
9. **Հակոբյան Ռ. Խ.** Ի՞նչ և ինչու՞ է արգելում ՀՀ Սահմանադրությունը//Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 13:
10. **Խաչատրյան Ս. Ա.** Հռիփսիմյան կույսերի՝ Հռոմից փախուստի դիմելու և Հայաստան գալու պատճառների շուրջ// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 10, 2021, էջ 462-486:
11. **Խաչատրյան Ս. Ա.** Տրդատ Երրորդ թագավորի և Հռիփսիմե կույսի ամուսնության հարցի շուրջ// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 11, 2021, էջ 456-484:

12.**Խաչատրյան Ս. Ա.** Հայոց իրավունքի ու պետության ծագման պատճառների ու միջոցի մասին// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, N 13:

13.**Խաչատրյան Ս. Ա.** Բաքվի «Աղջկա աշտարակ»-ի շուրջ// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, N 13:

14.**Վարդանյան Գ. Մ.** Հաշտարարության ինստիտուտը՝ պատմական զարգացումների և միջազգային փորձի համատեքստում և դրա ներդրումը Հայաստանի Հանրապետությունում// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, N 13:

15.**Ամիրյան Ա. Ս.** Դատական դեպոնացումը որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 10, էջ 495-505:

16. **Ամիրյան Ա. Ս.** Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրաիրավական լիազորությունները ՀՀ դատական իշխանության անկախության ապահովման ոլորտում// Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, N 13:

17.**Մուրադյան Պ., Գրիգորյան Մ.** Մարզային գրադարանների զարգացման միտումները, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2022, N 13:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ամիրխանյան Սամվել Գրիգորի*,
տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ *Հերգնյան Մարիամ Նորիկի*,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	041101.00.6 *Հաշվապահական հաշվառում և հարկում*	
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
	041101.00.7 *Հաշվապահական հաշվառում և հարկում*	
041101.01.7	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	Տնտեսագիտության մագիստրոս
	041201.00.6 *Ֆինանսներ*	
041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
	041201.00.7 *Ֆինանսներ*	
041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	Տնտեսագիտության մագիստրոս
	031101.00.6 *Տնտեսագիտություն*	
031101.01.6	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության բակալավր
	031101.00.7 *Տնտեսագիտություն*	
031101.01.7	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 95
Շրջանավարտների թիվը՝ 25

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1. Ընդունելությունը և ուսանողական համակազմը.

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ 2021-2022 ուսումնական տարում ընդունվել են 31 ուսանողներ, այդ թվում՝ բակալավրիատում 14, մագիստրատուրայում՝ 17 ուսանող, իսկ նախորդ տարում ընդունվել էր 27 դիմորդ:

Հաշվետու ժամանակաշրջանում տնտեսագիտական ֆակուլտետում արձանագրվել է ուսանողների հետևյալ շարժը.

- ✓ քոլեջներից և այլ բուհերից տնտեսագիտական ֆակուլտետ տեղափոխված ուսանողների թիվը նախորդ տարի կազմել է 7 ուսանող, հաշվետու ուսումնական տարում կազմում է 9 ուսանող,
- ✓ բանակ է զորակոչվել նախորդ տարի 7 ուսանող, հաշվետու ուսումնական տարում 2 ուսանող,
- ✓ ֆակուլտետից հեռացվել են 7 ուսանողներ, որոնցից 4-ը մագիստրատուրայից, 3-ը բակալավրիատից, իսկ նախորդ տարում հեռացվել էին 4 ուսանողներ,
- ✓ վերականգնվել են 8 անձանց ուսանողական իրավունքները, իսկ նախորդ տարում վերականգնվել է 2 ուսանող,
- ✓ այլ ֆակուլտետներից տնտեսագիտական ֆակուլտետ են տեղափոխվել 5 ուսանողներ, իսկ նախորդ տարում ֆակուլտետ են տեղափոխվել 3 ուսանողներ,
- ✓ հեռակա ուսուցման ֆակուլտետում ուսումը շարունակել է 3 ուսանող,
- ✓ ազատվել է 3 ուսանող:

2. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը և ուսումնական առաջադիմության արդյունքները.

2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում ֆակուլտետի առաջադիմությունը կազմել է 79,4%, որը նախորդ կիսամյակի համեմատությամբ աճել է 9,4%-ով: Այս ցուցանիշը բակալավրիատում աճել է՝ կազմելով 10,2%, սակայն մագիստրատուրայում նվազել է 3,1%-ով և կազմել՝ 54%:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները տոկոսներով (%)

	2020-2021 ուստարվա II կիսամյակ	2021-2022 ուստարվա I կիսամյակ	2021-2022 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2020-2021 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2021-2022 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Տնտեսագիտական ֆակուլտետ	82,7	70	79,4	-12,7	+9,4
Բակալավրիատ	84,6	75,8	86	-8,8	+10,2
Մագիստրատուրա	77	57,1	54	-19,9	-3,1

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները
Ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժնում

Տոկոսներով (%)

Կուրսը	2020-2021 ուստարվա II կիսամյակ	2021-2022 ուստարվա I կիսամյակ	2021-2022 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2020-2021 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2021-2022 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	100	100	100	0	0
Երկրորդ	71,4	64,3	91,7	-7,1	+27,4
Երրորդ	100	62,5	62,5	-37,5	0
Չորրորդ	-	85,7	-	-	-

Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսում ուսման առաջադիմությունն ինչպես հաշվետու ժամանակաշրջանում, այնպես էլ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կազմել է 100%:

Երկրորդ կուրսում առաջադիմությունը 2020-2021 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ նվազել է, իսկ հաշվետու ժամանակաշրջանի առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 27,4%-ով: Երրորդ կուրսում հաշվետու ժամանակաշրջանի երկու կիսամյակներում է ուսման առաջադիմությունը կազմել է 62,5%:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ բաժնում

Տոկոսներով (%)

Կուրսը	2020-2021 ուստարվա II կիսամյակ	2021-2022 ուստարվա I կիսամյակ	2021-2022 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2020-2021 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2021-2022 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	100	100	100	0	0
Երկրորդ	100	66,7	66,7	-33,3	0
Երրորդ	-	100	100	-	0
Չորրորդ	-	-	-	-	-

Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ մասնագիտության առաջին և երրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 100%, երկրորդ կուրսում առաջադիմությունը հաշվետու ժամանակաշրջանի առաջին կիսամյակի համեմատ չի փոխվել և կազմել է 66,7%:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները
Տնտեսագիտություն բաժնում

Տոկոսներով (%)

Կուրսը	2020-2021 ուստարվա II կիսամյակ	2021-2022 ուստարվա I կիսամյակ	2021-2022 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2020-2021 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2021-2022 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	66,7	100	100	+33,3	0
Երկրորդ	75	50	66,7	-25	+16,7
Երրորդ	50	100	100	+50	0
Չորրորդ	-	33,3	-	-	-

Տնտեսագիտություն մասնագիտության առաջին և երրորդ կուրսերում ուսման առաջադիմությունը կազմել է 100%, երկրորդ կուրսում ուսման առաջադիմությունը 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 25%-ով, իսկ հաշվետու ժամանակահատվածի առաջին կիսամյակի համեմատ աճել է 16,7%-ով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները
Մագիստրատուրայում

Տոկոսներով (%)

Բաժինը, կուրսը	2020-2021 ուստարվա II կիսամյակ	2021-2022 ուստարվա I կիսամյակ	2021-2022 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2020-2021 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2021-2022 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ I կուրս	67	40	40	-27	0
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ II կուրս	-	66,7	-	-	-
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ I կուրս	100	50	60	-50	+10
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ II կուրս	-	100	-	-	-
Տնտեսագիտություն I կուրս	67	40	67	-27	+27
Տնտեսագիտություն II կուրս	-	66,7	-	-	-

Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսում ուսման առաջադիմությունը 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է:

Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ մասնագիտության մագիստրատուրայի երկրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 66,7%:

Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսում ուսման առաջադիմությունը հաշվետու ժամանակահատվածի առաջին կիսամյակի համեմատ աճել է 10%-ով: Երկրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 100%:

Տնտեսագիտության մագիստրատուրայի առաջին կուրսում ուսման առաջադիմությունը 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 27%-ով, հաշվետու տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է՝ 27%-ով և կազմել՝ 67%: Երկրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 66,7%:

Տնտեսագիտական ֆակուլտետում հետևողականորեն արձանագրվում են ուսանողների հաճախումները: Ամենօրյա հաշվառման արդյունքում որոշ ուսանողներ ստացել են նկատողություն, խիստ նկատողություն, ինչպես նաև եղել են հեռացումներ բուհից: Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի 12 ուսանողներ ստացել են նկատողություն, 4 ուսանող՝ խիստ նկատողություն:

Լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների քաղաքացիական կրթությանը և առողջ ապրելակերպին, այդ թվում՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և այլ հարցերին: Ուսանողներին կրթական գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետում գործում է ուսումնական խորհրդատուների ծառայություն:

Ֆակուլտետի դեկանատը ուշադիր է նաև ուսանողների սոցիալական խնդիրների մասին ժամանակին բարձրացնելու հարցում՝ նրանց նյութապես աջակցելու նպատակով:

Բակալավրիատում և մագիստրատուրայում անվճար տեղերի առկայությունը խթանում է ուսանողների ակտիվությունը և նպաստում ուսման առաջադիմության բարձրացմանը: Տնտեսագիտական ֆակուլտետի սոցիալապես անապահով ընտանիքների բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներն օգտվում են պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերից: Բակալավրատի 21 և մագիստրատուրայի 13 ուսանողներ սովորում են պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, իսկ մեկ ուսանող սովորում է ԳՊՀ միջոցների հաշվին:

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողներն օգտվում են ներքոհիշյալ հովանավոր կազմակերպությունների կրթաթոշակներից.

Տնտեսագիտական ֆակուլտետի
կրթաթոշակառու ուսանողների թիվը

Հովանավոր կազմակերպություններ	Ուսանողների թիվը
Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	14
ԳՊՀ կողմից կատարված ուսման վարձի զեղչեր	13
Ընտանիքի անապահովության համակարգում ընդգրկված ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում պետբյուջեից	8
«Ամքոր» բարեգործական հիմնադրամ	3
Գավառ խոշորացված համայնք	2
Հալեպ Հայրենակցական բարեսիրական ՀԿ	1
Արցախի կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն	1
Հայ կրթական հիմնարկություն	1
Ընդամենը	43

3. Վիճակագրական տվյալներ ծրագրի ավարտից հետո շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ.

Տնտեսագիտական ֆակուլտետում գործում և շարունակաբար նոր համագործակցային կապեր են հաստատվում գործատուների հետ, որոնց նպատակը շրջանավարտների մասնագիտական հմտությունների կատարելագործումը և աշխատաշուկայում նրանց մրցունակության ապահովումն է, որի արդյունքում համալրվում է շրջանավարտների մասին տեղեկատվական բազան:

2021թ.-ին ֆինանսներ մասնագիտության գծով բակալավրիատի և մագիստրատուրայի 15 շրջանավարտներից աշխատում են 10-ը, որոնցից 9-ը՝ մասնագիտությամբ: Հաշվապահական հաշվառում մասնագիտության 9 շրջանավարտներից աշխատում են 4-ը, որոնցից 4-ը՝ մասնագիտությամբ: Տնտեսագիտություն մասնագիտությամբ 15 շրջանավարտներից աշխատում են 9-ը, որոնցից 9-ը՝ մասնագիտությամբ: Այսպիսով, 2021թ.-ի շրջանավարտների 64 տոկոսն աշխատում է, ընդ որում, նրանցից 91 տոկոսը՝ մասնագիտությամբ:

2022թ.-ին ֆինանսներ մասնագիտության գծով բակալավրիատի և մագիստրատուրայի 14 շրջանավարտներից աշխատում են 6-ը, որոնցից 3-ը՝ մասնագիտությամբ: Հաշվապահական հաշվառում մասնագիտության 4 շրջանավարտներից աշխատում են 3-ը, որոնցից 2-ը՝ մասնագիտությամբ: Տնտեսագիտություն մասնագիտությամբ 7 շրջանավարտներից աշխատում են 6-ը, որոնցից 3-ը՝ մասնագիտությամբ:

Այսպիսով, 2022թ.-ի շրջանավարտների 60 տոկոսն աշխատում է, ընդ որում, նրանցից 53 տոկոսը՝ մասնագիտությամբ:

Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Շրջանավարտները՝ ըստ մասնագիտությունների	Ֆինանսներ /ըստ ոլորտի/, Ֆինանսներ, դրամաշրջանա-ռություն և վարկ		Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/, Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/		Տնտեսագիտություն	
	2021թ.	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.	2022թ.
Բակալավրիատի շրջանավարտ	12	8	4	-	11	4
Մագիստրատուրայի շրջանավարտ	3	6	2	4	4	3
Նրանցից աշխատում են /այդ թվում՝ իրենց մասնագիտությամբ/	10/9/	6/3/	4/3/	3/2/	9/9/	6/3/

Տնտեսագիտական ֆակուլտետում պարբերաբար կազմակերպվում են դասալսումներ, իսկ ուսանողների շրջանում հարցումներ՝ դասախոսների դասավանդման որակից և կրթական միջավայրից բավարարվածության վերաբերյալ: Հարցումների արդյունքները քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետի խորհրդի նիստերում, աշխատանքներ են տարվում գործողությունների ծրագրում դրանք ներառելու և նկատված թերությունները

շտկելու ուղղությամբ, ապա կատարվում է բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի ուսումնական պլանների բարելավում:

Ֆակուլտետում կարևորվում է համալսարանի որակի ապահովման բաժնի հետ շրջանավարտների գիտելիքներից և կարողություններից գործատուների բավարարվածության վերաբերյալ հարցումների անցկացումը, որը նպաստում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստմանը: Այս առումով, բավականաչափ նկատելի է շրջանավարտների միավորման գործունեության դերը:

4. Մասնագիտական կրթական ծրագրերի փոփոխությունները, դասավանդման և գնահատման մեթոդների արդիականացումը.

Մասնագիտական կրթական ծրագրերը վերանայվում և արդիականացվում են՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Ֆակուլտետում իրականացվող մասնագրերը բովանդակում են ՄԿԾ-ի նպատակներն ու խնդիրները, ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաները, քարտեզագրված են ՄԿԾ-ների, դասընթացների և թեմաների վերջնարդյունքները: Ուսումնառության վերջնարդյունքները մշակելիս՝ հաշվի են առնվել որակավորումների ազգային և ոլորտային շրջանակները, աշխատաշուկայի տարածաշրջանային զարգացումները:

Կրթական ծրագրերում բարելավման փոփոխություններն իրականացնելիս՝ հաշվի են առնվել դասախոսների, ուսանողների, շրջանավարտների կարծիքները: Վերանայվել են դասընթացները, կատարվել են որոշ առարկաների կիսամյակային տեղաշարժեր:

2021-2022 ուսումնական տարվա աշխատանքային և ուսումնական պլաններում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

ելնելով այն հանգամանքից, որ «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի 6-րդ կիսամյակում ներառված «Տնտեսական գործունեության ծրագրավորում» դասընթացի լիարժեք յուրացման համար ուսանողներին անհրաժեշտ են գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ նաև «Մարքեթինգի հիմունքներ» դասընթացի վերաբերյալ, անհրաժեշտություն առաջացավ «Մարքեթինգի հիմունքներ» դասընթացը /ընդամենը 56 ժամ, 3 կրեդիտ/ 6-րդ կիսամյակից տեղափոխել 4-րդ կիսամյակ: Փոխարենը «Կոմերցիայի հիմունքներ» դասընթացը 4-րդ կիսամյակից տողափոխվեց 6-րդ կիսամյակ:

Նշված փոփոխությունները արտացոլվել են նաև 2021-2022 ուստարվա «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրի 2-րդ կուրսի աշխատանքային պլանում:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների, գիտելիքների գնահատման ձևերի ու չափանիշների շարունակական բարելավումը մշտապես գտնվում է դասախոսների ուշադրության կենտրոնում:

Դասախոսությունների, գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ ակտիվորեն ու արդյունավետ են օգտագործվում համալսարանում առկա գտնվող և տնտեսագիտական ֆակուլտետում վերջին տարիներին ձևավորված նոր լսարանների հնարավորությունները:

Այդ տեխնոլոգիաների կիրառումը թույլ տվեց անխափան կազմակերպել դասընթացները, որի արդյունքում ուսանողական կազմը հիմնականում կարողացավ հասնել նախատեսված վերջնարդյունքներին և ձևակերպված նպատակներին:

Համալսարանում կարևորվել էր դասընթացների դասախոսությունների և գործնական պարապմունքների միջև դասաժամերի արդյունավետ վերաբաշխումը, ինչի արդյունքում դասախոսները սեմինար և գործնական պարապմունքների ժամանակ սկսեցին կիրառել դասավանդման նոր մեթոդներ, որոնց միտումն է բարելավել ուսանողների պրակտիկ գիտելիքները (մասնագիտական տեսանյութերի ցուցադրում, քննարկում, համադրում տեսական նյութի հետ):

Դասախոսները արդյունավետ օգտագործում են նաև համացանցի ընձեռած հնարավորությունները՝ ուսանողների գործնական հմտությունները զարգացնելու նպատակով: Այս տեսանկյունից ուսանողները տարբեր դասընթացների շրջանակներում օգտվում են «**miros**», «**mindmup**» համակարգերից, որոնց արդյունքում համակարգչի վրա ստանում են տվյալ օրվա թեմայի ամփոփ պատկերը՝ տպավորիչ գծապատկերների միջոցով՝ միաժամանակ հարստացնելով իրենց գործնական և համակարգչային հմտությունները:

Ամբիոնի դասախոսները միջոցներ են ձեռնարկում նաև ուսանողների գիտելիքների գնահատման ձևերի ու չափանիշների շարունակական բարելավման և նոր մեթոդների մշակման ուղղությամբ: Այս տեսանկյունից նորույթ է գիտելիքների գնահատումը «**master-test**» համակարգի միջոցով, որը կիրառվում է դասախոսներ Գայանե Խաչատրյանի և Ռուզաննա Ասատրյանի կողմից: Առաջիկայում այն կկիրառվի նաև մյուս դասախոսների կողմից:

Դասախոսությունների և սեմինար-գործնական պարապմունքների անցկացման մեթոդների բարելավումը նպաստում է նաև ինչպես թեմայի, այնպես էլ առարկայի վերջնարդյունքների ապահովմանը: Պրակտիկան ցույց է տալիս, որ մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների քարտեզագրման հիմքը ավելի ամուր է դառնում վերոնշյալ գործընթացների արդյունավետ իրականացման պայմաններում:

5. Ուսումնագիտական ռեսուրսները և օժանդակ ծառայությունները.

Տնտեսագիտական ֆակուլտետում կարևորվում է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովումը, ուսումնամեթոդական բազայի բարելավումը: Ուսումնական տարվա սկզբին, ուսումնական գործընթացին ինտեգրելու նպատակով առաջին կուրսեցիներին տրվում է խորհրդատվություն՝ ԳՊՀ էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու և այլ հարցերի վերաբերյալ:

2021-2022 ուսումնական տարում զգալի աշխատանքներ են կատարվել դասախոսների կողմից ուսուցման մեթոդների բազմազանեցման ու արդիականացման ուղղությամբ: ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի, օգտակար համացանցային կայքերի հնարավորությունների օգտագործմամբ ուսումնական գործընթացը դարձավ ավելի հետաքրքիր և արդյունավետ: Ելնելով դասընթացների բնույթից և առանձնահատկություններից՝ դասախոսների կողմից կիրառվել են դասավանդման տարբեր ձևեր ու մեթոդներ: Ուսանողների գիտելիքները ստուգելու և գնահատելու նպատակով պրոֆեսորադասախոսական կազմը կիրառել է «exam.gsu.am» ԳՊՀ էլեկտրոնային քննական համակարգը: Ուսումնառության արդի մեթոդների կիրառման գործընթացում հաշվի են առնվել ուսանողների նախասիրությունները, հետաքրքրությունների շրջանակը: Կիրառվող մեթոդների արդյունավետությունը գնահատվել է ուսանողների շրջանում պարբերաբար

իրականացվող հարցումներով, որոնց արդյունքները և դրանց վերլուծությունները քննարկվել են ամբիոնների և ֆակուլտետի խորհրդի նիստերում:

Տնտեսագիտական ֆակուլտետում մշտապես քննարկվել են նաև ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից առկա և առցանց դասընթացների որակի վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները:

Ուսանողների կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի առնելով, մշակվել է բարելավման գործիքակազմ՝ միտված դասավանդման որակի բարձրացմանը:

Ֆակուլտետն ունի կայուն պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որն իրականացնում է որակյալ գիտամանկավարժական գործունեություն: Ֆակուլտետի ամբիոններում դասավանդում են 31 դասախոսներ, այդ թվում՝ գիտությունների 3 դոկտոր և 12 թեկնածու: 2021-2022 ուսումնական տարում ֆակուլտետի դասախոսները մասնակցել են բուհի ամենամյա 25-րդ գիտաժողովին, ներկայացրել են 31 հոդվածներ, իսկ նախորդ տարի ներկայացվել էր 11 հոդված:

Տնտեսագիտական ֆակուլտետի առանցքային խնդիրներից է պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական և մանկավարժական որակների շարունակական բարելավումը և այդ նպատակով վերապատրաստումների իրականացումը:

ԳՊՀ Կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Սահակյանը մասնակցեց Չեչնիայի Հանրապետության մայրաքաղաք Գրոզնիում ս. թ. հուլիսի 16-ից 18-ը կայացած միջազգային երրորդ գիտաժողովին՝ «Կովկասը Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում. պատմամշակութային ժառանգության պահպանման և բացառիկ օբյեկտների վերականգնման հիմնախնդիրները» խորագրով: Պարոն Սահակյանը Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի պրոռեկտոր, տնտեսական գիտությունների դոկտոր Ռուստամ Սալգիրիևի հետ համահեղինակությամբ ներկայացրեց զեկուցում՝ նվիրված մշակութային կոթողներին որպես ազգային ինքնության խորհրդանիշների՝ պատմության և արդիականության տեսանկյուններից, դրանց արժեքին՝ անցյալը ներկային ու ապագային շաղկապելու, սոցիալ-տնտեսական բացառիկ նշանակության և օգտակարության առումներով: Արմեն Սահակյանը բովանդակալից շնորհանդեսի և հետաքրքիր տեսաֆիլմի միջոցով ներկայացրեց հայկական պատմամշակութային կոթողները՝ Գառնիի հեթանոսական տաճարը, Գեղարդի վանական համալիրը, Նորավանքը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համալիրը, Զվարթնոցը, ինչպես նաև անդրադարձավ Հայաստանի Հանրապետությունում եզդիների էթնոմշակութային խորհրդանիշներին:

Գիտաժողովին ներկա էին Գավառի պետական համալսարանի ուսանողները, ովքեր այս օրերին մասնակցում են Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի կազմակերպած «Ամառային համալսարան» ծրագրին:

6.Որակի ապահովման գործընթացը.

Տնտեսագիտական ֆակուլտետում կրթության որակի ապահովման գործընթացում հաշվի ենք առնում որակի եվրոպական չափանիշները, ինչպես նաև արտաքին փորձագետների և ուսանողների կողմից բարձրացված խնդիրները: Որակի ապահովման

բաժինը, պարբերաբար իրականացնելով հարցումներ, արդյունքները ներկայացնում է տնտեսագիտական ֆակուլտետ: Հարցումների արդյունքում բացահայտված խնդիրները քննարկվում են ֆակուլտետի խորհրդում, ապա ընդունվում են համապատասխան որոշումներ:

Դասավանդողների շրջանում իրականացված հարցումների շնորհիվ բացահայտվում են նրանց կարիքները: Այնուհետև ամփոփելով և վերլուծելով արդյունքները, կատարվում են եզրահանգումներ, ձեռնարկվում են համապատասխան միջոցներ՝ դրանց բարելավման ուղղությամբ:

Նշենք, որ ուսանողների դիտողությունները վերաբերվում են դասապրոցեսն ավելի արդյունավետ դարձնելուն, ինտերակտիվ զանազան մեթոդներ կիրառելուն, կրթության բովանդակությունը տնտեսության զարգացման առաջնահերթություններին համապատասխանեցնելուն:

Ֆակուլտետում կրթության որակի և դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատման կարևոր գործիք են դասալսումները: Այդ գործընթացում նկատվել են թերություններ՝ կարիք կա այն համակարգելու և լսումների արդյունքներին արդյունավետ ընթացք տալու:

Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների շրջանում մեթոդական, խորհրդատվական աշխատանքներ են իրականացվում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի որակի բարելավման ուղղությամբ՝ այդ գործընթացներում ներգրավելով տնտեսության իրական հատվածի մասնակիցներին:

7. Տնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարման և ֆինանսների», «Հաշվապահական հաշվառման» ամբիոններում իրականացվող գիտական հետազոտությունների ուղղությունները. համագործակցային կապերը և դրանց ակտիվացումը.

- ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունը և դրա բարելավման ուղիները,
- ՀՀ-ում տարածքային և տեղական համաչափ զարգացման ապահովման հիմնահարցերը,
- ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները,
- Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի կազմակերպման հիմունքների և մեթոդոլոգիայի կատարելագործման հիմնահարցերը,
- Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակման և կատարելագործման հիմնախնդիրները,
- Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման ոլորտում հաշվապահական հաշվառման և վերլուծության մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման խնդիրները և կատարելագործման հնարավորությունները:

Տնտեսագիտական ֆակուլտետը հետազոտական գործունեության ոլորտում անդամակցում է միջազգային ծրագրերի, որոնցից կարևոր նշանակություն ունի Եվրոպական

միության /ԵՄ/ «ERASMUS+REFINE. Հայաստանի և Մոլդովայի մագիստրոսական ծրագրերի բարեփոխում՝ «Ֆինանսներ» մասնագիտության ոլորտում» ծրագիրը: ԵՄ «ERASMUS+REFINE» ծրագրի օգնությամբ նկատելիորեն բարելավվել է «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտության մագիստրատուրայի ծրագրային փաթեթը՝ հաշվի առնելով եվրոպական գործընկեր բուհերի հաջողված փորձը, տնտեսական զարգացման գործընթացում բիզնեսի և հանրային հատվածի տարբեր ոլորտների առաջնահերթությունները: Ծրագրի բարեփոխումները պլանավորվել և իրականացվել են՝ ելնելով արդի միջազգային տնտեսական զարգացման միտումներից և աշխատաշուկայի պահանջներից: Բարելավված մագիստրոսական ծրագիրը որակական ցուցանիշներով համադրելի է միջազգային չափանիշներին, ինչը դրական ազդեցություն ունի բուհի միջազգայանացման գործընթացի վրա:

Տնտեսագիտական ֆակուլտետը համագործակցել է նաև Եվրոպական միության «ERASMUS+SMART. Համալսարան-ձեռնարկատիրություն համագործակցության և ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների ամրապնդում ՍՄԱՐԹ կենտրոնների միջոցով» ծրագրի շրջանակներում կազմակերպված ԳՊՀ «Էրազմուս +ՍՄԱՐԹ» ամառային դպրոցին:

Ֆակուլտետի դասախոսներն ակտիվորեն համագործակցելով գիտահետազոտական գործունեություն ծավալող ՀՀ և արտասահմանյան կազմակերպությունների և կառույցների հետ՝ համատեղ իրականացնում են գիտական քննարկումներ, առկա և առցանց սեմինարներ, միջոցառումներ, համահեղինակությամբ տպագրում գիտական հոդվածներ:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի բարելավմանը նպաստում են համագործակցային կապերը հայաստանյան բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, մարզպետարանի, համայնքապետարանների, Հայաստանի գործատուների հանրապետական միության, Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի, առանձին ձեռնարկությունների հետ՝ որպես գործատու կազմակերպություններ: Նրանց հետ համատեղ քննարկումներում արված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնվում կրթական ծրագրերում փոփոխություններ կատարելիս:

Ուսանողների պրակտիկ գիտելիքների ամրապնդմանը նպաստում է Հայաստանի Հանրապետության տարբեր արտադրական ձեռնարկությունների, ընկերությունների հետ համագործակցությունը, մասնավորապես, այդ հաստատություններում մեկօրյա արտադրական պրակտիկաների կազմակերպումը:

Տնտեսագիտական ֆակուլտետի 2021-2022 ուստարվա գործունեության «SWOT» վերլուծությունը՝ ըստ որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների

Տնտեսագիտական ֆակուլտետի զարգացման հայեցակագի իրականացման գործողությունների ծրագրում ամրագրվում են արդյունավետության ցուցիչները, որոնց կատարողականը ներկայացվում է վերլուծությունների և հաշվետվությունների միջոցով: Կատարվում է իրականացված աշխատանքների գնահատում, կանխատեսված արդյունավետության ցուցիչների և դրանց կատարման ցուցանիշների համադրում: Այս գործընթացն իրականացնելիս կարևորվում է «SWOT» վերլուծության դերն ու նշանակությունը, որի արդյունքում բացահայտվում են ֆակուլտետի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները:

Ուժեղ կողմեր	Հնարավորություններ
1. Մասնագիտական, մանկավարժական, անհրաժեշտ որակներ ունեցող, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների տիրապետող որակյալ դասախոսական կազմի առկայություն, որն ունի դասավանդման և ժամանակակից մեթոդների կիրառման կարողություններ ու փորձ: 2. Փորձառու դասախոսներ, որոնք տնտեսության տարբեր ոլորտների /բանկեր, ապահովագրական ընկերություններ, բիզնեսին աջակից կառույցներ, միջազգային կազմակերպություններ/ պրակտիկ աշխատողներ են: 3. Երիտասարդ դասախոսների և փորձառու մենթոր դասախոսների միջև առկա կայուն համագործակցային կապ, որը նպաստում է երիտասարդ, սկսնակ դասավանդողների մասնագիտական կարողությունների զարգացմանը, հանդիսանում փորձի փոխանակման կարևոր միջոց: **4.** Շրջանավարտների հետ հետադարձ կապերի առկայություն: **5.** Աշխատաշուկայում Ֆակուլտետի շրջանավարտների ներգրավվածություն (Մագիստրատուրայի և բակալավրիատի 2022թ.-ի շրջանավարտների 60 տոկոսը աշխատում է, ընդ որում, նրանցից 53 տոկոսը՝	1. Շահակիցների տեսլականների ուսումնասիրություն, նպատակների վերհանում և գործողությունների իրականացում: 2. «Համալսարան–դպրոց» կապերի ընդլայնում, դպրոցների մանկավարժական խորհուրդների հետ գործընկերային հարաբերությունների ակտիվացում: 3. Աշակերտների շրջանում ֆակուլտետի մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրություն առաջացնող փոխադարձ հանդիպումների և մասնագիտական կողմնորոշմանը միտված տարաբնույթ միջոցառումների կազմակերպում: 4. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, դպրոցների և քոլեջների հետ համագործակցության կապերի ընդլայնում: 5. Ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում՝ ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական առաջնահերթությունների և զարգացման առանձնակատկությունների հաշվառմամբ: 6. Համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի ծրագրերի

մասնագիտությամբ):
6. Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով եվրոպական շարժունության ծրագրերին ուսանողների և դասախոսների ակտիվ մասնակցություն:
7. Ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ կրթական միջավայր:
8. ՄԿԾ-ներին համապատասխան ուսումնամեթոդա-կան բազայով ապահովվածություն, որը պարբերաբար թարմացվում և համալրվում է պահանջվող ռեսուրսներով:
9. Մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխանող առարկայական ծրագրեր, որտեղ վերջնարդյունքները սահմանված են ըստ ընդհանուր դասընթացի և յուրաքանչյուր թեմայի:
10. Սերտ համագործակցություն Հայաստանի գործատուների հանրապետական միության, հաշվապահական և աուդիտորական ընկերությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և մասնագիտական կազմակերպությունների հետ:
11. Արտաքին շահակիցների շահագրգիռ, մասնակցություն ՄԿԾ-ների արդիականացման և բարելավման գործընթացին:
12. Աշխատաշուկայի պահանջների հետազոտություն, արդյունքների վերլուծություն, կրթական վերջնարդյունքներում դրանց ներառում:
13. Անվճար կրթություն ստանալու հնարավորություններ՝ պետբյուջեից, անհատ ներդրողներից, հիմնադրամներից, համալսարանի միջոցների հաշվին և այլ աղբյուրներից:
14. Արտակարգ իրավիճակներում ուսանողների, դասախոսների և դեկանատի աշխատակիցների միջև առցանց հաղորդակցության ապահովում և համապատասխան նյութատեխնիկական ռեսուրսների առկայություն:
15. Ուսումնական գործընթացի կազմակերպման հենանիշային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում /բենչմարքինգի իրականացում/, առաջավոր փորձի կիրառում:
7. Հանրապետությունում գործող տնտեսական կազմակերպությունների և ընկերությունների հետ ակտիվ համագործակցություն, նրանց հետ փորձի փոխանակման ապահովում, փոխըմբռնման նոր հուշագրերի կնքում և իրականացում:
8. ԵՄ «Erasmus+» և միջազգային ակադեմիական շարժունության այլ ծրագրերի շրջանակներում արտերկրում դասախոսների վերապատրաստման և ուսանողների կրթության կազմակերպում:
9. Դասախոսների մանկավարժական և մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում:
10. Ուսումնամեթոդական բազայի ամրապնդման նպատակով արտաքին ֆինանսական դրամաշնորհատու /դոնոր/ կազմակերպությունների ներգրավում:
11. Գավառի պետական համալսարանի Համալսարան-գործատու համագործակ-ցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեության ակտիվացում:
12. Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների օգտագործում մարզի սոցիալ- տնտեսական հիմնախնդիրները լուծելիս:
13. Գիտահետազոտական գործունեության ոլորտում հանրապետական և արտերկրի առաջատար գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների, ձեռնարկությունների, գործարար համայնքի, այլ կառույցների հետ համագործակցային կապերի ընդլայնում, միջազգային հետազոտական նոր նախագծերին մասնակցություն:
14. Որակյալ ասպիրանտական կրթության համար անհրաժեշտ ակադեմիական,

թափանցիկություն, ակադեմիական ազնիվ և հակակոռուպցիոն միջավայրի, հաշվետվողականության հստակ գործիքակազմի առկայություն:	հետազոտական միջավայրի, ժամանակակից նյութատեխնիկական բազայի ապահովում:

Թույլ կողմեր	Վտանգներ
1. Գիտահետազոտական գործունեության ժամանակակից մեթոդների դանդաղ կիրառում, ուսանողների կողմից հանրապետական և միջազգային գիտական ծրագրերին մասնակցության պակաս: Այդ նպատակներով ֆոնդահայթայթման գործընթացների պակաս: 2. Շրջանավարտների աշխատանքի տեղավորման խնդիրներ՝ մարզում արդյունաբերական ձեռնարկությունների, արտադրող, վերամշակող և այլ գործարանների բացակայության պատճառով: 3.Ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով ռեսուրսներից հստակ և համակարգված օգտվելու պակաս:	1. Դիմորդների քանակի նվազում՝ կապված սոցիալ-ժողովրդագրական բացասական գործընթացների, ՀՀ-ից և Գեղարքունիքի տարածաշրջանից արտագաղթի ծավալների աճի հետ: 2. Ուսանողական համակազմի շարունակական նվազում՝ պայմանավորված արտագնա աշխատանքով: 3. Աշխատատեղերի պակաս, գործազրկության բարձր մակարդակ: 4. Մագիստրոսական կրթություն ստանալու մոտիվացիայի անկում: 5. Արտակարգ և այլ հատուկ ռեժիմներով պայմանավորված՝ վտանգներ: 6. Հանրակրթության ցածր մակարդակ:

Ֆակուլտետի շրջանավարտները.

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են բակալավրիատի 12 և մագիստրատուրայի 13 ուսանողներ:

Ամփոփիչ ատեստավորմանը բակալավրիատի Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտությամբ մասնակցել է 8 ուսանող, Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ մասնագիտությամբ՝ շրջանավարտներ չեն եղել, Տնտեսագիտություն մասնագիտությամբ՝ 4 ուսանող:

Հաշվետու տարում բակալավրիատի Ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժինն ավարտեց 8 ուսանող, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 6 ուսանող:

Տնտեսագիտություն բաժինն ավարտեց 4 ուսանող այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 2 ուսանող:

Մագիստրատուրան ավարտել են 13 մագիստրոսներ, այդ թվում՝ Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ մասնագիտությամբ՝ 6 ուսանող, որոնցից 4-ը գերազանցության դիպլոմով, Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ մասնագիտությամբ՝ 4 ուսանող, որոնցից 4-ը գերազանցության դիպլոմով, Տնտեսագիտություն մասնագիտությամբ՝ 3 ուսանող, որոնցից 2-ը գերազանցության դիպլոմով:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները հետևյալն են.

Բաժինը		Ուսանողների թիվը	A+	A	A-	B+	B	B-	C+	C	C-	F
Ֆինանսներ /ըստոլորտի/ /բակալավր/	Ավարտական աշխատանք	8	7							1		
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	6	3	1	2							
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստոլորտի/ /բակալավր/	Ավարտական աշխատանք	-										
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	4	-	4								
Տնտեսագիտություն /բակալավր/	Ավարտական աշխատանք	4	2					2				
Տնտեսագիտություն /մագիստրատուրա /	Մագիստրոսական թեզ	3	2			1						

Ամփոփիչ ատեստավորման առաջադիմությունն ըստ մասնագիտությունների հետևյալն է.

Բաժինը	Բակալավր	Մագիստրատուրա
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	100	-
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	-	100
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	-	-
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	-	100
Տնտեսագիտություն	100	-
Տնտեսագիտություն	-	100

Հանձնաժողովները կատարեցին իրենց պարտականությունները և միաժամանակ ներկայացրին հետագա աշխատանքները կատարելագործելու վերաբերյալ արժեքավոր առաջարկություններ:

Մագիստրատուրայի ուսանողներին հանձնարարված թեզերի թեմաները արդիական էին և բխում էին մասնագիտության ժամանակակից փոփոխություններից: Դրանք ներկայացված էին բուհում գործողող հստակ պահանջներով:

2022 թվականին ԳՊՀ երկու ասպիրանտ ավարտեցին ուսումը:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2021-2022 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից կատարված առաջարկությունների կենսագործման միջոցառումների պլան

Առաջարկություններ և դիտողություններ	Կուրս	Նպատակ	Գործողություն
Բակալավրիատ			
Աշխատանքներում իրականացված վերլուծությունների արդյունքները պարտադիր արտահայտել գրաֆիկական պատկերների միջոցով:	Ֆ4-րդ Տ4-րդ	Ուսանողը ձեռք է բերում գրաֆիկական պատկերներ ստեղծելու հմտություն:	Կազմակերպել ուսանողների և համապատասխան մասնագետների հետ հանդիպումներ:
Շնորհանդեսները կազմել հակիրճ՝ անդրադառնալով առաջարկությունները հիմնավարող փաստերին:	Ֆ4-րդ Տ4-րդ	Գիտական նյութը հակիրճ արտահայտելու կարողության զարգացում:	Գիտահետազոտական հմտություններ ձեռք բերելու վերաբերյալ սեմինարների լրացուցիչ պարապմունքների անցկացում:
Աշխատանքներ տանել ուսանողների կողմից բանավոր խոսքի հստակ, հակիրճ ձևակերպման ուղղությամբ:	Ֆ4-րդ Տ4-րդ	Բարելավել ուսանողների բանավոր խոսքը	Ուսանողների բանավոր խոսքը բարելավելու, սեմինար պարապմունքներին անկաշկանդ հանդես գալու հմտությունները զարգացնելու նպատակով՝ կիրառել բազմաբնույթ մեթոդներ, միաժամանակ պասիվ ուսանողներին ևս ներառել ակտիվ դասապրոցես:
Ավարտական աշխատանքներն ունենան թվով քիչ, բայց կոնկրետ ու հիմնավորված առաջարկություններ:	Ֆ4-րդ Տ4-րդ	Ուսանողը ձեռք բերի նորույթը հստակ ձևակերպելու կարողություն:	Պահանջել ավարտական աշխատանքների ղեկավարներից՝ ուսանողների մոտ ձևավորել գիտական առաջարկություն ներկայացնելու հմտություն:
Մագիստրատուրա			
Ուշադրություն դարձնել օրենքներ, իրավական ակտեր ընդունող մարմինների լիազորությունների շրջանակին և ժամկետներին:	ՄՖԴ 2-րդ	Տեղեկացվածություն տնտեսական ոլորտի օրենքների մասին:	Պահանջել դասախոսներից ուսումնառության ընթացքում խորությամբ պարզաբանել օրենքները:
Աշխատանքներում ներկայացնել և վերլուծել հնարավորինս թարմ և կազմակերպությունների կողմից հրապարակված թվային տվյալներ	ՄՖԴ 2-րդ	Թեզերում ներառվող դրույթները բովանդակալից ձևակերպելու կարողություն:	Բարձրացնել գործնական և սեմինար պարապմունքների արդյունավետությունը:
Հաշվի առնելով մագիստրոսական թեզերի ծավալները՝ հնարավորինս կրճատել դրանց տեսական մասերը:	ՄՖԴ 2-րդ	Կպահպանվի թեզերին ներկայացվող չափանիշները:	Աշխատանքի ընթացքում խմբագրել և հետևել ծավալներին:

Լուրջ ուշադրություն դարձնել ուսումնասիրվող կազմակերպության ցուցանիշների ավելի ընդարձակ և խորը ուսումնասիրմանը և կատարվող եզրահանգումներին:	ՄՖԴ 2-րդ	Հետազոտվող նյութը կդառնա ավելի մշակված, կարտացոլի իրական պատկերը:	Ցուցանիշները վերլուծելիս խորհրդակցել կազմակերպությունում աշխատող պատասխանատու և իրազեկ նեղ մասնագետների հետ:
Որոշ առաջարկություններ չեն բխում կատարված ուսումնասիրություններից, ուստի ցանկալի է ներառել այնպիսի առաջարկություններ, որոնք հիմնավորվել են աշխատանքում՝ հաշվարկների և համեմատական վերլուծությունների արդյունքում:	ՄՖԴ 2-րդ	Մագիստրոսկան թեզերի ուսումնասիրության թեմաները լինեն նպատակային:	Առաջարկությունները ձևակերպել խորը ուսումնասիրությունների, վերլուծությունների և հաճախ ուսումնասիրվող կազմակերպության մասնագետների հետ խորհրդակցելու արդյունքում:
Հանձնարարել ավելի նեղ թեմաներ, որպեսզի հնարավոր լինի ապահովել աշխատանքի բովանդակային ամբողջականությունը /օրինակ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արդյունավետությունը քննարկել տնտեսության 1 ոլորտի կտրվածքով/	ՄՖԴ 2-րդ	Ապահովել թեզի թեմայի խորը և արդյունավետ ուսումնասիրություն:	Օգտվել պոզիտիվային և նորմատիվային վերլուծության մեթոդներից՝ օգտագործելով հանրապետական և մարզային ցուցանիշները:
Ուշադրություն դարձնել ուսումնասիրվող մասնագիտական գրականությանը և կատարվող հղումներին՝ դարձնելով ավելի հստակ և կոնկրետ	ՄՖԴ 2-րդ	Ուսանողի մոտ գրականությունից օգտվելու հմտությունների ձևավորում:	Պահանջել գիտական ղեկավարից՝ ուսանողին ուղղորդել և ներկայացնել թեմային առնչվող ամենաթարմ մասնագիտական գրականությունը և համացանցային աղբյուրները:
Աշխատանքներում ներկայացնել և վերլուծել հնարավորինս թարմ և կազմակերպությունների կողմից հրապարակված թվային տվյալներ	ՄՏ2-րդ	Կբարձրացնի թեզի որակը	Ամուր կապ ուսումնասիրվող կազմակերպության հետ, այցեցելություններ, մասնագետների հետ հանդիպումներ, վերլուծություններ:
Հաշվի առնելով մագիստրոսական թեզերի ծավալները՝ հնարավորինս կրճատել դրանց տեսական մասերը	ՄՏ2-րդ	Կպահպանվի թեզերին ներկայացվող տեխնիկական չափանիշները:	Աշխատանքի ընթացքում խմբագրել և հետևել ծավալներին:
Լուրջ ուշադրություն դարձնել ուսումնասիրվող կազմակերպության ցուցանիշների ավելի ընդգրկուն և խորը ուսումնասիրմանը և կատարվող եզրահանգումներին	ՄՏ2-րդ	Հետազոտվող նյութը կդառնա ավելի մշակված, կարտացոլի իրական պատկերը:	Ցուցանիշները վերլուծելիս խորհրդակցել կազմակերպության նեղ մասնագետների հետ:

Բարելավել բիզնես պլանների ուսումնասիրության և դրանց վերաբերյալ կատարվող հետազոտությունների նկատմամբ մոտեցումները	ՄՏ2-րդ	Ուսանողը ավելի լայն պատկերացում կկազմի բիզնես պլանի մասին:	Արդյունավետ օգտագործել պրակտիկաների ընթացքում ուսումնասիրվող ցուցանիշները:
Ուշադրություն դարձնել ուսումնասիրվող մասնագիտական գրականությանը և կատարվող հղումներին՝ դարձնելով ավելի հստակ և կոնկրետ	ՄՏ2-րդ	Ուսանողը հետևի թեմային առնչվող նորություններին, ուսումնասիրի կատարված փոփոխությունները՝ հիմնավորելով թեմայի արդիականությունը	Պահանջել գիտական ղեկավարից՝ ուսանողին ուղղորդել և ներկայացնել թեմային առնչվող ամենաթարմ մասնագիտական գրականությունը և համացանցային աղբյուրները:
Մագիստրոսական թեզերը ավելի կշահեն, եթե աշխատանքներում ներկայացված առաջարկությունները լիարժեքորեն հիմնավորվեն աշխատանքում կատարված հաշվարկներով և մեջբերումներով:	ՄՀՀՀ-րդ	Ուսանողը կզարգացնի հաշվարկներ կատարելու հմտությունները	Բարձրացնել գործնական աշխատանքների արդյունավետությունը

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները և հանձնաժողովների նախագահների առաջարկություններն ու նկատառումները վերլուծվել և քննարկվել են «Կառավարման և ֆինանսների», «Հաշվապահական հաշվառման» ամբիոններում: Հանձնաժողովները ամբիոնների ուշադրությունը հրավիրել են ուսանողների կողմից գիտամեթոդական պահանջների կատարման և ավարտական աշխատանքները ներկայացնելու հմտությունների զարգացման վրա:

Տնտեսագիտական ֆակուլտետի հետագա զարգացման ծրագրերը իրագործելու համար ֆակուլտետի խորհուրդն իր աշխատանքները կուղղի ֆակուլտետում կրթության որակի բարձրացման, աշխատաշուկան բարձր որակավորում ունեցող և մրցունակ մասնագետներով ապահովելու խնդրի ավելի արդյունավետ լուծմանը:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1.1. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ դիմորդների ներգրավում, աշակերտներին մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցության նպատակով տնտեսագիտական մասնագիտությունների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում: Ուսանողների հավաքագրման մեխանիզմների կատարելագործում:

1.2. Տնտեսագիտական ֆակուլտետում ուսման որակի բարձր մշակույթ, նորարարություն, արդյունավետ ուսուցման և կրթական միջավայրի ապահովում: Ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական, քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպում:

Ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի ջանքերով կրթության բովանդակության հարստացում նորարարական տեխնոլոգիաների կիրառում, ուսումնական ռեսուրսների բազմազանեցում և արդիականացում:

1.3. Մասնագիտական կրթական ծրագրերի արդիականացում, դրանցում ներառված առարկայական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանեցում գործատուների պահանջներին: Շահեկիցների տեսլականից նպատակների, նպատակներից գործողությունների վերհանում /ՊԻԳԲ շրջափուլի կիրառմամբ/:

Նկատի ունենալ, որ կրթական և առարկայական ծրագրերը պետք է համապատասխանեն տրամադրվող որակավորումներին և կրթական աստիճանին, իսկ վերջնարդյունքները կարիք ունեն հստակեցման և տարանջատման:

1.4. Ուսուցման արդյունավետ մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում, կրթական վերջնարդյունքների ձեռքբերման, ուսուցման և գիտահետազոտական գործունեության զուգակցում, ուսանողների համակողմանի դաստիարակության ապահովում, մասնագիտական գործունեության նախապատրաստում:

1.5. Գեղարքունիքի մարզի կրթական կարիքների բացահայտում, աշխատաշուկայի ուսումնասիրություն, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստում: ՀՀ Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունների հաշվառմամբ դասախոսների և մագիստրոսների գիտահետազոտական գործունեության ուղղորդում:

1.6. Ուսումնական գործընթացներում կիրառվող կրթական նոր տեխնոլոգիաների, առցանց գործիքների շարունակական համալրում ու թարմացում, հեռավար ուսուցման ոլորտում եվրոպական առաջատար բուհերի փորձի ուսումնասիրում և տեղայնացում:

1.7. Մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման գործընթացում հետազոտական կարողությունների զարգացում, գիտական հոդվածների որակի և հրապարակումների բարելավում: Միջազգային գիտահետազոտական հարթակներում գրանցում:

1.8. Վերջնարդյունքահեն մասնագիտական կրթական ծրագրերի բարելավում և իրականացում, հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները Եվրոպական համընդանուր և ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակները /ՊԻԳԲ շրջափուլի կիրառմամբ/:

1.9. Կրթության որակի ապահովման և գործող ռիսկերը չեզոքացնելու նպատակով բարելավել մշտադիտարկման մեխանիզմները՝ մշակված ցուցիչներով, որը ավելի չափելի կդարձնի իրավիճակային գնահատումները:

1.10. Ասպիրանտական որակյալ կրթության ապահովում:

1.11.Գիտահետազոտական գործընթացներում ուսանողներին ինտեգրում, գիտահետազոտական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջավայրի ապահովում: Հետազոտական գործունեության ժամանակակից մեթոդների կիրառում,

համակարգված պլանավորում և իրականացում, կրթության և հետազոտության կապի ամրապնդում:
1.12. Ուսանողների ակտիվ մասնակցության ապահովում ԳՊՀ իրականացվող միջազգային շարժունության ծրագրերին:
1.13. Ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով ուսումնական, տեղեկատվական ռեսուրսներից արդյունավետ օգտվելու հմտությունների զարգացում, արտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման արդյունավետության բարձրացում:
1.14. Սովորողների հաղորդակցման և կազմակերպական ունակությունների զարգացում, շարունակական կրթության միջոցով անընդհատ ինքնակատարելագործման և ինքնաիրացման մշակույթի արմատավորում:
1.15. Ամփոփիչ ատեստավորման գործընթացի բարելավում, սովորողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքների և մասնագիտական կարողությունների օբյեկտիվ գնահատում:
1.16. Հեռակա ուսուցման համակարգում տնտեսագիտական կրթության որակի բարձրացում:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2.1.ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, դպրոցների և քոլեջների հետ համագործակցային կապերի ընդլայնում:
2.2.Ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի /որպես ուսանողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցի/, ուսանողական գիտական ընկերության գործունեության ակտիվացում, «Տնտեսագետների ակումբ»-ի և դրանց գործունեության արդյունավետության բարձրացում:
2.3.Ուժեղացնել կապը ուսանողական գիտական ընկերության և ամբիոնների միջև, մշակել միջոցառումներ՝ այն համակարգված դարձնելու, գիտահետազոտական աշխատանքներում ուսանողներին ներգրավելու համար, ՈԻԳ-ի համար ունենալ հաստատված հոդվածների թեմաներ:
2.4.Ուսանողների սոցիալական կարիքների բացահայտում, անձնական գործերի թղթային և էլեկտրոնային բազայի համալրում, հասցեագրված սոցիալական օժանդակության ծրագրերի իրականացում:
2.5.Ուսանողների ռազմահայրենասիրական, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական գեղագիտական դաստիարակությանը միտված միջոցառումների, ինտելեկտուալ մրցույթների կազմակերպում:
2.6.Ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների դաստիարակում, նրանց բարոյականային հատկանիշների զարգացում, ուսանողների շրջանում պատշաճ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորում:

3. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

3.1.Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների մասնագիտական, մանկավարժական որակների շարունակական բարելավում, վերապատրաստումների անցկացում:
3.2.Պրոֆեսորադասախոսական անձնակազմին ուսուցման առցանց գործիքակազմի, տեսակոնֆերանսային համակարգերի վերաբերյալ աջակցության տրամադրում:
3.3.Փորձառու և սկսնակ դասախոսների համագործակցության ապահովում, մենթորության համակարգի կատարելագործում, գիտական աստիճան չունեցող երիտասարդ դասախոսների մասնագիտական աճի խրախուսում, պրոֆեսորադասախոսական կազմի համալրում փորձառու մասնագետներով և երիտասարդ կադրերով:

3.4.Պրոֆեսորադասախոսական կազմի անդամների գիտահետազոտական աշխատանքների և գիտաժողովներին մասնակցության խրախուսում:
3.5.Տնտեսագիտական ֆակուլտետի ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում՝ ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնակատկությունների հաշվառմամբ:
3.6.Դասախոսների ակտիվ մասնակցության ապահովում միջազգային շարժունության ծրագրերին:
3.7.Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական ներուժի լիարժեք օգտագործում, դասախոսների ակտիվ մասնակցություն դրամաշնորհային ծրագրերին:

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

4.1.Հայաստանի Հանրապետության և զարգացած պետությունների առաջատար բուհերի, այլ կրթական, գիտական հաստատությունների, դաստիարակչական, մշակութային ուղղվածության կազմակերպությունների հետ արտաքին համագործակցային կապերի ընդլայնում:
4.2.Համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հենանիշային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում /բենչմարքինգի իրականացում/, առաջավոր փորձի կիրառում:
4.3.Զանգվածային լրատվության միջոցների և համացանցի միջոցով հանրությանը հավաստի տեղեկատվության պատշաճ մատուցում և գովազդում՝ ֆակուլտետում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ:
4.4.Գեղարքունիքի մարզի համայնքապետարանների հետ գործընկերային հարաբերությունների ակտիվացում՝ այնտեղ կազմակերպելով ուսումնական կամ արտադրական պրակտիկաները:
4.5.«Համալսարան–դպրոց» կապերի ընդլայնում, մանկավարժական խորհուրդների, հետ գործընկերային հարաբերությունների հաստատում: Աշակերտների շրջանում ֆակուլտետի մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրություն առաջացնող փոխադարձ հանդիպումների և մասնագիտական կողմնորոշմանը միտված տարաբնույթ միջոցառումների կազմակերպում:
4.6.Ֆակուլտետի շրջանավարտների միության գործունեության ակտիվացում, միջոցների ձեռնարկում հետադարձ կապն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:
4.7.Հանրապետությունում գործող տնտեսագիտական հաստատությունների և ընկերությունների հետ ակտիվ համագործակցության, նրանց հետ փորձի փոխանակման ապահովում, փոխըմբռնման նոր հուշագրերի կնքում և իրականացում:
4.8.Հայաստանի գործատուների հանրապետական միության, Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի հետ կապերի ակտիվացում, համատեղ ծրագրերի իրականացում:

5. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

5.1.Գործատուների ներգրավում կրթական ծրագրերի մշակման, դրանց փորձաքննության իրականացման և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացներում:
5.2.Աշխատաշուկայի կարիքների բացահայտում, արդյունքների վերլուծություն և դրանց ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացում:
5.3.Շահառուների շրջանում կրթական միջավայրի վերաբերյալ հարցումների անցկացում, կարիքների բացահայտում, թերությունների շտկում, գրավիչ ակադեմիական միջավայրի ստեղծում:
5.4.Տնտեսավարող սուբյեկտների հետ գործընկերային հարաբերությունների հաստատում, խորհրդակցությունների, քննարկումների, «կլոր սեղանների» անցկացում՝ ֆակուլտետում

կրթության որակը բարձրացնելու, աշխատաշուկան մրցունակ մասնագետներով համալրելու նպատակով:

6. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

6.1. Տնտեսագիտական ֆակուլտետում ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացում, հակակոռուպցիոն միջավայրի պահպանում, կոռուպցիայի ցանկացած դրսևորման բացառում:

6.2.ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների պահպանում և իրագործում, տնտեսագիտական ֆակուլտետի դասախոսների և ուսանողների կողմից:

6.3.ԳՊՀ էթիկայի կանոնների, բարեվարքության կանոնների պահանջների պահպանում և կատարում:

Սամվել Ամիրխանյան՝
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան,
Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՔՆՆԱՀՐԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԶՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՀՐԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ /ըստ ոլորտի/				
1-ին	5	-	1	100
2-րդ	9	-	8	64,3
3-րդ	5	-	4	62,5
4-րդ	6	-	6	85,7
Հաշվ. հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/				
1-ին	3	-	1	100
2-րդ	2	-	2	66,7
3-րդ	6	-	-	100
Տնտեսագիտություն				
1-ին	3	-	1	100
2-րդ	3	-	2	50
3-րդ	4	-	4	100
4-րդ	1	-	1	33,3
Ընդամենը	**47**	**-**	**30**	**75,8**
Մագիստրատուրա				
Ֆինանսներ, դրամաշրջ. և վարկ				
1-ին	2	1	1	40
2-րդ	4	-	3	66,7
Հաշվ. հաշվառում /ըստ ճյուղերի/				
1-ին	3	1	1	50
2-րդ	3	-	-	100
Տնտեսագիտություն				
1-ին	2	-	-	40
2-րդ	2	-	1	66,7
Ընդամենը	**16**	**2**	**6**	**57,1**

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան-ցիկների թիվը	Առաջադիմու-թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ /ըստ ոլորտի/				
1-ին	6	-	2	100
2-րդ	11	-	3	91,7
3-րդ	5	1	3	62,5
Հաշվ. հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/				
1-ին	3	-	-	100
2-րդ	2	-	1	66,7
3-րդ	5		1	100
Տնտեսագիտություն				
1-ին	3	-	2	100
2-րդ	4	-	1	66,7
3-րդ	4	-	4	100
Ընդամենը	**43**	**1**	**17**	**86**
Մագիստրատուրա				
Ֆինանսներ, դրամաշրջ. և վարկ				
1-ին	2	-	2	40
Հաշվ. հաշվառում /ըստ ճյուղերի/				
1-ին	3	-	1	60
Տնտեսագիտություն				
1-ին	2	-	2	67
Ընդամենը	**7**	**-**	**5**	**54**

2021/2022 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	**1**	**2**	**-**	**18**	**-**

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Սուքիասյան Սերգեյ Սպարտակի** - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2. **Հերգնյան Մարիամ Նորիկի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Հակոբ Հայկի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
4. **Խաչատրյան Գայանե Արտիկի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
5. **Հարությունյան Հարություն Սարգսի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
6. **Մուրադյան Գուրգեն Գևորգի -** ասիստենտ
7. **Բագոյան Սոնա Սահակի -** դասախոս
8. **Մարտիրոսյան Ռշտուն Հովակիմի -** դասախոս
9. **Հովեյան Աստղիկ Գագիկի -** դասախոս
10. **Քալոյան Մանվել Խաչիկի** - դասախոս
11. **Բաղինյան Արա Պավելի** – դասախոս
12. **Թադևոսյան Նարինե Հակոբի –** դասախոս
13. **Ավետիսյան Աստղիկ Սիմոնի -** դասախոս
14. **Ասատրյան Ռուզաննա Կարապետի –** ամբիոնի լաբորանտ, դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Սահակյան Արմեն Կոլյայի** - տնտեսագիտության թեկնածու, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. **Զաքոյան Հրաչյա Սամվելի,** տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Նալչաջյան Վահրամ Թորգոմի -** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Բաղդասարյան Արեգ Մերուժանի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
5. **Թորոսյան Դավիթ Լևոնի** – դասախոս
6. **Գևորգյան Կորյուն Սեդրակի** - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման հնարավորությունները ՀՀ- ում,
2. ՀՀ- ում տեղական և տարածքային համաչափ զարգացման ապահովման հիմնահարցերը,
3. ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	14	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հերգնյան Մ. Ն., Հովհաննիսյան Ա. Ա.,** «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի մարքեթինգային ռազմավարության բարելավման հնարավորությունները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 12 (25), 2022թ., էջ 214-224:
2. **Գևորգյան Կ. Ս.,** Մշակող արդյունաբերության դերը ՀՀ տնտեսության մեջ // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 12 (25), 2022թ., էջ 291-303 :
3. **Թորոսյան Դ.,** Զբոսաշրջիկներից ստացված առաջարկությունների և կատարված դիտարկումների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում բարեփոխումների առաջարկներ // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 13, 2022թ., հանձնված է տպագրության:
4. **Նալչաջյան Վ. Թ., Կարապետյան Հ. Ռ.,** ՀՀ աղքատ և ոչ աղքատ բնակչության եկամուտների անհավասարության գնահատումը «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, №1-2022, հատոր XIII, էջ 131-135:
5. **Խաչատրյան Հ. Հ, Վարդանյան Ն.,** Ագրոտուրիզմի զարգացման հնարավորությունները Հայաստանում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022թ., էջ 225-238:
6. **Саакян А. К., Ильичева И. Л.,** Роль СМИ в формировании имиджа региона // XVIII Международная научно-практическая конференции «Языковое образование: вызовы современности», 8-9 октября 2021 года, г. Чернигов, Украина, стр.36-47.
7. **Саакян А. К.,** Этнокультурные особенности езидов в Армении: социологический анализ// Готлибовские чтения. Востоковедение и регионоведение Азиатско-Тихоокеанскогорегиона в русле трансдисциплинарной регионологии: Материалы Международной научно-практической конференции посвященной 70-летию со дня рождения Олега Марковича Готлиба Институт филологии, иностранных языков и медиакоммуникации Иркутского государственного университета международная научно-практическая конференция «Готлибовские чтения 2021» 2021 г. Отв. Редактор Е.Ф.Серебренникова ИГУ 2021 стр. 45-54.
8. **Саакян А. К.,** Экологическая безопасность армянских ГЭС в новых условиях// Международная научная конференция ТИИМСХ, «Construction Mechanics, Hydraulics and Water Resources Engineering» (осенний сезон) (CONMECHYDRO 2021 AUTUMN SEASON).г. Ташкент, Узбекистан, 4-6 ноября 2021 г., стр. 34-41.
9. **Саакян А. К.,** Роль гуманизма в современном армянском обществе// Круглый стол «Проблемы гуманизма в современном мире», Монография, 18 ноября 2021 г., стр.8-16

10. **Саакян А. К., Саакян И. А.**, «Современные пути развития турбизнеса в Армении»// VI Международная научно-практическая конференция «Туризм и образовательные технологии в цифровой экономике», 25-26 ноября 2021 г., стр.14-21.

11. **Саакян А. К.,** «Национальный танец Говенд как способ самовыражения езидов» // 3-е заседание Проблемной группы «Этнокультурные исследования», 7 апреля 2022 г., стр.56-62.

12. **Саакян А. К.,** «Танец Говенд как этнокультурный код езидов» // 2-е заседание Проблемной группы «Этнокультурные исследования», 20 января 2022 г., стр.38-45

13. Саакян А. К., Уголовно-правовой и криминологический анализ нарушений уставных правил и взаимоотношений между военнослужащими при отсутствии между ними отношений подчиненности // Ереван 2021 Монография под редакцией И.А.Савченко ЕВН: Издаельство «МЕКНАРК», 202 стр., 2021 г.

14. **Саакян А. К.,** Религия и современная моложёжь// Сборник научных статьей 1 (6) «Проблемы социально-экономического развития», ЕФ РЭУ им. Г.В. Плеханова, Изд-во «ИНФОКОПИ», 2022 г., стр. 81-89.

15. **Саакян А. К.,** Обрядовые коды в картине мира езидов» // Сборник трудов программа VI Международной научно-практической конференции. Изд-во «СПЕКТОР», СПБ, 2022 г., стр. 11-18.

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ղուլոյան Հակոբ Մելսիկի
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ամիրխանյան Սամվել Գրիգորի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, *ԳՊՀ պրոֆեսոր*
2. **Մարգարյան Հասմիկ Անդրանիկի** - ասիստենտ
3. **Քոչարյան Գևորգ Արմենի** - դասախոս
4. **Հակոբյան Անահիտ Ալեքսանի** - դասախոս
5. **Ղաջոյան Կարինե Համլետի** – դասախոս
6. **Բաղալյան Անի Սամվելի** – դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Հակոբյան Արմեն Աշմատի**- տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
2. **Այրումյան Իրինա Գագիկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Առաքելյան Վալերի Հովհաննեսի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Մարկոսյան Սևակ Մեսրոպի** - տնտեսագիտության թեկնածու

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի կազմակերպման և մեթոդոլոգիայի կատարելագործման հիմնահարցերը,
2. Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակման և կատարելագործման հիմնախնդիրները,
3. Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեջ հաշվապահական հաշվառման և վերլուծության մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման խնդիրները և կատարելագործման հիմնական ուղղությունները:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ	Գյուտերի հայտ, արտոնագիր	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	**2**	-	**4**	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հակոբյան Ա. Ա., Գասպարյան Ա.,** Հաշվապահական հաշվառումը առևտրային բանկերում, խնդրագիրք, Երևան, 2022, էջ 104 :
2. **Հակոբյան Ա. Ա., Մարտիրոսյան Ա.,** Գյուղատնտեսության ապահովագրության ֆինանսական կայունության գնահատման բարելավումը, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես 12/ 2021, էջ 157-162:
3. **Հակոբյան Ա. Ա., Գրիգորյան Է.,** ՀՀ ֆինանսական վարքագծի վրա ազդող գործոնների փոխկապակցվածության գնահատումը «Տարածաշրջան և աշխարհ» գիտական հանդես 2/ 202թ, էջ 150-159:
4. **Առաքելյան Վ. Հ.,** Ապրանքի մրցունակության գնահատման ցուցանիշները //ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022թ., էջ 239-253:
5. **Առաքելյան Վ. Հ., Հուսիկյան Դ., Վարդանյան Ս.,** Ձեռնարկատիրական ռիսկերի արդյունավետ կառավարման հիմնահարցերը //ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 12, 2022թ., էջ 254-276 :
6. **Առաքելյան Վ. Հ., Բաբայան Հ. Հ.,** Հարկման հիմունքներ, Երևան, հեղինակային հրատարակություն, 2021թ., էջ 164 :

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2022Թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023Թ. ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2022թ. ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում կրթական գործընթացը կազմակերպվել և իրականացվել է համալսարանի հնգամյա ռազմավարական ծրագրային ուղղություններով, ինչպես նաև ֆակուլտետի տարեկան զարգացման հայեցակարգին համապատասխան՝ համաձայն դրանց իրականացման գործողությունների պլանի:

Պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում նոր տիպի կորոնավիրուս-համավարակի հետևանքով հայտարարված արտակարգ դրությամբ՝ հաշվետու ուստարվա առաջին կիսամյակի դասերը, անհատական և կուրսային աշխատանքների պաշտպանությունը, քննաշրջանը, լուծարային շրջանը, ուսանողներին մատուցվող խորհրդատվություններն անցկացվել են առցանց՝ հեռավար ձևաչափերով: Ամփոփիչ ատեստավորման գործընթացը և երկրորդ կիսամյակի դասերն անցկացվել են առկա ձևաչափով՝ համալսարանում: Իրականացվող բոլոր գործընթացների համար ապահովվել են իրավակարգավորող փաստաթղթային հիմքերը, որոնք հաստատվել են ԳՊՀ գիտական խորհրդի կողմից:

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2022 թվականի ուսումնական տարում կրթական գործընթացն իրականացվել է բակալավրիատի 12 մասնագիտությունների գծով: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպված ընդունելության քննությունների արդյունքներով, մրցութային հիմունքներով համալսարան ընդունվեցին 132 /նախորդ ուստարում՝ 128/ դիմորդներ հանրապետության տարբեր մարզերից, Երևան քաղաքից, մեկը՝ Վրաստանի Հանրապետությունից: Ընդունելության ցուցանիշը, ինչպես նաև ֆակուլտետում սովորողների ընդհանուր թվաքանակը գերազանցում էր նախորդ տարվա նույն ժամանակահատվածում եղած թվաքանակին. հեռակա ուսուցման համակարգում սովորողների թիվը հաշվետու ուստարում կազմում էր 520 (նախորդ ուստարում՝ 493): Նոր ընդունված ուսանողների համար կազմակերպվել են ակադեմիական ինտեգրման միջոցառումներ, ապահովվել ուսումնական բաղադրիչների վերաբերյալ պարզաբանումներ, կրեդիտային համակարգի, գործող սկզբունքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության մատուցում: Շարունակվել է ուշադրության կենտրոնում պահվել ուսանողների կարգապահության, համալսարանում ընդունված բարեվարքության կանոններին հետևելու և դրանք պահպանելու, ակադեմիական ազնիվ միջավայր ապահովելու հարցերը: Բուհում ընդունված ներքին կարգապահական կանոնների համաձայն՝ անհարգելի բացակայելու համար 147 ուսանող ստացել է նկատողություն, 92 ուսանող՝ խիստ նկատողություն, հեռացվել է 60 ուսանող:

<u>Հեռակա ուսուցման ֆակուլտետում</u> <u>ուսանողական համակազմի շարժը հաշվետու ուստարում.</u>

1. ընդունվել են 132 ուսանող,
2. ՀՀ այլ բարձրագույն ուսումնական հաստատություններից ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 6 ուսանող,

3. երկրորդ բարձրագույն մասնագիտություն ստանալու նպատակով դիմել և սահմանված կարգով ընդունվել է 10 ուսանող,

4. շարունակական կրթության սկզբունքով ընդունվել է 18 ուսանող,

5. ԳՊՀ առկա ուսուցման համակարգից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 3 ուսանող,

6. ուսանողական իրավունքները վերականգնել է 55 ուսանող,

7. հեռացվել է 60-ը՝ դասերից անհարգելի բացակայելու, ակադեմիական և ֆինանսական պարտքեր ունենալու, տարկետման ժամկետը լրանալու և սահմանված ժամկետում չներկայանալու, նախաավարտական պրակտիկային և ավարտական աշխատանքի պաշտպանությանը չներկայանալու պատճառներով,

8. իրենց դիմումների համաձայն բուհից ազատվել է 11 ուսանող,

9. ԳՊՀ-ից այլ բուհ տեղափոխվողներ չեն եղել,

10. Հեռակա ուսուցման ֆակուլտետից ԳՊՀ այլ ֆակուլտետներ է տեղափոխվել 11 ուսանողներ, ֆակուլտետի այլ բաժիններ՝ 3 ուսանող,

11. տարկետում տրամադրվել է 7 ուսանողի, որոնցից 6-ին՝ պարտադիր զինվորական ծառայության համար,

12. բուհն ավարտել են 96 շրջանավարտ:

13. Ուսանողական համակազմի շարժը եղել է դրական /39 ուսանող/՝ մուտք 224 ուսանող, իսկ ելք՝ 185 ուսանող:

Գործող ընթացակարգերին համապատասխան իրականացվել են ուսանողների ներբուհական շարժի՝ միջֆակուլտետային և ներֆակուլտետային տեղափոխությունների գործընթացներ, նրանց անհատական ուսումնական հետագծերի՝ կրթական ծրագրերի ուսումնական պլաններին համապատասխանեցման աշխատանքները: Առկա և հեռակա ուսուցման համակարգերում նույն կրթական ծրագրերի ուսումնական պլանները կազմված են՝ ուսանողների որակյալ կրթության տրամաբանական ընթացքն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով:

Բուհում ընդունված ընթացակարգի համաձայն՝ ուսանողների ավարտական աշխատանքների ղեկավարման, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման գործընթացները կազմակերպվել են անցանց՝ առկա եղանակով, բացառությամբ՝ որոշ դեպքերի, ուսանողների դիմումների և համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Ավարտական կուրսերի 97 ուսանողից ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են 96-ը՝ ստանալով դրական գնահատականներ: Թվով 96 շրջանավարտ, այսինքն՝ ուսանողների թվի 99%-ը (2021 ուստարում՝ 100%-ը) ավարտել է բուհը՝ ստանալով դիպլոմներ՝ համաեվրոպական նմուշի երկլեզու հավելվածներով:

Գերազանցության դիպլոմներ են շնորհվել Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Քարտեզագրություն և կադաստրային գործ բաժինների 5 ուսանողի:

Հաշվետու ուստարում ուսանողների առաջադիմության տվյալներում վերջին տարիների համեմատ էական փոփոխություններ չեն արձանագրվել, ինչը փաստում է ընդհանուր առմամբ մասնագիտական կրթական ծրագրերի պահանջների և ուսանողների ակադեմիական հնարավորությունների համապատասխանության մասին: Բացի այդ, մյուս կողմից շրջանավարտների՝ իրենց մասնագիտությամբ աշխատողների հարաբերական

քանակը չի զիջում հանրապետական միջին ցուցանիշին, ինչը նաև վկայում է համալսարանում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի և աշխատաշուկայի ոլորտային պահանջների համապատասխանության մասին: Կրթության որակի բարելավման նպատակով Որակի ապահովման բաժնի կողմից մարզի գործատուների շրջանում իրականացվող հարցումների շարքում տեղ գտած՝ «ԳՊՀ շրջանավարտներն իրենց մասնագիտական որակներով համապատասխանո՞ւմ են Ձեր՝ իբրև գործատուի ընդհանուր պահանջներին» հարցին գործատուների 89,9% պատասխանել էր «այո»:

ԳՊՀ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2022Թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Հեռակա ուսուցման ֆակուլտետում պլանավորվում են աշխատանքեր՝ ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման և կառավարման, դասավանդման որակի ապահովման, մշտադիտարկման և վերահսկողության ուղղություններով. իրականացնելով ներքոհիշյալ գործողությունները, լուծելով խնդիրները՝ զարգացում ապահովելու նպատակադրումով.

Հ /h	Հայեցակարգային խնդիրներ	Գործողություններ	Վերջնարդյունք
1.	Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի շարունակական արդիականացում	1. Ուսումնական պլաններում մասնագիտաան իրազեկությունների ձևավորմանն ուղղված դասընթացների լսարանային ժամաքանակի ավելացում, 2. Գործատուների շրջանում հարցումների անցկացում՝ ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական և ընդհանրական իրազեկությունների և իրենց՝ որպես գործատուի պահանջների համապատասխանության աստիճանի բացահայտման նպատակով, արդյունքների վերլուծություն, դրանց հաշվառում բարելավման գործընթացներում, 3. Ուսումնամեթոդական ռեսուրսների բազայի մշտադիտարկում և բարելավում, 4.ՀՀ առաջավոր բուհերի նմանատիպ մասնագիտական կրթական	Աշխատաշուկայում մրցունակ շրջանավարտների թողարկում, որոնք ունեն զբաղվածություն իրենց մասնագիտության ոլորտում

		ծրագրերի համադրական վերլուծություն, արդյունքների հաշվառում:	
2	Հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների կրթական կարիքների մշտադիտարկում, նրանց համար ակադեմիական ինտեգրման ծրագրերի իրականացում խորհրդատվական ծառայությունների բազմազանեցում,	1. Ուսանողների շրջանում հարցումների իրականացում, արդյունքների վերլուծությունների կատարում, դրանց հաշվառում ուսանողների հետ տարվող աշխատանքներում, 2. վերապատրաստումների, խորհրդատվությունների, աջակցման ծրագրերի ավելացում:	Ուսանողների ինտեգրման գործընթացի արդյունավետություն, բուհի կողմից իրականացվող կրթական ծառայություններից ուսանողների բավարարվածության աստիճանի աճ
3..	Ուսուցման գործընթացում ուսանողներին անհատական մոտեցմանը և նրանց ինքնուրույնության զարգացմանն ուղղված ուսուցման մեթոդների կիրառում	1. Անհատական, կուրսային, ավարտական աշխատանքների թեմաները, կատարման մեթոդաբանությունը մշակել՝ հաշվի առնելով առավելապես հիմնել ուսանողների ինքնուրույն ուսումնասիրությունների, հետազոտությունների, անհատական եզրակացություններ կատարելու հմտությունների զարգացմանը միտված մոտեցումները, 2. Խորհրդատվական ծառայությունների բազմազանեցում և իրականացում:	Հասցեական աշխատանքի շնորհիվ ուսանողների առաջադիմության բարձրացում, նրանց ինքնուրույնության աստիճանի բարձրացում, հետազոտական հմտությունների ձևավորում
4.	Ուսանողների արտադրական, ուսումնական, նախաավրտական պրակտիկաների անցկացման արդյունավետության բարձրացում	1. Աշխատաշուկայի համապատասխան ոլորտների ուսումնասիրություն, մասնագիտական պահանջների ճշգրտում, 2. Պրակտիկաների անցկացման նոր կառուցակարգի մշակում և հաստատում, գործարկում, պրակտիկաների ծրագրերի արդիակanacw6m 7 , համապատասխանեցում	Աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպում, պրակտիկաների միջոցով ուսանողների գործնական հմտությունների զարգացում

		ՄԿԾ վերջնարդյունքներին, 3. Նոր համագործակցային արաբերությունների, փոխշահավետ պայմանավորվածությունների ձեռքբերում, 4. Պրակտիկաների ղեկավարների հաշվետվողականության համակարգի բարելավում:	
5.	Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողների լեզվական, համակարգչային և ընդհանուր տեխնիկական գրագիտության, տեղեկատվական, հաղորդակցական հմտությունների հետևողական զարգացում:	1. Ուսանողների ակադեմիական կարիքների ուսումնասիրում 2. ուսանողների կարիքների հաշվառմամբ համապատասխան ծրագրերի մշակում 3. աջակցման ծրագրերի իրականացում 4. մասնակիցների բավարարվածության աստիճանի ուսումնասիրում, արդյունքների հաշվառում հետագա պլանավորման մեջ:	Ուսանողների ընդհանրական իրազեկությունների զարգացում, մրցունակության և ինքնաիրացման հնարավորության աճ:

Նելլի Կուտուզյան՝
ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի (այսուհետ՝ ԱՔԲ) աշխատանքները կազմակերպվել են՝ ԱՔԲ կանոնակարգային դրույթների և 2021-2022 ուսումնական տարվա համար նախանշված զարգացման հիմնական ուղղությունների հաշվառմամբ:

2021-2022 ուսումնական տարում ԱՔԲ-ում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. կատարվել է ուսումնական գործընթացի փաստաթղթային հիմքերի ապահովում և վերահսկում,
2. վերանայվել են բակալավրիատում և մագիստրատուրայում իրականցվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ-ների) աշխատանքային պլանները,
3. առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում ստուգվել են ամբիոնների դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունները,
4. յուրաքանչյուր ամսվա վերջում կատարվել է ժամավճարի սկզբունքով աշխատող դասախոսների դասաժամերի ստուգում և հաշվարկում՝ ըստ ֆակուլտետներից ներկայացված փաստաթղթային հիմքերի,
5. պարբերաբար կատարվել են դասամատյանների ստուգումներ,
6. կատարվել է ուսումնական գործընթացի, միջանկյալ քննությունների ընթացքի հսկում՝ առցանց և անցանց ձևաչափերով,
7. ստուգվել են բակալավրիատի /արտադրական, մանկավարժական, ուսումնական, նախաավարտական/ և մագիստրատուրայի /գիտահետազոտական, գիտամանկավարժական/ պրակտիկաների փաստաթղթային փաթեթները,
8. կազմակերպել և իրականացվել են հանձնաժողովային դասալսումներ, կատարվել է արդյունքների վերլուծություն,
9. յուրաքանչյուր կիսամյակի վերջում ստուգվել և ամփոփվել են ուսանողների առաջադիմության արդյունքները,
10. աշխատանքներ են կատարվել անվճար և վճարովի համակարգերում սովորող ուսանողների փոխատեղման գործընթացի ստուգման և օբյեկտիվության ապահովման վերահսկողության ուղղություններով,
11. արձանագրվել են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթի ներբուհական փուլի արդյունքները, ներկայացվել են ԳՊՀ թեկնածուների փաստաթղթային փաթեթները,
12. ընթացիկ համալրվել է ուսանողների տվյալների բազան, ներկայացվել են եռամսյակային հաշվետվությունները,
13. կազմակերպվել և իրականացվել են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական, մանկավարժամեթոդական հմտությունների զարգացմանը միտված

վերապատրաստման դասընթացներ՝ մասնագիտական ամբիոնների և պատասխանատու այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ /Աղյուսակ 1/,

14. իրականացվել է ԳՊՀ ամենամյա գիտաժողովի շրջանակներում ներկայացված գիտական հոդվածների մասնագիտական և տեխնիկական գրաքննության ապահովման ուղղությամբ աշխատանքների համակարգում, այդ թվում՝ մասնագիտական ամբիոններից երաշխավորագրերի հավաքագրում,
15. կատարվել են ԳՊՀ տարբեր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների հավաքագրման և ԳՊՀ հաշվետվության կազմման աշխատանքներ,
16. ԿԳՄՍ նախարարության գրություններից ելնելով՝ ներկայացվել է ուսումնական գործընթացի տարբեր բաղադրիչներին առնչվող տեղեկատվությունը,
17. աշխատանքներ են կատարվել դիպլոմների կրկնօրինակների, տարբեր տեղեկանքների պատրաստման և դիմումատուներին տրամադրման ուղղություններով,
18. ՀՀ վիճակագրական կոմիտե են ներկայացվել «1-ԳՄ» «3-ԳՄ» և «4-ԳՄ» ձևաչափերով ամենամյա վիճակագրական հաշվետվությունները,
19. «Դպրոց-բուհ» համագործակցության շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի տարբեր դպրոցների միջին և բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպվել և իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, բաց դասեր, լաբորատոր փորձեր և մասնագիտական կողմնորոշմանը միտված խորհրդատվական հանդիպումներ:

Աղյուսակ 1. ԳՊՀ-ում 2021-2022 ուսումնական տարում կազմակերպված և իրականացված վերապատրաստման դասընթացներ

Հ/հ	Վերապատրաստման դասընթացը	Դասընթացավար/ները	Անցկացման ժամկետները/ ժամաքանակը	Մասնակիցների թիվը
1.	Համակարգչային հմտությունների բարելավմանը միտված վերապատրաստման դասընթացների շարք	**Հովհաննիսյան Մարգար** */ԳՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ/*	18.02.2022թ.-25.03.2022թ. / 12 ակադեմիական ժամ	47
2.	Տվյալագիտություն և խորացված ուսուցում /Deep learning/	***Կոզմանյան Արփինե*** */Capgemini Engineering, տվյալագետ, Իտալիա/* ***Բաբայան Թամարա*** */Բենթլիի համալսարան, պրոֆեսոր, ԱՄՆ/* ***Մովսիսյան Զինար*** */Manot, գործադիր տնօրեն, Հայ-Ռուսական համալսարանի դասախոս/*, *Համակարգող՝* ***Ավետիսյան Վարազդատ*** */ԳՊՀ Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու/*	01.01.2022թ. – 09.04.2022թ. / 6 ակադեմիական ժամ	84
3.	Ուսուցման և դաստիարակության գործընթացի արդյունավետության հոգեբանական հիմքերը	***Դավթյան Արմինե*** */ԳՊՀ Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս/*	09.03.2022թ. - 11.05.2022թ. / 14 ակադեմիական ժամ	77
4.	Գրականության և բանահյուսության հիմնահարցեր	***Գրիգորյան Վաչագան*** */ԳՊՀ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր/*, ***Ղռեջյան Լուսինե*** */ԳՊՀ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական*	08.04.2022թ. - 29.04.2022թ. / 10 ակադեմիական ժամ	81

		գիտությունների թեկնածու, դոցենտ/, ***Իսկանդարյան Նաիրա*** */ԳՊՀ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ/,* ***Առաքելյան Արա*** */ԳՊՀ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր/*		
5.	Նախագիծ. նախագծի իրականացման քայլերը	**Հայության Սաթենիկ** */Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն՝ Գնահատման բաժնի մասնագետ, ԳՊՀ Օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս/*	02.05.2022թ. / 2 ակադեմիական ժամ	100
6.	Ռիվինի մեթոդիկան և Ռիվինի հակադարձ մեթոդիկան	**Հովսեփյան Վարսենիկ** */Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն՝ Գնահատման բաժնի մասնագետ/*	03.05.2022թ. / 2 ակադեմիական ժամ	100
7.	Հայոց լեզվի հիմնախնդիրներին նվիրված վերապատրաստման դասընթաց	**Կատվալյան Վիկտոր** */ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, ԳՊՀ դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր/*, **Մխիթարյան Գայանե** */ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ/*, **Թելյան Լեոնիդ** */ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ /*, **Ֆիշենկոյան Անի** */ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու /*, **Սուքիասյան Հենրիետա** */ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, ԵՊԲՀ ամբիոնի վարիչ/*	11.05.2022թ. – 25.05.2022թ./ 10 ակադեմիական ժամ	76

Շարունակական կրթության պահանջներից ելնելով՝ 2021-2022 ուսումնական տարում ԱՔԲ-ի կողմից կազմակերպվել են.

- միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ ԳՊՀ-ում կրթությունը շարունակելու հետ կապված աշխատանքները /Աղյուսակ 2/,
- երկրորդ մասնագիտություն ստացողների հետ կապված աշխատանքները,
- ապահովվել է միջբուհական և ներբուհական տեղափոխությունների նպատակով առարկայական տարբերությունների հանձնման գործընթացը:

Հաշվառվել են ԳՊՀ ուսանողների շարժը՝ տարկետման, վերականգման, հեռացման, ազատման և տեղափոխությունների արդյունքները:

Աղյուսակ 2. 2021-2022 ուսումնական տարում ԳՊՀ ուսանողների շարժը՝ 2020-2021 ուսումնական տարվա համեմատությամբ

		2020-2021 ուստարի	**2021-2022 ուստարի**
1	**Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել**	**11**	**6**
2	**ԳՊՀ-ից այլ բուհ են տեղափոխվել**	**0**	**0**
3	**Երկրորդ մասնագիտություն ստացողներ**	**1**	**10**

4	**Քոլեջից ԳՊՀ են ընդունվել**	**26**	**30**
5	**Ներբուհական տեղափոխություններ**	**16**	**22**
	➢ Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա	1	4
	➢ Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա	9	12
	➢ Ներֆակուլտետային տեղափոխություններ	6	6
6	**Տարկետում են ստացել**	**37**	**23**
	➢ Առողջական վիճակի պատճառով /երեխայի խնամքի/	1	1
	➢ արտերկրում ուսումը շարունակելու նպատակով	1	9
	➢ զինծառայության մեկնելու հիմքով	35	13
7	**ԳՊՀ-ից հեռացվել են**	**124**	**96**
8	**ԳՊՀ-ից ազատվել են**	**15**	**21**
9	**Վերականգնվել են ԳՊՀ՝**	**67**	**78**
	➢ զորացրումից հետո	29	32
	➢ հեռացումից հետո	34	44
	➢ տարկետումից հետո	2	0
	➢ ազատումից հետո	1	0
	➢ ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլատրվածներ	1	1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐԺ		**297**	**286**

ԱՔԲ-ն իր գործառույթների շրջանակներում ապահովել է վերոնշյալ գործընթացների փաստաթղթային փաթեթների կազմման, զեկուցագրերի, հաշվետվությունների, առաջարկությունների ներկայացման և փաստաթղթերի արխիվացման գործընթացներ:

ԱՔԲ-ի կողմից կատարվել են մագիստրատուրայի ընդունելության գործընթացի կազմակերպման աշխատանքներ: 2021-2022 ուսումնական տարում մագիստրատուրա է ընդունվել 76 դիմորդ՝ յոթ մասնագիտությունների և տասնմեկ կրթական ծրագրերի գծով.

1. ***Մասնագիտական մանկավարժություն /011401.00.7/***
   - *Հայոց լեզու և գրականություն– 3,*
   - *Անգլերեն լեզու և գրականություն –3*
   - *Ռուսաց լեզու և գրականություն -5*
   - *Պատմություն – 6,*
   - *Կենսաբանություն – 4*
2. ***Ընդհանուր մանկավարժություն / 011301.00.7/***
   - *Տարրական մանկավարժություն և մեթոդիկա –15*
3. ***Համակարգչային ճարտարագիտություն /061103.00.7/***
   - *Համակարգչային ճարտարագիտություն –6*
4. ***Իրավագիտություն /042101.00.7/***
   - *Իրավագիտություն – 18*

5. ***Ֆինանսներ /041201.00.7/***
   - *Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ – 6*
6. ***Հաշվապահական հաշվառում և հարկում /041101.00.7/***
   Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ - 4
7. ***Տնտեսագիտություն /031101.00.7/***
   - *Տնտեսագիտություն –6*

2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում կատարվել են ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ: Պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 182 դիպլոմ /56-ը՝ մագիստրատուրայի, 126-ը՝ բակալավրիատի շրջանավարտներին /տե՛ս Աղյուսակ 3/:

Աղյուսակ 3. 2021-2022 ուսումնական տարվա ԳՊՀ շրջանավարտների թիվը՝ ըստ ֆակուլտետների և կրթական աստիճանների

Ֆակուլտետ	***Կրթական աստիճան***	***ոչ գերազանցության***	***գերազանցության***	***ընդամենը***
Բանասիրական	Բակալավր	2	6	*8*
	մագիստրոս	3	6	*9*
Բնագիտական	Բակալավր	3	3	*6*
	մագիստրոս	2	4	*6*
Հումանիտար մասնագիտությունների	Բակալավր	2	2	*4*
	մագիստրոս	14	14	*28*
Տնտեսագիտական	Բակալավր	4	8	*12*
	մագիստրոս	3	10	*13*
ԸՆԴԱՄԵՆԸ	Բակալավր	*11*	*19*	***30***
	մագիստրոս	*22*	*34*	***56***
ՀԵՌԱԿԱ	Բակալավր	91	5	***96***
ԸՆԴԱՄԵՆԸ		***124***	***58***	***182***

2022-2023 ուսումնական տարում ԱՔԲ-ն իր գործունեությունը կազմակերպելու է հետևյալ հիմնական ուղղություններով.

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ

1. կրթության արդյունավետության բարձրացմանը միտված մեթոդների ձեռնարկում,
2. պրակտիկաների վերահսկման ուղղությամբ աշխատանքների իրականացում, պրակտիկաների գործընթացին առնչվող փաստաթղթային փաթեթների վերանայում և բարելավում, գիտահետազոտական պրակտիկայի ժամկետների վերանայում,
3. դասալսումների արդյունավետության բարձրացում և կազմակերպման գործիքակազմերի բազմազանեցում, դասավանդման առավել արդյունավետ կրթափորձի տարածում,
4. մեթոդ-միավորումների աշխատանքների ակտիվացում, վերջիններիս ընդգրկում դասալսման գործընթացին, ուսումնամեթոդական և խորհրդատվական տարաբնույթ աշխատանքներին,
5. վերապատրաստումների կազմակերպման աշխատանքների համակարգում՝ ըստ վերհանված կարիքի և դրա գնահատման արդյունքների,
6. ամբիոնների և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ համատեղ առարկայական ծրագրերի էլեկտրոնային բազայի ստեղծման աշխատանքների ամբողջականացում՝ միտված առարկայական ծրագրերի մշտադիտարկման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:
7. ԳՊՀ ուսանողների հետ խորհրդատվական հանդիպումների պարբերաբար կազմակերպում՝ հատուկ ուշադրություն հատկացնելով շարունակական հիմունքներով ԳՊՀ–ում կրթություն ստացող ուսանողների՝ ուսումնական գործընթացում բնականոն ինտեգրման հարցերին:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

1. Գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով պրոֆեսորադասախոսական կազմի խրախուսման կառուցակարգի մշակում՝ գիտաչափական ցուցանիշների օբյեկտիվ գնահատմամբ, բարձր ազդեցության գործակից ունեցող պարբերականներում գիտական հոդվածների տպագրական աշխատանքների խրախուսում,
2. պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների շրջանակներում գիտահետազոտական մեթոդաբանության բարելավման ուղղությամբ միջոցառումների իրականացում,
3. մասնագիտական ամբիոնների գերակա գիտական ուղղությունների վերանայում՝ հաշվի առնելով գիտական ներուժը և այդ ուղղությամբ իրականացվող գիտական աշխատանքների քանակական ցուցանիշները, հնարավոր միջամբիոնային գիտական ուղղությունների ձևավորման նպատակով աշխատանքների իրականացում,
4. գիտահետազոտական աշխատանքների համակարգման արդյունավետության բարձրացման նպատակով ընթացիկ աշխատանքներում մասնագիտական ամբիոններից ոլորտային անձանց ինտեգրում,

5. ԳՊՀ հոդվածների ժողովածուում տպագրվող աշխատանքների տեխնիկական չափանիշների վերանայում, գրախոսման ընթացակարգի բարելավում,

6. մագիստրոսական թեզերի թեմաների և կրթական ծրագրի ուղղվածության միջև համադրական վերլուծությունների իրականացում, մագիստրոսական թեզերի թեմատիկ ուղղվածությանը համարժեք ղեկավար-մագիստրոս համահեղինակությամբ ԳՊՀ հոդվածների ժողովածուում տպագրված գիտական հոդվածների քանակական ցուցանիշների մշտադիտարկում:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ

1. Ակադեմիական քաղաքականության բաժնի էլեկտրոնային հարթակի գործարկման արդյունքում ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացում, շարունակական կրթության, երկրորդ մասնագիտության դիմորդների, ինչպես նաև ներբուհական, միջբուհական տեղափոխությունների շահառուների համար էլեկտրոնային տեղեկատվական տիրույթի հասանելիության ապահովում,

2. կրթական և գիտական գործընթացներին առնչվող որոշ ներքին իրավական ակտերի վերանայում:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

«ԳՊՀ - դպրոցներ» համագործակցության մինչհամալսարանական ցանցի աշխատանքների համակարգում, աշակերտների և ուսուցիչների ընդգրկում Գավառի պետական համալսարանի կողմից իրականացվող կրթադաստիարակչական տարաբնույթ միջոցառումներին և գիտահետազոտական աշխատանքներին: Դիմորդների ներգրավման և մասնագիտական կողմնորոշման նպատակով տարատեսակ ձևաչափերով աշխատանքների իրականացում:

Թերմինե Խաչիկյան՝

Ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ,

Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի 2021-2022 ուսումնական տարվա գործունեությունը բխել է ԳՊՀ 2017-2022 թթ. ռազմավարական ծրագրից, ինչպես նաև այդ ծրագրին համապատասխան ՈԱԲ 2021-2022 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգում ամրագրված նպատակներից և բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներից և ուղենիշներից:

ԳՊՀ ՈԱԲ-ն իր աշխատանքներն իրականացրել է սահմանված ժամկետներում: Բաժնի գործունեության ընթացքն ու արդյունքներն արտացոլվել են բաժնի նիստերի արձանագրություններում և համապատասխան փաստաթղթերում:

Հաշվետու ուստարում բուհի կրթության որակի ապահովման գործընթացներին մասնակցել են ներքին շահառուները՝ ուսանողներ, վարչական ու պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները, ինչպես նաև արտաքին շահակիցները՝ շրջանավարտներ, գործատուներ, ուսուցիչներ, համագործակից կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2021-2022 ուստարում ՈԱԲ-ը վերանայել և բարեփոխել է բուհում կրթության որակի ներքին գնահատմանը վերաբերող բոլոր հարցաթերթերը, միաժամանակ ԳՊՀ ներքին շահառուների և արտաքին շահակիցների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մշակել և գործածության մեջ է դրել ևս 3 հարցաթերթ՝ ուղղված դիմորդների, ուսուցիչների և ուսանողների կարիքների վեհանմանը: 2021-2022 ուսումնական տարում ՈԱԲ-ի կողմից իրականացվել են թվով 12 հարցում՝ ներքին շահառուների և արտաքին շահակիցների շրջանում, որոնց արդյունքում ուսումնասիրվել և վեր են հանվել հարցվողների կրթական կարիքները, գնահատվել են ԳՊՀ-ում կրթության որակից նրանց բավարարվածության աստիճանը:

Հարցումներն անցկացվել են հետևյալ հարցաթերթերի միջոցով.

<u>Ներքին շահառուներին հասցեագրված</u>

ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին՝

1. Առաջին կուրսի ուսանողի հարցաթերթիկ,
2. Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթ,
3. Առցանց դասերի անցկացման գործընթացից ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթ,
4. Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցաթերթ,

Պրոֆեսորադասախոսական կազմին՝

5. ԳՊՀ-ում դասերի առցանց կատարման գործընթացից դասախոսների

բավարարվածության գնահատման հարցաթերթ,

Վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմին՝

6. ԳՊՀ աշխատակցի՝ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմերի անդամների բավարարվածության գնահատման հարցաթերթ,

Արտաքին շահակիցներին հասցեագրված

Գործատուներին՝

7. Գործատուի կողմից լրացվող հարցաթերթ՝ Գավառի պետական համալսարանի շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների վերաբերյալ,

Դիմորդներին՝

8. Գավառի պետական համալսարան դիմորդների կարիքների վերհանման հարցաթերթ,

Ուսուցիչներին՝

9. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական, մանկավարժական որակների բարձրացման ուղղությամբ կարիքների վերհանման հարցաթերթիկ,
10. Գավառի պետական համալսարանում «Էլեկտրոնային ուսուցման, առցանց դասերի (վեբինար) անցկացման, տեսադասերի մշակման տեղեկատվական տեխնոլոգիաներ» թեմայով վերապատրաստման դասընթացից բավարարվածության գնահատման հարցաթերթ,

Շրջանավարտներին՝

11. Ավարտական աշխատանքի կատարման ընթացքից, ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթ,
12. Մագիստրոսական թեզի կատարման ընթացքից, ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթ:

Կատարվել են անցկացված բոլոր հարցումների արդյունքների վերլուծություններ, արվել են համապատասխան եզրակացություններ: Կատարվել են նաև համեմատական վերլուծություններ: Համեմատության են ենթարկվել երկու և ավելի ուսումնական տարիների հարցումների արդյունքները, ինչը ՈԱԲ-ին հնարավորություն է ընձեռել չափելի դարձնել ներքին շահառուների և արտաքին շահակիցների բավարարվածության աստիճանը՝ պարզելու համար, թե որքանով է այն աճել, կամ նվազել:

2021-2022 ուստարվա ընթացքում ՈԱԲ-ի կողմից կատարվել են թվով 12 վերլուծություններ, որոնք վերաբերում են ոչ միայն շահակիցների բավարարվածության մակարդակի գնահատմանը, այլև բուհում կրթության որակի ներքին ապահովման այլ գործընթացներին, որակի կառուցակարգերի բարելավմանը:

Կատարվել են բոլոր վերոնշյալ հարցումների արդյունքների վերլուծություններ:

Հարցումների և մշտադիտարկման արդյունքների վերլուծություններն ու առաջարկությունները, շահակիցների կողմից բարձրացված խնդիրները, նկատառումներն ու կարծիքները ներկայացվել են ԳՊՀ համապատասխան ֆակուլտետների խորհուրդների, ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերում,, դրանց վերաբերյալ եղել են շահագրգիռ քննարկումներ, պարզաբանումներ: Արդյունքները կողմնորոշիչ են եղել լինել բուհի

կառուցվածքային ստորաբաժանումների 2022-2023 ուստարվա զարգացման ծրագրերը կազմելիս:

Հաշվետու ուստարում ՈԱԲ-ը որակի ներքին ապահովման գործընթացներում ապահովել է հետադարձ կապ ֆակուլտետների և ամբիոնների հետ, ուսումնասիրել է ԳՊՀ առկա ուսուցման չորս ֆակուլտետների 2020-2021 ուստարվա զարգացման հայեցակարգերի իրականացման գործողությունների պլանները, 2020-2021 ուստարվա արդյունավետության կատարողականի մշտադիտարկումները՝ փորձելով վեր հանել, թե 2019-2020 ուստարվա ընթացքում անցկացված հարցումների արդյունքում ներքին շահառուների և արտաքին շահակիցների ներկայացրած դժգոհությունները և առաջարկություններն արդյոք արտացոլվել են գործողությունների պլաններում կամ համապատասխան լուծում գտել են հաշվետու ուստարվա ընթացքում:

ՈԱԲ-ը համալսարանում իրականացվող բոլոր գործընթացների որակը գնահատելու և դրա շարունակական բարելավման ընթացքն ապահովելու նպատակներով ուսանողական ինքնակառավարման մարմինների, ներքին այլ շահառուների, արտաքին շահակիցների հետ պարբերաբար կազմակերպել է հանդիպումներ, քննարկումներ, կատարվել են դիտարկումներ և վերլուծություններ, ներկայացվել են առաջարկություններ, որոնք տեղ են գտել բաժնի նիստերի արձանագրություններում:

ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների անդամները, բուհի ակտիվ ուսանողները ներգավված են ՈԱԲ աշխատանքներում և պարբերաբար մասնակցում են ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կազմակերպած «Ուսանող-փորձագետների» վերապատրաստման դասընթացին: Դասընթացների արդյունքում ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Ալլա Սարգսյանը, հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ճյուղերի) մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Անահիտ Աբրահամյանը և բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Կարեն Մաստոյանը ընտրվել են որպես ուսանող-փորձագետներ և 2022 թ. մայիսի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբի հետ մասնակցել են Արցախի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի, Սթեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի, իսկ մարտի 15-18-ը ընկած ժամանակահատվածում Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի որակի արտաքին գնահատման աշխատանքներին:

2022թ. մարտ, ապրիլ, մայիս ամիսներին ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում ԳՊՀ ՈԱԲ աշխատակիցները ուսումնագիտական գծով պրոռեկտորի, ֆակուլտետների դեկանների, ամբիոնի վարիչների, ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ հանդիպումներ ունեցան Գեղարքունիքի մարզի 22 հանրակրթական դպրոցների և 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ապագա դիմորդների և ուսուցիչների հետ /տե՛ս աղյուսակ 1/: Հանդիպումների ընթացքում բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն աջակցելու, նրանց կարիքները վերհանելու, ուսումնասիրելու, գնահատելու և Համալսարանում գործող մասնագիտական կրթական

ծրագրերի ցանկը վերանայելու ու բարելավելու համար ՈԱԲ աշխատակիցների կողմից իրականացվեց հարցում:

Աղյուսակ 1.

Հ/h	Ուսումնական հաստատություն
1.	Գավառի Գեորգի Մնացականյանի անվ. թիվ 7 միջնակարգ դպրոց
2.	Գավառի Մ. Բունիաթյանի անվ. թիվ 8 միջնակարգ դպրոց
3.	Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոց
4.	Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոց
5.	Սարուխանի թիվ 3 միջնակարգ դպրոց
6.	Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոց
7.	Նորատուսի թիվ 2 միջնակարգ դպրոց
8.	Նորատուսի թիվ 3 միջնակարգ դպրոց
9.	Գեղարքունիքի միջնակարգ դպրոց
10.	Լանջաղբույրի միջնակարգ դպրոց
11.	Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց
12.	Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց
13.	Լճաշենի միջնակարգ դպրոց
14.	Ծովագյուղի միջնակարգ դպրոց
15.	Հայրավանքի միջնակարգ դպրոց
16.	Լճափի միջնակարգ դպրոց
17.	Ծովազարդի միջնակարգ դպրոց
18.	Սևանի ավագ դպրոց
19.	Ճամբարակի ավագ դպրոց
20.	Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոց
21.	Վարդենիսի ավագ դպրոց
22.	Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ
23.	Գավառի ավագ դպրոց

ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ համատեղ իրականացվել են ԳՊՀ կայքէջի և ՈԱԲ-ի էլեկտրոնային հարթակի մշտադիտարկում և համալրում: Հաշվետու ուստարվա ընթացքում կայքէջում թարմացվել են ԳՊՀ ընթացակարգերը, ներբուհական այլ իրավական ակտերը, «Որակի ապահովում» հարթակը համալրվել է համապատասխան ենթաբաժիններով և նյութերով: Հաշվետու ուստարում ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «learn.gsu.am» համակարգը պարբերաբար վերանայվել, ստուգվել է ՈԱԲ-ի կողմից, այնուհետ ըստ պատասխանատուների շարունակաբար համալրվել և թարմացվել է նոր նյութերով՝ դասախոսություններով, էլեկտրոնային ժամանակակից մասնագիտական գրականությամբ և այլն:

Իրականացվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2021-2022 ուսումնական տարվա գործունեության տարեկան ինքնավերլուծություն: ՈԱԲ-ը, սերտորեն համագործակցելով ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման աշխատանքային խմբերի հետ, 2021թ. նոյեմբերի 20-ից 24-ն ընկած ժամանակահատվածում ԳՊՀ ինստիտուցիոնալ

(ենթակառուցվածքային) հավատարմագրման ընթացքում աջակցել և համակարգել է ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի արտաքին գնահատման փորձագիտական խմբի հետ Համալսարանի ներքին շահառուների և արտաքին շահակիցների հետ հանդիպումները, մասնակցել քննարկումներին: 2022թ. հունիսի 14-ին ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ՝ Գավառի պետական համալսարանին շնորհվեց ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով: ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության 10 չափանիշներից 9-ը, այդ թվում՝ «Որակի ներքին ապահովում» չափանիշը, ստացան բավարար գնահատականներ:

2021-2022 ուստարվա ընթացքում ԳՊՀ տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ աշխատանքի արդյունքում ՈԱԲ-ը մշտադիտարկել և թարմացրել է ԳՊՀ պայմանագրերը, համագործակցության հուշագրերը և համաձայնագրերը:

ՈԱԲ-ի աշխատակիցները հաշվետու ուստարում մասնակցել են ինչպես ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպած դասընթացներին, քննարկումներին, աշխատանքային հանդիպումներին, այնպես էլ այլ հանդիպումների և վերապատրաստումների.

1. 2021 թ. սեպտեմբերի 3-ին Հյուսիսային համալսարանում ՈԱԲ աշխատակիցներ Քանաքարա Հայրապետյանը, Մարիամ Նախրատյանը, տնտեսագիտական համալսարանի դեկան Սամվել Ամիրխանյանը, ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը մասնակցել են ՈԱԱԿ-ի համակարգմամբ UNESCO-ի «Որակի ներքին ապահովման կարողությունների զարգացում ՀՀ բուհերում» ծրագրի համաժողովին:
2. 2021 թ. սեպտեմբերի 29-ին ՈԱԲ աշխատակիցներ Քանաքարա Հայրապետյանը, Մարիամ Նախրատյանը, Նոնա Մուրադյանը մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «Մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ հետադարձ կապի անընդհատությունը» թեմայով առցանց քննարկմանը:
3. 2021 թ. դեկտեմբերի 9-ին ՈԱԲ աշխատակիցները մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված առցանց հանդիպմանը՝ նվիրված մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, բարելավման և լավագույն փորձի տեղայնացման հիմնահարցերի քննարկմանը:
4. 2022 թ. փետվարի 21-ից 25-ը ՈԱԲ վարիչի պաշտոնակատար Քանաքարա Հայրապետյանը մասնակցել է ՈԱԱԿ-ում անցկացված «Մասնագիտական կրթական ծրագերի բարելավման մեխանիզմներ» թեմայով հնգօրյա վերապատրաստման դասընթացին:
5. 2022 թ. ապրիլի 16-ին ՈԱԲ աշխատակիցներ Քանաքարա Հայրապետյանը և Նոնա Մուրադյանը մասնակցել են «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի կազմակերպած «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունններում տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները արդյունավետ են կիրառվում» թեմայով հեռուստաբանավեճին:
6. 2022 թ. ապրիլի 23-ից 29-ը Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ Թերմինե Խաչիկյանը, որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնակատար Քանաքարա Հայրապետյանը մասնակցել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանում Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST)

«SciNova» ակադեմիական ծրագրի շրջանակներում կազմակերպված՝ գիտահետազոտական գործունեության մեթոդաբանությանը նվիրված վերապատրաստման դասընթացին:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2022-2023 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները

ԳՊՀ զարգացման 2023-2027 թթ. ռազմավարական ծրագրի նպատակներին և բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին համապատասխան՝ 2022-2023 ուստարում նախատեսվում են ՈԱԲ գործունեության հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1. ԳՊՀ որակի ապահովման ներբուհական համակարգի բարելավում՝ փաստաթղթային հիմքերի, մեթոդների և կառուցակարգերի կատարելագործման միջոցով:
2. Որակի ապահովման գործընթացներում նոր գործընկերների, արտաքին շահակիցների ներգրավում:
3. Որակի ապահովման գործընթացում ներգրավված անձանց կարողությունների զարգացում:
4. Որակի վերահսկողության կառուցակարգերի արդյունավետության բարձրացում:
5. ԳՊՀ ՈԱ համակարգի գործունեության, որակի ապահովման վերաբերյալ հավաքագրվող տեղեկատվության հավաստիության չափելի ցուցիչների սահմանում և կիրառում, շահակիցների բավարարվածության աստիճանի աճի ապահովում:

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ԴՐԱՆՑ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Ֆակուլտետների, ամբիոնների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մասնագիտական կրթական ծրագրերի կանոնավոր, պարբերական վերանայում, վերլուծությունների կատարում, արդիականացմանը միտված առաջարկությունների ներկայացում:
2. Ուսումնառության ռեսուրսների գնահատում, վերլուծությունների կատարում, առաջարկությունների ներկայացում:
3. Արտաքին շահակիցների կարիքների վերհանում, վերլուծության իրականացում, հետադարձ կապի ապահովում:

III. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

1. ԳՊՀ-ում գիտահետազոտական աշխատանքներում ներքին շահառուների ներգրավվածության ուսումնասիրում, այս ուղղությամբ նրանց կարիքները, նկատառումներն ու առաջարկություններն ուսումնասիրելու համար հարցումների անցկացում, դրանց արդյունքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում, բարելավմանը միտված համապատասխան աշխատանքների իրականացում:

IV. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԱՋԱԿՑՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

1. Կրթական միջավայրի վերաբերյալ ներքին շահառուների և արտաքին շահակիցների շրջանում հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն, համապատասխան

եզրակացությունների և առաջարկությունների ներկայացում, բարելավման միջոցառումների ձեռնարկում:

2. Որակի ապահովման ներբուհական գործընթացներում ուսանողների մասնակցության ակտիվացում, թիրախային խմբերի ձևավորում, նրանց հետ կրթության որակի բարձրացմանը միտված աշխատանքների իրականացում:
3. Ուսանողների կարիքների վերհանման և դրանց բավարարման հնարավոր ուղիների վերաբերյալ հարցումների անցկացում, դրանց արդյունքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում, բարելավման միջոցառումների ձեռնարկում:

V. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. Գնահատման գործընթացի օբյեկտիվությունը ստուգելու նպատակով հարցումների իրականացում, արդյունքների վերլուծություն, եզրակացությունների և առաջարկությունների ներկայացում:

VI. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Դասախոսների կարիքների վերհանման և դրանց բավարարման հնարավոր ուղիների վերաբերյալ հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում, բարելավմանը միտված համապատասխան աշխատանքների իրականացում:

VII. ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Որակի ապահովման ներբուհական գործընթացներում հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքի պահպանում:
2. ԳՊՀ կայքէջի պարբերաբար վերանայում, որակի ապահովման գործընթացների վերաբերյալ շահակիցներին հավաստի և պատշաճ տեղեկատվության տրամադրում:
3. Շահակիցների շրջանում անանուն հարցումների իրականացում, ԳՊՀ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերից, հրապարակային և հաշվետու գործելաոճից բավարարվածության աստիճանի գնահատում:
4. ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ներքին շահառուների և արտաքին շահակիցների առջև հաշվետվությունների պարբերաբար ներկայացում:
5. ԳՊՀ որակի ապահովման բաժնի գործունեության արդյունավետության բարձրացում:

Քանաքարա Հայրապետյան՝
ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչի
ժամանակավոր պաշտոնակատար

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանում 2021-2022 ուսումնական տարում շարունակվել են աշխատանքները բուհի միջազգայնացման գործընթացները խթանելու ուղղությամբ:

Ի տարբերություն 2020-2021 ուսումնական տարվա, երբ կորոնավիրուս (COVID-19) համավարակով պայմանավորված գրեթե դադարել էր միջազգային ակադեմիական շարժունությունը, և ԳՊՀ եվրոպական ծրագրերը շարունակվում էին առցանց՝ հեռավար ձևաչափով, 2021-2022 ուստարում արձանագրվեց ԳՊՀ ուսանողների և դասախոսների շարժունություն թվի աճ, վերակնքվեցին մի շարք պայմանագրեր, ինչպես նաև կնքվեցին համագործակցության նոր համաձայնագրեր և փոխըմբռնման հուշագրեր: Մասնավորապես, կնքվեցին պայմանագրեր հետևյալ եվրոպական համալսարանների հետ.

1. Ալմերիայի համալսարան, Իսպանիա,
2. Վալլադոլիդի համալսարան, Իսպանիա,
3. Կորդոբայի համալսարան, Իսպանիա,
4. Մուրսիայի Սան Անտոնիո Կաթոլիկե համալսարան, Իսպանիա,
5. Մինհոյի համալսարան, Պորտուգալիա,
6. Սապիենզայի համալսարան, Իտալիա,
7. Վիեննայի կիրառական գիտությունների համալսարան, Ավստրիա:

Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամները հաշվետու ուսումնական տարում մասնակցել են մի շարք միջազգային և հանրապետական գիտաժողովների, աշխատաժողովների, սեմինարների և վեբինարների:

2021 թ. հոկտեմբերի 11-12-ը ամփոփվել են Եվրոպական միության «ERASMUS+ ABIONET Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի արդյունքները, տեղի են ունեցել ծրագրի ամփոփիչ աշխատաժողովը և փակման արարողությունը, որոնց առցանց մասնակցել են արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոսներ Թերմինե Խաչիկյանը և Մարինե Հովհաննիսյանը:

Հաշվետու ուսումնական տարում Եվրոպական միության «ERASMUS+ MENVIPRO Հայաստանի և Վրաստանի շրջակա միջավայրի պահպանման ծրագրերի արդիականացում» ծրագրի շրջանակներում արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոսները պարբերաբար մասնակցել են ծրագրի առցանց աշխատաժողովներին, այդ թվում՝ երկու ամառային դպրոցների, որոնցից առաջինը իրականացվել է առցանց ձևաչափով, իսկ երկրորդը տեղի է ունեցել 2022թ. հուլիսի 10-15-ին Վրաստանի Հանրապետությունում, որին մասնակցել են բնագիտական ֆակուլտետի դասախոսներ Արտաշես Թադևոսյանը և Մարինե Հովհաննիսյանը:

Գավառի պետական համալսարանի իրականացրած ԵՄ «ERASMUS+ SMART Զարգացնել համալսարան-ձեռնարկություններ համագործակցությունը, ՍՄԱՐԹ կենտրոնների միջոցով խթանել ուսանողների ձեռնարկատիրական գործունեությունը» ծրագրի շրջանակներում 2021թ. սեպտեմբերի 2 և 3-ին Վ. Բրուսովի անվան պետական համալսարանում տեղի է ունեցել ուսանողների բիզնես գաղափարների ազգային մրցույթ, որտեղ բնագիտական և տնտեսագիտական ֆակուլտետների «Համակարգչային ճարտարագիտություն» և «Տնտեսագիտություն» բաժինների ուսանողներ Կարեն Մաստոյանը և Մերի Ավագյանը գրավել են առաջին տեղերը: Իսկ 2021թ. հոկտեմբերի 1-10-ը Մոլդովայի պետական ագրարային համալսարանում կայացել են ծրագրի ամփոփիչ աշխատաժողովը և փակման արարողությունը, որին մասնակցել է արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, իսկ նույն բաժնի մասնագետ Սիրանույշ Մկրտչյանը, ուսանողներ Կարեն Մաստոյանը և Ալլա Սարգսյանը իրենց մասնակցությունն են ունեցել առցանց ռեժիմով: Գավառի պետական համալսարանի ուսանողները հանդես են եկել իրենց բիզնես գաղափարներով և դրանց իրագործմանն ուղղված հաջորդական քայլերի ներկայացմամբ:

Եվրոպական միության «ERASMUS+ FLEXWBL Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատանքի վրա հիմնված ուսուցման ճկուն, նորարարական և գործնական հիմքի մշակում» ծրագրի շրջանակներում հաշվետու ուսումնական տարում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ և աշխատաժողովներ, որոնց ընթացքում մասնակիցները քննարկել են ծրագրի իրականացմանը միտված գործողությունների պլանը, մի շարք հարցեր, իսկ արդյունքում, համավարակի հետևանքով ծագած բարդությունները հաշվի առնելով, ծրագիրը երկարաձգվել է ևս մեկ տարով:

ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժինը հաշվետու ուսումնական տարվա ընթացքում իրականացրել է տարաբնույթ տեղեկատվական, ուսուցողական, ճանաչողական ծրագրեր ու կազմակերպել միջոցառումներ, կատարել բուհի գիտահետազոտական, կրթական, ուսումնամեթոդական, դաստիարակչական գործունեության օպերատիվ լուսաբանում՝ ապահովելով սերտ համագործակցություն գործընկեր կազմակերպությունների, ներքին ու արտաքին շահակիցների հետ:

Արտաքին կապերի և լրատվության բաժինը հաշվետու ուսումնական տարում իր գործառույթներն իրականացնելիս՝ համակարգված աշխատել է ԳՊՀ ռեկտորատի, ֆակուլտետների, դեկանատների, ամբիոնների աշխատակազմերի, ակադեմիական քաղաքականության բաժնի, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, համալսարան-գործատու համագործակցությունը, բուհում գործող ակումբների, ուսումնաօժանդակ, տնտեսատեխնիկական և այլ ստորաբաժանումների հետ:

Բաժինը շարունակել է համագործակցել ԳՊՀ ուսանողներին կրթաթոշակներ տրամադրող կազմակերպությունների հետ. Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամի, Հայ կրթական հիմնարկության, «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի, Գավառի համայնքապետարան և այլ բարեգործական, մարդասիրական կառույցների հետ:

Ամենօրյա աշխատանքներ են իրականացվել բուհում սովորող սոցիալապես անապահով, բազմանդամ ընտանիքների ուսանողների, հաշմանդամություն ունեցող և ծնողազուրկ ուսանողների հետ: Թարմացվել է վերոնշյալ ուսանողների տվյալների բազան, որի հիման

վրա համապատասխան կարգավիճակ ունեցող ուսանողները ներգրավվել են կրթաթոշակային ծրագրերում և ստացել ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:
ԳՊՀ-դպրոցներ համագործակցության ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կազմակերպվել են անցանց և առցանց միջոցառումներ: Բաժնի կողմից հիշյալ հաստատություններ են առաքվել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հարցաթերթեր, տեղեկատվական թերթիկներ:
Բաժնի կողմից համակարգվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների ուսուցիչների, դաստիարակների համար կազմակերպված տարաբնույթ վերապատրաստումների, մասնագիտական կարողությունների զարգացման ծրագրերի, աշակերտների համար նախատեսված միջոցառումների, դասընթացների կազմակերպչական աշխատանքները:
Հաշվետու ժամանակահատվածում բուհում կայացած բազմաբնույթ վերապատրաստումների, մրցույթների, միջոցառումների համար ըստ պահանջի պատրաստվել են շնորհակալագրեր, հավաստագրեր:

Իրականացվել է համալսարանում կայանալիք առցանց և անցանց միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության տարածում և մասնակցություն կազմակերպչական աշխատանքներում:

Իրականացվել է ԳՊՀ-ում կայացած միջոցառումների և հիշարժան իրադարձությունների լուսաբանում, լուսանկարում /նկարված լուսանկարներն արխիվացվել են/:

Իրականացվել է ԳՊՀ պաշտոնական կայքէջի ամենօրյա թարմացման աշխատանքներ:
ԳՊՀ ‹‹Դիմագիրք›› (Facebook) սոցիալական ցանցում կատարվել են ադմինիստրատիվ աշխատանքներ, թարմացումներ, պատասխան են տրվել բոլոր հաղորդագրություններին և մեկնաբանություններին:

Պատասխաններ են տրվել ԳՊՀ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեներին՝ info@gsu.am, infogsu@mail.ru ուղղված նամակներին:

Հաշվետու տարվա ընթացքում ԳՊՀ պաշտոնական կայքէջում www.gsu.am և ԳՊՀ ֆեյսբուքյան պաշտոնական (https://www.facebook.com/gavarstateuniversity/) էջում պատրաստվել և տեղադրվել է 257 նորություն՝ համապատասխան լուսանկարներով:
Աշխատանքներ են կատարվել ԳՊՀ կրթաթոշակային ծրագրերից օգտվող 92 ուսանողի հետ:

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ /2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ/

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ	2020-2021	2021-2022
«Ժիրայր Նիշանյան հիմնադրամ» կրթավճար ծրագիր	50 ուսանող	49 ուսանող
«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն	17 ուսանող	13 ուսանող
«Հայ կրթական» հիմանրկություն	7 ուսանող	9 ուսանող

Գավառի համայնքապետարան	13 ուսանող	17 ուսանող
«ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերություն	2 ուսանող	1 ուսանող
ԴԻԱԿՈՆԻԿԱ ԲՀ		1 ուսանող
Արցախի Հ կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն		1 ուսանող
«Հալեպ» Հայրենակցական բարեսիրական ՀԿ		1 ուսանող
«Յունուս» հիմնադրամ	7 ուսանող	

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ /2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ/

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ	2020-2021	2021-2022
Տնտեսագիտական ֆակուլտետ	24	23
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ	24	15
Բանասիրական ֆակուլտետ	25	26
Բնագիտական ֆակուլտետ	13	14
Հեռակա ուսուցման ֆակուլտետ	11	14
ԸՆԴԱՄԵՆԸ՝	97	92

ԳՊՀ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Գործունեության ոլորտները	2020-2021	2021-2022
www.gsu.am կայքի լուրեր	232	257
«info@gsu.am», «infogsu@mail.ru» էլեկտորոնային փոստի ներին ուղղված նամակների քանակը	5396	6421
Լուսանակարահանված միջոցառումներ/ արխիվացված նկարների քանակը	8 410/350	8577/445
ԳՊՀ կրթաթոշակային ծրագրերից օգտվող ողների քանակը	97	92

2022-2023 ուսումնական տարում ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի զարգացման հիմնական ուղղություններն են.

- ԳՊՀ միջազգայնացման նպատակով օտարերկրյա բուհերի, գիտակրթական կենտրոնների, պետական մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության խթանում:
- Զանգվածային լրատվամիջոցների, ուսումնական հաստատությունների, գործընկեր այլ կազմակերպությունների հետ համագործակցության գործընթացի պլանավորում, կազմակերպում և իրականացում:
- Օտարերկրյա բուհերի հետ փոխըմբռնման հուշագրերի և գիտակրթական ոլորտում համագործակցության պայմանագրերի կնքմանն ուղղված աշխատանքների իրականացում:
- ԳՊՀ-ում միջազգային գիտաժողովների և աշխատաժողովների կազմակերպման աշխատանքների համակարգում:
- ԳՊՀ-ում իրականացվող կարևորագույն միջոցառումների, ծրագրերի մասին տեղեկատվության օպերատիվ տարածում:
- Ֆակուլտետների, ամբիոնների, այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցության արդյունավետության բարձրացում:
- Համալսարանի արտաքին կապերի համակարգում և զարգացում, հանրային պատասխանատվության ծրագրերի իրականացում, բոլոր ներքին շահառուներին և արտաքին շահակիցներին լրատվության օպերատիվ տրամադրում:
- Միջազգային տարբեր ծրագրերին անդամակցություն:
- Բաժնի խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

Արեգ Սինանյան՝
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի
վարիչի ժամանակավոր պաշտոնակատար

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) բաժնում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Թարմացվել են ԳՊՀ պաշտոնական կայքի դիզայնը և ծրագրային միջավայրը, փոփոխության է ենթարկվել կայքի գլխավոր էջը, կայքի ընդհանուր կառուցվածքը
2. ԳՊՀ պաշտոնական կայքի համար ակտիվացվել է SSL անվտանգության սերտիֆիկատը
3. ԳՊՀ կայքում ստեղծվել են 50-ից ավելի էջեր, համալրվել են կայքի անգլերեն և ռուսերեն տարբերակները
4. թարմացվել է կայքի փաստաթղթեր բաժինը, տեղադրվել են նորմատիվ ակտերը
5. կատարվել են ԳՊՀ պաշտոնական կայքում հայտարարությունների, էջերի օպերատիվ թարմացումներ,
6. տեղադրվել են «առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների» դասացուցակները,
7. պարբերաբար հրապարակվել են քննաշրջանների ժամանակացույցերը,
8. «Գնումներ» էջում պարբերաբար հրապարակվել են գնումների վերաբերյալ հայտարարությունները, էլեկտրոնային հարցումների հղումները,
9. շարունակական սպասարկման և տեղեկատվական համալրման է ենթարկվել «international.gsu.am» կայքէջը, այն տեղափոխվել է նոր սերվերի վրա,
10. շարունակվել է էլեկտրոնային ուսուցման համակարգի ինֆորմացիոն համալրումը,
11. կազմակերպվել է 2021-2022թ ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի «Learn GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Ըստ ուսումնական պլանների՝ «Learn GSU» համակարգում համալրվել են խմբերի, դասախոսների անվանական և առարկաների ուսուցման տիրույթները, թղթային տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկներ,
12. շարունակական բնույթ է կրել «Learn GSU» համակարգի վերաբերյալ դասախոսներին և ուսանողներին խորհրդատվությունների տրամադրումը, առարկաների փաթեթների խմբագրման գործում աջակցության ապահովումը,
13. իրականացվել է ԳՊՀ «Office 365» էլեկտրոնային փոստերի ծառայությունների համակարգի սպասարկում,
14. «Examenation Gsu» քննական թեստային համակարգի միջոցով հաշվետու ուսումնական տարում անցկացվել են 15-ից ավել քննություններ, համալրվել է համակարգում առկա առարկայական թեստերի բազան: Առարկայական թեստերի թիվը հասել է 49-ի: Համակարգի ակտիվ օգտատերերի թիվը հասնում է 515-ի,
15. սպասարկվել է «էլեկտրոնային դեկանատ» համակարգը

16. շարունակաբար ապահովվել է «Էլեկտրոնային դեկանատ» համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունների զարգացումը,
17. շուրջ 10 և ավել վիրտուալ լսարաններ են ստեղծել Zoom համակարգով,
18. իրականացվել է «VK TEAMS-MYTEAM» կորպորատիվ հաղորդակցություն ապահովող ծրագրի սպասարկում,
19. գործարկվել է acb.gsu.am ենթադոմեյնը,
20. SS բաժնի կողմից իրականացվել են հեռահար համակարգչային տեխնիկայի սպասարկում, խորհրդատվությունների մատուցում,
21. դիմորդներին և ԳՊՀ ուսանողներին տրվել են խորհրդատվություններ տարբեր կապի միջոցների օգնությամբ:
22. իրականացվել են համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում, խորհդատվությունների տրամադրում,
23. Բնագիտական ֆակուլտետում բացվել է նոր համակարգչային լսարան,
24. կատարվել են սերվերային կենտրոնի պահուստային պատճենման աշխատանքներ,
25. իրականացվել է տպիչների սպասարկում՝ լիցքավորում, վերանորոգում,
26. քննարկվել և ներկայացվել են համակարգչային գույքի գնումների ցուցակները,
27. իրականացվել են անլար հասանելիություն ապահովող սարքերի սպասարկման աշխատանքներ, ավելացվել են նոր անլար հասանելիության սարքեր ԳՊՀ տարբեր մասնաշենքերում,
28. հստակ և ժամանակին կազմակերպվել են համացանցի հասանելիության, ցանցի կառավարման, սպասարկման և մշտադիտարկման աշխատանքները,
29. կատարվել են համակարգչային լսարանների արդիականացման աշխատանքներ,
30. առցանց ուսուցման պայմաններում մշտապես վերահսկվել է վիրտուալ լսարաններում անխափան աշխատանքը:
31. իրականացվել են SS բաժնի գործառութային պարտականությունների շրջանակի մեջ մտնող այլ աշխատանքներ:

ԳՊՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԳՊՀ պաշտոնական կայքի կատարելագործում, անգլերեն և ռուսերեն տարբերակների համալրում,
2. «ԳՊՀ էլեկտրոնային գրադարան» համակարգի կատարելագործում և ինֆորմացիոն ու աղբյուրագիտական համալրման շարունակական աշխատանքների իրականացում,
3. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների կայքի վերաթողարկում նոր ծրագրային միջավայրով,
4. ԳՊՀ ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգերի ուսումնասիրություն և ներդնում,
5. էլեկտրոնային ուսուցման «Learn.GSU» համակարգի տեղեկատվական ապահովման գործընթացի պարբերաբար իրականացում (ուսումնական պլանների հիման վրա թարմացումների, փոփոխությունների կազմակերպում):

6. համակարգչային լսարանների միասնական ղեկավարման համակարգի ներդնում և գործարկում,
7. ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի համար ծրագրային համակարգի ստեղծում acb.gsu.am հասանելիության հասցեով,
8. համալսարանում համացանցի կապի տրամադրման, համակարգչային ցանցի, բաժանորդային համակարգիչների ծրագրային և տեխնիկական սպասարկման, վերահսկման աշխատանքների իրականացում,
9. անլար հասանելիության կետերի ավելացում և սպասարկում,
10. նորացվող համակարգչային գույքի տեղադրման, համակարգչային լսարանների գույքի վերաբաշխման աշխատանքների իրականացում,
11. ԳՊՀ լոկալ ցանցի արդիականացում ժամանակակից սարքավորումներով և ստեղծված վիրտուալ ցանցի զարգացում,
12.«Linux Ubuntu» օպերացիոն համակարգի կիրառմանն ուղղված վերապատրաստման դասընթացների կազմակերպում, ինչպես նաև ներդնում որոշ համակարգիչների վրա,
13.առցանց և անցանց՝ զուգակցված ուսումնական գործընթացի որակյալ տեխնիկական ապահովում, ծրագրային սպասարկում,
14.ԳՊՀ մեդիահարթակի և ինտերնետ հեռուստատեսության ստեղծում,
15.SS բաժնի գործառույթների արդյունավետ իրականացում, առաջացող տարաբնույթ խնդիրների օպերատիվ լուծում:
16. ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի հետ համատեղ՝ աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական կազմի և այլ շահառուների համար վերապատրաստումների իրականացում:
17.ԳՊՀ «Վիրտուալ համալսարան» ծրագրի աստիճանական իրականացում:

Մարգար Հովհաննիսյան՝
ԳՊՀ տեղեկատվական
տեխնոլոգիաների բաժնի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանում գործում է մասնագիտացված գրադարան՝ երկու բաժանմունքներով և ընթերցասրահներով: Թիվ 1 գրադարանը՝ կից ընթերցասրահով, գտնվում է կենտրոնական մասնաշենքում, համալրված է հումանիտար ու տնտեսագիտական ուղղվածությամբ մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ: Թիվ 2 գրադարանը գտնվում է բնագիտական ֆակուլտետի մասնաշենքում և համալրված է բնագիտության ոլորտի մասնագիտական գրականությամբ:

Գրադարանը ծառայում է ուսանողներին, դասախոսներին, վարչական անձնակազմին, մարզի ազգաբնակչությանը՝ մասնագիտական ու գեղարվեստական գրականության ձեռք բերման և ուսումնասիրման գործում, նպատակն է՝ ընթերցասեր հանրության մեջ զարգացնելու և պահպանելու հակումը դեպի գիրքն ու ընթերցանությունը: Ինչպես Վիսարիոն Բելինսկին է բանաձևել. «Մեծագույն գանձը լավ գրադարանն է»:

Գավառի պետական համալսարանի գրադարանում գործող գրադարանավարության ավանդական մոտեցումները համադրվում են ժամանակակից պահանջների և նորարարական լուծումների հետ՝ գրադարանում գրավիչ միջավայր ստեղծելու համար:

Գրադարանը նպաստում է ուսումնական գործընթացին՝ համալրելով գրքաֆոնդը, կազմակերպելով և ընթերցողներին տրամադրելով մասնագիտական գրականություն և շտեմարաններ, սովորողների մոտ ձևավորելով տեղեկատվության հետ ինքնուրույն աշխատելու կարողություններ ու հմտություններ, զարգացնելով ընթերցանության մշակույթ:

2021-2022 ուստարում ԳՊՀ գրադարանը շարունակել է բարեխղճորեն կատարել գրադարանային գործառույթներն ու պարտականությունները՝ ապահովելով սովորողներին և այլ ընթերցողներին անհրաժեշտ գրքերով, մասնագիտական գրականությամբ, տեղեկատվական տարբեր աղբյուրներով: Իր առաքելությանը հավատարիմ՝ գրադարանը մատուցում է հետևյալ ծառայությունները.

1. առաջին կուրսեցիների՝ որպես գրադարանի ընթերցողների գրանցում և նրանց հնարավորության ընձեռում ուսումնառության տարիներին օգտվելու գրադարանից՝ սահմանված կառուցակարգերով,
2. ընթերցասրահում և գրադարանում ընթերցողների սպասարկում՝ ավանդական և էլեկտրոնային եղանակներով,
3. տեղեկատվական-մատենագիտական սպասարկում, անհատական և խմբային աշխատանքների տարբեր ձևերի և մեթոդների կիրառում,
4. գրականության մատենագիտական ցանկերի կազմում և հանրայնացում, գրքերի ցուցահանդեսների, միջոցառումների, գրքերի քննարկումների կազմակերպում, գրապահոցի «Բաց դռների» օրերի անցկացում,
5. անմիջական օգնություն ընթերցողին՝ տեղեկատվություն որոնելու, ընտրելու, ԳՊՀ էլեկտրոնային գրադարանից (e.Librery.qsu.am) օգտվելու, նորություններին իրազեկ դառնալու գործընթացներում,
6. աջակցություն՝ մասնագիտական և գեղարվեստական գրականության ընտրության հարցում,

7. սովորողների շրջանում տեղեկատվության հետ ինքնուրույն աշխատելու կարողությունների ու հմտությունների ձևավորում,
8. ընթերցանության մշակույթի զարգացում:

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ գրադարանում աշխատանքներ են իրականացվել հետևյալ հիմնական ուղղություններով.

1. գրադարանային ֆոնդի համալրում և արդիականացում,
2. մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում,
3. համալրումների ցուցադրություն և դրանց մասին տեղեկատվության տարածում,
4. գրքապաշարի մշակում,
5. գրքերի շրջանառում,
6. վնասված գրքերի վերանորոգում,
7. մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների լրամշակում,
8. մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում,
9. ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Գրադարան» հատվածամասի համալրում,
10. ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի հարստացում:

Գրադարանային ֆոնդի համալրում.

Հաշվետու ուսումնական տարում գրադարանը համալրվել է թվով 378 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, որոնք ձեռք են բերվել ԳՊՀ ռեկտորատի նախաձեռնությամբ և պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների աջակցությամբ: Իրենց ներդրումն են ունեցել ԳՊՀ դասախոսներ Հրանուշ Հակոբյանը, Կարինե Պապիկյանը, ուսանողներ Թամարա Մնացականյանը, Վահե Գոզեյանը, Մարինե Պողոսյանը, ինչպես նաև "Ֆրիդրիխ Էբերտ" հիմնադրամը, "Վորլդ Վիժն" կազմկերպությունը և ուրիշներ:

Մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում.

Համալրված 378 միավոր գրքերը մուտքագրվել, նկարագրվել և դասակարգվել են: Արդյունքում ավելացել են.

1. 55 ուսումնական ձեռնարկ, դասագիրք, սեղմագիր,
2. 47 գիտական հանդեսներ և հոդվածների ժողովածուներ,
3. 36 գեղարվեստական գրականություն,
4. 240 այլ ձեռնարկներ, նյութեր:

Արդյունքում՝ ԳՊՀ գրադարանն իր գրքային ֆոնդում այսօր ունի 42416 գրադարանային միավոր, որից.

1. հայերեն՝ 20.988 գիրք,
2. ռուսերեն՝ 15.558 գիրք,
3. այլ լեզուներով՝ 5.870 գիրք:

Գրքերի շրջանառում և վնասված գրքերի վերանորոգում.

Կրթական գործընթացի որակի ապահովման և ակադեմիական խնդիրների լուծման արդի պահանջներից ելնելով՝ հաշվետու ժամանակաշրջանում ակտիվ շրջանառվել է ինչպես մասնագիտական, այնպես էլ գեղարվեստական գրականությունը: Ուսանողների շրջանում ընդգծված հետաքրքրություն կա ինչպես մասնագիտական, այնպես էլ գեղարվեստական գրքերի նկատմամբ: Մեծ պահանջարկ է նկատվում ժամանակակից հայ և օտար գրողների գրքերի հանդեպ: Գրքատացքին նպաստում են համալրումների մասին տեղեկատվության

տարածումը ամբիոններում, ուսանողներին խորհրդատվությունների մատուցումը, ինչպես նաև նոր գրականության ցուցադրությունը գրադարանում և ընթերցասրահներում:

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում՝ սեպտեմբեր-հոկտեմբեր և փետրվար-մարտ ամիսներին կազմակերպվում են Գրադարանի «բաց դռների» օրեր, որոնց ընթացքում ուսանողները, հատկապես՝ առաջին կուրսեցիները, ծանոթանում են համապատասխան մասնագիտական գրքապաշարին:

ԳՊՀ գրքաֆոնդի ֆիզիկական պահպանման, վնասված գրքերի վերանորոգման ուղղությամբ կատարվում են հետևողական աշխատանքներ:

Շարունակական աշխատանքներ են տարվել գրքի հանձնումն ուշացնող, հեռացված կամ տարկետման մեջ գտնվող, բուհն ավարտող ուսանողների հետ՝ գրքի վերադարձման մասին զգուշացնելու, գրքային պարտքերի վերադարձն ապահովելու ուղղությամբ: Գրադարանում մեծ պատասխանատվությամբ են կատարվել նաև գրքեր պատվիրած և պահանջ ներկայացրած ընթերցողներին գրականության առկայության մասին տեղեկատվության ապահովման և պահանջագրերի հիման վրա նրանց բարեխիղճ սպասարկման գործառույթները:

Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների լրամշակում.

Կատարվել է 42391 գրքերից կազմված գրքաֆոնդի մասնագիտական գրացուցակների լրամշակում: Արդյունքում ստացել ենք յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխանող գրքերի հետևյալ քանակը.

1. Հայոց լեզու և գրականություն՝ 3633
2. Ռուսաց լեզու և գրականություն՝ 2503
3. Անգլերեն լեզու և գրականություն՝ 2300
4. Պատմություն՝ 1807
5. Իրավագիտություն՝ 2043
6. Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա՝ 1422
7. Կառավարում և ֆինանսներ՝ 2622
8. Հաշվապահական հաշվառում՝ 2622
9. Կենսաբանություն՝ 2437
10. Դեղագործական քիմիա՝ 242
11. Աշխարհագրություն՝ 959
12. Բնապահպանություն և բնօգտագործում՝ 111
13. Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա՝ 2526
14. Քարտեզագրություն և կադաստրային գործ՝ 63
15. Սերվիս՝ 43:

Համալսարանը շարունակում է մասնագիտական գրականության համալրման աշխատանքները:

Մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում.

Մասնագիտական տեղեկատվական բազան ներառում է մասնագիտական հոդվածների մատենագիտական ցանկերը: Գրադարանում համալրվում և լրամշակվում է թեմատիկ հանձնարարականների մատենագիտական ցանկը, որը 2021-2022 ուստարում թարմացվել ու նորովի տպագրվել է՝ ներառելով տարբեր հանդեսների, գիտական նյութերի ժողովածուներում ընդգրկված հոդվածների վերնագրեր (վերաբերում է 3993 հոդվածի),

ինչպես նաև ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկը՝ 12 մասնագիտական ուղղություններով (ընդգրկում է 1732 հոդվածի վերնագիր):

Այս ցանկերը, բացի գրադարանում առկա թղթային տարբերակից, տեղադրված են նաև ԳՊՀ www.gsu.am պաշտոնական կայքի «Գրադարան» հատվածամասում և պարբերաբար լրացվում են:

Գրադարանային միջոցառումներ.

2021-2022 ուստարում գրադարանում կազմակերպվել է Ռաքել Պալացիոյի «Հրաշքը» և «Ջուլիանը» գրքերի քննարկում և վերլուծություն: Քննարկումը անցկացվել է համակարգչային ծրագրավորման 4-րդ կուրսի ուսանողների հետ. մասնակցել են նաև դասախոսներ, բանասիրական ֆակուլտետի և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի տարրական մանկավարժության բաժնի բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողներ: Ոչ միայն վերլուծվել է գրքի գեղարվեստական բովանդակությունը, այլև այնտեղ արծածվող ժամանակակից ուսումնական գործընթացներից մեկը՝ ներառական կրթության դժվարությունները: Միաժամանակ ցուցադրվել են հատվածներ «Հրաշքը» գրքի հիման վրա նկարահանված ամերիկյան համանուն ֆիլմից՝ համեմատական գիծ տանելով գրքի ու ֆիլմի միջև: Գրադարանում անցկացվել են նաև մայրենի լեզվին նվիրված ցերեկույթ, այլ միջոցառումներ: 2022–2023 ուսումնական տարում նախատեսվում է կազմակերպել Արմեն Նիազյանի «Բռնիր ձեռքս, ես վախենում եմ» գրքի քննարկում, ինչպես նաև միջոցառում՝ նվիրված Եղիշե Չարենցի ծննդյան 125 ամյակին:

ԳՊՀ գրադարանի համագործակցությունը.

Գրադարանային համակարգի զարգացման համար առանցքային նշանակություն ունի փոխադարձ կապը այլ գրադարանների հետ, ինչն անհրաժեշտ նախապայման է գրադարանային առաջավոր փորձի ներդրման և կիրառման համար:

ԳՊՀ գրադարանը Հայաստանի գրադարանային ասոցիացիայի անդամ է, համագործակցում է Հայաստանի ազգային գրադարանի հետ, որի շրջանակներում ներկայացնում է ամենամյա հաշվետվություն գրադարանի հագեցվածության մասին: Գրադարանի հագեցվածության մասին ցուցանիշները հրատարակվում են Հայաստանի ազգային գրադարանի «Հայաստանի գրադարանները» մատենաշարում: ԳՊՀ գրադարանը համագործակցում է նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) հիմնարար գրադարանի, ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի և Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների գրադարանների հետ:

ԳՊՀ հրատարակությունների օրինակներ են տրամադրվում Հայաստանի ազգային գրադարանին, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի և Արցախի պետական համալսարանի, ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների գրադարաններին, Գեղարքունիքի մարզային և Գավառի քաղաքային գրադարաններին:

ԳՊՀ գրադարանը շարունակում է սերտ համագործակցությունը Գեղարքունիքի մարզային և Գավառի քաղաքային գրադարանների հետ, որի արդյունքում Համալսարանի գրքերի նվիրատվություններով վերոնշյալ գրադարաններում տարեցտարի համալրվում է ԳՊՀ հրատարակությունների ֆոնդը: Մարզային գրադարանի հետ համագործակցության շրջանակում անցկացվում է գրքերի ամենամյա փոխադարձ նվիրատվություն: Գավառի մարզային գրադարանի տնօրինությունը, կարևորելով ԳՊՀ գրադարանի հետ

համագործակցությունը, կազմակերպում է համատեղ միջոցառումներ, հանդես գալիս տարբեր նախաձեռնություններով:

2022–2023 ուստարում ԳՊՀ գրադարանի զարգացման հիմնական ուղղությունները.

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում է ԳՊՀ գրադարանի գործունեության ակտիվացում՝ հետևյալ ուղղություններով.

1. շարունակել ԳՊՀ գրադարանի համագործակցությունը ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի, ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի և Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների և այլ գրադարանների հետ:
2. տեղեկատվական և հաղորդակցական արդի տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման շնորհիվ իրականացնել գրադարանային պաշարների թվայնացման գործընթացը, ինչը հնարավորություն կստեղծի բարձրացնելու ընթերցողների հետ աշխատանքի արդյունավետության աստիճանը:
3. ԳՊՀ «e-library.gsu» էլեկտրոնային գրադարանի շարունակական համալրում՝ անհրաժեշտ գրականությամբ,
4. լուսապատճենել ու էլեկտրոնային գրադարանում տեղադրել մեկ օրինակից մասնագիտական գրքերը, դասախոսների և ուսանողների կողմից ներկայացված հազվագյուտ գրքերը, ձեռնարկները և այլ անհրաժեշտ ուսումնական նյութեր,
5. ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Գրադարան» հատվածամասի «Համալրված գրականություն» բաժնում գրքաֆոնդը համալրած գրականության մասին տեղեկությունների տեղակայում,
6. ապահովել կրթական և գիտահետազոտական գործընթացները անհրաժեշտ գրականությամբ, տեղեկատվական աղբյուրներով,
7. ընթերցասրահում արդիականացնել համակարգչային սարքավորումները, ստեղծել գրավիչ միջավայր, խթանել ընթերցանությունը ուսանողների շրջանում,
8. աջակցել ԳՊՀ դասախոսներին՝ իրականացնելու գիտահետազոտական գործունեություն, ապահովել անհրաժեշտ գիտական գրականությամբ:

Ալվարդ Թորչյան՝
ԳՊՀ գրադարանավարուհի

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Գավառի պետական համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը (այսուհետ՝ նաև ՄՌԿ)՝ որպես բուհի կառուցվածքային ստորաբաժանում, գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ԳՊՀ կանոնադրության, ԳՊՀ ՄՌԿ քաղաքականության հիմունքների, ԳՊՀ ՄՌԿ բաժնի կանոնակարգի և այլ գերատեսչական ու ներբուհական ակտերի հիման վրա:

ԳՊՀ ՄՌԿ բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ներկայացնում է նախորդ ուսումնական տարում կատարված աշխատանքների հաշվետվություն և հաջորդող ուսումնական տարվա զարգացման ուղությունները՝ ըստ առաջնահերթ խնդիրների և նպատակների:

Հաշվետու՝ 2021-2022 ուսումնական տարում աշխատանքները կատարվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

1. վերանայվել և լրացվել են աշխատակիցների անձնական գործերը,
2. նախապատրաստվել են կադրային, վարչական, ժամանակավոր կցագրման, ուսանողական և այլ հրամանների նախագծեր,
3. կնքման են ներկայացվել աշխատանքային պայմանագրեր, վերանայվել և ուսումնասիրվել է ԳՊՀ աշխատակիցների շարժը (տե՛ս Աղյուսակ 1):
4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինված ուժերի Գեղարքունիքի մարզային զինվորական կոմիսարիատ է ներկայացվել տարկետման իրավունք ունեցող ուսանողների վերաբերյալ Ձև 26 ձևաչափի թվով 1 (մեկ) տեղեկանք:
5. 2022 թվականի հունվար ամսին բոլոր հիմնական աշխատողներին համապատասխան հրամանով տրվել է պարգևատրում;
6. 2021-2022 ուսումնական տարում ուսման վարձի զեղչ է տրամադրվել թվով 110 ուսանողի:
7. իրականացվել են ուսանողների ընդունման, վերականգման, ազատման, տեղափոխման, հեռացման ձևակերպումներ և ՄՌԿ բաժնին վերաբերող այլ գործառույթներ,
8. Գավառի պետական համալսարանը հանդիսանում է Կամոյի (այժմ՝ Գավառ) ինդուստրիալ մանկավարժական քոլեջի և թիվ 70 պրոֆտեխուսումնարանի իրավահաջորդը: Քոլեջի և ուսումնարանի արխիվային փաստաթղթերը գտնվում են համալսարանի արխիվում: Ուստի, ԳՊՀ-ն ՄՌԿ-ն սահմանված կարգով նախապատրաստել է վերոհիշյալ ուսումնական հաստատությունների աշխատողների և ուսանողների վերաբերյալ տեղեկանքներ (տե՛ս Աղյուսակ 2):

2021-2022 ուսումնական տարում գրանցվել է ԳՊՀ աշխատակիցների հետևյալ շարժը

Աղյուսակ 1

Հ/Հ	ԳՊՀ աշխատակիցներ	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
	➢ նդունվել են աշխատանքի		
1.	Դասախոսներ	80	77
2.	Այլ աշխատողներ	7	3
3.	Ընդամենը	87	80
	➢ Ազատվել են աշխատանքից		
4.	Դասախոսներ	76	70
5.	Այլ աշխատողներ	4	6
6.	Ընդամենը	80	76
	➢ Գործուղում ԵՄ Ծրագրերով		
7.	Դասախոսներ	-	6
8.	Այլ աշխատողներ	3	5
9.	Ընդամենը	3	11
	➢ Գործուղում ՀՀ տարածքում		
10.	Աշխատող	2	9
11.	Ուսանող	-	-
12.	Ընդամենը	2	9
	➢ Պարգևատրումներ		
13.	Աշխատող	45	14
	➢ Նկատողություններ		
	Աշխատող	4	1
	➢ Երեխայի խնամքի արձակուրդ	4	3
	➢ Հղիության և ծննդաբերության արձակուրդ	6	1

Հաշվետվություն Կամոյի (Գավառ) ինդուստրիալ մանկավարժական քոլեջի և թիվ 70 պրոֆտեխուսումնարանի աշխատակիցների և շրջանավարտների վերաբերյալ պատրաստված և տրամադրված տեղեկանքների վերաբերյալ

Աղյուսակ 2

Հ/Հ	Տեղեկանքներ և պատասխան գրություններ	Հայերեն	Ռուսերեն
1.	պատասխան գրություններ ինդուստրիալ մանկավարժական քոլեջի աշխատողների և ուսանողների վերաբերյալ	51	9
2.	պատասխան գրություններ թիվ 70 պրոֆտեխուսումնարան աշխատողների և ուսանողների վերաբերյալ	4	6

3.	Տեղեկանքներ Ինդուստրիալ մանկավարժական քոլեջ աշխատողների և ուսանողների վերաբերյալ	12	1
4.	Ընդամենը	67	16

2022-2023 ուսումնական տարվա համար ԳՊՀ ՄՌԿ բաժինն առաջնային է համարում գործունեության հետևյալ ուղղությունները.

1. ԳՊՀ ՄՌԿ քաղաքականության արդյունավետության բարձրացում,
2. ԳՊՀ աշխատակիցների անձնական գործերի էլեկտրոնային հաշվառում և վարում,
3. ուսանողների իրավական կարգավիճակի փոփոխությունների օպերատիվ արձանագրում,
4. ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կադրային ապահովվածության գնահատում և կադրային կարիքների բացահայտում, ՄՌԿ գործընթացների մշտադիտարկում,
5. ԳՊՀ արական սեռի դիմորդների և ուսանողների զինծառայության հետ կապված հարաբերությունների համակարգում,
6. ԳՊՀ տարբեր տարակարգերի աշխատակիցների պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրերի վերանայում,
7. դասախոսների վարկանիշային գնահատման արդյունքներով պայմանավորված՝ տարակարգերի համակարգի մշակում և աստիճանաբար գործարկում,
8. աշխատանքային պայմանագրերի կնքման գործընթացի շարունակական իրականացում և ԳՊՀ աշխատակիցների կողմից աշխատանքային պայմանագրերի պայմանների կատարման վերահսկում,
9. ԳՊՀ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ազատման, տեղափոխման, արձակուրդի տրամադրման, գործուղման, կարգավիճակի փոփոխության և աշխատանքային բնույթի այլ հրամանների նախագծերի նախապատրաստում,
10. ԳՊՀ հրամանագրքերի, ԳՊՀ աշխատողների անձնական գործերի կազմման, վարման և պահպանության գործընթացների բարելավում:
11. ՄՌԿ բաժնի փաստաթղթաշրջանառության բարելավում,

ԳՊՀ ՄՌԿ ԲԱԺՆԻ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

h/h	Նպատակը	Գործողությունները	Ժամկետը	Պատասխանատու ստորաբաժանումները /պատասխանատուները/	Հնարավոր խոչընդոտները	Արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցիչները
1.	ԳՊՀ ՄՌԿ քաղաքականության արդյունավետ իրականացում:	Աշխատակիցների հետ նպատակային աշխատանք նրանց ներգրավում մասնագիտական վերապատրաստման և զարգացման ծրագրերում, նրանց կարողությունների արդյունավետ օգտագործում ու զարգացում՝ ելնելով Համալսարանի առաքելությունից, զարգացման ռազմավարական ծրագրից, գերակա նպատակներից ու խնդիրներից: Համալսարանի կողմից մարդկային ռեսուրսների կառավարումն իրականացնելիս՝ բոլոր շահակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանություն: Ծառայողական առաջխաղացման պլանավորում: Փոխհատուցման և պարգևատրման կառուցակարգերի շարունակական	2022-2023 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին:	Պատասխանատու աշխատակցի կողմից պարտականությունների կատարման մեջ թերացում:	Ներքին շահակիցների բավարարվածության աճ:

		կիրառում և դրանց բարելավում:				
2.	Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի բարելավում:	ԳՊՀ աշխատակիցների անձնական գործերի էլեկտրոնային հաշվառում և վարում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին:	Էլեկտրոնային համակարգի խափանումներ	Ներքին շահակիցների բավարարվածության աճ:
3.	Ուսանողների իրավական կարգավիճակի փոփոխությունների օպերատիվ հաշվառում:	Ձեկուցագրերի հավաքագրում, ուսանողական հրամանների նախագծերի կազմում, կարգավիճակի փոփոխությունների պատշաճ արձանագրում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին, ԳՊՀ դեկանատներ:	Ֆորս-մաժորային իրավիճակներ	Ներքին շահակիցների բավարարվածության աճ:
4.	ՄՌԿ գործընթացների մշտադիտարկում:	Իրականացնել ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կադրային ապահովվածության գնահատում և կադրային կարիքների բացահայտում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Կարիքի ոչ ժամանակին բացահայտում և ոչ ճիշտ գնահատում:	Համալսարանի աշխատակիցների գործունեության արդյունավետության աճ:
5.	ԳՊՀ արական սեռի դիմորդների և ուսանողների զինծառայության հետ կապված հարաբերությունների	Ձև 26 տեղեկանքների ժամանակին ներկայացում զինկոմիսարիատ, ԳՊՀ արխիվում պահպանվող համապատասխան փաստաթղթերի հաշվառում, դասակարգում, գրանցամատյանների կազմում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին, ԳՊՀ արխիվի աշխատակից:	Պատասխանատու աշխատակցի կողմից պարտականությունների կատարման մեջ թերացում:	Ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աճ:

	համակարգում:					
6.	ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ ՄՌԿ բաժնի աշխատանքի արդյունավետության բարձրացում:	Տվյալների հավաքագրում և թվայնացում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Գործառույթների ոչ պատշաճ իրականացում	Հստակ և օպերատիվ փաստաթղթաշրջանառության ապահովում:
7.	Գործառույթների հստակ սահմանում, համաչափ բաշխում	ԳՊՀ բոլոր տարակարգերի աշխատակիցների պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրերի բարելավում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Պատասխանատու աշխատակցի պարտականությունների և գործառույթների ոչ հստակ սահմանում:	Պարտականությունների հստակ կատարում:
8.	Դասախոսնե րի աշխատանք իարդյունավետության բարձրացում	Դասախոսնե րի վարկանիշա յին գնահատման արդյունքնե րով պայմանավորված տարակարգե րի համակարգի մշակում և աստիճանա բար գործարկում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Վարկանիշավորման չափանիշների ոչ հստակ սահմանում	Դասախոսների խրախուսման նոր կառուցակարգի ներդնում
9.	Աշխատանքային պայմանագրերի կատարման գործընթացի բարելավում:	ԳՊՀ աշխատակիցների կողմից աշխատանքա յին պայմանագրերի պայմանների կատարման վերահսկում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Պայմանագրերի պայմանների ոչ լիարժեք և ոչ ժամանակին կատարում:	Պայմանագրային պարտականությունների հստակ կատարում:

10.	ԳՊՀ աշխատակիցների կարգավիճակների հստակեցում:	ԳՊՀ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ազատման, տեղափոխման, արձակուրդի տրամադրման, գործուղման, կարգավիճակի փոփոխության և այլ աշխատանքային բնույթի հրամանների նախագծերի նախապատրաստում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	Հրամանների նախագծերում կարգավիճակի և դրա փոփոխությունների ոչ հստակ և ոչ լիարժեք ամրագրում:	ԳՊՀ աշխատակիցների կարգավիճակների փոփոխությունների համարժեք արձանագրում:
11.	Էլեկտրոնային ՄՌԿ համակարգի ներդրում	ԳՊՀ հրամանագրքերի, ԳՊՀ աշխատողների անձնական գործերի կազմման, վարման և պահպանության գործընթացների բարելավում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ ՄՌԿ բաժին	ԳՊՀ հրամանագրքերի, ԳՊՀ աշխատողների անձնական գործերի կազմման, վարման և պահպանության գործընթացներում թերությունների և բացթողումներ:	ԳՊՀ հրամանագրքերի, ԳՊՀ աշխատողների անձնական գործերի կազմման, վարման և պահպանության գործընթացների հստակ իրականացում:

Խաչատուր Սաֆարյան՝
ԳՊՀ մարդկային ռեսուրսների
կառավարման բաժնի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐԽԻՎԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ արխիվը շարունակել է աշխատանքները՝ ապահովելով բուհի ողջ արխիվային գործի վարումը, արխիվային փաստաթղթաշրջանառության իրականացումը:

Արխիվը՝ որպես Գավառի պետական համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում, 2021-2022 ուսումնական տարում իր գործունեությունն իրականացրել է «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության համապատասխան որոշումների, օրենսդրական և ենթաօրենսդրական այլ ակտերի դրույթներին համապատասխան, ինչպես նաև Համալսարանի կանոնադրության հիման վրա:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ արխիվի հետ կապված որևէ դիմում կամ հարցադրում անպատասխան չի մնացել, համակարգվել է արխիվի ընթացիկ գործունեությունը, ապահովվել են արխիվի գործավարության և արխիվային գործի վարումը, սահմանված կարգով կազմակերպվել են արխիվ հանձնվող փաստաթղթերի գրանցումը, հաշվառումը, արխիվացումը և արխիվ մուտքագրված փաստաթղթերի պահպանությունը:

2022-2023 ուսումնական տարում առաջնային են ԳՊՀ արխիվի գործունեության հետևյալ ուղղությունները.

1. ԳՊՀ արխիվում պահպանվող փաստաթղթերի հաշվառում, օգտագործման, համալրման կազմակերպում, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից արխիվ հանձնված փաստաթղթերի ընդունում,
2. համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից համապատասխան փաստաթղթերը ժամանակին արխիվ հանձնելու գործընթացի հսկողություն,
3. արխիվում փաստաթղթերի պահպանման համակարգի բարելավում,
4. Հայաստանի Հանրապետության և արտերկրի տարբեր կազմակերպություններից ստացվող հարցումներին սահմանված կարգով պատասխանների տրամադրում,
5. ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների դիմումների հիման վրա համապատասխան տեղեկանքների կազմում, դրանց հիմքերի ճշգրտում և ժամանակին տրամադրում,
6. սահմանված կարգով փաստաթղթերի մարման գործընթացի կազմակերպում,
7. արխիվում պահպանվող փաստաթղթերի էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում:

ԳՊՀ ԱՐԽԻՎԻ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

h/h	*Նպատակը*	*Գործողությունները*	*Ժամկետը*	*Պատասխանատու ստորաբաժանումները /պատասխանատուները/*	*Հնարավոր խոչընդոտները*	*Արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցիչները*
1.	Արխիվում պահպանվող փաստաթղթերի հաշվառում, օգտագործման, համալրման կազմակերպում, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից արխիվ հանձնված փաստաթղթերի ընդունում:	1.Արխիվում պահվող փաստաթղթերի գրանցամատյանների վարում, ուսանողների շարժին հետևում: 2.Շրջանավարտների անձնական գործերի ստուգում, ամբողջականացում: 3.Ուսումնական տարվա ավարտից հետո մատյանների, շրջանավարտների ուսանողական տոմսերի, ստուգման գրքույկների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ցուցակների կազմում, հանձնընդունելության գործընթացի կազմակերպում: 4. ԳՊՀ առկա, հեռակա, մագիստրատուրայի ընդունելության ավարտից հետո ուսանողների անձնական գործերում համապատասխան փաստաթղթերի առկայության ստուգում, հանձնընդունելության գործընթացի կազմակերպում: 5.Ուսանողներին վերաբերող հրամաններից քաղվածքների պահպանում նրանց անձնական գործերում (ընդունում, վարչական տույժ, տարկետում, վերականգնում, հեռացում, ազատում):	2022-2023 ուստարի	ԳՊՀ արխիվի վարիչ, ամբիոնի լաբորանտներ, առկա, հեռակա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության պատասխանատու քարտուղար, ընդունող հանձնաժողովի անդամներ, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի աշխատակից:	Պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի կողմից պարտականությունների կատարման թերացում:	Արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության մակարդակի աճ:

2.	Սահմանված կարգով փաստաթղթերի ընդունում, ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանում ներից համապատասխան փաստաթղթերը ժամանակին արխիվ հանձնելու նկատմամբ հետևողական հսկողություն:	Ըստ ժամանակացույցի աշխատանքի պլանավորում համապատասխան ստորաբաժանում ների աշխատակիցների՝ լաբորանտների, պատասխանատու քարտուղարի, հանձնաժողովի անդամների հետ: Հանձնընդունելութ յան գործընթացի կազմակերպում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ արխիվի վարիչ, ամբիոնի լաբորանտներ, առկա, հեռակա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության պատասխանատու քարտուղարի, ընդունող հանձնաժողովի անդամներ, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի աշխատակից:	Պատասխանատու ստորաբաժան ման աշխատակցի կողմից պարտականու թյունների թերի կատարում:	Արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության մակարդակի աճ:
3.	Արխիվում գտնվող փաստաթղթերի պահպանման համակարգի բարելավում:	Արխիվում պահպանվող փաստաթղթերի էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծում:	2022-2023 ուստարի	Արխիվի վարիչ, SS բաժնի աշխատակիցներ:	Էլեկտրոնային գրանցամատ յանի ծրագրային և տեխնիկական մշակման աշխատանքն երի դանդաղում կամ ոչ պատշաճ կատարում	Արխիվային փաստաթղթերի գրանցման և վարման էլեկտրոնային համակարգի ներդրում
4.	Հանրապետությա ն և արտերկրի տարբեր կազմակերպությո ւններից ստացվող հարցումներին պատասխանների սահմանված կարգով և ժամկետներում տրամադրում: Քաղաքացիների դիմումների հիման վրա տեղեկանքների	Արխիվում պահպանվող համապատասխան փաստաթղթերի հաշվառում, դասակարգում, գրանցամատյանների կազմում:	2022-2023 ուստարի	Արխիվի վարիչ	Արխիվում համապատաս խան փաստաթղթերի կամ տվյալների բացակայութ յուն	ԳՊՀ-ի սոցիալական պատասխանատվութ յան բարձրացում, համալսարանի նկատմամբ հանրային վստահության աճ:

	կազմում և դրանց հիմքերի ճշգրտում:					
5.	Սահմանված կարգով փաստաթղթերի մարման գործընթացի կազմակերպում:	Հիմք ընդունելով ԳՊՀ արխիվի կանոնակարգը և ՀՀ «Արխիվային գործի մասին» օրենքը՝ արխիվում պահվող և վաղեմության ժամկետն անցած փաստաթղթերի մարում:	2022-2023 ուստարի	ԳՊՀ արխիվի վարիչ, ամբիոնի լաբորանտներ:	Ժամկետների բացթողում, փաստաթղթերի անհարկի կուտակում արխիվում	ԳՊՀ արխիվի գործառույթների արդյունավետ իրականացում, ժամկետանց փաստաթղթերի փոխարեն նոր փաստաթղթերի մուտքագրում:

Գոհար Կարապետյան՝
ԳՊՀ արխիվի վարիչ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը կանոնադրական խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով շարունակում է նախորդ տարիներից ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության միջոցառումները համալսարանի աշխատողների համար:

Համալսարանի աշխատակիցների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու նպատակով արհեստակցական կազմակերպության և համալսարանի ռեկտորի միջև 2021թ. օգոստոսի 27-ին վերակնքվել է համալսարանի կոլեկտիվ պայմանագիրը:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի արհկոմիտեն ուշադրություն է դարձրել աշխատակիցների և ուսանողների սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով արհկոմիտեն իր միջոցներից օգնության կարգով աշխատակիցներին հատկացրել է 1 միլիոն 695 հազար դրամ:

Աշխատանքներ են կատարվել երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի մշակույթի ամրապնդման ուղղությամբ:

2021թ. աշնանը համալսարանի ֆիզիկական դաստիարակության դասախոսներ Վ. Սարգսյանի և Գ. Հասասյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է սեղանի թենիսի միջհամալսարանական առաջնություն: Առաջիկայում նախատեսվում է կազմակերպել նաև շախմատի մրցաշար:

2022 թվականի հուլիսին համալսարանի աշխատակիցների համար էքսկուրսիա կազմակերպվեց դեպի Ջերմուկ քաղաք:

Հաշվետու ուսումնական տարում իրականացվել է աշխատանքի պայմանների բարելավում ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում:

Արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական գործառույթներին համապատասխան այսուհետ ևս հետամուտ կլինի համալսարանի աշխատակիցների և ուսանողների համար սոցիալական ծրագրերի իրականացմանը, աջակցության ցուցաբերմանը, իր գործառույթների պատշաճ իրականացմանը:

Լյովա Սիրունյան՝
ԳՊՀ արհեստակցական
կազմակերպության նախագահ

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ նաև ՈՒԽ)՝ որպես բուհի ուսանողական ինքնակառավարման մարմին, 2021-2022 ուսումնական տարում իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք կյանքի են կոչվել և՛ համալսարանի ներսում, և՛ համալսարանից դուրս:

ԳՊՀ ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը համատեղ նախաձեռնել և իրականացրել են ուսանողական բուհական և հանրապետական գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, բանավեճեր, գրական-գեղարվեստական ցերեկույթներ, ինտելեկտուալ միջոցառումներ, այլ կրթական, գիտական, դաստիարակչական ուղղվածություն ունեցող միջոցառումներ՝ նպաստելով սովորողների ներուժի բացահայտմանը, ընդհանուր և մասնագիտական զարգացմանը:

Ուսանողական ինքնակառավարման մարմինը գործել է՝ նպատակ ունենալով ապահովել կրթական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, հասարակական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը, նրանց մասնագիտական, անձնային կարողությունների զարգացումը:

Նշված նպատակն իրականացվել է հետևյալ հիմնական գործառույթների միջոցով.

1. գիտահետազոտական բնույթի ձեռնարկների՝ գիտաժողովների, քննարկումների կազմակերպում՝ ներգրավելով նաև այլ բուհերի ուսանողներին,
2. հանրապետության տարբեր կրթական հաստատություններում կազմակերպվող գիտաժողովներին մասնակցություն և զեկուցումների ներկայացում,
3. այլ ուսանողական հաստատությունների և կառույցների հետ կապերի հաստատում և տեղեկատվության փոխանակում,
4. սեմինարների, քննարկումների, գիտահանրամատչելի միջոցառումների կազմակերպում,
5. ինտելեկտուալ միջոցառումների, գրական-գեղարվեստական ցերեկույթների կազմակերպում,
6. ուսանողներին հուզող խնդիրների բացահայտում և դրանց բարձրաձայնում ԳՊՀ կառավարման մարմիններում, համապատասխան ստորաբաժանումներում, այլ ձեռնարկների իրականացում:

Հաշվետու ժամանակահատվածում Ուսանողական խորհուրդը ակտիվորեն համագործակցել է ԳՊՀ ռեկտորատի, ֆակուլտետների դեկանատների և ամբիոնների հետ՝ նրանց կողմից մշտապես ստանալով աջակցություն ուսանողական նախաձեռնությունների ծրագրման և իրականացման գործընթացում:

Ուսանողական խորհուրդը ԳՊՀ որակի ապահովման բաժնի հետ համատեղ կազմակերպել է ուսանողների և շրջանավարտների հետ հարցումներ՝ ուղղված բուհում կրթական և այլ գործընթացների իրականացման որակի բացահայտմանն ու բարելավմանը: Առաջին կուրսերի ուսանողների հետ կազմակերպվել են հանդիպումներ և տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար: ՈՒԽ-ն համագործակցել է ՀՀ այլ բուհերի ուսանողական կառույցների, դպրոցների, քոլեջների, երիտասարդական, կրթական, մարզական, սոցիալ-մշակութային ոլորտները

ներկայացնող կառույցների, միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, մասնակցել հանրապետական և միջազգային ուսանողական գիտաժողովների, տարբեր սեմինարների, քննարկումների, աշխատաժողովների ու բանավեճերի:

Հաշվետու ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ՈՒԽ-ն նախաձեռնել և իրականացրել է հետևյալ ծրագրերն ու միջոցառումները.

- 2021թ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Գավառի պետական համալսարանի ՈՒԽ-ն անհատական քննարկումներ և հարցումներ է իրականացրել բուհի ֆակուլտետների տարբեր բաժիններում՝ որակի ներբուհական ապահովման գործընթացներին աջակցելու նպատակով:
- 2021թ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՈՒԽ-ն ակտիվ սեմինար-քննարկումներ է անցկացրել դպրոցներում «Երեխաների կայուն զարգացման» ծրագրի շրջանակներում:
- 2021թ նոյեմբեր-դեկտեմբեր ամսին ՈՒԽ-ն առցանց ձևաչափով անցկացրել է սեմինար-քննարկումներ՝ նվիրված համայնքային զարգացման հիմնախնդիրներին, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը:
- 2022թ փետրվար-սեպտեմբեր ամիսներին ԳՊՀ ՈՒԽ-ն մասնակցություն է ունեցել Գավառի մարզային և քաղաքային գրադարաններում կազմակերպված տարաբնույթ միջոցառումներին:
- 2021-2022թթ Գավառի պետական համալսարանի ՈՒԽ-ի նախաձեռնությամբ և Հայկական կարմիր խաչի ընկերության հետ համատեղ, կամավորական անդամատոմսեր են ստացել և կամավորական գործունեություն իրականացրել համալսարանի մի շարք ուսանողներ:
- 2022թ մայիս ամսին ռեկտորատի հետ համագործակցելով անվանակոչվել է դասասենյակ, նվիրված՝ 44-օրյա պատերազմում անմահացած ԳՊՀ ուսանողներին և շրջանավարտներին:
- 2022թ մարտ-մայիս ամիսներին ՈՒԽ-ն նախաձեռնել է քննարկումների շարք՝ նվիրված մասնագիտական տարբեր ոլորտներին:
- 2022թ ՈՒԽ-ն ռեկտորատի հետ համատեղ կազմակերպել է միջոցառում նվիրված՝ ՀՀ Սահմանադրության օրվան և 2021-2022թթ շրջանավարտներին դիպլոմների շնորհմանը:

ԳՊՀ ՈՒԽ-ն ակտիվորեն համագործակցել է ՀՀ Գեղարքունիքի մարզի, հատկապես, Գավառի տարածաշրջանի 12 համայնքների հետ, ունեցել ենք հանդիպում–քննարկում վարչական ղեկավարների հետ, քննարկելով՝ երիտասարդության դերի բարձրացմանն ուղղված մի շարք հարցեր:

ՈՒԽ-ի կողմից կյանքի են կոչվել այլ ծրագրեր, որոնց իրականացմանն աջակցել են ԳՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողներ:

2022-2023 ուսումնական տարում ԳՊՀ ուսանողական խորհուրդը կշարունակի իր ակտիվ նախաձեռնությունները՝ ՈՒԽ գործունեության բոլոր ուղղություններով:

Անահիտ Շահինյան՝
ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ.
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
Իրավագիտության բաժնի մագիստրոս

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ նաև ՈՒԳԸ) հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ծրագրեր՝ նպատակ ունենալով նպաստել ուսանողների կարողությունների զարգացմանը և մտահորիզոնի ընդլայնմանը: Ուսանողական գիտական ընկերության աշխատանքներում ներառված են մշտական խորհրդատվության տրամադրումը ուսանողներին, ուսանողական գիտահետազոտական բնույթի միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ապահովումը, ուսանողների խնդիրների քննարկումներն ու ներկայացումը բուհի ղեկավար մարմին:

Ուսանողների ներգրավվածությունը ԳՊՀ-ի գիտական և գիտամեթոդական աշխատանքներում իրականացվել է.

- հանրապետության տարբեր կրթական հաստատություններում կազմակերպվող գիտաժողովներին և տարաբնույթ միջոցառումներին մասնակցությամբ,
- գիտաժողովների կազմակերպմամբ,
- զեկույցների ներկայացմամբ,
- գիտական հոդվածների հրապարակումներով,
- սեմինարների, բաց քննարկումների, գիտահանրամատչելի միջոցառումների կազմակերպմամբ,
- ԳՊՀ ուսանողական խորհրդի հետ համագործակցությամբ՝ ինտելեկտուալ միջոցառումների, գրական-գեղարվեստական ցերեկույթների կազմակերպմամբ:

Հաշվետու ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ՈՒԳԸ-ն իրականացրել է հետևյալ ծրագրերը.

1. 2021թ.-ի դեկտեմբերի 13-14-ը ԳՊՀ ՈՒԳԸ ներկայացուցիչները մասնակցություն ունեցան «Նոր սերունդ-2021» ռուս—հայկական ֆորումին՝ կազմակերպված Երևանում Ռուսական տան կողմից: Երկօրյա ֆորումին մասնակցում էին Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնարարար Կարեն Թռչունյանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության փոխնախարար Դավիթ Սահակյանը, գործարարներ և ոլորտի ներկայացուցիչներ, Հայաստանյան 11 բուհերի ուսանողներ: Ֆորումի ընթացքում ԳՊՀ ուսանողները ելույթ ունեցան՝ «Студенческий инновационный бизнес-центр в Гаварском государственном университете – модель образования будущего» նախագծով:
2. 2022թ.-ի մարտի 18-ին ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ, դասախոսներ Ռուզաննա Ասատրյանի և Աստղիկ Ավետիսյանի աջակցությամբ տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ նվիրված անգլիացի տնտեսագետ Ալֆրեդ Մարշալի ծննդյան 180-ամյակին: Գիտաժողովին ներկա էին ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, ինչպես նաև Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ուսանողներ՝ դասախոս, ԳՊՀ շրջանավարտ Վարդան Գարեյանի ղեկավարությամբ:

3. 2022թ.-ի ապրիլի 27-ին ԳՊՀ ՈՒԳԸ անդամները մասնակցեցին «ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարություն հիմա» ծրագրի շրջանակներում կազմակերպվող «Բուհերում ուսանողական ինքնակազմակերպվող խմբերի ձևավորման մեթոդաբանությանն ուղղված քննարկում» միջոցառմանը: Միջոցառման շրջանակներում ներկայացվեցին հայաստանյան բուհերում արտաուսումնական ուսանողական գործունեության առկա իրավիճակը և, հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա, դրա բարելավմանն ուղղված առաջարկությունները: Այնուհետ խմբային աշխատանքի միջոցով քննարկվեցին կրթական ոլորտին վերաբերող մի շարք հարցեր, ինչպիսիք են՝ ուսանողական մարմինների ձևավորման և կառավարման սկզբունքներ, ներքին և արտաքին ֆոնդհայայթում և այլն:

4. 2022թ.-ի ապրիլի 30-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կայացավ ուսանողական հանրապետական ամենամյա գիտաժողովը: Առցանց գիտաժողովին մասնակցեցին Հայաստանի և Արցախի տարբեր բուհերի՝ Գավառի պետական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի, Վանաձորի պետական համալսարանի, Գորիսի պետական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ուսանողները, «Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոնի ներկայացուցիչները, ասպիրանտներ, երիտասարդ գիտնականներ: Գիտաժողովի ծրագրում ներառված էին բնական գիտությունների, պատմության, իրավագիտության, տնտեսագիտության, հայոց լեզվի և գրականության, հոգեբանության և մանկավարժության, օտար լեզուների, սոցիոլոգիայի և այլ ոլորտների արդի մարտահրավերների վերաբերյալ տարաբնույթ զեկուցումներ: Ուսանողական գիտաժողովի նյութերի ժողովածուն լույս է տեսել 2022թ-ին: Ժողովածուն ընդգրկում է շուրջ 50 հեղինակների 49 հոդվածներ:

5. 2022 թ.-ի մայիսի 26-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից կազմակերպած ուսանողական գիտական շաբաթի շրջանակում ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության անդամներն այցելեցին Ագրարային համալսարան՝ շրջայց կատարելով համալսարանի նորարարական լաբորատորիաներ, ջերմատուն և որոնելով համագործակցության եզրեր կլոր սեղան քննարկման ընթացքում:

6. 2022թ.-ի հուլիսի 1-ին ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան պարոն Սամվել Ամիրխանյանի ղեկավարությամբ ԳՊՀ ՈՒԳԸ անդաները մասնակցեցի «Հայաստանի գործատուների հանրապետական միության հմտությունների զարգացման քաղաքականությունը» թեմայով կոնֆերանսին:

7. 2022թ.-ի հունիսի 1-ին ՈՒԳԸ անդամները մասնակցեցին «Buissup Conference - Business: Next Station» գործարար ֆորումին:

8. ՈՒԳԸ-ն՝ համագործակցելով համալսարանի այլ ստորաբաժանումների հետ անցկացրել է սեմինար-քննարկումներ համալսարանի լավագույն շրջանավարտներից ոմանց հետ: Մասնավորապես, քննարկում է անցկացվել Երեմ Սարգսյանի հետ՝ «Մասնագիտական աճի գրանցում և մասնագիտական կողմնորոշում» թեմայով, ինչպես նաև Կարեն Մաստոյանի հետ՝ «Գիտական հոդվածների կարևորությունը և հոդվածներ գրելու կարգը» թեմայով:

9. ՈՒԳԸ անդամները հանդիպումներ են ունեցել դպրոցականների հետ՝ տրամադրելով մասնագիտական կոշմնորոշման վերաբերյալ խորհրդատվություն և պատասխանելով աշակերտների կողմից հնչեցված հարցերին:
10. Առցանց հանդիպում է կազմակերպվել նաև անհատ ձեռնարկատերերի, ինքնազբաղ՝ ֆրիլանս ոլորտի մասնագետ Հայկուհի Ոսկանյանի հետ՝ «Ֆրիլանս աշխատանքի արդիականությունը, կարևորությունը և ինչպես գտնել աշխատանք ֆրիլանս հարթակներում» թեմայով:
11. Բնագիտական ֆակուլտետի ՈՒԽԸ և ՈՒԳԸ համատեղ ջանքերով, ամբիոնի նախաձեռնությամբ և աջակցությամբ անցկացվել է ինտելեկտուալ խաղ-մրցույթ: Խաղին մասնակցել են նաև տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները:
12. Հաշվետու ժամանակաշրջանում պարբերաբար առցանց կուրսային հանդիպումներ են կազմակերպվել բոլոր ֆակուլտետների 1-4-րդ կուրսի ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում ուսանողների ուշադրությանն է հրավիրվել գիտահետազոտական աշխատանքներ կատարելու, հոդվածներ գրելու և հասարակական ակտիվ գործունեություն ծավալելու կարևորության փաստը: Մշտապես տրամադրվել է խորհրդատվություն հոդվածներ գրելու, գիտաժողովներին դիմելու և զեկուցումներ ներկայացնելու կարգի վերաբերյալ: ԳՊՀ ՈՒԳԸ «դիմագրքի»՝ ֆեյսբուքյան էջի, տելեգրամյան ալիքի, ինչպես նաև էլեկտրոնային նամակագրության միջոցով ուսանողները տեղեկացվել են հանրապետական և միջազգային տարաբնույթ գիտաժողովների, մրցույթների, միջոցառումների և այլ հնարավորությունների մասին:

Ուսանողների առօրյան առավել հագեցած դարձնելու նպատակով կազմակերպվել են նաև կինոդիտումներ, «Ալիաս» և «Դե ասա» խաղ-մրցույթներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՈՒԳԸ-ն համագործակցել է ԳՊՀ ռեկտորատի, դեկանատների, բուհի կառուցվածքային մյուս ստորաբաժանումների, ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող հասարակական կազմակերպությունների և դպրոցների հետ: Մասնակցել ենք ԳՊՀ որակի ապահովման բաժնի և այլ ստորաբաժանումների աշխատանքներին՝ աշակերտներին մասնագիտական կողմնորոշման դասեր անցկացնելու, ինչպես նաև պահանջվող տարաբնույթ շնորհանդեսներ և տեսանյութեր պատրաստելու հարցում:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսանողական գիտական ընկերության անդամները մասնակցել են հետևյալ հանրապետական և միջազգային գիտաժողովների.

1. 2021թ.-ի սեպտեմբերի 17-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և հասարակագիտության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված «Անկախություն, պետականություն, հայրենիք» խորագրով համաբուհական ուսանողական գիտաժողով,
2. 2021թ.-ի հոկտեմբերի 4-8-ը Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կազմակերպած միջազգային 7-րդ գիտաժողով՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 30-ամյակին,
3. 2021 թ.-ի նոյեմբերի 2-3-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսանողական գիտական ընկերության կազմակերպած հանրապետական գիտաժողով՝ «Երիտասարդության քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով,

4. 2021 թ.-ի նոյեմբերի 27-ին Արցախի Մեսրոպ Մաշտոց համալսարանի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողով՝ «Կովկասյան տարածաշրջանի արդի հիմնախնդիրները. հնարավորություններ և մարտահրավերներ» թեմայով,
5. 2021թ.-ի դեկտեմբերի 6-10-ին Հայ-Ռուսական համալսարանի կողմից կազմակերպված 15-րդ տարեկան ուսանողական գիտաժողով,
6. 2021թ.-ի դեկտեմբերի 6-10-ին ԵՊՀ պատմության և արևելագիտության ֆակուլտետների ուսանողական գիտական ընկերությունների կողմից կազմակերպված՝ «ՀՀ անվտանգության մարտահրավերները և Սյունիքի մարզը. պատմություն և արդի մարտահրավերներ» խորագրով աշխատաժողով,
7. 2022թ. ապրիլի 8-ին Վանաձորի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կազմակերպած հանրապետական 11-րդ երիտասարդական գիտաժողով՝ «Նոր հեռանկարներ ուսանողների գիտահետազոտական ներուժի բացահայտման համար» խորագրով,
8. 2022թ. մայիսի 12-13-ին Արցախի պետական համալսարանի կազմակերպած՝ 44-օրյա պատերազմում նահատակված ուսանող-ազատամարտիկների հիշատակին նվիրված ուսանողական գիտաժողով,
9. 2022թ. մայիսի 27-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից կազմակերպած միջբուհական գիտաժողով և գիտական շաբաթ,
10. ուսանողական այլ գիտական նախաձեռնություններ:

2022-2023 ուսումնական տարում ԳՊՀ ՈՒԳԸ-ն ՈՒԽ-ի հետ համատեղ մշակել է զարգացման ծրագիր՝ նախատեսելով հետևյալ գործողությունները՝

1. ակտիվ մասնակցություն ԳՊՀ գիտահետազոտական գործընթացներին, որոշումների ընդունմանը, բուհում ուսանողակենտրոն քաղաքականության իրականացմանը,
2. սովորողների իրավունքների և օրինական շահերի ներկայացում ու պաշտպանություն,
3. ԳՊՀ վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների հետ կրթության որակի բարձրացման ուղիների և կառուցակարգերի քննարկում, շարունակական միջոցների ձեռնարկում, կրթության որակի ապահովման գործընթացներին մասնակցություն,
4. ԳՊՀ գիտական խորհրդին, ռեկտորատին, դեկանատներին, ամբիոններին և դասախոսներին ուսանողների կողմից առավել ընդունելի ուսուցման մեթոդների և կրթական տեխնոլոգիաների քննարկում և դրանց կիրառմանը նպաստում,
5. ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովների, բազմաբնույթ ցերեկույթների, ուսուցողական և դաստիարակչական միջոցառումների կազմակերպում,
6. ամենամյա հանրապետական ուսանողական գիտաժողովի կազմակերպում,
7. սեմինարների, բանավեճերի, դերային խաղերի, ֆիլմերի դիտում-քննարկումների, գրական ստեղծագործությունների քննարկումների անցկացում,
8. հանդիպումներ Գավառի և հարակից համայնքների դպրոցների աշակերտների, մանկատան և հատուկ դպրոցի սաների հետ,
9. համագործակցություն ՀՀ այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:

Արփի Միրիբյան՝ ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ, տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողուհի

ԳՊՀ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանի 2021-2022 ուսումնական տարվա ֆինանսական և տնտեսատեխնիկական գործունեության համար բնութագրական են այն բոլոր օբյեկտիվ դժվարությունները, որոնք ծագեցին 2020 թվականի նոր կորոնավիրուս (COVID-19) համավարակի, Արցախյան 44-օրյա պատերազմի և ընթացս շարունակվող տարաբնույթ հիմնախնդիրների հետևանքով:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական գործընթացը կազմակերպվեց ինչպես առցանց, այնպես էլ անցանց ռեժիմով՝ զուգակցված եղանակով, որն էլ իր հերթին հանգեցրեց մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ խնդիրների, որոնք պատշաճ լուծումներ ստացան:

Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու ժամանակահատվածում ևս սահմանված կարգով կատարվեցին համալսարանի բոլոր ֆինանսական պարտավորությունները, ժամանակին վճարվեցին հարկերն ու տուրքերը, այլ պարտադիր վճարները, վարչական աշխատակազմի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձերը, ուսանողների կրթաթոշակները: Օրենքով սահմանված կարգով կազմակերպվեցին գնման անհրաժեշտ գործընթացները, իրականացվեց գրքերի, համակարգչային պահեստամասերի, տպիչների, գրատախտակների, մարզական գույքի, ուսումնաօժանդակ նյութերի գնում, ինչպես նաև ձեռք բերվեց շինանյութ, տնտեսական ապրանքներ, կենցաղային տեխնիկա, համալսարանի գործունեության համար անհրաժեշտ այլ ապրանքներ:

ԳՊՀ տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվեց համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների մասնագետների ուժերով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի մասնագետները բուհի ֆակուլտետներում, ամբիոններում, աշխատասենյակներում և համապատասխան լսարաններում, լաբորատորիաներում ու կենտրոններում կատարել են համակարգչային տեխնիկայի շահագործման, ծրագրային և տեխնիկական սպասարկման աշխատանքներ, միաժամանակ իրականացնելով, առցանց ռեժիմով աշխատելու պահանջով պայմանավորված, ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման բոլոր համակարգերի, վիրտուալ լսարանների, էլեկտրոնային դեկանատի, թվային այլ տիրույթների սպասարկում և կատարելով առցանց ուսումնական գործընթացն ապահովող այլ աշխատանքներ:

Համալսարանի տնտեսական, նյութատեխնիկական սպասարկման, անվտանգության ապահովման, մաքրության պահպանման գործառույթներն իրականացնող անձանց աշխատանքային ռեժիմը կրկին վերանայվեց, և արդյունքում տնտեսատեխնիկական անձնակազմի աշխատանքները կազմակերպվեցին ամենօրյա ռեժիմով: Թեև ծագած դժվարություններին՝ ԳՊՀ հաստիքացուցակը չկրճատվեց, բոլոր աշխատակիցները պահպանեցին իրենց աշխատատեղերը: Նրանց աշխատավարձերը ողջ տարվա ընթացքում վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսման միջոցներ:

Համավարակի պարտադրած իրավիճակից ելնելով՝ ձեռնարկվել են հստակ միջոցառումներ ԳՊՀ մասնաշենքերի ֆիզիկական պահպանության, ձմռան ամիսներին

ջեռուցման համակարգի հատուկ ռեժիմով գործարկման, բուհում համացանցային կապի ապահովման, զուգակցված եղանակով ուսումնական գործընթացի և աշխատանքների կազմակերպման, համալսարանի տնտեսական, տեխնիկական սպասարկման ուղղությամբ:

ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգն ամբողջ ծավալով անհրաժեշտաբար շարունակվեց գործարկվել նաև 2021-2022 ուստարվա ընթացքում, որի անխափան և արդյունավետ աշխատանքն ապահովեց տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը, իսկ բովանդակային մասը՝ ԳՊՀ դասախոսները, ամբիոնները: Բաժնի գործունեությունն ուղղվեց նախորդ ուսումնական տարվա ընթացքում ստեղծված համացանցային հարթակների զարգացմանն ու սպասարկմանը՝ առցանց ուսումնական գործընթացը հստակ և որակով կազմակերպելու նպատակով, միաժամանակ ապահովելով անցանց ուսուցման համար անհրաժեշտ պայմաններ և պահպանելով առկա կառուցակարգերը:

Համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպելու ժամանակահատվածում օգտագործվել են ԳՊՀ երեք մասնաշենքերի աշխատասենյակները, լսարանները, գրադարաններն ու ընթերցասրահները, լաբորատորիաները, համակարգչային սրահները, մարզադահլիճները և ուսումնաօժանդակ այլ տարածքներ: Համալսարանի գործունեության համար ամրակցված ընդհանուր տարածքը 18.505 քմ է, որից առավել գործածական տարածքը կազմում է մոտ 14.858 քմ: Հաշվետու ժամանակահատվածում ևս ԳՊՀ իրականացրած միջազգային ծրագրերի միջոցներով շարունակվել են բուհի համակարգչային բազայի արդիականացման աշխատանքները, համալրվել են տեխնիկական ռեսուրսները: Միջազգային ծրագրերի շրջանակում կնքվել է պայմանագիր համալսարանին մոտ 20 միլիոն ՀՀ դրամի համակարգչային և կապի տեխնիկական միջոցներ մատակարարելու մասին: Նախորդ ուսումնական տարվա ընթացքում ձեռք բերված համապատասխան տեխնիկայի գործադրմամբ ԳՊՀ գրադարաններում իրականացվել են գրքային ֆոնդի թվայնացման աշխատանքներ: Արդյունքում թվայնացվել է ավելի քան 40 անուն մասնագիտական գրականություն: Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: ԳՊՀ գրադարանը համալրվել է նոր գրքերով, հարստացել նաև նվիրատվությունների հաշվին: Բազմաթիվ արժեքավոր հայերեն և օտարալեզու գրքեր են նվիրաբերել ԳՊՀ դասախոսները: Հարստացել են նաև բուհի էլեկտրոնային գրադարանի պաշարները:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվել են թիվ 10 և թիվ 11 գիտական հոդվածների ժողովածուները:

Ուսումնական և աշխատանքային գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ձեռք են բերվել անհրաժեշտ նյութեր, սարքեր ու սարքավորումներ, գրենական պիտույքներ, անհրաժեշտ այլ պարագաներ՝ համաձայն համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների պահանջագրերի հիման վրա կազմված ԳՊՀ գնումների պլանի:

Հետևողական աշխատանքներ են կատարվել շենքերի և շինությունների վերանորոգման ուղղությամբ: Կապիտալ վերանորոգվել է համալսարանի կենտրոնական մասնաշենքի տանիքի վնասված հատվածը, բարեկարգվել են մի շարք լսարաններ և աշխատասենյակներ: Կենտրոնական մասնաշենքում կահավորվել և բացվել է Արցախյան 44-օրյա պատերազմի տաս անմահ հերոսների անվան լսարանը, բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենքում վերանորոգումից և կահավորումից հետո բացվել է նոր համակարգչային լսարանը:

Համալսարանի միջոցներով վերանորոգվել են հանրակացարանի ջրահեռացման համակարգը: Ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ գլխավոր մասնաշենքերում կատարվել են ներքին հարդարման աշխատանքներ:

Համալսարանի կանաչ տարածքներում կատարվել են ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման աշխատանքներ:

Համալսարանի տնտեսատեխնիկական ծառայությունների ուժերով իրականացվել են նաև մասնաշենքերի ջեռուցման ցանցերի և ջրագծերի մասնակի վերանորոգումներ, վերանորոգվել են բազմաթիվ հանգույցներ՝ ինչպես ջեռուցման, այնպես էլ ջրամատակարարման ցանցերում:

ԳՊՀ կաթսայատան միջոցով ջեռուցվել են բոլոր մասնաշենքերը, այդ թվում՝ հանրակացարանը: Ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ են կատարվել երեք մասնաշենքերում և կաթսայատանը: Ապահովվել է համալսարանի բոլոր մասնաշենքեր էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումը:

ԳՊՀ փաստաթղթաշրջանառությունը կազմակերպվել է նամակագրության ներքին շրջանառության էլեկտրոնային համակարգով, ինչպես նաև արտաքին փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգով:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում համալսարանում շարունակել է գործել գրենական պիտույքների վաճառքի և պատճենահանման կետը, որը, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ուսումնական տարվա ընթացքում շարունակել է ուսանողների համար մատչելի գներով ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցման իրականացումը, թեև ավելի սահմանափակ ծավալներով՝ հաշվի առնելով համավարակի և պատերազմի իրողությունները:

2022-2023 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի տնտեսատեխնիկական գործունեության զարգացման հիմնական ուղղություններն են՝

1. Ձեռնարկել միջոցներ ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման ռեսուրսները համալրելու, անցանց-առկա և առցանց-հեռավար կրթության ու աշխատանքի պայմանները բարելավելու համար:
2. ԳՊՀ բոլոր մասնաշենքերում ապահովել ուսումնական և աշխատանքային գործընթացների համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմաններ՝ հետևողականորեն արդիականացնելով և առավել գրավիչ դարձնելով կրթական, հետազոտական և աշխատանքային միջավայրը:
3. Իրականացնել մասնաշենքերի տեխնիկական հետազոտություններ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ վերանորոգման նախահաշիվների կազման և իրականացման համար:
4. Պլանավորել և իրականացնել լսարանային ֆոնդի ընթացիկ վիճակի պարբերական գնահատումներ և վերանորոգումներ, ապահովել շարունակական արդիականացում և համապատասխանեցում կրթական գործընթացի զարգացման նոր պահանջներին, ուսանողների և դասախոսների սպասելիքներին, որակյալ կրթության ապահովման հրամայականին:
5. Շարունակել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորման աշխատանքները՝ այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նոր կրթական

տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ ընձեռող տեխնիկայով ու սարքավորումներով:

6. Ապահովել ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ վերաբաշխելով տարածքները զարգացման նոր գերակայություններին համապատասխան:
7. Շարունակել գործող կաթսայատան արդիականացման փուլային գործընթացը՝ նպատակ ունենալով ապագայում տարանջատել ջեռուցման համակարգը ըստ մասնաշենքերի՝ խնայողական նոր ջրատաքացուցիչ կաթսաներ տեղադրելով:
8. Ապահովել համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացումն ու արդիականացումը՝ կրթական և հետազոտական ծրագրերի արդի պահանջներին համապատասխան: Այդ նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները.
   - ✓ գնահատել համալսարանի ուսումնական լաբորատոր բազայի առկա վիճակը՝ ըստ կրթության և հետազոտությունների որակի ապահովման չափորոշիչների, և մշակել առկա լաբորատոր բազայի արդիականացման հեռանկարային պլան՝ ըստ մասնագիտությունների,
   - ✓ ապահովել լաբորատոր բազայի արդիականացման պլանների իրականացումն ըստ Հայաստանի Հանրապետության և, մասնավորապես, Գեղարքունիքի մարզի զարգացման հեռանկարային առաջնահերթությունների և տարիների՝ նախատեսելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ համալսարանի և դրամաշնորհատու կազմակերպությունների ներդրումներից,
   - ✓ զարգացնելով և ընդլայնելով գործընկեր արտադրական կազմակերպությունների հետ հաջող համագործակցության առկա փորձը՝ ստեղծել համատեղ հետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ՝ դրանք առաջին հերթին նպատակաուղղելով ուսանողության կրթական պահանջների բավարարմանը,
   - ✓ իրականացնել միջազգային դրամաշնորհային նախագծերի, ինչպես նաև առանձին կազմակերպությունների ու բարերարների միջոցներով, կրթական միջավայրի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան՝ առկա լաբորատոր բազայի վերազինման և նորերի ստեղծման ծրագրեր:
9. Ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպման պահանջները բավարարող նյութատեխնիկական պայմաններ համալսարանի բոլոր ֆակուլտետներում.
   - ✓ մշակել ԳՊՀ տարածքային պայմանների բարելավման նոր պլան և համալսարանում առկա ներքին և արտաքին բոլոր հնարավորություններն ուղղել դրա իրականացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համալսարանի և դրամաշնորհատու կազմակերպությունների, բարերարների, հիմնադրամների ներդրումները,
   - ✓ ստեղծել համալսարանի նյութատեխնիկական բազայի հետագա զարգացման լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով ուսումնական գործունեության չափորոշիչ պահանջների լիարժեք կատարումը,
   - ✓ կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի պահանջներին համահունչ՝ մշակել և իրականացնել ուսումնական տարածքների արդյունավետ

օգտագործման հեռանկարային պլան՝ ներառելով նաև դեռևս չվերականգնված մասնաշենքի ապագայի հարցը,

- ✓ օգտագործել արտաքին հնարավորությունները՝ համալսարանի մարզական բացօթյա բազայի վերանորոգման համար,
- ✓ շարունակել բուհի նյութատեխնիկական պայմանների բարելավման գործընթացը՝ օգտագործելով համագործակցային կապերի ընձեռած հնարավորությունները:

10.Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումն ու որակական նոր մակարդակի ձեռքբերումը համալսարանի կրթական և գիտական բոլոր գործընթացներում.

- ✓ ակտիվացնել համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գործունեությունը,
- ✓ զարգացնել բուհի տեխնոլոգիական կարողությունները, ապահովել հեռաուսուցման լսարանների համալսարանական ցանցի զարգացման, շարունակական ընդլայնման և տեխնիկական կատարելագործման գործընթաց՝ հեռաուսուցման անխափան ու որակյալ կազմակերպման համար,
- ✓ կատարելագործել ուսուցման համացանցային հենքով էլեկտրոնային համապիտանի համակարգը (Learn.gsu.am, E-Library.gsu.am)՝ ապահովելով ուսումնական նյութերի շարունակական համալրում և արդիականացում,
- ✓ կատարելագործել ուսանողական համացանցային հարթակը (students.gsu.am)՝ կցված էլեկտրոնային ուսուցման համակարգին՝ ապահովելով ուսումնառության, դասավանդման, խորհրդատվության և գնահատման էլեկտրոնային ռեսուրսների հասանելիությունը համալսարանի բոլոր ուսանողների և դասախոսների համար:
- ✓ խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը բուհի ամբիոնների հետազոտական ծրագրերում, նախագծերում, մագիստրոսական թեզերում և ավարտական աշխատանքներում:

Նախատեսված ուղղություններով զարգացման ծրագրերի իրականացումը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ կազմակերպել կրթական, գիտահետազոտական, դաստիարակչական գործընթացները համալսարանի բոլոր ֆակուլտետներում և կյանքի կոչել ԳՊՀ 2022-2027 թվականների զարգացման ռազմավարությամբ նախատեսված «Վիրտուալ համալսարան» ծրագիրը:

Գուրգեն Մուրադյան՝
ԳՊՀ գլխավոր հաշվապահ

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ԳՊՀ-ՈՒՄ ՆՇՎԵՑ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ, ԿԱՏԱՐՎԵՑ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

01.09.2021 թ.

Գավառի պետական համալսարանում նշվեց հետպատերազմյան առաջին սեպտեմբերի 1-ը, կատարվեց առաջին կուրսեցիների օրհնության կարգ: Մինչ միջոցառման մեկնարկը, ներկաները գլուխ խոնարհեցին և մեկ րոպե լռությամբ հարգեցին Արցախյան պատերազմի նահատակների սուրբ հիշատակը:

Գավառ քաղաքի հոգևոր հովիվ արժանապատիվ տեր Նշան քահանա Սարգսյանը կատարեց առաջին կուրսեցիների օրհնության կարգ՝ շնորհավորելով բոլոր համալսարանականներին նոր ուսումնական տարվա առթիվ, մաղթելով խաղաղություն, արգասաբեր աշխատանք և ուսումնառություն: ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ջերմորեն շնորհավորեց բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր ուսանողներին ու դասախոսներին՝ Գիտելիքի և դպրության օրվա առթիվ՝ ուսանողներին կոչ անելով որպես պատգամ միշտ հիշել Հայոց ուսուցչապետ Մեսրոպ Մաշտոցի կողմից հայերեն թարգմանված առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

ԿԱՅԱՑԱՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ՄՐՑՈՒՅԹ՝ ԵՄ «ԷՐԱԶՄՈՒՍ + ՍՄԱՐԹ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

05.09.2021 թ.

Սեպտեմբերի 2-ին և 3-ին տեղի ունեցավ միջազգային առցանց մրցույթ /հաքաթոն/՝ Գավառի պետական համալսարանի իրականացրած Եվրոպական միության «ERASMUS+SMART. Համալսարան-ձեռնարկատիրություն համագործակցության և ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների ամրապնդում ՍՄԱՐԹ կենտրոնների միջոցով» ծրագրի շրջանակներում: Մրցույթին մասնակցեցին Հայաստանի, Բելառուսի և Մոլդովայի գործընկեր բուհերի ուսանողներ: Առցանց մրցույթի ընթացքում երեք երկրների բուհերի ուսանողական թիմերը ստացան խնդիր-առաջադրանքներ՝ գտնելու բիզնեսի զարգացման ռազմավարական ուղիներ և լուծումներ Բուլղարիայի Ալբենա հյուրանոցային համալիրի համար՝ (COVID-19) համավարակի պայմաններում: Գավառի պետական համալսարանի ուսանողները հանդես եկան երկու թիմով: Թիմերի խոսնակները՝ Անուշ Սաղաթելյանն ու Ալլա Սարգսյանը լավագույնս ներկայացրին երկու հրաշալի բիզնես գաղափարներ, որոնք նպաստելու էին Ալբենա հյուրանոցային համալիրի զարգացմանը և առաջընթացին: Առցանց մրցույթի բոլոր մասնակիցները պարգևատրվեցին հավաստագրերով:

ԳՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՍԸՆԹԱՑ

05.09.2021 թ.

Գավառի պետական համալսարանի իրականացրած «Եղի՛ր իրազեկված, եղի՛ր պաշտպանված» ծրագրի շրջանակներում Արցախից տեղահանված ընտանիքների անդամների համար կազմակերպվեց ՀՀ-ում մարդու իրավունքների վերաբերյալ դասընթաց,

որի հիմնական նպատակը մարդու սահմանադրական իրավունքների, ազատությունների, պարտականությունների, պաշտպանության երաշխիքների և կառուցակարգերի մասին տեղեկատվության տրամադրումն է:
Գավառի պետական համալսարանում կայացավ առաջին դասը, որը վարում էր ԳՊՀ իրավագիտության ամբիոնի դասախոս Անի Ամիրյանը: Դասընթացն իրականացվում է «DVVinternational» միջազգային կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

ԳՊՀ-Ի ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

17.09.2021 թ.

Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի նախագահ Վահագն Համբարձումյանը ս. թ. սեպտեմբերի 17-ին կնքեցին համագործակցության հուշագիր՝ կարևորելով ջանքերի նպատակաուղղված ներդրումը հաշվապահական հաշվառման ոլորտի մասնագետների պատրաստման գործում: Ինչպես նշեց պարոն Համբարձումյանը, համալսարանում ստանալով մասնագիտական գիտելիքներ, ուսանողները կարիք ունեն դրանք ամրապնդելու և խորացնելու գործնական աշխատանքում, ինչի հնարավորությունն ընձեռում է Հայաստանի հաշվապահների ասոցիացիան:
Կնքելով հուշագիրը՝ կողմերը արդյունավետ համագործակցության պատրաստակամություն հայտնեցին:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

19.09.2021 թ.

Սեպտեմբերի 17-ին Գավառի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և հասարակագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության կազմակերպած՝«Անկախություն, պետականություն, հայրենիք» խորագիրը կրող հանրապետական գիտաժողովին, նվիրված Հայաստանի երրորդ հանրապետության անկախության 30-ամյակին: Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներ Մերի Կարապետյանը, Գոհար Պետրոսյանը, հեռակա ուսուցման ֆակուլտետի պատմության բաժնի ուսանողներ Ռեգինա Բաղդասարյան ու Նարինե Բավեյանը հանդես եկան հետաքրքիր ու ուսուցողական զեկուցումներով:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

19.09.2021 թ.

Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի նախաձեռնությամբ սեպտեմբերի 18-ին Գավառի պետական համալսարանում անցկացվեց ինստիտուցիոնալ մշտադիտարկում: Մշտադիտարկման նպատակը ԳՊՀ իրականացրած Եվրոպական միության «ՏԵՄՊՈՒՍ» և »Էրազմուս+», ինչպես նաև ընթացքի մեջ գտնվող միջազգայինծրագրերի կատարման գործընթացի և ելքային արդյունքների ստուգումն էր: Մշտադիտարկման հանձնաժողովի կազմում էին Հայաստանում «Էրազմուս +» ծրագրի ազգային գրասենյակի տնօրեն Լանա Կառլովան, գրասենյակի աշխատակիցներ Անի

Թորոսյանը և Վարդ Ղուկասյանը, մշտադիտարկման արտաքին փորձագետ, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի տնօրեն Մարինա Գալստյանը:

ՃԱՆԱՉԵՆՔ ՄԵՐ ՉՔՆԱՂ ՀԱՅՐԵՆԻՔԸ
22.09.2021 թ.

Գավառի պետական համալսարանի կողմից իրականացվող «Եղի՛ր իրազեկված, եղի՛ր պաշտպանված» ծրագրի շրջանակներում Արցախից տեղահանված ընտանիքների անդամների և ԳՊՀ ուսանողների համար սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության 30-րդ տարեդարձի օրը կազմակերպվեց հայրենաճանաչողական էքսկուրսիա-արշավ՝ դեպի Տավուշի մարզ: «Եղի՛ր իրազեկված, եղի՛ր պաշտպանված» ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության հայաստանյան մասնաճյուղի՝ «Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ»-ի (DVV_International_in_Armenia) կողմից:

ԿԱՅԱՑԱՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԴԱՍ
23.09.2021 թ.

Աշակերտների մասնագիտական կողմնորոշման նպատակով Գավառի պետական համալսարանը սիրով հյուրընկալեց «Վորլդ Վիժն» Հայաստանի Գավառի տարածքային ծրագրի՝ Երեխայի և ընտանիքի զարգացման «Նավակ» համայնքային կենտրոնի մասնագիտական կողմնորոշման խմբակի անդամներին:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ԱԶԳԱՅԻՆ» ՄՐՑՈՒՅԹ՝ ԵՄ «ԷՐԱԶՄՈՒՍ+ ՍՄԱՐԹ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
24.09.2021 թ.

Սեպտեմբերի 22-ին և 23-ին Եվրոպական միության «Էրազմուս+ ՍՄԱՐԹ» ծրագրի շրջանակում Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում կայացավ «ազգային» մրցույթ՝ ծրագրի գործընկեր բուհերի՝ Գավառի և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանների ուսանողների միջև: Մրցույթի նպատակը ծրագրով նախատեսված մեկնարկային՝ «սթարթ-ափ» նորարարական գաղափարների ներկայացումն էր ձեռներեցության ոլորտում առաջին քայլերը կատարող ուսանողների կողմից: Մրցութային փուլից առաջ ողջույնի խոսքով հանդես եկան, ծրագիրը կարևորեցին և արդյունքներին անդրադարձան Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Նելլի Կուտուզյանը և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի կարիերայի կենտրոնի ղեկավար Լևոն Բաբամյանը:

ԳՊՀ-ՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
02.10.2021 թ.

Հոկտեմբերի 2-ին Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում կատարվեց հոգեբանամանկավարժական կենտրոնի բացման արարողություն: Կենտրոնը հիմնադրվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներում բնակվող մեր հայրենակից-բարերարների ներդրումների շնորհիվ՝ ի հիշատակ Սրապեոն Ամիրեանի և Գուլնաբաթ Ամիրեան-Դավուդիի: Կենտրոնի բացման արարողությանը ներկա էին Սրապեոն Ամիրեանի և Գուլնաբաթ Ամիրեան-Դավուդիի թոռնուհին՝ Կարինե Աբուլյանը և զարմուհիները՝ Քնուշ Մուրադյանն ու Արմինե Դավթյանը: Կենտրոնում անցկացվեց բաց դաս՝

նվիրված երեխաների ուսումնական դժվարությունների պատճառներին, դրանց հայտնաբերման նեյրոհոգեբանական սկզբունքներին ու գործիքներին:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԵՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

09.10.2021 թ.

Հոկտեմբերի 4-8-ը Գավառի պետական համալսարանի ուսանողներն ակտիվորեն մասնակցեցին Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կազմակերպած միջազգային 7-րդ գիտաժողովին՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 30-ամյակին:

Գավառի պետական համալսարանից գիտաժողովին մասնակցեցին տարբեր ֆակուլտետների 11 ուսանողներ:

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ERASMUS+ABIONET» ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

13.10.2021 թ.

Ս. թ. հոկտեմբերի 11-12-ը տեղի ունեցան Եվրոպական Միության «ERASMUS+ABIONET. Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի առցանց ամփոփիչ աշխատաժողովը և փակման հանդիսավոր միջոցառումը: Ծրագրին անդամակցում էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, հայաստանյան բուհերը՝ Գավառի պետական, Երևանի պետական, Հայաստանի ազգային ագրարային, Շիրակի պետական համալսարանները եվրոպական երկրներից՝ Հունաստանի Հելլենիկ միջազգային, Իտալիայի Տեռամոյի, Պորտուգալիայի կաթոլիկե համալսարանները: Գավառի պետական համալսարանից երկօրյա ամփոփիչ հանդիպումներին մասնակցեցին բուհի արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ Թերմինե Խաչիկյանը, Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Մարինե Հովհաննիսյանը:

ԳՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ «ԷՐԱԶՄՈՒՍ + ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԽՈՐԱԳՐՈՎ

15.10.2021 թ.

Հոկտեմբերի 15-ին ԳՊՀ «Սմարթ Սրճարան» կենտրոնում տեղի ունեցավ «Էրազմուս+ նոր հնարավորություններ» խորագիրը կրող տեղեկատվական հանդիպում՝ «Էրազմուս+» ծրագրի ամենամյա տեղեկատվական օրերի շրջանակում: Հանդիպմանը մասնակցեցին Գավառի պետական համալսարանի ուսանողներ, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամներ: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի կողմից իրականացվող «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերը (ՀԳ1), «Էրազմուս+» կարողությունների զարգացման ծրագրերը (ՀԳ2), ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցելու հնարավորություններն ու պայմանները:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԵՄ «ԷՐԱԶՄՈՒՍ+ ՍՄԱՐԹ» ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

20.10.2021 թ.

Մոլդովայի Հանրապետության Քիշնև և Բալթի քաղաքներում ս. թ. հոկտեմբերի 1-ից 10-ը կայացավ ԵՄ «ERASMUS+SMART. Համալսարան-ձեռնարկատիրություն համագործակցության և ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների ամրապնդում ՍՄԱՐԹ կենտրոնների միջոցով» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովը: Ծրագիրը միավորում էր գործընկեր բուհեր և այլ հաստատություններ Հայաստանից, Հունաստանից, Գերմանիայից, Բելգիայից, Իսպանիայից, Բուլղարիայից, Մոլդովայից և Բելառուսից: Աշխատաժողովը մեկնարկեց Մոլդովայի պետական ագրարային համալսարանում, որտեղ ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը ներկայացրեց շնորհանդես՝ «ԵՄ ֆինանսավորմամբ ծրագրերի դերը Գավառի պետական համալարանի ռազմավարական զարգացման գործում» խորագրով, որին հաջորդեց ակտիվ հարց ու պատասխանը: ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը հարցազրույց տվեց տեղի հեռուստաընկերությանը՝ ներկայացնելով ԵՄ «ԷՐԱԶՄՈՒՍ+ՍՄԱՐԹ» ծրագրի՝ ինստիտուցիոնալ մակարդակով ունեցած ազդեցությունը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ԴԻՋԻԹԵՔ ԷՔՍՊՈ-2021»-ԻՆ

30.10.2021 թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողական կազմի ներկայացուցիչները ս. թ. հոկտեմբերի 29-ին բուհի Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանի ղեկավարությամբ և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցներ Արթուր Միրիբյանի, Կարեն Սիրականյանի ուղեկցությամբ մասնակցեցին «ԴիջիԹեք Էքսպո 2021» տեխնոլոգիական ցուցահանդեսին, որը կազմակերպվել է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) կողմից իրականացվող «DigiWeek2021» միջոցառումների շրջանակում:

ԳՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՐՏՈՒԱԼ ՏՈՆԱՎԱՃԱՌԻՆ

31.10.2021 թ.

Եվրոպական կրթության և մշակույթի գործակալությունը կազմակերպեց Բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման ծրագրերի վիրտուալ տոնավաճառ, որի ընթացքում աշխարհի շուրջ 65 երկրների բուհերի պատվիրակներ ներկայացրին 2015-2020 թվականներին ֆինանսավորում ստացած 100 ծրագրերի ելքային արդյունքները՝ շնորհանդեսների և վերապատրաստումների ձևաչափով: Եվրոպական միության «Էրազմուս + ՍՄԱՐԹ» ծրագրի ձեռքբերումներն ու արդյունքները համատեղ ներկայացրին Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, ծրագրի համահամակարգող, Մոլդովայի պետական ագրարային համալսարանի ներյկայացուցիչ Ելենա Սիմչուկը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ 10-ՐԴ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԴՊՐՈՑԻՆ

11.11.2021 թ.

Դիլիջան քաղաքում անցկացվեց ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի երևանյան գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ-ը) և «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպության համատեղ կազմակերպած՝ «Փախստականների իրավունքներ» խորագիրը կրող 10-րդ հերթական աշնանային դպրոցը ապագա իրավաբանների, հետազոտողների և փախստականների իրավունքների պաշտպանությամբ հետաքրքրված անձանց համար:

ԳՊՀ-Ն ԱՆՑՆՈՒՄ Է ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

23.11.2021 թ.

Գավառի պետական համալսարանը Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) կողմից ինստիտուցիոնալ (ենթակառուցվածքային) հավատարմագրում է ստացել 2017 թվականին՝ 4 տարի ժամկետով: 2021 թվականին բուհը դարձյալ հավատարմագրման գործընթաց է անցնում: Համալսարանը ՈԱԱԿ-ին ներկայացրեց ինքնավերլուծության զեկույց և պահանջվող բոլոր փաստաթղթերը: Սահմանված կարգի համաձայն՝ ազգային և միջազգային փորձագետները, ՈԱԱԿ ներկայացուցչի մասնակցությամբ, ս. թ. նոյեմբերի 20-ից 23-ը՝ ներառյալ, եղան բուհում, հանդիպեցին ներքին շահառուների և արտաքին շահակիցների՝ ուսանողների, դասախոսների, ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների, հոգաբարձուների խորհրդի անդամների, շրջանավարտների, գործատուների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կայացավ բաց հանդիպում, որին մասնակցեցին Գեղարքունիքի մարզի ուսումնական հաստատությունների, սոցիալ-մշակութային կառույցների, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, ծնողական համայնքի պատվիրակներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ

25.11.2021 թ.

Տեղի ունեցավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի կողմից կազմակերպված հերթական առցանց աշխատաժողովը, որի նպատակն էր մասնագիտական աջակցություն ցուցաբերել ուսանողներին, մանկավարժներին, լրագրողներին և առհասարակ մայրենի լեզվի հիմնախնդիրներով հետաքրքրվող անձանց: Հանդիպմանը մասնակցում էին լեզվի ինստիտուտի առաջատար մասնագետներ, Գավառի պետական համալսարանի դասախոսներ, ուսանողներ և ուսուցիչներ: Քննարկվեցին լեզվամշակույթին և հայերենի տարբեր մակարդակներին առնչվող հարցեր: Քննարկմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև Գավատի պետական համալսարանի ուսանողները:

ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ

03.12.2021 թ.

Ս. թ. դեկտեմբերի 2-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի կողմից կազմակերպված հերթական առցանց հանդիպումը, որը նվիրված էր բարձր տեխնոլոգիական ոլորտի կրթությանը և աշխատաշուկային առնչվող հիմնահարցերին:

Հանդիպմանը հրավիրված էին միջազգային հայտնի ընկերություններում (Google, Bloomberg, Apple) աշխատող մեր հայրենակիցներ Ռուբեն Ադամյանը, Պարույր Խնկոյանը և Արմեն Խաչատրյանը: Հանդիպմանը մասնակցում էին Գավառի պետական համալսարանի դասախոսներ, ուսանողներ, ինչպես նաև հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտներ:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԵՊՀ-ՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

04.12.2021 թ.

Ս. թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի ուսանողները Երևանի պետական համալսարանում մասնակցեցին պատմաբանի օրվան նվիրված միջազգային գիտաժողովին, որը կազմակերպվել էր Երևանի պետական համալսարանի, ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի (ԱԻ) և Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) հետ համատեղ: Գիտաժողովին մասնակցում էին Գավառի պետական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի, Վանաձորի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, ինչպես նաև օտարերկրյա մի քանի համալսարանների ուսանողներ:

ԿԱՅԱՑԱՎ «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

06.12.2021 թ.

Գավառի պետական համալսարանի իրավագիտության բաժնի ուսանողները մասնակցեցին «Պրոբացիայի ոլորտի հիմնախնդիրներն ու բարեփոխումները» թեմայով աշխատաժողովին, որն իրականացվեց «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության համագործակցությամբ:

«ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՈՒՄ 2021» ԹԵՄԱՅՈՎ ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

09.12.2021 թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագետների ակումբի և տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կայացավ «Համայնքների խոշորացում 2021» խորագիրը կրող սեմինար-քննարկում, որի որպես փորձագետներ հրավիրված էին «Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոնի գլխավոր քարտուղար Վահրամ Հովեյանը և կառավարման խորհրդի անդամ Մարուսյա Հովհաննիսյանը:

ԲԱՑ ԴԱՍ՝ «ԹՎԱՐԿՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԴԻՐՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» ԹԵՄԱՅՈՎ

09.12.2021 թ.

Ս. թ. դեկտեմբերի 9-ին Գավառի պետական համալսարանում կայացավ «Թվարկության դիրքային և ոչ դիրքային համակարգեր» թեմայով առցանց բաց դաս:

Բաց դասը վարեց բուհի ուսումնագիտական գծով պրոռեկտոր ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր Նելլի Կուտուզյանը: Բաց դասին ներկա էին Նորատուսի թիվ 2 միջնակարգ, Կարմիր գյուղի թիվ 1, թիվ 2 միջնակարգ, Սարուխանի միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտներ և ուսուցիչներ, ուսանողներ ու դասախոսներ:

ԲԱՐԵ՛Վ, ՄԵՆՔ ԵՆՔ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ

12.12.2021 թ.

Ս.թ. դեկտեմբերի 12-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության, անգլերեն լեզվի և գրականության բաժինների 1-ին կուրսերի ուսանողների՝ «Բարև, մենք ենք» խորագիրը կրող միջոցառումը:

1-ին կուրսերի ուսանողները ներկայացրին բանասիրական ֆակուլտետում գործող մասնագիտությունները:

ԲԱՑ ԴԱՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ. «ՄԵԶ ԾԱՆՈԹ-ԱՆԾԱՆՈԹ ՇԵՔՍՊԻՐԸ»

12.12.2021 թ.

Ս. թ. դեկտեմբերի 11-ին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում տեղի ունեցավ առցանց բաց դաս՝ «Մեզ ծանոթ-անծանոթ Շեքսպիրը» թեմայով, որը վարում էր հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Առաքելյանը:

Բաց դասին մասնակցում էին հայոց լեզվի և գրականության, անգլերեն լեզվի և գրականության բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ, ուսուցիչներ և աշակերտներ՝ Գավառի ավագ դպրոցից և Նորատուսի թիվ 2-րդ միջնակարգ դպրոցից:

ԳԱՆՁԱԿԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՅՑԸ՝ ԳՊՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

14.12.2021 թ.

Ս. թ. դեկտեմբերի 12-ին ԳՊՀ բնագիտության լաբորատորիան հյուրընկալեց Գանձակի թիվ 1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներին՝ քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի Լիանա Գաբրիելյանի ուղեկցությամբ:

Այցելության նպատակը ԳՊՀ լաբորատորիայում կենսաբանություն, քիմիա առարկաներից գործնական աշխատանքների կազմակերպումն էր:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ-2021» ՖՈՐՈՒՄԻՆ

16.12.2021 թ.

Ս. թ. դեկտեմբերի 13-14-ը Երևանի «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցավ «Նոր սերունդ-2021» ռուս-հայկական ֆորումը, որը կազմակերպել էր Երևանում Ռուսական տունը:

Երկօրյա ֆորումին մասնակցում էին Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնարարար Կարեն Թռչունյանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության փոխնախարար Դավիթ Սահակյանը, գործարարներ և ոլորտի ներկայացուցիչներ, Գավառի պետական համալսարանի ուսանողները:

ԿԱՅԱՑԱՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՖԼԵՔՍ» ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ
19.12.2021 թ.

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական Միության «ՖԼԵՔՍ» ծրագրին, որի շրջանակում տեղի ունեցավ քառօրյա աշխատաժողով: Զուգակցված՝ առցանց և անցանց ձևաչափով աշխատաժողովին մասնակցեցին ծրագրի կոնսորցիումի անդամ Լատվիայի, Լիտվայի, Ավստրայի համալսարանների, ՌԴ Դոնի-Ռոստովի, Պերմի, Տվերի համալսարանների, Ռոսհիդրոմետ ընկերության, հայաստանյան բուհերից՝ Գավառի պետական, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային, ինչպես նաև Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանների ներկայացուցիչներ: Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցեցին ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը և գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը:

СТУДЕНТЫ ГГУ ПРИНЯЛИ УЧАСТИЕ В КОНКУРСЕ ЭССЕ «МОЙ РОДНОЙ КРАЙ»
19.12.2021 թ.

Студенты Гаварского государственного университета приняли участие в конкурсе эссе «Мой родной край», проводимый Елецким государственным университетом им. И. А. Бунина в рамках Международного фестиваля «Живая вода светоносного русского слова», ориентированного на развитие идей гуманизма и толерантности, культуре родного края как основе самосознания личности и народа.

По итогам конкурса призовые места за написание эссе заняли Марине Погосян- студентка магистратуры 2-го курса отделения Русский язык и литература (2-ое место), Виктория Карапетян -студентка магистратуры 1-го курса отделения Русский язык и литература (3-е место) и Сирануш Хачатрян студентка 3-его курса отделения Армянский язык и литература (3-е место).

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ
21.12.2021 թ.

Գավառի պետական համալսարանում կայացավ առցանց սեմինար-քննարկում՝ «Մաթեմատիկայի կիրառությունը արհեստական բանականության մեջ» թեմայով: Սեմինարին մասնակցեցին լսեցին Գավառի թիվ 8, Նորատուսի թիվ 1, Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցների աշակերտները, ԳՊՀ ուսանողներ և դասախոսներ:

ԳՊՀ Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու Վարազդատ Ավետիսյանը ներկայացրեց զեկուցում՝ «Մաթեմատիկայի կիրառությունը արհեստական բանականության մեջ» թեմայով:

СТУДЕНТЫ ГГУ ПРИНЯЛИ УЧАСТИЕ В НАУЧНО-ПРАКТИЧЕСКОЙ КОНФЕРЕНЦИИ, СОСТОЯВШЕЙСЯ В РЕСПУБЛИКЕ ДАГЕСТАН

23.12.2021 թ.

В декабре 2021 года в Кизлярском профессионально-педагогическом колледже Республики Дагестан состоялась Республиканская научно-практическая конференция. В конференции, наряду со студентами и преподавателями филиала ДГУ в городе Кизляре, а также представителями органов государственной власти, местного самоуправления, образовательных организаций РД, приняли участие и гости из Армении и Казахстана. Армению представлял профессор, доктор социологических наук, кандидат экономических наук, преподаватель Гаварского государственного университета Армен Саакян. Со своими научными докладами онлайн выступили студенты II курса экономического факультета Гаварского государственного университета Наджарян Арцрун Араратович (Проблемам развитие туризма в Гегаркуникском регионе), Аветисян Анаит Гнеловна (Особенности национальных праздников Гегаркуникского региона), Петеян Эрмине Мкртычевна (Культурное наследие с. Сарухан), научный руководитель профессор, доктор социологических наук Саакян Армен Коляевич.

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

24.12.2021 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում կայացավ ամենամյա՝ 15-րդ գիտաժողովը, որի բացմանը ելույթ ունեցան և մասնակիցներին ողջունեցին ռեկտոր Արմեն Դարբինյանը, համալսարանի ինժեներա-ֆիզիկական ինստիտուտի տնօրեն Հայկ Սարգսյանը և Մոսկվայի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, Ռուսաստանի միջազգային օլիմպիական համալսարանի ռեկտոր Լև Բելոուսովը: Առցանց ձևաչափով գիտաժողովին մասակցեցին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Կարեն Մաստոյանը, բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի Զառա Պետրոսյանը:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

24.12.2021 թ.

Գավառի պետական համալսարանի կողմից նախատեսված առցանց բաց դասերի, միջոցառումների շրջանակներում ապագա դիմորդների համար տեղի ունեցավ խորհրդատվություն՝ տնտեսագիտական ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի և դրանց իրականացման ընթացքի առանձնահատկությունների վերաբերյալ: Հանդիպմանը ներկա էին Սևանի ավագ, Գավառի ավագ դպրոցների աշակերտներ, Սևանի բազմագործառութային պետական քոլեջի ուսանողներ:

ԿԱՅԱՑԱՎ ԱՌՑԱՆՑ ԲԱՑ ԴԱՍ՝ «ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՀՆԱՐՔՆԵՐԸ ԲԻԶՆԵՍՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

25.12.2021 թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս Աստղիկ Հովեյանի նախաձեռնությամն անցկացվեց

հերթական առցանց բաց դասը՝ «Մարքեթինգային հնարքները բիզնեսում» թեմայով: Բաց դասին ներկա էին Սևանի և Գավառի ավագ դպրոցների աշակերտներ, Սևանի բազմագործառութային պետական քոլեջի ուսանողներ, ԳՊՀ ուսանողներ և դասախոսներ:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ՝ ԲՈԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

04.02.2022 թ.

ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահ Կարեն Քեռյանի 01.02.2022 թվականի N 09Ա հրամանի համաձայն՝ հաստատվել է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից 2022 թվականին ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակը: Ցուցակում ընդգրկված է Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածուն, որը հրատարակվում է տարեկան երկու անգամ՝ ներառելով հոդվածներ բնական, հասարակական և հումանիտար գիտությունների գծով:

ՈԱԱԿ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

28.02.2022 թ.

Ս. թ. փետրվարի 21-ից 25-ը ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) կողմից անցկացվեց «Մասնագիտական կրթական ծրագերի մեխանիզմների բարելավում» թեմայով հնգօրյա վերապատրաստման դասընթաց, որին մասնակցեց Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի վարիչի պարտականությունները կատարող Քանաքարա Հայրապետյանը:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

08.04.2022 թ.

Ս. թ. ապրիլի 7-ին կայացավ հանդիպում՝ «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում Գավառի պետական համալսարանից հաղթող ճանաչված լավագույն ուսանողների հետ: Տիտղոսակիր ուսանողների հաջողության պատմությունները լսեցին բուհի ուսանողներն ու դասախոսները:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Մանե Դեղոյանը, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Պատմություն» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Վահե Գոզեյանը, բնագիտական ֆակուլտետի «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Կարեն Մաստոյանը ներկայացրին իրենց դավանած սկզբունքներն ու արժեքները, անդրադարձան դպրոցում և համալսարանում ունեցած ձեռքբերումներին, տարբեր օլիմպիադաներում և մրցույթներում արձանագրած հաղթանակներին, մասնակցած գիտաժողովներին, խորհուրդներ տվեցին և լավագույն ուսանող դառնալու բանաձևեր հայտնեցին կրտսեր համալսարանականներին:

ԵՐԱՆՈՍԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

09.04.2022 թ.

Ս. թ. ապրիլի 8-ին ԳՊՀ բնագիտության լաբորատորիան հյուրընկալեց Երանոսի թիվ 1 միջնակարգ դպրոցի 9-ից 11-րդ դասարանների աշակերտներին՝ քիմիայի ուսուցիչ Ռոբերտ

Ղանդիլյանի ուղեկցությամբ: Աշակերտները ԳՊՀ լաբորատորիայի վարիչ Թերմինե Խաչիկյանի և դպրոցի քիմիայի ուսուցիչ Ռոբերտ Ղանդիլյանի օգնությամբ կատարեցին լաբորատոր փորձեր:

СОСТОЯЛОСЬ НАУЧНОЕ ЗАСЕДАНИЕ НА ТЕМУ «ЭТНОКУЛЬТУРНЫЕ ИССЛЕДОВАНИЯ» 10.04.2022 թ.

В рамках второго заседания Проблемной группы по теме «Этнокультурные исследования», состоявшемся 7 апреля 2022 год в Ереване, с вступительным словом и с докладом на тему «Национальный танец говенд как способ самовыражения езидов» выступил профессор Гаварского государственного университета, доктор социологических наук, профессор Ереванского филиала Российского экономического университета имени Г.В. Плеханова, член Президиума Академии проблем гуманизма, старший научный сотрудник Института искусств НАН РА Саакян Армен Коляевич.

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՎՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ 10.04.2022 թ.

Սույն թվականի ապրիլի 8-ին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները հեռավար մասնակցեցին Վանաձորի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կազմակերպած «Նոր հեռանկարներ ուսանողների գիտահետազոտական ներուժի զարգացման համար» խորագրով 11-րդ հանրապետական ուսանողական գիտաժողովին: ԳՊՀ-ից գիտաժողովին մասնակցեցին Տնտեսագիտություն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Արփի Միրիբյանը և հաշվապահական հաշվառում բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Անահիտ Աբրահամյանը, տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Ալլա Սարգսյան, նույն ֆակուլտետի ֆինանսներ բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Ռոզա Աբրահամյանը, տնտեսագիտություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Լիլիա Բադիկյանը, ֆինանսներ բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Արեգա Հովհաննիսյանը:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑԸ 10.04.2022 թ.

Գավառի պետական համալսարանի իրականացրած մասնագիտական վերապատրաստման ծրագրերի շրջանակներում մեկնարկեց գրականության և բանահյուսության արդի հիմնահարցերին նվիրված առցանց դասընթաց՝ նախատեսված դասախոսական կազմի, ուսուցիչների, ուսանողների, բարձր դասարանների աշակերտների և ընդհանրապես գրականության ու բանահյուսության հարցերով հետաքրքրվողների համար: Դասընթացի համակարգողներն են ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանը և բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Առաքելյանը:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎԵՅՐՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ 13.04.2022 թ.

Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի

«Կառավարման և ֆինանսներ» ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գայանե Խաչատրյանը մեկշաբաթյա դասախոսական աշխատանք կատարեց Պորտուգալիայի Հանրապետության Ավեյրոյի համալսարանում: ԳՊՀ դասախոսը հանդես եկավ ութժամյա դասախոսություններով, որոնց թեմաներն առնչվում էին ֆինանսական համակարգին, բյուջեին, հարկերին և հարկային քաղաքականության առանձնահատկություններին:

«ԿԱՐՄԻՐ ԾԱՂԻԿ ՄԸ ԳԱՐՈՒՆԻ»
27.04.2022 թ.

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում կայացավ «Կարմիր ծաղիկ մը գարունի» խորագրով միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 107-րդ տարելիցին: Ցերեկույթը յուրովի հիշատակում էր ու ոգեկոչում ոչ միայն արևմտահայ դասական գրողներին, ցեղասպանության սրբադասված նահատակներին, այլև Մայր Հայաստանի այն հերոսներին, ովքեր ընկան վասն հավատքի ու հայրենիքի:

ԳՊՀ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (FAST) «SCINOVA» ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆԸ
30.04.2022 թ.

Ս. թ. ապրիլի 23-ից 29-ը Գավառի պետական համալսարանի աշխատակիցները Հայաստանի ազգային ագրարային համալսարանում մասնակցեցին Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) «SciNova» ակադեմիական ծրագրի շրջանակներում կազմակերպված՝ գիտահետազոտական գործունեության մեթոդաբանությանը նվիրված վերապատրաստման դասընթացին: Վերապատրաստմանը մասնակցեցին Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչ Թերմինե Խաչիկյանը, որակի ապահովման բաժնի վարիչի պարտականությունները կատարող Քանաքարա Հայրապետյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Նաիրա Իսկանդարյանը:

ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԹՎԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻ ԴԵՍՊԱՆՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԸ
01.05.2022 թ.

«Թվային քաղաքացի դեսպաններ» դասընթացի շրջանակներում Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի, դասընթացավար Ստելլա Շահինյանն ու նախագծի ղեկավար Արթուր Զաքարէ Հարությունյանը հանդիպում ունեցան ԳՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողների հետ:

ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ
01.05.2022 թ.

Ս. թ. ապրիլի 30-ին Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կայացավ ուսանողական հանրապետական ամենամյա գիտաժողովը: Առցանց գիտաժողովին մասնակցեցին Հայաստանի և Արցախի տարբեր բուհերի՝ Գավառի պետական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Շուշիի

տեխնոլոգիական համալսարանի, Վանաձորի պետական համալսարանի, Գորիսի պետական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ուսանողները, «Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոնի ներկայացուցիչները, ասպիրանտներ, երիտասարդ գիտնականներ:

ԿԱՅԱՑԱՎ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԼՍԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

07.05.2022 թ.

Ս. թ. մայիսի 7-ին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ Արցախյան 44-օրյա պատերազմի հերոսների անվան լսարանի բացումը: Լսարանն անվանակոչվեց ի պատիվ Արցախյան պատերազմում անմահացած զինծառայողների՝ ԳՈՒՐԳԵՆ ԱՎԵՏԻՔԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ԳԵՂԱՅՐԻ ԱՂԵԿՅԱՆԻ, ԱՐՏՅՈՄ ՎԻԳԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ԱՐԹՈՒՐ ԻՎԱՆԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ, ՋԱՐՋԱՆԴ ՆԵՐՍԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ, ԷԴՎԱՐԴ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ, ՆՎԵՐ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ, ՅՈՒՐԱ ԱՐՏՅՈՄԻ ՋԱԽԱՐՅԱՆԻ, ՌՈՒԲԵՆ ԱՇՈՏԻ ՊՐԱՋՅԱՆԻ, ՎԱՀԱԳՆ ՌՈՒԲԵՆԻ ՍԵՅՐԱՆՅԱՆԻ:

Բացման արարողությանը ներկա էին անմահացած զինծառայողների ծնողները, հարազատները, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ, հոգեշնորհ Տեր Պարթև վարդապետ Բարսեղյանը, Գեղարքունյաց թեմի հոգևոր դասի ներկայացուցիչներ, Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը, Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմը, ուսանողներ:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՄԻՆՀՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

16.05.2022 թ.

Գավառի պետական համալսարանը տարիներ շարունակ հաջողությամբ համագործակցում է Պորտուգալիայի Հանրապետության Մինհոյի համալսարանի հետ: Մինհոյի համալսարանում դասախոսական աշխատանք կատարեց ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Միրիբյանը: Բանասիրական ֆակուլտետի սլավիստիկայի բաժնի ուսանողների համար տիկին Միրիբյանը հանդես եկավ հետաքրքիր դասախոսություններով:

ԳՊՀ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ՝ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՐԱԳԱՆՍԱՅԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

19.05.2022 թ.

Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետներ Նունե Միրիբյանն ու Սիրանույշ Մկրտչյանը Պորտուգալիայի Հանրապետության Բրագանսայի պոլիտեխնիկական համալսարանում մասնակցեցին վերապատրաստման դասընթացի և աշխատաժողովի: Վերապատրաստման դասընթացին և փորձի փոխանակման աշխատաժողովին մասնակցում էին Մոլդովայի, Տաջիկստանի, Ուկրաինայի, Մոնտենեգրոյի, Մարոկկոյի, Թունիսի համալսարանների ներկայացուցիչներ:

ԿԱՅԱՑԱՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

20.05.2022 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի նախաձեռնությամբ կայացավ հայոց լեզվի հիմնախնդիրներին նվիրված հերթական առցանց վերապատրաստման դասընթացը՝ նախատեսված դասախոսական կազմի, ուսուցիչների, ուսանողների, բարձր դասարանների աշակերտների և ընդհանրապես հայոց լեզվի հարցերով հետաքրքրվող անձանց համար: «Հայ բարբառագիտության արդի խնդիրները» թեման ներկայացրեց ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր Վիկտոր Կատվալյանը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

20.05.2022 թ.

Արցախի պետական համալսարանում կայացավ 44-օրյա պատերազմում նահատակված ուսանող-ազատամարտիկների հիշատակին նվիրված ուսանողական գիտաժողով, որին մասնակցում են 125-ից ավելի պատվիրակներ Արցախի և ՀՀ բուհերից: Գավառի պետական համալսարանից ԱրՊՀ գիտաժողովին մասնակցեցին տարբեր ֆակուլտետների 13 ուսանողներ՝ ներկայացնելով հետաքրքիր զեկուցումներ:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԳԱՎԱԹԱԿԻՐ

20.05.2022 թ.

Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնը և Հայաստանում ԽՍՀՄ բուհերի շրջանավարտների ասոցիացիան սույն թվականի ապրիլ-մայիս ամիսներին համատեղ կազմակերպեցին ռուսաց լեզվի հանրապետական ուսանողական 6-րդ օլիմպիադան: Մրցույթին մասնակցության հայտեր էին ներկայացրել հանրապետության 13 բուհերից: Գավառի պետական համալսարանից օլիմպիադային մասնակցեցին բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Սաթենիկ Մելքոնյան, անգլերեն լեզու և գրականություն բաժնի երրորդ կուրսի ուսանողուհի Ստելլա Շահինյանը և տնտեսագիտություն բաժնի առաջին կուրսի ուսանողուհի Անահիտ Պարոնիկյանը:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՎՈՐԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

03.06.2022 թ.

Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս Հասմիկ Մարգարյանը մեկշաբաթյա վերապատրաստման դասընթաց անցավ Պորտուգալիայի Հանրապետության Էվորայի համալսարանում:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՀԱԱՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ

05.06.2022 թ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի /ՀԱԱՀ/ ուսանողական գիտական շաբաթն ամփոփվեց միջբուհական գիտաժողովով, որը կայացավ ս. թ. մայիսի 27-28-ին ՀԱԱՀ Աղավնաձորում գտնվող «Զարթոնք» ագրոճամբարում:

Գիտաժողովին մասնակցում էին ՀԱԱՀ-ի, ԵՊՀ-ի, ԳՊՀ-ի ավելի քան 30 ուսանողներ:

Գավառի պետական համալսարանից ՀԱԱՀ գիտաժողովին մասնակցեցին 6 ուսանողներ՝ ներկայացնելով հետաքրքիր զեկուցումներ:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ ՊԱԼՄԱ ԴԵ ՄԱԼՅՈՐԿԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ

08.06.2022 թ.

Եվրոպական Միության «Էրասմուս+ Erasmus for young entrepreneurs» շարժունության ծրագրի շրջանակներում Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի սերվիս բաժնի դասախոս Լալա Մկրտչյանը փորձի փոխանակման նպատակով մեկ ամիս անցկացրեց Իսպանիայի Թագավորության Պալմա դե Մալյորկա քաղաքում, որտեղ ծանոթացավ իսպանական զբոսաշրջության առանձնահատկություններին և դրա զարգացման ուղղություններին:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԻՐԱԶԵԿՎԵՑԻՆ «QUANTA» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

11.06.2022 թ.

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հանդիպում Հայ-ռուսական համալսարանի ընդհանուր ֆիզիկայի և քվանտային նանոկառուցվածքների ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանի հետ: Հանդիպման ընթացքում պարոն Սարգսյանը ներկայացրեց «Իմ քայլը» հիմնադրամի նախաձեռնությամբ իրականացվող «Quanta» քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի մագիստրոսական կրթական ծրագիրը:

ԿԱՅԱՑՎԵՑ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

15.06.2022 թ.

Ս. թ. հունիսի 14–ին Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի /ՈԱԱԿ/ հավատարմագրման հանձնաժողովը քննարկեց Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ինքնավերլուծությունը և փորձագիտական զեկույցը, դիտարկեց ինը բավարար և մեկ անբավարար գնահատված տիրույթները, փորձագետների մատնանշած ուժեղ և թույլ կողմերը, հնարավոր ռիսկերը: Քննարկվեց նաև, թե որքանով է իրատեսական բուհի բարելավման ծրագիրը:

Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ՝ Գավառի պետական համալսարանին շնորհվեց ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ-2022» ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

16.06.2022 թ.

Ս. թ. հունիսի 15-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացավ «Գիտության և գործարարության օրեր-2022» համաժողովը, որի հիմնական

բանախոսն էր մոլեկուլային կենսաբան, նյարդաբան, բժշկագիտության 2021 թ.Նոբելյան մրցանակակիր, Scripps Research ինստիտուտի պրոֆեսոր Արդեմ Փաթափությանը: Գավառի պետական համալսարանից «Գիտության և գործարարության օրեր-2022» համաժողովին մասնակցեցին տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանը և նույն ֆակուլտետի ուսանող Հայկ Մարգարյանը:

ԿՆՔՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

18.06.2022 թ.

Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և Գրոզնիի ակադեմիկոս Միլիոնշչիկովի անվան պետական նավթային տեխնիկական համալսարանի պրոռեկտոր, տնտեսական գիտությունների դոկտոր Ռուստամ Սալգիրիևը կնքեցին համգործակցության հուշագիր: Հուշագրում նախատեսված են համագործակցության հետևյալ ուղղությունները՝ կրթական, գիտահետազոտական, փորձի փոխանակման, ուսանողների համար լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման և այլն: Առաջին համատեղ ձեռնարկը կյանքի կկոչվի ս. թ. հուլիսի 10-ից 24-ը: Նշված ժամանակահատվածում ԳՊՀ 20 ուսանող՝ համալսարանի պրոֆեսոր Արմեն Սահակյանի ղեկավարությամբ կմեկնեն Գրոզնի և կմասնակցեն գործընկեր բուհի կազմակերպած «Ամառային համալսարան» ծրագրին:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳՊՀ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝
ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ ՌԵԿՏՈՐ,
ՀՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺ ՀՐԱՆՏ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ

02.07.2022 թ.

Կայացավ Գավառի պետական համալսարանի 25-րդ գիտաժողովը՝ նվիրված համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառ քաղաքի պատվավոր քաղաքացի Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 95-ամյակին: Լիագումար նիստին ելույթ ունեցավ Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Համլետ Ղաջոյանը, ով ներկայացրեց զեկուցում՝ «Բերկրանք՝ տառապանքի ճանապարհով» թեմայով՝ նվիրված Հրանտ Հակոբյանի ծննդյան 95-րդ տարեդարձին:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎ

02.07.2022 թ.

Սույն թվականի հուլիսի 1-ին տեղի ունեցավ «Ջանքերի միավորում հանուն Սևանա լճի էկոհամակարգի պահպանման և կայուն զարգացման» խորագրով միջազգային համաժողովը: Գավառի պետական համալսարանից համաժողովին մասնակցեց բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Մարինե Հովհաննիսյանը:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԿՅԱՆՔ ՃԱՆԱՊԱՐՀԵՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ 25-ՐԴ ՍԵՐՆԴԻՆ. ԿԱՏԱՐՎԵՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

05.07.2022 թ.

Ավանդույթի համաձայն հուլիսի 5-ին՝ Սահմանադրության օրը դիպլոմներ շնորհվեցին Գավառի պետական համալսարանի 2021-2022 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի շուրջ երկու հարյուր շրջանավարտի:

Դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությանը մասնակցեց և շրջանավարտների օրհնության կարգ կատարեց Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տեր Պարթև վարդապետ Բարսեղյանը:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱԼԼԱԴՈԼԻԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

14.07.2022 թ.

Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Սարգսյանը մեկշաբաթյա վերապատրաստման դասընթաց անցավ Իսպանիայի Թագավորության Վալլադոլիդի համալսարանում:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԵՄ «ERASMUS+ MENVIPRO» ԾՐԱԳՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻՆ

18.07.2022 թ.

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական Միության «ERASMUS+MENVIPRO. Հայաստանում և Վրաստանում շրջակա միջավայրի մասին կրթական ծրագրերի արդիականացում» ծրագրին, որի շրջանակներում 2022թ. հուլիսի 10-ից 15-ը Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում կայացավ ամառային դպրոց: Ամառային դպրոցին մասնակցեցին ներկայացուցիչներ ծրագիրը համակարգող Իտալիայի Տուշցիայի համալսարանից, ծրագրի անդամ կրթական և գիտահետազոտական հաստատություններից՝ ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնից և Գավառի պետական համալսարանից, Երկրի էկոհամակարգերի հետազոտական ինստիտուտից /Իտալիա/, Լիսաբոնի համալսարանից /Պորտուգալիա/, «Վրաստան» համալսարանից, «Իլյա» պետական համալսարանից /Վրաստան/, Վրաստանի գիտակրթական ցանցային ասոցիացիայից: Գավառի պետական համալսարանից ամառային դպրոցին մասնակցեցին Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոսներ՝ պրոֆեսոր Արտաշես Թադևոսյանը և Մարինե Հովհաննիսյանը:

ԿԱՅԱՑԱՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ԿՈՎԿԱՍԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՍԻԱՅԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՑԱՌԻԿ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ

19.07.2022 թ.

Գավառի պետական համալսարանի դասախոս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Սահակյանը մասնակցեց Չեչնիայի

Հանրապետության մայրաքաղաք Գրոզնիում ս. թ. հուլիսի 15-ից 17-ը կայացած միջազգային երրորդ գիտաժողովին՝ «Կովկասը Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում. պատմամշակութային ժառանգության պահպանման և բացառիկ օբյեկտների վերականգնման հիմնախնդիրները» խորագրով: Պարոն Սահակյանը Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի պրոռեկտոր, տնտեսական գիտությունների դոկտոր Ռուստամ Սալգիրիևի հետ համահեղինակությամբ ներկայացրեց զեկուցում նվիրված մշակութային կոթողներին որպես ազգային ինքնության խորհրդանիշների՝ պատմության և արդիականության տեսանկյուններից, դրանց արժեքին՝ անցյալը ներկային ու ապագային շաղկապելու, սոցիալ-տնտեսական բացառիկ նշանակության և օգտակարության առումներով:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՄԻՆՍԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
28.07.2022 թ.

Գավառի պետական համալսարանը հետևողականորեն ընդլայնում է արտաքին համագործակցության ուղեծիրը՝ գործընկերային հարաբերություններ հաստատելով տարբեր բուհերի հետ: ԳՊՀ-ն համագործակցության համաձայնագիր կնքեց Բելառուսի Հանրապետության Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի հետ: ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը և համալսարանի դասախոս, պրոֆեսոր Արմեն Սահակյանը Մինսկի պետական լեզվաբանական համալսարանի պատվիրակների՝ Անգլերեն լեզվի տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Տատյանա Սվիստունի և նույն համալսարանի դոկտորանտ, Ա. Ս. Պուշկինի անվան Բրեստի պետական համալսարանի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Իննա Իլյիչևայի հետքննարկեցին համագործակցության համաձայնագրի հիման վրա գործընկերության հիմնական ուղղությունները: Կարևորվեցին հաջողված փորձի փոխանակման, դասախոսների վերապատրաստման, համատեղ գիտաժողովների կազմակերպման ծրագրերը և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ ձեռնարկները:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ԳՐՈԶՆԻԻ «ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ»
29.07.2022 թ.

Գավառի պետական համալսարանի և Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի միջև կնքված համագործակցության համաձայնագրի համաձայն՝ ԳՊՀ տարբեր ֆակուլտետների քսան ուսանողներ ս. թ. հուլիսի 10-ից 24-ը անցկացրին Գրոզնիի համալսարանի կազմակերպած «Ամառային համալսարանում»: ԳՊՀ ուսանողների ղեկավարն էր համալսարանի դասախոս, պրոֆեսոր Արմեն Սահակյանը: Ուսանողները մասնակցեցին դասերի, գրքի շնորհանդեսի, էքսկուրսիաների, սպորտային, մշակութային միջոցառումների, եղան Շալի, Արգուն, Գրոզնի քաղաքների տեսարժան վայրերում, կազմակերպեցին ազգային տոներ, ստացան նոր գիտելիքներ և գեղեցիկ տպավորություններով ծանրաբեռ վերադարձան հայրենիք: Բոլոր ուսանողներին շնորհվեցին «Ամառային համալսարան» ծրագրի մասնակցի հավաստագրեր:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-ՕՄՍԿ ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿՆՔՎԵՑ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
26.08.2022 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի և ՌԴ Օմսկի նահանգի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր, և մշակվել ճանապարհային քարտեզ՝ նախատեսելով փոխշահավետ ծրագրերի իրականացում տնտեսության, կրթության, մշակույթի, առողջապահության, բնապահպանության, զբոսաշրջության և այլ ոլորտներում: Ս. թ. օգոստոսի 25-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունեց Օմսկի նահանգի պատվիրակությանը՝ նահանգապետ Ալեքսանդր Բուրկովի գլխավորությամբ: Գեղարքունիք-Օմսկ փոխգործակցության շրջանակում Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և Օմսկի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Իվան Կրոտտը կնքեցին համագործակցության հուշագիր, որը թույլ կտա միջմարզային համագործակցության ծիրում իրականացնել միջբուհական համագործակցություն:

ԿԱՅԱՑԱՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ 27.08.2022 թ.

Նոր ուսումնական տարվան ընդառաջ՝ ս. թ. օգոստոսի 27–ին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հանդիպում առաջին կուրսի ուսանողների և նրանց ծնողների հետ: ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ջերմորեն ողջունեց և շնորհավորեց առաջին կուրսեցիներին ու նրանց ծնողներին, ուսանողներին մաղթեց արդյունավետ ուսումնառություն և բարձր առաջադիմություն, կոչ արեց լինել աշխատասեր, պատասխանատու և նպատակասլաց:

Նունե Միրիբյան՝
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության
բաժնի մասնագետ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ազգանուն, անուն, հայրանուն	*ծառայողական*	*Էլեկտրոնային փոստի հասցե*
ԳՊՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ղազարյան Էդուարդ Մուշեղի	**0-60-46-02-01** **0-264-2-57-75**	info@gsu.am
ԳՊՀ ռեկտոր Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	**0-60-46-02-01**	rector@gsu.am
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կուտուզյան Նելլի Ալբերտի	**0-60-46-04-03**	n.kutuzyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկան Ասոյան Թաթուլ Արտիկի	**0-60-46-12-44**	t.asoyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկան Ավագյան Մարտին Պատվականի	**0-60-46-12-55**	m.avagyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Ղաջոյան Համլետ Գիրշայի	**0-60-46-12-70**	h.ghajoyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	**0-60-46-12-66**	s.amirkhanyan@gsu.am
Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատ	**0-60-46-12-90**	faculty-of-correspondence-course@gsu.am
Ակադեմիական քաղաքականության բաժին	**0-60-46-12-42**	t.khachikyan@gsu.am
Ուսանողական խորհրդի նախագահ Պողոսյան Անահիտ Վաղինակի	**0-60-46-12-40**	student@gsu.am
Ուսանողական գիտական ընկերության նախագահ Միրիբյան Արփի Գարեգինի	**0-60-46-12-60**	sssgsu@mail.ru
Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ Սարգսյան Ռուզաննա Մարատի	**0-60-46-12-40**	r.sargsyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Հերգնյան Մարիամ Նորիկի	**0-60-46-12-60**	m.hergnyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վոլոդյայի	**0-60-46-12-70**	g.gevorgyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Խանդանյան Սիրանուշ Կառլենի	**0-60-46-12-50**	s.khandanyan@gsu.am
Որակի ապահովման բաժին	**0-60-46-12-43**	qa@gsu.am
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին	**0-60-46-12-56**	IT-Department@gsu.am
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	**0-60-46-12-46**	g.muradyan@gsu.am
Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	**0-60-46-12-41**	kh.safaryan@gsu.am
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	**0-60-46-12-49**	l.sirunyan@gsu.am
Ավագ պարետ Զաքոյան Տարիել Հրաչիկի	**0-60-46-12-86**	t.zaqoyan@gsu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՊՀ ռազմավարական ծրագրի կատարման ընթացքը, արդյունքները, խնդիրները.....	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին.....	9
Միջազգային համագործակցություն.....	46
Դասախոսների գործուղումներ.....	68
Ուսումնագիտական աշխատանքներ.....	75
Ֆինանսական վերլուծություն.....	100
Բանասիրական ֆակուլտետ.....	107
Բնագիտական ֆակուլտետ.....	130
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ.....	146
Տնտեսագիտական ֆակուլտետ.....	162
Հեռակա ուսուցման ֆակուլտետ.....	191
Ակադեմիական քաղաքականության բաժին.....	196
Որակի ապահովման բաժին.....	203
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժին	210
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին.....	215
ԳՊՀ գրադարան	218
ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժին.....	223
ԳՊՀ արխիվ.....	230
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն.....	234
ԳՊՀ Ուսանողական խորհուրդ	235
ԳՊՀ ուսանողական գիտական ընկերություն.....	237
Ֆինանսական, տնտեսատեխնիկական գործունեություն.....	241
ԳՊՀ հիշարժան միջոցառումներ.....	246
Տեղեկատու.....	266

CONTENTS

The Objectives, Outcomes and Process of GSU Strategic Program Implementation	3
General Information about the University.....	9
International Cooperation.....	46
Business Trips of the Academic Staff.....	68
Educational and Scientific Activities.....	75
Financial analysis.....	100
Faculty of Philology.....	107
Faculty of Natural Sciences.....	130
Faculty of Humanities.....	146
Faculty of Economics.....	162
Faculty of Part-Time Education.....	191
Academic Policy Department.....	196
Quality Assurance Department.....	203
GSU Foreign Relations and Information Department.....	210
Information Technology Department.....	215
GSU Library.....	218
GSU Department of Human Resource Management	223
GSU Archive.....	230
GSU Trade Union.....	234
GSU Student Council.....	235
GSU Student Scientific Society.....	237
Financial, Economic and Technological Activities.....	241
Memorable events of GSU.....	246
Information leaflet.....	266

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
GAVAR STATE UNIVERSITY

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT OF THE 2021-2022 ACADEMIC YEAR AND SELF-ASSESSMENT REPORT

ԳՊՀ
Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Հրանտ Հակոբյան 1,
հեռ. (37460) 46-02-01
կայք. www.gsu.am
էլ. փոստի հասցե - infogsu@mail.ru
info@gsu.am

GSU
Gegharkunik Marz
1 Hrant Hakobyan Str., Gavar
tel. (37460) 46-02-01
website: www.gsu.am
E-mail - infogsu@mail.ru
info@gsu.am